





ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ն Ա Խ Ն Ե Ա Յ

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՓՐԻՋ. — ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԵՆԻԱՆ.  
Paris. — Typographie arménienne de Walder, rue Bonaparte, 44.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# Ն Ա Խ Ն Ե Ա Յ

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն


ԵՒ ՆԱՆԱԳԱՐԷ

Հ Ա Ր Մ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն



Թարգմանեաց

ՅՈՎ ՀԱՆՆԷՍ ՅՈՎ ԱԿԻՄԵԱՆ



Փ Ա Ր Ի Չ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1860

U. S. DEPARTMENT OF THE INTERIOR

BLANK

736  
Zuchy



## Յ Ա Ռ Ա Ջ Ա Ք Ա Ն

Վանառականութիւնը՝ երկրագործութեան եւ արհեսներու հետ մէկ տեղ մարդոց հարստանալուն՝ եւ ազգերուն պայծառանալուն զլիսաւոր առիքներէն մէկն է. ամենէն աղէկ բաներն ալ՝ առանց ստակի չը կրնալ առաջ երթալը զիտող մարդը՝ դիւրաւ կը համոզվի որ ստակ վաստակելու միջոց եղող բան մը ամէն աղէկութիւններու ալ պատճառ եւ առիք կըլլալ : Քաղաքակրթութեան մէկ նիւղն ալ բարեբարութիւնն է. մէկը նեղը տեսնելով՝ անոր օգնութեան ձեռք չըբռնելը մարդկութենէ դուրս բան մըն է կրսես ամէնքն ալ . եւ այս օգնութիւնս խիստ անգամ ստակով ըլլալու բան է. ուրեմն հարստութիւն մատակարարող միջոցները՝ մարդոյ մարդկութիւնն ալ ըսել է, մարդկային զգացմունքներն ալ աղէկցընելու եւ ընկերական կենաց համար սեղծուած մարդոցն ալ՝ ընկերութեան մէջ պէտք եղած կերպով ապրելնուն միջոց կըլլան :

Այս ըսածներս նրբան որ մեր Ազգին մէջն ալ՝ ընդհանրապէս նանչցուած են նէ՛ կը տեսնենք որ գործադրութեան գալով վանառականութիւնը մէջերնիս պէտք եղածին չափ ծաղկած չէ. եւ այս կողմէն չէրէ առաջ գացած չեմք, այլ նիւղը խօսելով մանաւանդ եւ մնացած եմք : Քողունք Հայոց վանառականութեան հին

համբար, որով իր երկրին դիրքը՝ զինքը գրեթէ միջնորդ մը կրնէր Հնդկաստանի, եւ Պարսկաստանի ապրանքները Արեւմտեան Ասիա, եւ Եւրոպա տարածելու. սակաւին տասն եւ եօթը եւ տասն եւ ուրբ դարերուն մէջ՝ բաւական անուն եւ յարգ ունէինք. իբրև վանառականութեան հաջալարմար ազգ մը : Պարսից՝ եւ Ռուսաց քաղաքները՝ եւ Լեհաստանի իշխանները՝ իրենց երկրին վանառականութիւնը ծաղկեցունելու համար՝ Հայ գաղթականներ բերին իրենց երկիրը, եւ գացողներուն մեծամեծ արտօնութիւններ տուին :

Ազգին վանառականութեան յարմարութիւնը առաւել հանդիսանալու տեղը (աշխարհիս հիմակուան վիճակին նայելով) Կոստանդնուպօլիս է, իր դիրքին համար, որ ներմակ եւ սեւ ծովերուն մէջ տեղը՝ Եւրոպայի եւ Ասիոյ հետ հաղորդակցութեան միջնավայրն է. բայց հոս ալ ինչ մարդ կը գտնուի մեր ազգէն որ վանառականութեան զբաղած ըլլան, եւ այն ինչն ալ Եւրոպայի վանառականներուն հետ համեմատելով մանրաւանառ, կամ վանառականութեան միջնորդ կրնան ըստիլ առաւել՝ քան թէ բուն վանառական :

Ռուսի պէտք մը սեպեցինք, մեր ձեռքէն եկածին չափ. յորդոր եւ դրդում մը ընել Ազգիս, որ վանառականութեան վրայ ինչ մը աւելի սէր ձգէ :

Ինչ եւ իցէ բան՝ այն ասեմ կը սիրվի եւ յառգի կըլէ լայ՝ երբ անոր ինչ ըլլալը եւ ինչ համբով եկած ըլլալը.

էն ինչ կանոններով հիմնած եւ հաստատուած ըլլալը գիտցրվի : Վանառականութեան զբաղմունքով զրեթէ տասն եւ երկու տարիէն աւելի ժամանակ Անգղիոյ երեսիլի եւ աշխարհածանօր Մանչէսթըր հաղաւթը բնական ժամանակնիս՝ եւ Անգղիոյ ուրիշ շահավանառ հաղաւթներու հետ ունեցած յարաբերութիւննիս՝ առիթ տրվաւ մեզի՝ այն հռչակաւոր եւ մեծագոր Ազգին միմիայն վանառականութեամբ ստացած մեծութիւններուն եւ հարստութիւններուն , եւ կարգ ու կանոններուն ախանափես ըլլալու :

Մանաւանդ որ մեզի նման ուրիշ Ազգի մըն ալ ինչ տարուան մէջ վանառականութեամբ բոլոր եւրոպիոյ շահավանառ հաղաւթներու մէջ հարստութեամբ յառաջադէմ պանծալնին տեսնելով , եւ մեր Ազգին այս մասին՝ չէրէ միայն ետ մնալուն՝ բայց վանառականութեան անյարմար ազգի մը նման ինչ ինչ մտաւորութեան երես բռնելու ընթացքին մէջ զտնտեսիլը մեզի մեծ ցաւ պատճառելուն , մեր սիրելի Ազգին օգտաւոր ծառայութիւն մը ընելու ակնկալութեամբ , այս ամենահարկաւոր արհեստին սկզբունքներ՝ ու անոր յաջողութեան , եւ ձախորդութեան պատճառները բացատրելու ձեռնամուխ եղանկ :

Բայց մենք այս բաներուս վրայ մեզնէ գիւրջ յօրինելով հառելու անբաւականութիւննիս հանչնալով՝ վանառականութեամբ բոլոր աշխարհիս վրայ հռչակաւոր

Անգղիացի կենդանի մասենագիր հեղինակէ մը յօրինուած՝ ներկայ գրեյկիս բարգմանելն ընտրեցինք, որուն անունը թէպէտ *Պասմոթիսն նախնեաց վաճառականութեան* է, եւ կը պարունակէ նախնի Եգիպտացոց, Յունաստանի, Տիւրոսի եւ Կարթագինէի, նախնի Հռովմայեցոց, եւ Հնդկաստանի վաճառականութեանց սկզբունքները հինգ դասի բաժնւրված ըլլալով ասեմախօսութեան ձեռով, բայց հասուն դասադրութեամբ, ու զուարնալի պասմոթիսներով եւ վաճառականութեան զօրութիւն սալու խոհական բարոյական խրատներով զարդարված՝ աղէկ նամբով վերոգրեալ ամէն բաներուն վրայ ալ կը խօսի. անանկ որ ասիկայ մտադրութեամբ կարդացող մտադու մը ըստ կանոնի վաճառական ըլլալուն շատ մեծ դիւրութիւններ կըլլան, եւ բանը, ինչպէս որ կը կարծենք, կամք ունենալու եւ կամքը ի գործ դնելու կը մնայ :

Այս դիտմամբ մեր գրադմունքներուն մէջ՝ ազատ գտած ժամանակնիս, որդիս Գառնիկ Յ. Յովակիմեան մեզի օգնական ունենալով՝ եւ այս գրեյկիս բարգմանելով՝ Ազգին օգտին նուիրեցինք. որուն թէ որ բարգմանութեանը եւ ոնին կողմէն, պակասութիւն մը նշմարենք բարեսիրտ ընթերցողները, մեր արտին եւ դիտաւորութեանը նայելով, այն պակասութիւններուն ներողամիտ ըլլանին կաղաչենք :



Ա Տ Ե Ն Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. Բ. Ա. Ձ. Բ. Ն 11-43

Յաղագս վանառականութեան նախնի Եղիպտացոց:

Վանառականութեան ծագումը. — Եղիպտոսի սպսմութիւնը.  
— Բերկերը. — Յորեանը. — Կտարը. — Չիւրը. — Թուդ-  
րը. — Գործածած բաները. — Ուսեւսը. — Չգեւսը. —  
Բնակարանները. — Գիսպտակը. — Գիւրքը. — Վանառքը.  
— Փիւնիկեցոց Հրեասանի, Արարիայի և Հնդկաստանի հետ  
ունեցած վանառականութիւնը. — Հաղորդակցութեան միջոց-  
ները. — Ճանապարհները. — Չրակցները. — Նաւերը. —  
Արհեստ և գիտութիւնները. — Երկրաչափութիւնը. — Հաշու-  
գիտութիւնը. — Գրամը. — Վանառականութեան օրհնները.  
— Երկրի կաշուածոց վարձքը. — Առեւտուր ընդ կիները.  
— Պարսի համար բանարդեւութիւնները. — Մեռնելէն յետոյ  
դասասանը. — Եղիպտացոց վանառականութեան բնական  
շարժարտութիւնները:

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՍԿԶԲՈՒՆՔ

ՆԱԽՆԵԱՑ

# Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաջիկայ գրքուկիս նպատակը Նախնեաց Վաճառականութեան պատմութիւնը պիտի ըլլայ, ինծի կը թուի որ՝ ասիէ աւելի նարկաւոր և միանգամայն շահաւէտ նիւթ մը չի կրնար գտնուիլ :

Վաճառականութեամբ է որ մեր պիտոյիցը և հանգստութեան գրեթէ մեծ մասը ձեռք կը բերեմք, մեր ուտելեաց մեծ մասը, մեր հագուստին կտուրը, փայտը՝ որով մեր բնակութիւնը կը շինեմք, զանազան նիւթերը՝ որով կենաց ընթացքը կը զարդարեմք, և վերջապէս այն դեղերը որ մեզ մահուանէն կազատեն՝ ընդհանրապէս ուրիշ երկիրներու բերքերն են :

Նախախնամութիւնը այնպէս տնօրինել է, որ աշխարհիս զանազան կողմերը այլ և այլ կլիմայ ունենան, հողերնին պէս պէս ըլլան, որով կարող ըլլան տեսակ տեսակ բոյսեր և կենդանիներ առաջ բերելու և իրենց ծոցը այլ և այլ հանրեր պարունակելու :

Թէ որ աշխարհս ուրիշ կերպով ստեղծուած ըլլար, այսինքն,

ամէն երկրի զիշերն ու ցորեկը մի և նոյն երկայնութիւնը ունենար, ցուրտը և տաքը մի և նոյն աստիճանը ըլլար, ամէն հող մի և նոյն բոյսն առաջ բերէր, այն ժամանակ երկրիս զանազան մասերուն հետ վաճառականութիւն չէր կրնար ըլլալ:

Ան ատեն ամէն երկիր աշխարհիս առաջ բերած բոլոր բերքերը իր մէջը կը պարունակէր, ո՛չ ինք իր չունեցած մէկ բանը կրնար գտնել՝ և ո՛չ ալ ուրիշ ազգերն իրեն բով:

Բայց այլ և այլ երկիրներուն կլիմաները՝ և հետևաբար իրենց բերքերուն զանազանութիւնը կը հարկադրէ մարդիկ, որ իրարու հետ հաղորդակցութիւննին զարգացնեն, առաջ տանին:

Այս հաղորդակցութեան միջոցաւ ամէն երկիր՝ ուրիշ երկիրներուն բերքերը կրնայ ձեռք բերել:

Մէկ երկիր մը իրեն պիտոյքէն աւելի՝ բնակութեան նիւթեր կրնայ ունենալ, և միւսը հագուստի, թէ որ այս երկու բաղաբները իրարու հետ հաղորդակցութիւն չունենան, մէկ բաղաբին բնակիչներուն տունը աղեկու հագուստը գէշ, իսկ միւսին հագուստը աղեկ ու տունը գէշ կըլլայ. բայց այս երկու բաղաբներն իրարու հետ հաղորդակցելով՝ թէ որ իրենց պէտք եղածէն աւելին իրարու հետ փոփոխեն, երկու երկիրներուն բնակիչներուն տունն ալ հագուստն ալ աղեկ կ'լլայ:

Վաճառականութեան միջոցաւ՝ մէկ երկրին աւելորդ բերքերը՝ ուրիշ երկրի բերքերուն հետ փոփոխելով՝ այն աւելորդ բերքերը արժէք կը ստանան:

Գրեթէ ամէն ազգ, կրնա իրենց երկրին բերքերէն և կամ իրենց արուեստովը առաջ բերած նիւթերէն մէկ բանին՝ իրենց հարկաւոր եղածէն աւելի կ'ունենան. իսկ թէ որ այս աւելորդ մասը իրենք իրենց սրահն, արժէք չունենար:

Ինչ վաստակ կըլլայ Նորվեկիացիին թէ որ իր անասուններուն փայտերը իրեն պահէ, Շոտլանդիին թէ որ իր հանքերուն եր-

կամը դուրս չհանէ . Ամերիգացիին թէ որ իր բամբակը օտար երկիր չի գրկէ , կամ Չինաստանցիին՝ և Պրուսացիին՝ թէ որ իրենց մետաքսը քաղաքնին պահեն :

Այս բերքերը իրենց երկիրնին աւելորդ մնալով՝ անարժէք կըլլան , բայց օտար պէտք ունեցող երկիրներու գրկըվելով զին կըստանան , և ամէն ազգ այս կերպով վարվելով՝ մարդկային սեռին երջանկութեանը՝ և հանգստութեանը մեծ օգուտ կընեն : Վաճառականութիւնը իրաւունք ունի նաև մեր ուշադրութիւնը գրաւելու , քաղաքակրթութեան զարգացման օգտելուն համար :

Վաճառականութիւնը պատճառ կըլլայ գիտութեան և արւեստից շահաւէտ գիւտերուն ազգաց մէջ շուտով տարածվելուն :

Գիտութեանց մէջ՝ որ և իցէ օգտակար գիւտեր գտնելված են որ և իցէ նոր մեքենաներ հնարված են , զանազան ախտից դէմ որ և իցէ նոր դեղեր գտնելված են՝ ասոնք ամէնքն ալ վաճառականութեան հաղորդակցութեամբը շուտով աշխարհիս չորս կողմը տարածված են :

Գլխաւորապէս վաճառականութեան միջոցաւն է որ քաղաքակրթութեան լոյսը բարբարոս ազգաց մէջ ծագած է , տնտեսն աւելի վաճառականութեան հետևող ազգերը միշտ քաղաքակրթեալ ազգ եղած են :

Վաճառականութեան հետևելով՝ նոր ազգեր գտած են հետերնին առևտուր ընելու , գտած են այն ազգերը՝ իրենց հետ բաղդատելով բարբարոս վիճակի մէջ , և վաճառականութեան յարաբերութեամբը քաղաքակրթութեան լոյսը՝ անոնց մէջ ալ տարածվելու պատճառ եղած են :

Վաճառականութիւնը՝ ամէն հզօր տէրութեանց հիմնադրութեանը պատճառ եղած է , որ իրենց վաճառականութեանը հետ՝ իրենք ալ կը զօրանային՝ և երբոր վաճառականութիւննին տկարանար՝ իրենք ալ կը փճանային :

Վաճառականութեան զօրաւոր ազդեցութիւնը Ազգաց՝ և մասնաւոր անձանց՝ հարստութիւնը զարգացնելու համար՝ ամէն ժամանակ զիտնական և տաղանդաւոր մարդիկ գտնուած են, անոր սկզբնական հիմքը բացայայտելու ջանացող՝ և անոր վրայ գտնելու յաջողութեան պատճառները զննող՝ ու ձախորդութեան պատճառներն ալ իմացող:

Մեր հիմնական ժամանակը՝ այս խնդիրներուն վրայօր շատ զիրբեր հրատարակել սկսած են. հիմա վաճառականութիւնը՝ չէ՞ թէ արհեստի նման հետևութիւն ունի, ալ գրեթէ խորին զիտութեան մը պէս կը սովորուի, որ մեր<sup>(1)</sup> հիմնական համալսարանները՝ (Իւնիվերսիթի) այս ամենահարկաւոր գործին համար ճարտարամիտ ուսուցիչներ տնօրինած են, որ վաճառականութեան հիմանցը և սկզբանցը վրայ դասատուութիւն ընեն:

Յառաջիկայ պատմութեանս նպատակն է հին եզիպտացոց ժամանակուան եղած վաճառականութիւնը նկարագրել:

Զրհեղելէն քիչ մը ետքը (որ աշխարհիս ստեղծմանէն հազար վեց հարիւր յիսուն և վեց տարի ետքը եղաւ) Նոյ նահապետին սերունդները սկսան տարածուիլ աշխարհիս զանազան կողմերը, և հողագնոտոյս տիրապետել, իրենց սեպհականեալ կալուածք ընելու համար:

Սեմին ընտանիքը՝ Ասիոյ արևելեան կողմերը գնացին, և Նոյ ինքն կը կարծելի թէ արևելքի հեռուները գացած և Զինացոց տէրութիւնը հաստատած ըլլայ<sup>(2)</sup>. Քամին ընտանիքն ալ Փոքր-Ասիոյ կողմերը բնակեցան, և ղէպ ի Աֆրիկէ տա-

(1) Անգղիացոց համար կըսէ:

(2) Աւելի հաստատ բնատեղ ունինք Նոյ նահապետն Հայաստան մնաց ըսելու. իսկ Զիններուն արևմտեան կողմէն ետքերը հոն գաղթած ըլլալնին ստուգված է:

բաժվեցան, նոյն ժամանակը Յսպիեթի ընտանիքն ալ Եւրոպիոյ տիրապետեց :

Եզիպտոսը՝ Քամին որդին (Մէստրէմ) ճիմնեց քիչ մը ետքը, այսինքն, Քրիստոսի թուականէն 2200 տարի առաջ. ներքովն ալ Բարեկօնեան տէրութեանը հիմը դրաւ, և Քրիստոսի թուականէն 558 տարի առաջ՝ մեծն Կիւրոս Բարեբոնեան միապետութիւնը նուանեց, տասն և երեք տարի ետքը՝ իր տղան Եզիպտոսի տիրապետեց :

Ուրեմն Եզիպտոս 1700 տարի շարունակաբար ինքնագլուխ թագաւորութիւն մըն էր, և թէպէտ եզիպտացիները ատեն ատեն ապստամբութիւններ հանեցին, բայց միշտ սքարսից նպատակութեան ներքեւ մնացին, մինչև որ այս միապետութիւնը Մեծն Աղերսանդրի ձեռքով տակն ու վրայ եղաւ :

Աղերսանդրի մեռնելէն ետքը (որ եղաւ 324 տարի Քրիստոսի թուականէն առաջ) անոր լայնածաւալ միապետութիւնը բաժնրվեցաւ, և Եզիպտոսը Պշդոմեոս Լակրուս մականուանելոյն բաժին ինկաւ, և ահա նորէն անկախ տէրութիւն մը եղաւ, բայց միապետները, նախարարներն՝ ու զօրքերն ազգաւ յոյն էին :

Ասկէ՝ այս տէրութիւնը առաջիններէն տարբեր անուն մը ստացաւ, որ կոչեցաւ յոյն եզիպտական միապետութիւն : Այս տէրութիւնը գրեթէ 500 տարի տևեց, բայց յետոյ հռոմայեցոց հզօր տէրութենէն նուանելով Եզիպտոս հռոմէական Քաւառ մը եղաւ :

Իմ նպատակս Եզիպտոսի պատմութիւնը շարունակել չէ, արդէն խնայաք որ Եզիպտոս 1700 փարի անկախ միապետութիւն մըն էր, 200 տարի ալ սքարսից լուծին տակն էր, և 500 տարիի չափ ալ յոյն Տիրապետներու տակ՝ կրկին անկախ միապետութիւն էր, ուրկէ կիջնէ Եզիպտոսի պատմութիւնը,

որ Քրիստոսի թուականին սկիզբները հռոմէական հօգօր Տէրութեան ներքև մտած էր :

Իմ նկարագրութիւնս պիտի ըլլայ նախ 1700 տարուան մէջ եզրագոյն անկախ միապետութեան ժամանակը :

Պատմութիւններէն բաղված վաճառականութեան վրայ՝ նիւթերնիս շատ տխր է, վասն զի այս մասին վրայ եզրագոյն հեղինակներէն մնացած՝ տպված՝ կամ ձեռագիր գիրք մը ամենևին չունիմք, միայն թէ Աստուածաշունչ տերը գիրքէն Եզրագոյն վրայ՝ բիշ մը բան կը տեղեկանամք :

Նաև նոյն ժամանակուան յոյն հեղինակները՝ որ զիտութիւն տվերու համար՝ Եզրագոյն կը ղրմէին, ուրիշ արտոճարաններուն պէս՝ անոնք ալ վաճառականութեան վերաբերեալ գործոց վրայ բիշ հոգ տարած են :

Թէ որ մեր բոլոր պատմիչները՝ հետաքրքիր ըլլալով՝ առևտուրի սկզբնական սրտոնաւորները գրելու հոգ տանէին, ինչպէս որ հաւատարմութեամբ գրած են զանազան արտոճարանները.

Թէ որ վաճառականութեան մանրամասն ճիւղերը նկարագրէին, ինչպէս որ ըրած են պատերազմներու և պաշարմանց համար .

Եւ թէ որ վաճառականութեամբ իրենց հայրենիքը հարստացնելու պատճառ եղող անձիւնքը հռչակելու հոգ տանէին, ինչպէս որ գրած են բիւրաւոր անձանց կորստեանը արտոճառ եղողներուն վրայօր .

Թէ որ ասոնց հոգ տարած ըլլային՝ մարդկային սեռին հիմաւ կուան վիճակին շահաւէտ բան մը ըրած կըլլային :

Արդէն Նշանակեցիմք որ ալժմեան վաճառաւորութիւնը՝ չէ թէ միայն իրքեւ արհեստ մը կը սովորուի՝ հապա իբր գիտութիւն մը :

Եզրագոյն վաճառականութեան պատմութեանը վրայօր

խօսած ժամանակնիս՝ ջանալու եմք իրօք պատմութիւնը գիտութեան սկզբունքով բացատրելու, այնպէս որ մէկը միւսը բացատրէ, այսինքն .

Նախ . Եթէ մէկ երկրին վաճառականութիւնը իր բերքերէն կախում ունի, թէ որ մէկ երկիր մը բնակչաց հարկաւոր եղած բերքերը կը բուսցնէ՝ այն ատեն հարկ չըլլար դրսէն ապրանք գնելու, և եթէ ամեննին բերք չունենայ՝ այն ժամանակն ալ բան մը չունենար ծախելու . իր բերքը կը կարգադրէ իր ծախքը :

Հիմա դիտեմք հին Եգիպտոսի բերքերը :

Հանքերու վերաբերեալ բան չունէր, պատուական մարմարիօն բարէ ի զատ, բայց այն ալ իր երկրէն դուրս չէր ծախվէր, կարելի է որ ուրիշ ազգերը իրենց հարկ եղածին չափ ունենայնուն պատճառաւ :


Եգիպտոսի ձկնորսութիւնը՝ շատ առատ էր, սակայն հետուտեղ երկնալը անհմար էր, վասն զի աղիլ ու ապխտեղ չէին գիտներ, ինչպէս որ սովորութիւն է հիմնական ժամանակս :

Բուսային բերքերէն առատ ցորեան ունէր. շատ տարիներ Եգիպտոս իր շրջակայ ազգացը և զուտացը մթերանոցը եղած էր ձէպէտ և իր երկիրը բնականաբար անբեր էր, բայց նեղոս գետին տարեկան առատանալէն և շրջակաները ոռոգանելէն՝ զրեթէ տարին երկու անգամ և երբեմն երեք անգամ արմտիք կրնար բուսցնել :

Նաև Եգիպտոս՝ առատ կանաչեղեններ ալ կը հասցընէր, մասնաւորապէս բնտիք տիւր՝ որ շատ անուանի էր. փայտի կողմանէ շատ նուագութիւն ունէր՝ անտառներ չունենալուն պատճառաւ :

Պտղոյ ծառ բիչ ունէր՝ և այգի ալ չունէր, վասն որոյ զինի ալ չէր հասցընէր :

Նեղոսին տարեկան հեղեղումը իրացընէ շատ օգուտ կընէր



երկրին առատ ցորեն բուսցընելուն համար, բայց պողոց և ուրիշ ծառերուն ապականութեանը պատճառ կըլլար :

Նեղոս գետին առատանալուն և հեղեղմանը պատճառ՝ Եթովպիայի կանոնաւոր անձրևներն էին, ուր գետը կըսկսէր աճել յունիս ամսոյն վերջերը, և խիստ բարձրանալու ժամանակն էր օգոստոսի կէսին միջոցները, որ Եգիպտոս իբր Սէ մէկ մեծ ծովու մը տեսարան կրնէր, ու բազարները և զիւղերը՝ մէկ մէկ կըզլոյ կը նմանցնէր, վերջապէս ջուրերը աստիճանաբար նուազելով՝ նոյեմբեր ամսոյն վերջերը՝ գետը իւր կանոնաւոր աստիճանը կիջնէր, և այս միջոցիս հողը կամ ցեխը ջրէն կը զըստէր, և ջուրին բաշխած ժամանակը բոլոր երկիրը պարարտութեամբ կը ծածկէր, որ Հերոդոտոսի ըսածին նայելով՝ սերմանելը անանկ կը դիւրացնէր որ գրեթէ միայն սերմը անմշակ երկրին վրայ ցանելը բաւական էր :

Եգիպտոս անասունի կողմանէ նուազութիւն ունէր, բանի մը զաւառ միայն՝ կով, ոչխար և այծ կը սնուցանէր, այն ալ կերակրոյ տեղ չէին գործածեր, վասն զի իբր սուրբ կենդանիք Աստուծոյ տեղ կը պաշտէին զանոնք :

Եգիպտացիք յետին աստիճանի խոզէն կը խորշէին, այնպէս որ ե՞մէ մէջերնուն մէկը խոզ պահող ըլլար՝ անոր հետ խնամութիւն չէին ըներ. հաւանականաբար այս նախապաշարմունքը՝ օրոյն տարութենէն առաջ եկած էր, որովհետև խոզի միս ուտելը մորթի բորոտութիւն կը պատճառէ :

Եգիպտոս հոշակեալ էր խիստ ընտիր տեսակ ձիեր հասցընելուն համար, Սէ պատերազմի ժամանակ և Սէ ուրիշ ազգաց հետ մննամարտութիւն ըրած ժամանակնին՝ և Սէ հանդեսի օրերը՝ ձի և կառք կը գործածէին. լեռնային երկիրներու ձիերուն արժէքը նուազ կըլլար :

Եգիպտոս իր ձեռագործված վաճառքներուն մէջէն ի վաղուց

հետէ կտաւի և Յուդէի կողմանէ հռչակաւոր էր. Եզրիպտոս առատ բնան ալ կը բուսցնէր, ուրկէ կտաւ կը շինէին և այնպէս լաւ կը զործէին որ մէջի թելերը դժուարաւ կը տեսնուէր, Յուդէն ալ Բաբելոնս կոչված տեսակ մը տունկէն կը շինէին, բայց յետոյ սկսան բամբակէ ու հին կտաններէ շինել:

Եզրիպտոսէն ուրիշ երկիր զացած վաճառքները՝ ցորեն, կտաւ, ձի և Յուդէ եղած ըլլալու էր:

Աստուածաշունչի պատմութեանը մէջ՝ հին Եզրիպտոսի բերքերուն վրայ այլ և այլ ծանօթութիւններ կը գտնուի:

Յովսէփի պատմութիւնն ալ՝ մեզի կը ծանուցանէ որ ամէն ազգ՝ ցորեն զնելու համար Եզրիպտոս կերթային, և Խորայէլացիները իրենց երկիրը վերադառնալուն՝ երգելով փառափառութիւն կուտային, Փարաւօնի կտրքերէն և հեծելազօրքէն անվնաս հայրենիքնին հասնելուն համար:

Նաև կը գտնուի որ Սողոմօն ալ Եզրիպտոսէն ձիեր բերել կուտար և իր վաճառականներն ալ անկէ կտաւի մանած բերել կուտային:

Երբոր Յովսէփ փոխարքայ անուանեցաւ, և միանգամայն հոգաբարձու, բարակ կտաւեղենները և հրէից բաժնայական զգեստը ազնիւ բնանէ ըլլովիլը հարկ մը սեպուած էր, բայց ամայի տեղվանքը՝ այն կտաւը գտնել անհնարին և իր նիւթը մի միայն Եզրիպտոսի բերք ըլլալուն՝ անկէ բերելու ստիպված էին:

Սողոմօնի ժամանակները, հրէից տիկիւններուն անկողինները Եզրիպտոսի ձեռագործ պատառակալ և բարակ կտաւէ կը զարդարէին, և ատենէ մը ետքը տիւրացիք իրենց նաւերուն առազատոր և զարդարանքը Եզրիպտոսի կտաւէ զործածելնին զրուցված է:

Խորայէլացիները՝ անտպատին մէջ՝ մանանայի վրայ զան-

զատ ըրած ժամանակին, « Զի յիշեցաք զձուկն զոր ուտեաք յԵգիպտոս ձրի, և զսեխն, և զմեղրապուպ, և զպրասն, զտխն, և զսխտոր » : (Թուոց 11 Գլ. 5 համար) :

Ատնք մեզի զուշակել կուտան որ Եգիպտոս առատ ձուկ, և բանջարեղէն կը բուսցնէ եղեր, և ուրիշ դիպուածով ալ մեզ կը տեղեկացնեն, այսինքն Թէ « Մինչ նստեաք առ կաթսայ մտն, և ուտեաք հաց ցյազ » : (Ելից 16 Գլ. 5 համար) :

Ասկէ ալ կիմանամք որ երկրին արդիւնաւորութեան համար՝ անշուշտ հացը առատ էր, և որովհետեւ խրայէլացիները՝ հովուութեան կը սպարապէին, և ոչխարներ ու հօտ կարածէին, վասնորոյ առատորէն միս կունէնային :

Եգիպտացոց պէս միս ուտելու արգելք չունէին, վասն զի Եգիպտացոց կրօնամոլութիւնը Թոյլ չէր տար միս ուտելու, կովը իրենց աստուածը ըլլալուն համար :

Միւս կողմանէ ալ սուրբ գրքի մէջէն զանազան տեղեկութիւններ ալ կը քաղեմք, Եգիպտոսի չնասուցած բաներուն վրայ : Յովսէփի եղբայրները՝ զինքը Եգիպտացիներուն ծախեցին, որ իրենց ուղտերովը Քաղայածէն կուգային՝ զէպ ի Եգիպտոս երթալու :

Յակոբն ահապետը՝ նոյն ժամանակը որ իր զակլըները Յովսէփին զրկեց, անոնց ըսաւ, « Արարէք զայդ՝ առէք ի պտղոյ երկրիս յամանս ձեր, և տարայք առնն պատարագս, ուտին և մեղր, խունկ, և փստուղ և բեւեկն, և ընկոյզ » : (Ծննդոց 45 Գլ. 11 համար) :

Այս բերքերը քանանացոց երկրին մէջ առատ կը բուսնէին, որ Եգիպտոս չունէր. անոր համար հաճելի ընծայ մընէր փոխարքայի մը համար, ինչպէս մեր մէջը պատուանշան ընծայելը :

Մովսէս մարգարէն Աւետեաց երկիրը նկարագրած ժամա-

նակը՝ բաջ ատենաբանի մը նման կը նկարագրէր, Քանանու երկրին Եգիպտոսէն պատուական ըլլալը հասկըցնելու համար, « Զի Տէր Աստուած բո տարցի զբեզ՝ յերկիրն բարի և յաղթ, ուր վտակքն չրոց և աղբիւրք անդնոց բղխեն ընդ դաշտս և ընդ լեռինս, երկիր ցորենոյ, գարւոյ և զինւոյ, այգեաց և նոննեաց, երկիր ձիթենեաց, իւղոց և մեղու, երկիր՝ յորում ոչ աշխատութեամբ կերիցես զնաց բո, և ոչ կարօտանայցես իմիր ի նմա. երկիր՝ որոյ բարինք իւր երկամ, և ի լեռանց նորա հստանիցես պղինձ. » (Օրինաց 8, Գլ. 7, 8, 9, 10, հաւատ) :

Այս խօսքերէս իմանալու է թէ Եգիպտոսի երկիրը ընդհակառակն է. Քանանու երկիրը Եգիպտոսի պէս դաշտ չէր, ու հոն անձրև չկայ որ՝ երկրին բերրի ըլլալուն պատճառը՝ զետին յորձուձենէն ըլլայ, այլ այնպէս երկիր մըն էր որ երկնից իջած անձրևով կոռօզվէր, և աւելի գեղեցիկ տեսարան ունէր, և ամէն տեղ չրով լի էր, իրենց ու խաշանցը համար. վասն զի ջուրի վըտանկներ ունէր, որ ձորերէն ու բլուրներէն կը հոսէր : Եգիպտոսի պէս՝ չէ՛ թէ միայն ցորենն ու գարի կը բուսցնէր, հապա ունէր այգիներ ու թզենիներ, նոննիներ ու ձիթենիներ, ու մողր, որ Եգիպտոս ասոնց մէկն ալ չէր հասցնէր. ասոնցմէ ի գատ Եգիպտոս պղինձի ու երկամի հանքեր չունի, բայց՝ Քանանու երկիրը անանկ երկիր մըն է, որուն բարինքը երկամ և ի լեռանց նորա՝ պղինձ կրնաս հատանել :

Երկրորդ. Կը տեսնեմք որ երկրի մը վաճառականութիւնը՝ բնակչացը գործածելու սովրած բաներէն կախում ունի, ու այս գործածութենէն ալ իր դուրսէն առած ապրանքը կը կանոնաւորէ :

Գործածելու սովրած բաներ ըսելով՝ մէկ երկիր մը բնակիչներուն կարևոր եղած բաները կ'իմանամք, այսինքն՝ ուտելիք, հագնելիք, տուն, վերջապէս այն ամէն բաները, որ կը մա-

շին, և ասոնց կրսեմք սպառելիք. թէ որ այն սպառելի նիւթերը ուրիշ երկիրներուն նիւթերն են, իրենց գործածութիւնը վաճառականութիւնը կը ծաղկեցնէ. եզրպտացիները զլիսուորապէս խոտեղէն կերակուրով կապրէին, որովհետեւ հոգեփոխութեան կարծիքին կը հաւատային. այսինքն, մեռնելէն յետոյ՝ հոգինին անասունի մը անցնելուն հաստատ կարծիք ունէին և հետեւաբար ուրիշ անասուններու հոգեփոխութեան, մինչև երեք հազար տարի փոփոխութենէն ետև կրկին մարդու կերպարանք ստանալուն հաստատ կը հաւատային, ասոր համար միս ուտելէն կզգուշանային, վախնալով թէ չըլլայ որ իրենց նախահայրերուն միսը ուտեն: Բայց այս ալ գիտնալու է՝ որ չէ թէ բոլոր եզրպտացիք միս ուտելէ կը խորշէին՝ հապա ասոր վրայ կարծիքի մեծ տարբերութիւն կար մէջերնին:

Այն անասունները՝ որ մէկ գաւառի մէջ չէին ուտվեր, միւս գաւառին մէջը կուտվէին, ձուկ չուտող ալ կար, բայց շատերը անխիղճ կուտէին, ըսել է որ եզրպտացիները բանջարեղէն կուտէին, և խմելիքնին առ հասարակ Նեղոս գետին ջուրն էր. կրսեն թէ պատուական համ մը ունէր, ու շատ ալ աննդարար էր:

Իրենց տօնի կամ հանդէսի օրերը կերպ մը ըմպելիք կը գործածէին որ գարիէ շինուած էր, կարելի է թէ մեր հիմակուան գարեջուրին, պիրս, նման բան մըն էր, որովհետև այգեատան չտնչենալուն զինի չէին կրնար խմել, և հաւատալ կը սովրեցնէին որ զինին սատանային արիւնն է:

Այս մասին վրայ (Միխայէլիս) Բագուստրօսիւն Մոխիսական օրինաց զրբին մէջ կըսէ, թէ Եզրպտացոց օրէնադիրները այն օրէնքը հաստատ պահելու համար՝ հաւատքը պատճառ կը բռնէին, որ նոյն ժամանակի կարծեացը նայելով իրենց օգտակար կը համարէին:

Այն անասունները՝ որ մշակութեան համար հարկաւոր էին, իրենց իբր շատուած պաշտել կուտային:

Եզրիպտոս բաւական ըլլալու չափ զինի շնացնելուն իրենց օրական խմելիք մը չէր ըլլար, և ուրիշ երկիրներէ բերել տալն ալ իրենց խիստ միլասակար առևտուր մըն էր. սրովհետև ուրիշ ազգերու ստակ վճարելու պիտի հարկադրէին:

Ասանկ պարագաներու մէջ՝ ինչ կրնայ ընել՝ միայն օրէնքները բաւական չեն ըլլար, զուարճութեան առիթ եղող զինին՝ դուրսէն չիբերլի ըսելու: Այս տեսակ օրէնք մը զնելլ՝ Շուէտի, Տանիմարբայի, Բրիտանիայի և Գերմանիայի համար՝ զինին առանց հարկի խմելու հրաման տալու պէս բան մը ըսել է, վասն զի՝ առ հասարակ մարտէն կը փախցնեն:

Անոր համար՝ Եզրիպտոսի օրէնդիրները՝ հռչակած էին թէ՛ զինին աստանայական հնարմունք մըն է. բայց սակայն քաղցուն, շիրան, չընթուելէն առաջ խմելու ներում տրված էր:

Վերին Եզրիպտոս քիչ մը խաղողի տունկ կը բուսցնէր, անշուշտ երևելի անձինք խաղողը կուտէին ու քաղցուն ալ կը խմէին, ինչպէս որ Եննոց գրքին մէջ Փարաւօնին համար Թարմ խաղողի ջուր խմելը կը նշանակէ, բայց թէ խաղողը և թէ քաղցուն հասարակութեան պէտք ըլլալու չափ առատօրէն դուրսի երկիրներէն բերելը արգիլեալ էր:

Եզրիպտացիք ուրիշ հին ազգերուն պէս՝ երկար պատմութեան և վերարկու կը հագնէին, որ ինչուան ծունկերնին կը հասնէր, առանց Թևի ու մէջքերնին զօտիւով:

Հռոմայեցոց մէջ՝ այս հագուստը բուրդէ էր, իսկ եզրիպտացոցը բնանէ. վերարկունին կերպ մը հագուստ էր, որ ներքնազգեստին վրայէն կը գործածէին, և մինչև ոտքերնին կը հասնէր, զանազան կերպերով հագնողին կամացը համեմատ:

Գուլպա չէին գործածեր, բայց՝ սրունքնին երբեմն նեղ բա-

Յով մը կը փանթէին, կոշիկի տեղ կաշիէ շինված հողամասի կը գործածէին, որ կապով մը ոտերնուն կը կապէին, և զըլխարկ ալ չունէին, բայց երբոր գլուխին ծածկել ուզէին, վերարկունին մինչև վեր կը բաշէին :

Կանանց զգեստը՝ մարդոց նմանն էր. բայց միայն երկար ձևերով էր, որ մինչև ոտերնին կը հասնէր, և զրեմէ հիմակուան հագուստին բիշ շատ կը նմանէր, բայն և ներքնագլուստի նման էր, և մէջքերնին գոտիով փանթած, այս երկու զգեստը իրենց օրական ու պահեստի հագուստնին էր, որովհետև օղը տար ըլլալուն՝ աւելի հագուստի կարօտութիւն չունէին :

Ժողովրդեան աղքատ մասին հագուստը նոյնն էր, միայն առանց ներկի՝ իր բնական գունովն էր, բայց հարուստ և ունեւորներունը այլևայլ գունով ներկըված էր, և աւելի նախապատուեալ գոյնը ծիրանին էր :

Հագուստնին բայն՝ մեծ ու միակերպ ըլլալուն՝ ամենուն ալ կը յարմարէր, և նորաձևութիւն չըլլալուն՝ որդեց որդի կը մնար. հարուստ և պատուաւոր մարդիկ բազմամիւ ազանակիք պատրաստ կը պահէին, զորս իրենց եկող հիւրերուն կուտային :

Յովսէփ իւր եղբարցը՝ մէյ մէկ պատմուհան տուաւ, ու իր Բէնիամին եղբօրը մասնաւոր պատուոյ նշան ցոյց տալու համար հինգ հատ շնորհեց :

Գանբ հիմա իրենց շինուածոցը վրայ. տանարներնին և մեծերուն տուները բարէ էր, իսկ հասարակութեանը աղխաւ, որ զեխով ու յարգով շինված էր ու արևը չորցուցած էր. իրենց կահ կարասիքը՝ խիստ բիշ էր, սեղան ու ամոռ պէտք չէր, որովհետև նաշերու ժամանակնին՝ գետինը լամ մը փռելով՝ բոլորաբը կը նստէին : Այսպիսի տար երկիր մը անկողնոյ հարկաւորութիւն ալ չունէր, միայն վերարկուն ցօրեկը հագուստի տեղ կը ծառայէր, զիշերն ալ վերմակի :

Արդէն տեղեկացար վերի գրվածներէն որ՝ եգիպտացիներուն գրեթէ բոլոր սարսաձ նիւթերնին՝ ուտելիք, հագնելիք, նաև բնակելիք իրենց երկրին բերքերէն էր, և հետևաբար օտար տէրութեանց հետ առևտուր բնելու առիթ չունէին. տակայն եգիպտացոց մէջ քանի մը ստորութիւններ կային, որ պատճառ կուտային փոքր ինչ վաճառականութիւն բնելու բարեկամ ազգաց հետ, այսինքն, մեռելները համեմտի դիապատելն, ինչպէս որ ըսինք, հոգեփոխութեան հաւատալնին և ինչպէս որ բացատրեցինք, հոգեփոխութեան ստուգարանութիւնք, որ հոգին մէկ տեղէն ուրիշ տեղ մը փոխալիլը, յորմէ հոգին մէկ մարմինէն ուրիշ մարմնոյ փոխադրուիլը կը հասկըցվի, որ ուրիշ նշանակութիւն մի ևս ունի յունարէն բառով մեքսանորֆօսիս որ նշանակէ այրակերպութիւն. այսինքն, հոգին մէկ մարմինէ մը ելնելն ու անմիջապէս ուրիշի մը անցնիլը, և անով իր առաջին կերպը փոխելը կը նշանակէ :

Եգիպտացիք հաւատային թէ՛ անձի մը մեռնելէն յետոյ՝ մինչև որ մարմինը չսպականէր՝ հոգին վրայէն չէր երթար անասունի մը մարմնոյն մէջ մտնելու :

Համեմտի դիապատելու համար՝ մարմնոյն ներսի կողմը կամ բոքը համեմեներով լաւ մը ղեղելով՝ երկու կամ երեք ամլաի չափ բորակի, աչքրիքր, մէջ կը թողէին, և յետոյ դուրս հանելով՝ քիմիական նիւթով մը կը պատէին, այնպէս որ՝ դուրսի օդը ներս մտնելը անկարելի կըլլար, և ստանկ հազարաւոր տարի առանց սպականութեան կը մնար :

Գործածված ղեղերն՝ ու համեմեները՝ Եգիպտոսի բերք չըլլարուն՝ ի հարկէ Հնդկաստանէն կուգար, ուղղակի և կամ արարացի վաճառականոց միջոցաւ, վասն որոյ Արաբիայի համեմուծք կը կոչէին, այսպէս կը կոչվէր ալ նէ՝ Արաբիայի բերք չէր, միայն Հնդկաստանէն կուգար. ուրեմն Եգիպտոսի



Այս ալ յիշելու արժանի է, որ բոլոր Եգիպտոսի վաճառականութիւնը դուրսեցիները կընէին, և ոչ եգիպտացիները :

**Չորրորդ.** Մէկ երկրին վաճառականութիւնը՝ իր մէջ և օտար երկիրներու հետ ունեցած ճանապարհներու հաղորդակցութիւնէն կախում կունենայ :

Հաղորդակցութեան դիւրութիւնը՝ երկրի մը վաճառականութեանը հարկաւոր մասն է, ինչպէս կրնայ փոխադրվիլ երկրի մը ապրանքը՝ առանց ճանապարհի, առանց ջրանցքի ու գետի :

Նաև հաղորդակցութեան դիւրութիւնը՝ օտար երկիրներու հետ ըլլալու՝ վաճառականութեան ալ հարկաւոր է, վասն զի՝ առանց ճամբու ինչպէս իր ծախելու ապրանքները ծովուն եզերքը կրնան իջեցնել՝ կամ թէ դուրսերէն ծախու առնելով ապրանքները՝ ինչպէս երկրին ներսի կողմերը կրնան երթալ՝ կամ խրկրվիլ :

Եգիպտոսի ներսի հաղորդակցութիւնը շատ մեծ էր, ջրանցքներու միջոցաւ, որ Նեղոս գետէն կը զատվէին, որովհետև այս գետին յորդութենէն կախեալ էր երկրին բերքերուն առատութիւնը, ջրանցքներ շինված էր, ջուրը ամէն կողմ տարածելու համար, անանկ որ՝ բոլոր երկիրը առհասարակ ջուրով կը պարարտանար :

Այս ջրանցքները երկրին այլևայլ կողմերուն հաղորդակցելու կը ծառայէին՝ նաւակներու միջոցաւ, ջրանցքներէն զատ՝ լուճամբայ ձևացնելը՝ շատ դիւրին էր, վասն զի երկիրը տափարակ էր, ու անտառ ալ չունէր մաքրելու :

Ասկից մեծ դիւրութիւն կար՝ Եգիպտոսի գիւղի բերքերը՝ քաղաքներուն հետ փոխելու, և օտար երկիրներու ծախելու բերքերը՝ ծովեզերքը իջեցնելու :

Իր նաւահանգիստները թէպէտև շատ չէին, բայց բաւական

էին իր արտարին վաճառականութեանը համար, ինչպէս որ փորձառութեամբ ստուգեցինք վերջերքը :

Նաև շինելու մասին՝ Եզրիպտոս՝ տախտակը, պղինձն ու երկաթը փունիկեցիներէն ծախու պիտի առնէր, առատ կանեփ ունենալուն բազմատեսակ առաքաստցու ունէր :

Ըսված է թէ Եզրիպտոս ժամանակ մը մինչև չորս հարիւր նաւ ունեցած է, բայց չեմք գիտեր թէ ինչ մեծութիւն ունէին, և ինչ գործի կը բանեցնէին. շատ հաւանական է որ Եզրիպտոսի և Հնդկաստանի մէջ եղած վաճառականութեան կը գործածէին:

Մեզի գարմանք կուգայ թէ ինչո՞ւ Եզրիպտոս աւելի ծովային տէրութիւն մը չէ՛ եղեր, քանզի երկիրը զրեթէ տարուան երեք ամիսը չուրի տակ կը մնար, և ջրանցքներով ընդհատեալ էր, ու ժողովուրդը անշուշտ նաւարկելու վարժրված էին, որ քիչ մը ծովային գիտութիւն բաւական էր ծովուն վրայ նաւարկելու :

Նաև շինելը իրենց շատ դժուարութիւն չէր, ու բուրբեր շինելու տեղը նաւատորմիդ կրնային շինել, բայց այս ալ յիշելու եմք որ Եզրիպտոսի օրէնքը ու կրօնքը ամենեին բաշարութիւն չէր տար օտար երկիրներու հետ վաճառականութիւն ընելու. իրենց քաղաքականութիւնը երկրագործութեան վրայ հաստատված էր, ինչպէս ետբերն ալ իսրայէլացիներն եղան:

Նկատելու եմք որ հին եզրիպտացոց ժամանակները նաւարկութեան արհեստը կատարեալ գիտցրված չէր, և զլիաւորաբար իրենց ծովախանցը վրայ կը նաւարկէին, թէպէտև աստղաբաշխութեան ըստ բաւականին տեղեակ էին, բայց նաւավարներուն կողմնացոյց գործածելը իրենց անծանօթ էր :

Հինգերորդ. Մէկ երկրի մը վաճառականութիւնը իր մէջը եղած արհեստներէն ու գիտութիւններէն կախում ունի :

Արհեստներուն ու գիտութիւններուն մէկ քանին հարկաւոր են վաճառականութեան համար, չէ՛ թէ միայն պէտք է որ մարդ

այն աստիճան քաղաքակրթութեան հասած ըլլայ՝ որ սեպհական կալուածքի իրաւունքը, քաղաքական կառավարութեան ձևը՝ և կենաց հարկաւոր արհեստները հասկնալուն է, այլ և պէտք է տեղեակ ըլլալ մանր հաշիւներ ընելու, նաւերու կազմութեան՝ ու նաւարկութեան արհեստին հմտացած ըլլալու :

Աստուածաշունչէն բաւական տեղեկութիւն կը բաղեմք եգիպտացոց խմաստութեանը վրայ :

Ըսված է Յէ Մողմոնի խմաստութիւնը եգիպտացոց բոլոր խմաստութեանէն աւելի էր, և Մովսէս եգիպտացոց բոլոր խմաստիցը հմուտ էր :

Իսրայէլացոց մեքենական արհեստին տեղեակ ըլլալնին կը յայտնէ մեզի անասարտի մէջ տաճար հիմնելնին, որ մեծ վկայութիւն մըն է եգիպտացոց այս արհեստը զխոնարհուն :

Իսրայէլացիները սկզբնաբար հովիւ էին, և այս արհեստը իրենց Եգիպտոս եղած ժամանակնին ուսած ըլլալու են :

Եգիպտացիներուն համար կըսվի Յէ երկրաշափութիւնը հնարած են, վասն զի Նեղոս գետին ողողմամբը երկրին զանազան կալուածներուն որոշիչ նշանները կառուրդէին, ու հարկ կըլլար նորէն երկրաշափական արհեստով երկիրը չափել, որ ամէն մարդ դարձեալ իր երկիրը ունենայ :

Երկրաշափական գիտութիւնը՝ հարկաւ ցոյց կուտայ չափելու արհեստը, և կը հաշուէ արժէքները :

Եգիպտացիները ստակի կողմանէ չինացոց պէս տպեալ դրամ չունէին, բայց միայն ոսկին ու արծաթը առուտուրի մէջ կշիռքով կը գործածէին, որ այս էր աշխարհիս հին ժամանակուան սովորութիւնը, տպեալ դրամ գործածելը Քրիստոսէն քանի մը դար առաջ զտնուած չէր :

Ամէն երկրի մէջ ի սկզբանէ դրամը կշիռով կը վճարէին : Արբանստ մաղման տեղ մը գնելու համար Եփրոնին կշիռով

չորս հարիւր սիկղ արծամ տուաւ, որ վանաւանանոց մէջ գործածված դրամն էր: Ասիկայ հասարակօրէն գործածված դրամէն տարրեր է, շատ հաւանական է որ կտոր արծամ կամ զաւագանաձև սսկի եղած ըլլայ, արժէքը ու գտութիւնը վրան գրօշմած:

Կը գտնենք նաև որ ստակը կշռելու սովորութիւնը Արբահամի ժամանակէն մինչև Էրեւմայի օրերը տեսեց. Սուրբ գրքին մէջ եղած հրատարակումը, ընդդէմ սուտ կշռոյ և խորամանկ չափոյ, թէպէտև կշռով ծախված իրաց վրայ կը յարմարի, բայց դրամի կշիռքի վրայ ըլլալուն սկզբնական յարաբերութիւն ունի, և երբոր Գանիէլ մարգարէն Բագրատասարին ըստ « Գուն առդկն կշռեցիք սրակաս կշիռով » կարելի է թէ յարաբերութիւնը դրամի վրայ ըլլայ, ու կըշռված ժամանակը սրակաս գտնված ըլլայ, վրան գրօշմած կշիռքէն:

Աս ալ իմաս առնելու ենք, որ հին ժամանակները դրամի համար արծամը կը գործածէին և ոչ ոսկին:

Հրէից սրատուծեանցը մէջ մինչև Գուլիմ մարգարէին ժամանակը ոսկին դրամի տեղ գործածվիլը չենք գտներ, շատ անգամ ոսկին յիշված է, բայց գրեթէ աղամանդեայ զարդի նման:

Սիկղ բառը դրամի անուն չէ, այլ կշիռք մըն է ու քիչ մարդու օգտաւոր կըլլայ գիանալը, թէ մէկ սիկղը գրեթէ կէս օնցայ է Անգղիոյ. այսինքն, իբր չարս սիրեմ. թէ որ արծամին օնցան հինգ շիլին, և ոսկիինը չորս շիւայ հաշուելու որ ըլլանք, մէկ սիկղ արծամը երկու շիլին ու կէս արժէք սլտի ունենայ, և մէկ սիկղ ոսկին երկու շիւայի չափ արժէք ունենալու է. մէկ հաստ ըսելովք անանկ կը կարծելի թէ մէկ սիկղ ըսել կուզէ, երբոր կը կարդամք երեսուն հաստ արծամի, պէտք է որ երեսուն սիկղ հասկնամք, այսինքն իբր երեսուն հաստ Անգղիոյ երկու շիլին ու կէսնոց արծամի:

Մէկ տաղանդը՝ Անգղիոյ հարիւր բաճն և հինգ շիտայ կը կշռէ, որ կը հաւատարի երեք հազար սիկիլի և մէկ տաղանդ արծաթը երեքհարիւր եօթանասուն և հինգ Անգղիոյ շիտայի արժէք ունեցած կըլլայ, և մէկ տաղանդ ոսկին Անգղիոյ վեց հազար շիտայի արժէքով :

Եզրիպտոսի մէջ շրջաբերված ստակը կտրելի է թէ շատ չէք, բանզի ամէն մարդ իր ուտելիքը ինքը կը հասցնէր, և հողնե-լիքը ինքը կը պատրաստէր, ու բան մը ծախու առնելու բիչ առիթ ունէր, ի հարկէ սակի ալ բիչ կարօտուածին ունե-նայու էր :

Որ և իցէ երկրի մը մէջ շրջանակումիւն ընող դրամը իրեն ներքին և արտարին առևտրոյն համեմատումիւն ունե-նայու է :

Նաև Յովսէփին պատմութենէն հաւանական կերևի որ տէ-րութեան տուած տուրքերնին դրամով չէին վճարեր այլ իրենց երկրին բերքերովը կը հատուցանէին :

Որբան որ ոսկին և արծաթը դրամի տեղ գործածելնին շատ չերևար՝ տակաւին իրաւունք ունինը կարծելու թէ Եզրիպտոսի վաճառականութիւնը առատօրէն դրամ գրաւելու նարատը ըլլալու էր : Ինչպէս որ մենք հիմակվան ժամանակը՝ կրտսեր կշիռ առևտրի՝ ափիայ մեծու մասամբ իրենց շահուորը ըլլալու էր, որովհետև դուրս ծախվածը շատ և դուրան առածը բիչ էր, որուն կշիռը դրամով հաւատարելու էր :

Կերևի թէ Յովսէփին ժամանակը ցորենը պատրաստ դրամով կը ծախվէր, և շատ պարագաներէ յայտնի է որ հին Եզրիպտոսը հարուստ երկիր մըն էր :

Երբոր խորայնացիները Եզրիպտոսէն պիտի ելնէին, ամէն կին իր գրացիներէն ապամանդ, ոսկի և արծաթ, ու պատմու-նան վախ առին, որ յետոյ Ահարոն ալ ձուրածոյ կուռք շինեց,

Եզրպատացոց կուռքերուն նմանցնելով՝ ի հարկէ ըսելու եմք որ Եզրպատացոց կուռքերը սակիւ շինուած էին :

Իբր հազար տարի յետոյ Գանիւէ մարզաբէն Եզրպատացոց սակիին և արծաթին և Թանկագին իրացը վրայ կը խօսի :

Որովհետև հիմնական նպատակնիս , Եզրպատուի նիւթոց վրայ խօսել չէ , անոր բուրբերը կամ ճարտարապետական դամբարանները նկարագրելու չեմք . միայն Թէ այս նշանակել կուզեմք որ ասոնք կառուցանելու ծախքը մեր երևակայածին չափ մեծ չըլլայը հաւանական է , որովհետև ապրուստը առատ և աժան ըլլալու էր , և Թագաւորին իր հարկը բերբերէն առնելուն՝ ասկից աղէկ մատակարարութիւն չէր կրնար ընել ժողովրդեան աշխատութեանը փոխարէն տալու :

Այս շէնքերը կառուցանելու մէկ պատճառը տարակոյս չկայ որ ժողովուրդը զբաղեցնելու համար էր , անանկ երկիր մը որ ժողովրդեան փափաքը անանկ բիչ ըլլալովը՝ առանց գործի մարդիկ խիստ շատ ըլլալու էին , որ կամ ձեռագործի զբաղելու էին , կամ պատերազմի և կամ դատարկ մնալու էին :

Եզրպատուը բիչ ձեռագործ ունենալուն՝ վաճառականութիւնն ալ սզտիկ էր . և հօօր զբացիներ չունենալուն պատճառաւ հազիւ Թէ պատերազմի առիթ ունէր , ժողովուրդը դատարկ մնալովը կարելի է Թէ ապստամբութեան հակամիտելնուն արգելք մը ըլլալու պատճառաւ բուրգեր կառուցանելու կզբաղեցնէին . Թէ որ իրաւցնէ այս էր , պատճառնին գէշ չէր ըսելու է , բայց մեղք որ ասանկ եղաւ , վասն զի շատ աղէկ կըլլար աւելի օգտաւէտ գործերու զբաղեցնել զանոնք :

Եզրպատուի արհեստն ու զիտութիւնը , այն կարգ մարդոց սեպհականսն էր , որ նուիրեալ կամ զիտական դաս կը կոչվէին , և այս դասէն կառնելէր կրօնական պաշտօնեաները , բժիշկները և աստղաբաշխները . այսինքն բոլոր այն մարդիկ-

ները որ ձեռքի աշխատանքով չէին ապրեր, և զրեթէ բոլոր հարկերուն մէկ երրորդ մասը այս զիտնականաց դասի մարդոցը ապրուստին կը հաստիացնէին :

Հրէից օրէնադիրը՝ Աստուածային իշխանութեամբ օրէնքներ դրած ժամանակը, եզրագացոց բաղաբականութեան այս ձևին հետևեցաւ . Ղևտացոց ցեղը զիտնական կարգն էր, և այս ձեղին բոլոր երկրի մէջ տարածուամբ ժողովրդեան ուսումնականութեանը ձեռնտու կըլլար, որովհետև այն ժամանակները տպագրութեան արհեստ չըլլալով զիտուծին սովբերու ուրիշ միջոց մը չկար :

Վեցներորդ. Մէկ երկրին վաճառականութիւնը իր օրէնքներէն կախում ունի :

Օրէնքներուն մէկ բանին վաճառականութեան յաջողութիւն կուտան, և մէկ բանին ալ անոր հակառակն են, և տարակոյս չկայ որ վաճառականութիւնը օրէնքներուն իրեն յարմար եղած տեղը կը ծաղկի՝ բան թէ հակառակ եղած տեղը : Վաճառականութեան վերաբերեալ զլիաւոր օրէնքներն ու սովորութիւնները ասոնք էին .

Ա. Բոլոր երկիրը թագաւորին էր, և անոր բերբերուն եկամուտին հինգ մասին մէկը տուրք կը վճարէին, այս օրէնքը վաճառականութեան հակառակ է, վասն զի երկիր չէր առնրվէր ու ծախվէր, և թէ որ մէկը վաճառականութեամբ հարստութիւն ստանար նոյն հարստութեամբը չէր կրնար երկիր ծախու առնել :

Երեք հարիւր տարիի չափ առաջները՝ բոլոր Եւրոպայի վիճակական դրութեան տակ եղած ժամանակները՝ երկիրը թագաւորին համարված էր, ու անոր հպատակները երկիրը կալուածոց տեղ իբր իրենց ծառայութեանը վարձք կը մշակէին. ասով երկիրը չէր կրնար ծախվիլ :

Բայց ետքերը Հենրիկու Լօմնեքորդը՝ Պարոններուն և ուրիշ Տանուտէրներուն ազատութիւն շնորհեց՝ իրենց կարխածները ծախելու, ուսկից Անգղիոյ վաճառականութիւնը ծաղկիլ սկսաւ :

Բ. Եզիպտոսի բոլոր բնակիչները ժառանգական ձեռքի վրայ բաժնւրված էին, որ սա ալ առուտուրի վրայ մեծ արգելք կրնէր, կոշիկակարին տղան կոշիկակար ըլլալու էր, և բոլոր դերձակներուն տղարն ալ դերձակ ըլլալու էին, և զինուորներուն տղարն ալ՝ թէ և զինուորութեան յաջողակութիւն չունենային, զինուոր պիտի ըլլային :

Աշխարհիս պատմութեան մէջ ատենկասանապրութիւն տեղ մը չկայ, Եզիպտոսէն և Հնդկաստանէն իզատ. ասկից ոմանք կարծեցին թէ հին ժամանակները այս երկու գաւառները իրարու հետ մեծ հազորդակցութիւն ունէին :

Յեզերու վրայ եղած յիշեալ սանձանապրութիւնը մերենական արհեստից կատարելագործութեանը օգուտ ըրած կրնայ ըլլալ, բայց վաճառականութեան յառաջադիմութեանը արգելք կրըլայ :

Գ. Առէն մարդ՝ չէ՛ թէ միայն իր ծննդական կարգին յարմարելու էր՝ այլ և հարկադրեալ էր ինչ գործի գրազած ըլլալուն՝ դասուորէ մը վկայական ունենալու, և թէ որ մէկը այն վկայականը կեղծելու ըլլար՝ անոր պատիժը մահ էր :

Այսպիսի օրէնքէ մը յայտ է թէ՛ դատաւորները միշտ ժողովուրդը գործի պարսպեցնել կուզէին, և ասկէց ժողովուրդին ծուլութեան հակամտեալ ըլլալը կը հասկըցփի :

Եզիպտացոց մէջ ստիտութիւն էր որ էրիկ մարդիկ իրենց տանը անտեսական գործերուն հոգ կը տանէին, առևտուրի գործերը մէկդի թողլով, ու առնելը և ծախելը կնիկներուն հոգատարութեանը ձգված էր :

Եզրպտացոց մէջ օրէնք էր որ տան կառավարութիւնը կնիկ մարդէն կախում ունէր, և ասոր պատճառ կարելի է այն ըլլայ որ՝ Թէ որ ծնողքը աղքատութեան մէջ իյնային, չէ Թէ տղարնին այլ աղջիկնին անոնց օգնելու պարտաւորած էին :

Գ. Եզրպտոսի օրէնքներուն զօրութիւնն էր, մէկ պարտականին կալուածքովը իր պարտքը վճարելը, բայց իր անձը ազատ էր. երբեմն սովորութիւն ունէին իրենց ծնողացը դիտարտեալ մարմինը գրաւ դնելով փոխ դրամ առնելու, և Թէ որ եզրպտացի մը այս պարտքը չըվճարելով այն մամինը չազատէր, վատանուն կը հրատարակէր :

Եզրպտացիք երբեմն իրենց առանձին խնձոյց մամանակը նախահայրերնուն մեռած մարմինը մէջ կը բերէին, և զլխուն վրայ գրված այս խօսքը ցոյց կուտային « Նայե՛ ինձի ևւ ուրախ եղիւ, երբո՛ւ մեռնիս դուն ալ ինձի պէս պիտի ըլլաս : »

Պարտքի համար բանտարգելութիւն հազիւ կըլլար, որ Թէ պատահեր՝ տնտեսական գերութեան կաարակցութեամբն էր : Պարտական մարդ մը բանտարկեալ մնալով իր պարտքը հատուցանելու միջոց չունենար, բայց գերութիւնը սովորութիւն եղած երկիր մը, պարտատէրը գերիի պէս ծախվելով փոխարէն առնրված դրամով պարտքը կը հատուցվի :

Այն երկիրները որ գերի առնել ծախելու սովորութիւն չկայ՝ պարտականները շատ անգամ բանտը կը դնեն, զրեմէ՛ ձեռքէ չըհաննելու համար, կամ ունեցածովը չըխախչելու համար, կամ Թէ իր պարտքը չըվճարելը իրեն անկարգութեանն պատճառած ըլլալուն պատիժ կամ Թէ իր բարեկամները զինքը ազատելու համար՝ անոր պարտքը վճարելնին յուսալով :

Ե. Եզրպտացիք մեռելներուն համար դատաստանարան մը ունէին, որ չըմաղելէն առաջ անոր դատաստանը կը կտրէին : Մեռնելէն ետքը ամէն եզրպտացիին դիակը այն

դատատաճարանը կը տարվէր, Թէ որ իր կենդանութեան ժամանակը գէշութեամբ ապրելը տուգրէր, անոր իր հօրէնական զերեզմանը Թաղվելու հրահան չէր տրուէր, որ իր զերդատաճանին մեծ փառահամբաւութիւն կը բերէր :

Եզրիստացոց կրօնական կարծիքը անանկ էր որ՝ այն մարդուն հողին երկինքը չէր կրնար մտնել, և այս սրատիժին մէկ սրտոնատն էր սրտորբի մէջ մեռնելը. բայց սակայն Թէ որ մեռնողին որդիքը կամ բարեկամները անոր սրտորբ հատուցանելու ըլլային (որ երբեմն կրնէին) այն ժամանակը Թոյլ կը տրուէր Թաղվելուն :

Ատանկ օրինադրութիւն մը ի հարկէ մեծ ազդեցութիւն պիտի ունենար ժողովրդեանը վարքին ու իրարու հետ ունեցած առևտրական գործողութեանց վրայ :

Մէկ մարդ՝ եթէ զիտնայ, որ ամէն տեսակ անիրաւութիւն, խարդախութիւն, ստախօսութիւն, և խորամանկութիւն, որ ունեցեր է իր առևտրական գործոցը մէջ՝ և որոց համար պիտի դատվի մեռած ատենը, ի հարկէ միշտ միտքը կունենայ իր մահովընէ յետոյ իր զերդատաճանին փառահամբաւութենէն զգուշանալու, ու անանկ բնութեանց առիթ չբռնալու :

Թէպէտև այս դատատանին վերաբերեալ ճիշդ տեղեկութիւն չունիմք, կարծեմք Թէ ներելի է մեր երևակայութեամբը ձևացուցած ընթացքը նկարագրելու :

Սրինակի աղագաւ, այսպէս ըլլալու է :

« Եզրիստացի վաճառական մը կը մեռնի, և իրեն քննութեան օրը կուգայ՝ քաղաքացիք դատատաճարանին սրահը  
 « կը լեցվին, և մեռելոյն մարմինը՝ ետեւէն իրեն սգաւոր ազգականներուն բազմութիւնը գալով այն տեղ կը բերվի, ու  
 « սրահին մէջ տեղը կը գրվի, դատաւորները՝ իրենց տեղերը  
 « նին կը նստին, և բոլոր ժողովականները անբարբառ լուս

« կը կենան, դատատանտարանին սրաշունաներէն մէկը  
 « կելնէ հրապարակաւ այսպէս կը հարցընէ. — Թէ որ ձեր  
 « մէջէն մէկը գիտէ ու ճիշդ պատճառ ունի այս հանգուցեալ  
 « մեր բաղաբացիին մարմինը երկիրը թաղվելու արգելք ըլլա-  
 « լուն՝ պէտք է որ հիմա յայտնէ : »

« Չայն մը կելնէ բազմականներէն. — Ես դէմ կը կենամ  
 « անոր թաղվելուն, վասն զի շատ անգամ առ իմ ունեցած եմ  
 « մեռնողին նետ զործ ընելու, և ամենեին անոր խօսքին  
 « վատստուծիւն չէի ունենար — :

« Ուրիշ ձայն մըն ալ կելնէ. — Ես կը դիմադրեմ անոր թաղ-  
 « ման, վասն զի մեռնողը միշտ կը շանար իմին պատիւս  
 « նախատելու, ու իմին ծուխերս ինձ նետացընելու. — :

« Երրորդ ձայն մըն ալ կելնէ. — Ես ալ կը դիմադրեմ  
 « թաղմանը, վասն զի մեռնողը շատ շուղաբար կտարէր  
 « երբոր գիտէր իր սրտոտը վնասելու անկարող ըլլալը — :

« Չորրորդ ձայն մըն ալ կը լսի. — Ես ալ ընդդիմուծիւն  
 « կընեմ թաղմանը, վասն զի մեռնողը իր կալուածքը իր բա-  
 « բեկամին վրայ դարձնելով՝ յետոյ պարտերը նստուցանելու  
 « կարողութիւն չունիմ ըսաւ. :

« Ան ստեին դատաւորները ոտքի վրայ ելնելով բարձր ձայ-  
 « նով կը զոչեն. բնա է. դուրս առէր. դուրս առէր այն  
 « մարմինը և ընկեցէր դաշտի մը մէջ, որ անասուններէն կամ  
 « թռչուններէն զիշատիի, և զգուշացէր որ չըլլան թէ երկրին  
 « ծոցը մտնէ առանկ անարժան մարդուն զին : »

Չ. Մէկ երկրին վաճառակաճուծութիւնը իր բնակիչներուն  
 բարբէն և բնաւորութենէն ալ կախում ունի :

Մէկ ազգ մը բնութեամբ կրնայ ժառանգած ըլլալ վաճառա-  
 կանութեան բոլոր յարմարութիւնները, և օրէնքներն ալ  
 անոր զարգացմանը օգուտ կրնան ունենալ. բայց թէ որ անոր

գործածութեանը համեմատ բնաւորաբար միտում և յօժարութիւն չունենայ, այն ազգին վաճառականութիւնը ամենևին չզարգանար: Եզրիպտացոց բնաւորութիւնը վաճառականութեան մասին երեք արգելք ունէր:

Առաջին. Խիստ ծոյլ էին. (ստոր օրինակ) բուրգերուն մէկուն վրայ ասանկ գրված էր. « ԵԳԻՊՏՈՍԻ ՏԵՂԱՅԻՆԵՐԷՆ ՄԷԿԸ ԶԷ ԱՇԻԱՏԵՐ ԱՅՍ ՏԵՂ: Եզրիպտացոց ծուրութեան մէկ պատճառը տարակոյս չկայ որ ըստ մասին իր կլիմայէն այսինքն օդին ջերմութենէն առաջ կուգար:

Բոլոր օդը ջերմ եղած տեղերուն բնակիչները աշխատելու բիշ հակամէտ կըլլան, և կենսական զօրութիւններն ցուրտ կլիմայի տակ եղողներէն նուազ կըլլայ:

Պատերազմներու պատմութեանց մէջ կը տեսնեմք որ յաղթութիւնը միշտ դէպ ի նարաւ գալած է, այսինքն նարաւային ազգերը հիւսիսայիններէն միշտ յաղթելիւս են:

Եզրիպտացոց ծուրութեան մէկ պատճառն ալ առատօրէն ապրուստ ունենալին էր, որքան որ մէկերկիր մը առատաբեր է՝ ընդհանրապէս կը գտնեմք որ անոր բնակիչները անբան առաւել ծոյլ են:

Արարիան գրեթէ Եզրիպտոսի չափ ջերմ էր, սակայն արաբացոց երկիրը անբեր ըլլալուն՝ ժիր և զործունեայ էին:

Արևմտեան ծոցի սևամորթները հրատապ արևու տակ կապրէին՝ բայց ապրուստնին սակաւ ըլլալուն՝ զօրաւոր մարդիկ էին:

Երկրորդ. Եզրիպտացոց վաճառականութեանը բնական մէկ պակասութիւնն ալ այս էր՝ որ կեանքի բաշաղերութիւն տրլոզ շռայլութեանց փոքր չունէին. թէ որ իրենց մէջ շռայլութեան փոքրն ալ ունենային՝ կլիմային և ուտելիաց առատութիւնը անոր հակառակը կը ներգործէր. բանգի այն ժամանակը նար-

կաւ աշխատատէր ըլլալու էին, այն շռայլութեանցը պէտք եղածը ձեռք բերելու համար :

« Տօքթօր ճօնարնը կը նշանակէ, որ մարդս աշխատութիւնը աշխատութիւն ըլլալուն համար չսիրէր, և աշխատութիւնը միշտ նպատակի մը կը նայի, որ է ստոյգ կամ լաւ եկամուտ պատրաստելը, որ աշխատութեան ծայրն է. բայց երբոր ժաղովորդ մը փափագ չունենայ իր ունեցածէն աւելի բան մը ունենալու, այն ատեն պատճառ մը չըլլար ջանքը շարժելու : »

Վաճառականութեան ասկէ հարկաւոր և մասնաւոր անձանց ասկէ աւելի օգտաւոր բան չըլլար որ՝ մարդս քաջաբերութիւն և հանգիստ կենաց ըսլած բաները ձեռք բերելու համար միշտ ջանք մը ունենալու է :

Ինչ ատեն որ ժողովուրդը զո՞ն կըլլայ դիւրագին տեսակ կերակրելէններով և ստորին հագուստով և աղքատիկ բնակարաններով՝ այն երկիրը հագլի թէ վաճառականութիւնը կրրնայ ծաղկիլ :

Երբորդ. Եգիպտացոց վաճառականութեան բնական յարմարութեանը արգելք ըլլալու մէկ պատճառն ալ իրենց ընկերութեան հակամիտեալ չըլլալնին էր, ցեղերուն որոշումը զիրենք իրարու հետ ընկերակցութիւն ընել չըտալու եւ իրենց անգիտութիւնն ու նախապաշարումը ուրիշ ազգերու հետ ալ հաղորդակցութիւն ընել չտալու պատճառ եղած էր :

Հին պատմաբանին մէկը կրա՛ւ թէ Եգիպտացոց ազգային ատելութիւնը այնքան զօրաւոր էր որ Եգիպտացի մը փիւնիկեցի կնկան մը հետ չէր ամուսնանար : Արդեօք այս զգացումները այն ստատիճանները յառաջ տարանձ էին, ուրիշներուն դատողութեանը ձգելու ետք :

Բայց հանգամանքը ցոյց կուտայ որ շատ զօրաւոր եղած

ըլլալու էին. բոլոր իրենց դրացիները անանկ կարծիր ունէին թէ կուպիտ և անընտել ժողովուրդ էին, ասանկ բնաւ որու թիւնը վաճառականութեան ոգոյ բոլորովին հակառակ է :

Վաճառական մը ազգային նախապաշարմունք ունենալու չէ, ու ինչ ցեղ մարդ որ ըլլայ՝ իրեն բնական թշնամի կարծելու չէ, անոր ծնած տեղը լեռնային շղթայով կամ գիտով մը գատ-ված կամ թէ ծովով հեռու ըլլալովը խորու թիւն ընելու չէ :

Վաճառականը աշխարհաբողաբացի է, ջանալու է բոլոր աշխարհիս երջանկութիւնը ընդարձակելու, ամէն կողմի բնակիչներուն բաշալերութիւն և սուստութիւն ընձեռելով, մանաւանդ անոնց, որ բան մը դժուարաւ կրնան ունենալ. ուրեմն վաճառականութեան աւելի մասամբ եզրագացոց մէջ չքրատաջանալուն բուն պատճառը իրենց բնաւորութիւնն էր, որոնք էին ծանրաշարժք, դանդաղ, ծոյլ և անյաջողակ ցեղ մարդիկ. յիսկալ երբ որ բարկանային, բայց ընդհակառակն հանգարտ, խաղաղութեան յօժար և իրենց հանգերձներուն չափաւոր, իրենց հին սովորութիւնները շատ սիրող և իրենց միասկեսոցը խիստ ակնածու, խղճահար և կրօնատէր մարդիկ էին :

Այս մեր խնդիրներուն վրայ վերջին գիտողութեամբ մը վերջ տանք :

Արդէն ըսինք որ մէկ երկրին վաճառականութիւնը՝ իր բնակիչներուն բնաւորութենէն կախում ունի, միտքերնէս ամենեին հանելու չեմք, որ մէկ երկրին կամ քաղաքին բարեբաղդութեանը սկզբնական բուն պատճառը իրեն բնակչացը մտաւորութեանը և բարոյականութեանը վրայ հաստատոված է : Իրենց բնական օգուտներէն յաջողութիւն գտնելուն և հաստատ յարատուութեամբ առեւտրական հետամտութիւննին շարունակելու տեղը՝ վաճառականները իրենց գործերնուն անոց կըլլան, կամ թէ մարտէն վաճառքնին փախցընելու կը հետևին ,

կամ խարերայութեան ու ստրկով թուղթ խաղալու կը հակամտին, որ ալ տարակոյս չըմնար՝ իրենց վրայ թշուառութիւն և վատթարութիւն բերելնուն, որ անանկ սովորութիւն ընող մարդոցը անշուշտ ասի կը պատահի :

Համատուութիւնով, աշխատասիրութիւնով, խոհեմութիւնով և յարատևութիւնով ու բնկերասիրութիւնով է որ ազգերը և բազարները յառաջադիմութիւն կունենան :

Ամէն մարդ ջանարու է իր բնակած տեղին յաջողութիւնը աւելցնելու, և ժողովրդեան բնաւորութիւնը զարգացնելու : Զկայ առարինութիւն մը աւելի ազնիւ, և կամ աւելի շքեղ բան զբնկերասիրութիւնը, ան ոգին որ մարդս կը յորդորէ իր անձնական շահը և իր հանգստութիւնը ու հակամտութիւնը գոհելու՝ հասարակաց օգտին աւելնալուն համար է :

Բայց ուշադիր եղիր որ կողմնասիրութիւնը բնկերասիրութիւն չէ, կողմնասիրութեան ոգին միշտ մէկ կողմէն բարձրանալու կը ջանայ, բայց բնկերասիրութիւնը առ հասարակ ամենուն բարեւաւութիւնը կը բնտուէ, որ մէկը շինծու ոսկեգօծեալ է, մէկայլը գուտ ոսկի է :

Ասոր ալ մտադիր եղիր որ ուրիշին օգտակար ըլլալ ուզողը պէտք է որ ինքը գործունեայ մարդ ըլլայ, մարդ մը չափաւոր տաղանդ ունենալով գործունեայ ալ ըլլայ նէ՛ շատ անգամ շատ աղէկութիւններ կրնայ ընել, և մեծ գօրութիւն կրնայ վատակիլ բան թէ այն մարդը որ բարձրագոյն մտօց աւել է ու ծուլութեան մէջ ինկած է, այսինքն ծանրութեամբը նուազ եղողը այն սրակասութեան տեղը արագութեամբը կը լեցնէ, և ասով կրնայ ծանրաշարժ մարդոցմէ աւելի մեծ յարգ ստանալ :

Մէկ ժողովրդին բնաւորութիւնը զարգացնելու խիստ ազդու միջոցներէն էականն է՝ գրականութիւն և ուսումնականութիւն դաս տրվիլը, որոնք կը ծաւալեն փիլիսոփայական հետազո-

տուժեան գրասրնութիւնը, և մտաց կրթութիւնը ստիպութիւն կրնին և նմառժեան փոխադր կը շարժեն, ուրիշ կը յառաջանան այլապէս ընթերցումը և ընտրութիւնը, և կը միաբանին գանազան դաս նստարանեան մարդիկը, և այս կը կրակելոյն կրճատեան և քաղաքական զբոստութեանց խտութիւնը և իրենց մարէն կը մերժէ մարտեցուցիչ շնչին մտածմունքները, և ասով իրաւունքը կիրքերէն զօրաւոր կըլլայ, և անոնց վրայ կիշխէ :

Երբոր մտածելու ըլլանք թէ որչափ գիտութիւններ կան աշխարհիս մէջ, և որչափ ժամանակ պէտք է անոնց ամէն մէկը մտաց մէջ ընթանելու, հօգօր պատճառներ կուճենամք մեր շանքը կրկնապատկելով գիտութիւններուն նետներու, և եթէ մեր նիզը խիստ յաշտակութիւն ևս ունենայ՝ խոնարհութեան մեծ պատճառներ ունիմք, զիսն զի աշխարհիս մէջ երող մեծ գիտուններն ալ գիտեն, որ չզիրոցսմունքուն նետ բազրաստելով գիտքսմնին խիստ քիչ է :

Բայց թէպէտ մեծ աշխատանքով ալ չեմք կրնար կատարեալ բոլոր գիտութեանց նմուտ ըլլալ, սակայն քիչ աշխատանքով նստարան գիտութիւնը այնքան մը կրնամք ստանալ, որ մեր հանգիստ տարելուն նպատատամատոյց ըլլայ, և մեր խօսակցութիւնը բաւական զրարանայի և ախորժելի ընէ, և աշխարհիս մէջ մեր պատիւք բարձրացնելով ուրիշներուն օգտաւէտ ըլլալու կարողացնէ :

Իրաւքնէ բախճ է թէ գիտութեան քիչը զէշ բան է, և մենք ալ նսանելու եմք ըսելու՝ թէ քիչ ստակ ունենալն ալ զէշ բան է, ստոյգ է քիչ ունենալուն զէշ ըլլալը, բայց սակայն աւելի զէշ է ամենեին չուճենալը, թէ ստակ և թէ գիտութիւն :

Ռարեմն յոյս ունենալու եմք որ մեր գիտութիւն և նմառժիւն ուսնելիս վերոյիշեալ արդիւնքներուն մէկ բանին առաջ կը

բերէ, չէ՞ թէ փիլիսոսիայ ըլլալու համար, այլ մեր օգտին և յառաջադիմութեանը միանալու համար :

Ուրիշին ստիճանելով մենք մեզ կը կրթեմք, մեր ջանքը մատուցանելով մեր շտեմարանը կաւեյցնեմք, որ ժամանակ որ ուրիշներուն բարեխառնութիւնը զարգացնելու հոգ կը տանիմք, նոյն ժամանակը հարուստ խորհրդածութեամբ մեր սրդիւնքը կապահովցնեմք յետագայ ժամանակին համար :

Արդ վստահ եղիր որ կանոնաւոր խելքի տէր եղող մարդու մը համար՝ մեր բոլորը գտնելուցնեմք և քանակութիւնը աւելցնելէն՝ և մեր ներկայ կենացը մէջ եղած զուարճութիւններէն աւելի հարազատ և աւելի հաստատուն կամ աւելի հասոյթական բան չըկրնար ըլլալ :



ԱՏԵՆ ԱԲԱՆ ՈՒԹԻԻՆ

ԵՐՅԻՐՈՐԳ

—

Յաղագս վանապանութեան նախնի Յունասանի .

Քաղաքականութեան սկզբնաւորութիւնը . — Յունասանի նախ-  
կին պատմութիւնը . — Մասնաւոր կաշուածոց ապահովութիւնը .  
— Ասիկ . — Սպարսա . — Կառավարութեան արդարութիւնը .  
— Վաճառականութեան վերաբերեալ օրէնքները . — Օրինաց  
ասեանները . — Քաղաքաց կառուցմունքը . — Քաղաքաց յար-  
մար դիրքը . — Արեւմտ . — Կորնթոսը . — Կրիտէն . — Հոնոսը .  
— Սիրակուսան . — Վաճառատեղիները . — Տօնավաճառները .  
— Տօնախմբութիւնները . — Տօնավաճառներուն վերաբերեալ  
վստեմի օրինադրութիւնները . — Սկիւքացիք . — Գրամական  
և դրամասեղանական կարգադրութիւնները . — Արեւմտի դրամը  
և սեղանաւորութիւնը . — Յունաց վաճառականութեան բնական  
յարմարութիւնը :

# ԱՏԵՆ ԱՐԱՆ ՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ

75-38

ՀԻՆ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Յունաստանի նախկին պատմութիւնն ալ աշխարհիս բոլոր ուրիշ զաւառներուն պատմութեանցը նման՝ մում առասպելաբանութիւններով շփոթեալ է, որուն նախկին բնակիչները՝ վայրենի կենաց վիճակին մէջ զտնըված էին, և սյն քաղաքակրթութիւնը, որ Եգիպտոսի և Բաբելոնի մէջ տարածված էր՝ անոնց բոլորովին անծանօթ էր :

Թէպէտ մենք ասկէց՝ կամ ասոր նման պատմութիւններէ մակարբերու չենք՝ թէ վայրենութիւնը մարդու բնական վիճակն է, քանզի թէ որ մարդս վայրենի ծնած ըլլար՝ յաւիտեան վայրենի մնալու էր :

Մարդու յատկութիւնն է որ տգիտութեան մէջ իր վիճակէն գո՛ն ըլլայ, վասն զի անկարելի է, որ մարդս՝ իրեն անծանօթ եղած բանն ստանալու բաղձանք ունենայ :

Աշխարհիս պատմութիւնը՝ օրինակ մը չընե՛րկայացընէր մեզի, որ մէկ ազգ մը՝ իր ինքնայօժար ջանքովը վայրենութենէ բաղաբակրթութեան դառնայ :

Ուր որ բարբարոս ազգեր բաղաբակիրթ եղած են՝ բաղաբակրթութիւնը դրսի երկրէ եկած է, կամ թէ բաղաբալարեալ ազգաց հետ ունեցած հաղորդակցութենէն ստացած են :

Շատ վկայութիւններ կան որ ջրնեղեղէն առաջ մարդկային

սեռը բաղաբակրթեալ վիճակի մէջ էր. ջրհեղեղէն ազատվածները բաղաբակրթեալ էին :

Նոյին առաջին ջանքն այդի տնկելն եղաւ, և այս սարագայս ցոյց կուտայ՝ յառաջ գացած բաղաբակրթեալ կեանքին ճանաչողութիւնը, և տարակոյս չկայ՝ որ իրեն ծանօթութիւն ունեցած արհեստներն դւ զիտութիւնները՝ իր սերնդոցը հաղորդած ըլլայ. ուսկից բաղաբակրթութիւնը մշտնջենաւորութիւն ունեցած է :

Այն գերդաստանները որ Յաբելօնի և Նզիպտոսի դաշտերը բնակեցան՝ իրենց ծանօթ եղած արհեստները և բաղաբակրթեալ կեանքը՝ կերելի որ ամենեւին չկորուսին :— Այս մասին բանի մը պատճառներ ցոյց կը տրուին .

Նախ. իրենց երկիրները այնքան բերրի էր որ ապրուստ պատրաստելու համար բոլոր հասարակութեանը աշխատանացը հարկաւորութիւն չըկար, ուրկէ՝ այն մարդերն որ երկիր մշակելու գրաղմունք չունէին, զիրենք մեքենական արհեստներուն գործածութեանը և զիտութիւն ուսանելու կուտային :

Երկրորդ. Այն երկիրներուն ապրուստը շատ առատ ըլլալուն՝ ժողովրդեան բազմանալն ալ շուտ կըլլար. ուր աշխատութեանց համար շատ մանր բաժանումներ կար, և հետեւաբար կենաց դիւրութեան արդիւնքները շատ ըլլալու էին :

Երրորդ. Այս երկիրները լայնածաւալ դաշտեր էին, որ իրենց բնակիչները շատնալու վրայ լինելով՝ հետեւապէս մէկ կողմէն իրենց մերձակայ տեղերը կը մշակէին. և հեռի տեղեր երթալով՝ նոր բնակարան գտնելու զիտողութիւն չէին ընէր :

Ասկէ՝ զանազան ցեղերու և գերդաստաններուն հաղորդակցութիւնը ամբողջ կը մնար, և ինչ և իցէ՝ նոր արհեստի մը զիւտը՝ բոլոր հասարակութեան մէջ կը ծաւալէր, որով և բաղաբակրթութիւնը կը յառաջանար :

Միւս կողմանէ ալ՝ այն գերդաստանաց մարդիկը, որ լեռներով զատված երկիրները գացած էին, իրարու հետ հաղորդակցութիւննին շուտով կորուսեր էին. և ո՛ր ժամանակ որ ազգի մը ժողովուրդը շատ կը բազմանար՝ անոնց մէկ մասը իրենցմէ բնորոված գլխաւորի մը առաջնորդութեամբը՝ լեռները և գետերը կանցնէին՝ նոր բնակարան գտնելու դիտաւորութեամբ, և իրենց ձգած երկրին հետի հաղորդակցութենէն մշտնջենաւորապէս կը հրաժարէին. և որովհետեւ ասոնց միւր բիշտը կըլար՝ ի հարկէ բոլոր ցեղը ապրուստ հասցընելու միայն կըրնային պարապիլ, ուստի և ուրիշ արհեստներ մշակելու ժամանակ չէին ունենար՝ մանաւանդ այն մեքենաներուն որ՝ կենաց կացութեանը հարկաւոր չէր :

Ասկէ քանի մը պօրտ անցնելով՝ այն արհեստներուն շատը կը մոռցըվէր, և այն ցեղերը որ անոնցմէ կը բաժնըվէին՝ առաւել տգէտ կըլլային, և վերջապէս վայրենութեան ու բարբարոսութեան մէջ կիյնային. և կը կարծեմք թէ մարդկային սեռէն ոմանք ալ սկզբնաբար քաղաքակրթեալ էին, ու այս կերպով՝ բարբարոսութեան մէջ ինկած են :

Հին Յունաստանն ալ այս բարբարոս վիճակի մէջ քանի մը դար կենայլէն յետոյ՝ եզիպտացոցմէ և փիւնիկեցոցմէ զանազան գաղթականներ գալով՝ Յունաստանի ծովեզերեայ տեղերը բնակեցան, որոնք քաղաքակրթեալ ազգերէն ըլլալով՝ երկրին ժողովրդեանը մէջ քաղաքակրթութեան արհեստը մուծին, այսինքն, կալուածոց իրաւունքը և քաղաքական կառավարութեան կերպը հաստատելով՝ ժողովրդեանը շատ օգտակար արհեստներ ուսուցին, որ առաջուց անտեղեակ էին :

Երկրին առաջին բնակիչները թէ և բերրի առատաբեր երկիրնէր ունէին՝ բայց ինչպէս մշակելը չգիտէին, և երբոր սեւասն գաղթականներուն գերագոյն հմտութիւնը և շատ օգուտ

գտան անոնցմէ, անանկ բնակիչները հրաւիրեցին և անոնց կառավարութեանը հնազանդեցան :

Այս գաղթականները՝ իրենց բնիկ երկրէն դուրս դրկրված բնակիչներէն չէին, այլ անկախ ցեղեր էին, որ զանազան պատճառներով իրենց սիրելի գլխաւորի մը առաջնորդութեամբը՝ նոր բնակութեան տեղ բնտուելու ելած էին :

Ատտիկէ նահանգը, որուն մայրաքաղաքը Աթէնքն էր, կըլլի թէ հազար հինգ հարիւր յիսուն տարի Քրիստոսի թուականէն առաջ Կիլիքոս անունով եգիպտացիի մը բերած գաղթականներով բնակաւոր եղած էր :

Յունաստան ի հարկէ շատ պզտիկ զաւառներու բաժնւրված էր, և որքան որ այս զաւառներուն սահմանները՝ յարձակման դէմ իրարմէ բաւական պաշտպանեալ էին, բուն բնակիչներուն հետ ազատ հաղորդակցութիւն ընելու արգելք չէր ըլլար, ու իրարու հետ առևտրական փոխանակութիւն կնէին, մէկ զաւառին ցորենը կամ գինին, բուրդը կամ ձէթը, միւսին ձառագործներուն կամ մետաղներուն հետ կը փոխէին :

Նախ գրեթէ բոլոր Յունաստանի վաճառականութիւնը այս սեպհական զաւառներուն մէջ սահմանված էր, դուրսի երկիրներուն հետ եղած վաճառականութիւնը խիստ չտխաւորեալ էր, և իրենց ծանօթ եղած ազգերը միայն սարսիկք, եգիպտացիք և փիւնիկեցիք էին :

Բոլոր Եւրոպան, բուն Յունաստանէն զատ, Թաճարսիտանու փիճակին և Ամէրիկայի հիմակական չքմշակված տեղերուն պէս էր, և սարսիկներն ու եգիպտացիները վաճառական ազգեր էին :

Իսկ յոյները՝ փիւնիկեցոց հետ առևտուր կընէին : Հնդկաստանու և Արիփիկէի, նաև աշխարհիս ամէն կողմի բերքերը անոնց միջոցաւ կատանային : Վերջերը՝ յոյները Միջերկրական

ծովուն մէջի քանի մը կղզիները և Փորը-Ասիայի ծովեզերեայ տեղերը գաղթականներ՝ կանգնեցին և մեծ առևտուրներ ըլլալ սկսաւ այս գաղթականներուն և Յունաստանի մէջ :

Յունաստանի և գաղթականներուն մէջի վաճառականութեան հաղորդակցութիւնը առաջ տանելու համար՝ ծովային գործիւն մը պահել և նաւարկութեան ու նաւ շինելու արհեստը զարգացնել հարկ էր :

Վերջերը երբոր Յունաստանի բոլոր ծովային գործիւնը Աթէնքի կառավարութեան ներքև ընկաւ, անոր գործիւնը և վաճառականութիւնը առաւելապէս ծաղկեցաւ, որ իր նաւերուն միջոցաւ չէ մէ միայն գաղթականներուն հետ ուղղակի առևտուր կրնէր, այլ և նոյն խակ գաղթականաց մէջն ալ վաճառականութիւնը առաջ կը տանէր :

Յետ ժամանակաւ այս գաղթականներուն շատը իրենց վաճառականութեան յաջողութեամբը համբաւ ստացան և անոնց մեծագոյն մասը անկախ կառավարութիւն ունեցան :

Որովհետև բոլոր Յունաստան իրեն բերքերովը և իր ժողովրդեանը զործունէութեամբը իր կղզիներուն շատութենէն և ծովեզերեայ քաղաքներուն ընդարձակութենէն պատուական նաւահանգիստներով՝ վաճառականութեան շատ պատեհութիւն ունէր, և իր հարստութեանը ընդարձակապէս նպաստամատոյց կըլլար: Աթէնքի իր նաւատորմիղներուն առաւելութեամբը իր վաճառականութիւնը խիստ ընդարձակ կը տարածէր, և իր վաճառատեղիներուն մէջ Յունաստանի բոլոր ուրիշ կողմերուն բերքերը կը գտնուէր :

Յունաստանի պատմութեանը հետ վաճառականութեան վերաբերեալ խնդիրքը քիչ են, զորս պիտի ջանամ բացատրելու :

Առաջին. Վաճառականութիւնը անձնական ստացուածոց ապահովութեամբը կը յառաջանայ :

Մարդս՝ աշխատութիւնը աշխատութեան համար՝ չըսիրեր. թէ որ մարդ մը աշխատասէր ըլլայ՝ իրեն սպազայ աղելութիւն մը ձեռք բերելու յուսովն է, և թէ որ յաջող նարտարութեանը վարձքը յանկարծակի իրմէն յախշտակի՛ի՝ կրկին ստանալու համար՝ մարդ մը աշխատել չուզէր, ուստի վայրենի վիճակի մէջ գտնուած կեանքը ամենեին վաճառականութեան վիճակ չունենար :

Վաճառականութեան գոյութենէն առաջ՝ մէկ ազգ մը՝ ուրիշ ազգերուն յարձակմանցը դէմ, զինքը պաշտպանելու համար՝ պէտք է որ բաւական կարողութիւն ունենայ և հաստատուած կառավարութիւն մը ունենալու է, որ բաղաբացիի մը ինչքը և ստացուածքը միւսին հարստահարութենէն պաշտպանելու կարող ըլլայ :

Յունաստանին սկզբնական վիճակովը՝ վաճառականութիւն չէր կրնար գոյանալ, բայց երբոր կալուածոց իրաւունքը նանչըրվեցաւ և աշխատութեան շանքը իր պտուղը հնձելու հաստատոեց, այն ժամանակը վաճառականութիւնը սկսաւ աստիճանաբար տարածվիլ :

Բայց վաճառականութեան նպատակին համար՝ չէ թէ միայն ստացուածոց սպասնովութիւն ըլլալու է, այլ և անձնական կալուածոց իրաւունք մըն ալ պէտք է :

Այս դիտողութիւնը կը ծագի սպարտացոց ընկերական օրինադրութեանը նայելով :

Լիգուրիոսի օրէնքները՝ անձնական կալուածները կը ջնջէր, բաղաբացիները միահաւասար կապրէին, և ամէնը մէկ տեղ՝ հասարակաց սեղանը կը կերակրուէին, և մի և նոյն կերպ հանդերձ կը հագնէին :

Հասարակապետութեան բարձրատիճան մարդոց հագածը ստորին դաս մարդոց հագած հագուտէն չէր որոշվեր, անչա-

խումբիւնք չնշարված էր, պարզ կերակուրով կապրելէր, ոսկին և արծաթը արգիլված էր, և միայն երկամէ շինված դրամը զործածելու թող տրված էր, բաղաբացիները առ հասարակ զինուոր էին, և հասարակաց բանակը ամէնքը մէկտեղ կապրէին, և իրենց հայրենեացը և իրարու հետ անհեթեթ կերպով կապված էին, բայց իրենց զերիներուն վրայ զթումիւն չէին ցոյց տար, կամ մէ իրարու համար ընկերական զգացում և ակնածութիւն չունէին. ուստի զրեմէ զինուորաց ազգ մըն էին, առանց զեղիութեան ակտործն ունենալու, որ զինուորները հասարակօրէն կունենան : Մասնաւոր մարդ՝ հարստութիւն ձեռք բերել չէր ուզէր, վասն զի ինչ ստանար՝ ազգին կը վերաբերէր, և ազգը պատճառ չունէր հարստութիւն զիջելու, բանզի իրենց օրէնքը՝ կարգիլէր այն նպատակները որ հարստութեամբ կտոսացվին :

Աւրեմն վայրենի կեանքը՝ հոս զրուծեան մէջ մտած էր, զրութիւն մը որ՝ բոլոր մարդկային բնութեան զգացմունքները ոչընչացնել կը պահանջէ :

Սպարտացի մայր մը պատերազմէ դարձած զինուորի մը հարցոց մէ՛ « Մեր զօրք յաղթոյ ե » զինուորը սրատասխանեց. *բու տղադ մեռաւ. կիներ ըսաւ. յիւսար, ևս ինզի անոր վրայօք չեմ հարցնէր, այն կը հարցնէմ որ մեր զօրքերը յաղթող եղան մի. » վաճառականութեան հակառակ ասկէց աւելի սահմանադրութիւն մը չըլլար :*

Երկրորդ վաճառականութիւնը հասարակաց արդարութեան անկողմնասէր կառավարութեամբը կը յառաջանայ : Օրէնքով միայն անձնական կալուածոց իրաւունքը կապահովուայ, և անձնական կալուածոց վրայ՝ ազդեցութիւն ընող օրէնքները՝ վաճառականութիւն ընող ազգերուն մէջ աւելի են բան մէ ուրիշներուն մէջ, վասն զի վաճառքներ ստանալուն և տարուբե-

րին միջոցները աւելի բազմաթիւ կըլլան, և զանազան պահանջողաց իրաւունքը որոշելը այնչափ դիւրին չըլլար :

Վաճառականութեան վրայ ազդեցութիւն կրնեն այն ամէն օրէնքները՝ որ վաճառաց պիտանի բերքերուն կը վերաբերին, և ապրանաց տեղափոխութեան կարգը և փոխադրելու դիւրութիւնը՝ նաև ապրանաց վրայ եղած տուրքեր ևն կամ յանցանաց պատիժներ ևն :

Վաճառականութեան ամէն ճիւղերուն վրայ ազդեցութիւն ունեցող այս ընդհանուր օրէնքներէն զատ՝ շատ երկիրներ կան որ մասնաւոր վաճառքները՝ իրենց օրէնքներուն ուժովը դուրս ծախած՝ կամ դուրսէն ծախու առած ապրանքներուն վրայ ազդեցութիւն ունին: Առէնացիք անանկ օրէնքներ ունէին որ դուրս ապրանք ծախելու արգելք կուտար, այսինքն իրենց երկիրն առատօրէն չընասուցած բաները՝ դուրս ծախելու չէին թողուր, ձիթենիէն զատ թուզը և ուրիշ ամէն կերպ միրգերը և բուրգն ու խղը դուրս ծախելու արգելեալ էր :

Ատտիկէի երկիրը անրեր էր, ոչ հողագործութիւնը՝ և ոչ արօտը կը բարգաւաճէր, բայց առատօրէն ձէթ կը հասցընէր, ձէթը սրբազան համարեալ էր Միներվայիև. ինչպէս որ առատ պեղաբանութիւնը կըսէ. Արեևի բաղաբը կառուցվելու ժամանակը Միներվայիև և Ներքիւնիև մէջ վէճ եղաւ, բաղաբին անունը դրվելուն վրայ, ետքը մէջերնին որոշեցին որ մարդուն խիստ օգտաւոր ընծայ մը ընտղը իշխանութիւն ունենայ նոր կառուցվելու բաղաբին անուն դնելու. յայնժամ Ներքիւն գետնին զարկաւ և իսկոյն ձի մը առաջ բերաւ. Միներվան ալ ձի մապտուղը բուսցուց, նոյն ժամայն բոլոր յիբ Միներվայիև կողմը որոշեցին, և ջատագովելով ըսին որ ձէթը խաղաղութիւն կը նշանակէ և աւելի օգտակար է բան զձին՝ որ պատերազմի նշանակութիւն ունի :

Ասկէ կիսնացլի որ նախնեաց ձիւրը միայն պատերազմի մէջ կը գործածէին, ու երկրագործութեան գործը եզրերով կը կատարէին :

Աթէնքը դուրս ծախելու բերք՝ ձէթէն ի զառո, մեղր և մարմարիօն բար և իրեն հանրերէն ելած պղինձ և արծաթ ալունէր, և վերջի ժամանակները զանազան շնտիր ձեռագործներ ալ ունեցաւ :

Ասով դիտելու եմք որ ձէթը չէ մէ միայն կերակուրի տեղ կուտովէր՝ այլ զանազան բանի կը գործածովէր, այսինքն մարդիկը կօծանէին, և կանթեղի կը վառէին, որ մենք հիմա կարագ գործածելու սովորութիւն ըրած եմք :

Մեղրը՝ շատ բանի կը գործածէին, վասն զի նախկին ժամանակները չաբար չըկար :

Քանանու երկրին վրայ տրված նկարագրութիւնը՝ որ կըսէ, երկիր մը որ մեղր և կամեն կը բղխէ՝ շատ համոզիչ ըլլալու է չաբար կամ քիչ չընանչցող ազգի մը :

Աթէնքի օրէնքները՝ դուրսէն առնելու ապրանքներն ալ կը չափաւորէր, այսինքն դուրսերէն ցորէն բերովիլը կը բաջալէրէր, նոյնպէս տախտակ՝ և ուրիշ նաւ կազմելու նիւթերն ալ. մէ որ ամէնացի գործակալ կամ վաճառական մը՝ Աթէնայէն ուրիշ տեղ ցորեն զրկելու ըլլար՝ անոր դէմ դատաստան կըրլար, և ծանուցանողը ցորենին կէսը կրնար պահանջել, մանրախաճառներուն ալ արգելք ըլլալու համար՝ օրէնքով չափ մը դրված էր, և անկէջ աւելի ծախելու թոյլ տրված չէր :

Աթէնքը մասնաւոր առևտուրներուն կարգադրութեանը համար ալ օրէնքներ ունէր, այսինքն ձկնորսներուն իրենց ձուկը աւելի զինով ծախելու համար՝ չուրի մէջ պահել (չիփար ընել) թոյլ չէր տրվէր, և ձկնորս մը իր ձկանը ուզած զինէն յետոյ պակաս զին առնելու ըլլարնէ՝ բանտարգելութեամբ կը պատ-

ժըվէր, և կնիք (սկոհիւտ) փորոզ ու ծախողը՝ ծախածին մէկ օրինակը իր բովը չէր կրնար պահել :

Կուսա Աթէնք վաճառականութեան ընդհանուր օրէնքներ ալ ունէր, այսինքն մէկ մարդու երկու կերպ առուտուր ընելու թոյլ չէր տրվէր :

Դրսեցիի մը շուկան վաճառքի նիւթ ծախել՝ և առուտուր ընելու թոյլտուութիւն չըկար :

Ինծ յարգութիւն ստացողը՝ և իր արհեստին մէջ անխարդախ համարված մարդը՝ արտուոյ նշան մը կրունէր, և թէ որ մէկը անոր արհեստին պաճառաւ զրգարտութիւն, անարգանց, և ծաղր ընելու ըլլար՝ անոր գէմ դատ կրնար վարել :

Աթէնքի մէջ զողումեան պատիժը՝ տուգանք, և բանտարգելութիւն, կամ մահ էր, յանցանքին բնական արտօնատիւն համեմատ. բայց՝ Սպարտայի մէջ զողութիւնը միայն այն ստեղծ կը պատժըվէր՝ երբ զողութիւն ընելու ժամանակը բռնըված ըլլար :

Ով որ ծուլութեամբ կեանք կը վարէր և իր հօրեմական կարուածքը շտայրութեամբ կը կորսնցնէր կամ թէ իր չբարութեան մէջ ինկած ծնողքին օգնել չէր կամէր՝ վատանուն կը հրատարակվէր :

Բայց թէ որ հայրը իր տղին արհեստ մը սովորելուն անոյթ թողած էր, տղան հարկադրեալ չէր իր հայրը սնուցանելու, թէ և կարօտ ալ ըլլար :

Արիստոքրատի ստեղծարարներուն պատուիրեալ էր որ ամէն մէկուն ինչ միջոցու դարձան գտնելը բնութեամբ խմանան, այս կանոնադրութիւնը՝ կը կարծըվի թէ՛ հին եզիպտացոյցմ առած են :

Աթէնքի մէջ պէս պէս օրինաց դատաստանարաններ կար, և անոնց շատին դատաւորները՝ բազմաբացոց բազումներն էն :

կառնելէր վիճակու, և դատաւորներուն թիւը յիսուունն մինչև երկու հազարի կը հասնէր :

Երբոր դատաւորները՝ անանկ բազմամիւ կըլլային, ի հարկէ անոնց մէկ մասը՝ իրենց սրշտօնը կատարելու անցարմար կըլլար : Ամէն բաղարացին դատաւորութեան կրնար ընտրվէր, և իրեն գումար մը կը վճարվէր, ամէն քննած դատին վրայ :

Դատաւորներուն ասանկ բազմամիւ ըլլալէն և փոփոխվելէն՝ և դատերուն շատ անգամ միտկերպ վճիռ պէտք ըլլալէն՝ կարելի է որ օրէնքին գրութեանը զգուշութեամբ դիտողութիւն չէր ըլլար, այս մասին Արիստոտել՝ իր ճարտասանութեանը մէջ, որ նորահաս փաստաբաններուն կրնծայէ, այսպէս կըսէ :

« Թէ որ դատը բու օգտից է՝ պէտք է որ զո՞նք ըլլաս օրէնքին արդարութեանն, դուն բացայայտելու ես, որ մէկ վայրենի և կրթեալ տէրութեան մը մէջ եղած մինակ տարբերութիւնը այն է՝ որ մէկը օրէնքներ ունի և միւսը չունի :

« Բայց մենք առանց օրէնքի ալ կրնանք ըլլալ, Թէ որ անոր պահպանութիւնը չըլլովի : — Բայց ինքը վրայ կը բերէ, — Թէ որ օրէնքը մեզի դէմ է՝ այն ժամանակը ըսէ Թէ օրէնքը լոկ սրայման մըն է, այսինքն ինչ որ օրէնք է մէկ տէրութեանը մէջ՝ օրէնք չէ միւսին մէջ, և ինչ որ այսօր օրէնք է՝ կարելի է որ վաղը օրէնք չըլլայ, ուստի մենք միշտ արդարութեան սկզբունքները մեզի առաջնորդ ունենայու եմք, որն որ բնական և համաշխարհական ըլլալուն, օրէնքներէն զերս զոյն ըլլալու է : »

Ամէնքի մէջ՝ դատ ունեցողները՝ իրենց գործը իրենք անձամբ՝ կամ փաստաբանի ձեռքով կը տեսնէին, և երբոր փաստաբանով կը վարէին՝ գործին կարեւորութեանը համեմատ՝ անոնց խօսելու ժամանակին չափ մը կը դնէին : Ամէն մէկ փաստաբանին հաւասար չափով ջուր կը տրվէր՝ և որ ժամա-

նակ մէկը խօսելու սկսէր՝ այն ջուրը ամանէ մը վազելու կսկսէր (ապակիյէ ժամացոյցի մը պէս) և երբոր ջուրին վազելը դատրէր՝ փաստաբանն ալ խօսքը դադրեցընելու էր :

Առէնքի վերին ատեանը՝ Արիպագոսինն էր, Արխօնդները կամ զլխաւոր ատենակալները՝ այս ատեաննին դատաւորները կըլլային, և իրենց պաշտօնը տարիէ մը կը վերջանար :

Դատաստանի ժողովները բաց տեղ կըլլար, վասն զի մէկ մը որ ամբաստանողը և յանցաւորը մի և նոյն առաստաղի տակ ըլլալնին ապօրինաւոր համարված էր, և մէկ մըն ալ որ դատաւորներուն անձը սրբազան համարված ըլլալուն՝ եղեռնաւոր և չար մարդոց հետ խօսելով չըպղծըվէլուն համար էր :

Նաև ամէն բան զիշերով մտիկ կընէին, և կորոշէին որ մոռ տեղ ըլլալով՝ ամբաստանողին՝ և յանցաւորին կողմնակցութեան ազդեցութիւն չունենան, ու մէկը դատաւորներուն թիւը չըգիտնայ, և անոնց դէմքը չըլիտէ :

Այս ատեանը զրեթէ բոլոր յանցանքներուն վրայ դատաւորական իշխանութիւն ունէր, և կրօնքի վերաբերեալ ամէն նիւթերը՝ այս ատեանին դատողութեանը կը յանձնըվէր :

Միտք բերելու եմք որ Պօլոս առաքեալը այս ատեանին առջին բերվեցաւ, ամբաստանվելով որ նոր Աստուած մը կը բարոզէ :

Այս ատեանին յարգանքը ժամանակ մը այնքան բարձր աստիճան էր որ ուրիշ տէրութեաց մէջ ծագած վէճը կամաւորաբար այս ատեանին քննութեանը յանձնըվելով անոր որոշմանը կը հնազանդէին :

Երրորդ. Վաճառականութիւնը բաղաբներ և բերդաբաղաներ կազմելով կը յառաջանայ :

Մէկ երկրի մը բաղաբակրթութեան և գիտութեան աստի-

ճանր իր բերդաքաղաքներուն և քաղաքներուն մէջ բնակած ժողովրդեան համեմատութենէն կրնանք ճշդիւ երևակայել :

Երբոր մարդիկ լայնատարած երկրի մը վրայ զբլած ըլլան, պզգվիկ տեղ գումարված ժողովրդեան չափ իրենց գիտութիւնը յառաջացնելու միջոց չեն ունենար, աշխատութիւնը քաղաքներուն մէջ շատ բաժնրված կըլլայ, ուրկէ աշխատասիրութեան ճիւղերը՝ կատարելութիւն կը գտնեն :

Նաևս քաղաքներու մէջ շատ մարդիկ մէկ կերպ գործի կամ առուտուրի զբաղած ըլլալնուն մշտնջենաւոր նախանձաւորութիւն կըլլայ, որն որ միշտ յառաջադիմութեան ճամբայ մըն է :

Այլ և քաղաքներուն մէջ զանազան նպատակներու համար ընկերութիւններ կըլլան որմէ գիտութիւն ստանալու միջոցներ և ուրիշ տեղեկութիւններ առաջ գալով՝ ժողովրդեան լուսաւորութեանը վրայ ազդեցութիւն կունենայ, և հետևապէս արհեստները կը յառաջացնէ :

Վաճառականութիւնը՝ քաղաքներ կառուցանելու առիթ կըլլայ, օտար երկիրներէ եկած կամ իր երկրէն դուրս գացած վաճառքներուն տեղերը շատ մը բազմամարդութեամբ կը լեցվի : Չեռագործի գործարաններուն մօտերը ի հարկէ միշտ գործաւորներու տեղեր կըլլայ որ միատեղ կը ժողվըվին :

Աշխատանքի համար տրված բարձր վարձքը գործաւորները կը համոզէ՝ զիւղերը ձգելու և վաճառականութեան քաղաքները ընթանալու, արհեստները ու գիտութիւնները քաղաքաց մէջ մեծ կատարելութեան հասած գտնըվելով՝ անոնց հետամուտ ըլլալ ուզող ժողովուրդը հոն կը դիմէ :

Նորահաս պատանիները քաղաքները կերթան, վասն զի այն տեղ ամէն կերպ աշխատանքը աղէկ կը վարձատրըվի, և պահանջմունքը աւելի կանոնաւոր և հաստատուն կըլլայ :

Ուստի մէկ տեղին վաճառականութիւնը որքան որ կաւելնայ, այն տեղի ժողովուրդն ալ համեմատաբար կածի, և որքան որ աշխատութիւնը աւելի կուզվի, կենաց հանգստութեան վերաբերեալ նիւթերն ալ այնքան աւելի կըլլան :

Վաճառականութեան քաղաքները հասարակօրէն ծովեզերեայ տեղերը՝ կամ գետերուն եզերքները կըլլան. թէ որ գետին ծագումը նոյն իսկ երկրին մէջն ըլլայ՝ յաճախօրէն գետին վերջանալուն մօտ տեղերը կըլլայ, մեծ նաւերով նաւարկելը դիւրին ըլլալուն համար, ինչպէս են Լօնտրան և Վաթէրֆօրտը :

Թէ որ քաղաքը գետէն վար հիմնած ըլլայ՝ անոր օգտին մէկ մասը կը կորսուի, և թէ որ գետին վերի կողմերը կառուցած ըլլայ՝ մեծ նաւերը չեն կրնար մօտենալ, և ի հարկէ բեռերնին նաւակները պարպելով քաղաքը դրկելու կարօտ կըլլան :

Յունաստանի քաղաքները վաճառականութեան նպատակաւ հիմնած չէին, որոնց շատերը ծովէն քիչ մը հեռու կառուցած էին, այն մտքով որ ծովասպատակներուն յարձակմունքէն խոյս տան, քան զի հին ժամանակները՝ ասոնք Յունաստանի ծովեզերեայ տեղերը յաճախելու սովորութիւն ունէին :

Գլխաւոր վաճառականութեան քաղաքներն էին Աթէնք, Կորնթոս և Սիրակուսա, և կղզիներուն մէջէն գլխաւորներն էին Կրետէ և Հռոդոս :

Աթէնք, Ատտիկէ նահանգին մայրաքաղաքն էր, և զրեթէ ծովէն երկու մղոնի չափ հեռու էր, բայց քաղաքէն մինչև ծովեզերքը ամրացեալ պարիսպներ ունենալուն՝ երթևեկութիւն կըլլար, այնպէս որ նաւահանգստին հետ միշտ ազատ հաղորդակցութիւն ունէր : Ատտիկէի երկիրը անբեղմնաւոր էր, բայց Աթէնք իր վաճառականութիւնը իր նաւատորմիդով՝ և ձեռագործներովը և Յունաստանի քանի մը ուրիշ նահանգներէն աւելի զօրաւոր ըլլալովը ստացած էր :

Աթէնք իր խիտա ծաղիկալ վիճակին մէջ՝ Յունաստանի մեծագոյն և ամենագեղեցիկ քաղաքներուն մէկն էր, որուն շրջապատը քսան երկու մղոնէն աւելի էր, միջնաբերդը դաշտի մը մէջ բարձր սարսուածի վրայ կառուցած էր, բայց բնակիչները աւելնալէն շէնքերը բոլոր դաշտին վրայ տարածված էր, որ միջնաբերդէն որոշվելու համար ստորին քաղաք կը կոչվէր:

Յունաստանի ամէն քաղաքները զատ զատ տաճար, Պատրոն, ու մարմնամարզութեան տեղեր ունէին, այսինքն ժողովրդեան կրթութեան տեղեր, և ասեանի հրադարակ ու վաճառատեղիներ (պօրսա), ասոնց ամէնն ալ Աթէնքի մէջ բազմաթիւ էին:

Ըմբշամարտութեան տեղը զանազան կողմերով քաղկացած՝ մեծ շէնք մըն էր, որ հազարներով մարդիկ կրնար պարունակիլ, առանձին տեղեր ունէր երիտասարդաց կրթութիւնը ի գործ դնելու համար, և փիլիսոփաներուն համար ալ դասիկոններ կար որ իրենց աստեալախօսութիւնը կրնէին, և քաղաքացոց զուարճութեանը համար ալ բաղնիքներ կունենար, և բոլորտիրը պարտէզներով ու սրբազան անտառներով շրջապատուալ էր:

Նաև Աթէնք դահլիճներ ունէր՝ որ վաճառականաց ընկերութիւնները կը միանային, և վաճառականութեան վերաբերեալ իրենց գործերուն վրայ խորհուրդ կրնէին:

Ասիկէ կերևի թէ վաճառականութեան զբաղիլը անարգ համարված չէր, և կրափի թէ Սոլոն վաճառականութեան զբաղած էր, և Պղատոն ալ Էզիպոտս իւր կը ծախէր:

Կորնթոսի վաճառականութեան քաղաք ըլլալը իր դիրքէն էր, որուն կայարանը Կորնթոսի նեղուցն էր, նաւախարները իրենց բեռներին նեղուցին մէկ կողմը ցամաքը մտնելու կը հարկադրվէին, այն ժամանակները նաւարկութիւնը անկատար ըլլա-

լուն անկէ ցամաքէն միւս կողմը կանցնէին, ցամաքակղզիին շրջանակը չնաւարկելու համար :

Կորնթոս իր ձեռագործներովը երևելի էր, մանուսանդ մետաղներովը, և հողեղէն շինվածներովը, հռչակաւոր ալ եղած էր իր հարստութիւնովը և ձեռնհաս եղած արհեստներովը, որուն մեծութեանը բոլոր սրտոնստ վաճառականութիւնն էր :

Յունական դաշնակից տէրութեան գլխաւոր մայրաքաղաքը Աթէնք էր, որ ազնուականաց այցելութեան տեղի էր, և զիտութեանց վարժարան, որ հարուստ մարդիկ այն տեղը բնակելը կրնատրէին. ասոնցմէ զատ Աթէնք իրեն հարկատու շատ նահանգներէն եկամուտ կատանար, բայց Կորնթոս այս օգուտները չունէր, իր վաճառականութիւնովն էր իր բոլոր մեծութիւնը, և իր շէնքերուն զեղեց'լութիւնը, որով Յունաստանի խիստ երևելի բաղաբներուն մէկն էր, իր քաշաքացոց հարստութեամբն ու աւերազանցութեամբն էջ. ամենագիղեցիկ նարտարապետական կարգը՝ որ մինչև ցայսօր իր անունը կը կրէ, այս տեղ հնարված է : Ուրեմն ազատական արհեստներուն մշակութիւնը վաճառականութեան ազդեցութեամբը յառաջած ըլլալուն, մնայուն բացատրութիւն մըն է ասի :

Իրացընէ մէ Կորնթոսի մէջ և Ատտիկէի մէջ ազատական արհեստները շոայլութեան հետ ընկերացեալ էին, բայց մէ որ հարկաւ ազատական արհեստները հեշտասիրութեան հակամէտ ըլլալուն համար մէկդի ձգել ստիպված ըլլայինք, նոյն մտքով բնական զիտութիւններէն ալ հեռանալու և հրաժարելու էինք, վասն զի անոնք ալ անհաստատութեան գործածվեր են :

Պօզոս առարեալը Կորնթոսի բրիստոնեայ եկեղեցւոյն երկու նամակ ուղղեց, որոնք կակնարկէին Իսթմեան խաղերուն վարժութեան սովորութիւնները, որ երեք տարին անգամ մը քաղաքին մօտերը հանդեսով կը կատարվէր :

Սիրակուսան Սիշիլիա կղզիին մայրաքաղաքն էր, և սկզբնաբար Կորնթոսի գաղթականներէն կառուցեալ էր, այս գաղթականները իրենց բուն երկիրը օրինակ առնելով վաճառականութեան պարագեցան որ իրենց հարստութիւնը Կարթագինէն նախանձաւոր ըրած էր :

Սիրակուսա իր աղեկ ժամանակը բասն և երկու մղոն շըրջապատ ունէր, և իր յարմար նաւահանգիստովը և վայելուչ շէնքերովը՝ և հասարակաց շքեղ շինուածներովը՝ երևելի էր, և իբր անկախ պետութիւն մը իր զօրութիւնը երկար ժամանակ տևեց թէ՛ ամենացոց և թէ՛ կորնթացոց երկուքին յարձակմանցն ալ. բայց վերջապէս հռոմայեցոցմէ նուաճեցաւ, սակայն Արքիմէդէսին ննարքներովը պաշարումը երեք տարի երկարեցաւ :

Կրետէ յունաց կղզիներուն մեծագոյնն էր, որ ըսված է թէ ժամանակ մը հարիւր բաղաբ կը պարունակէր, և շատ մեծ ծովային զօրութիւն ունէր, բայց վերջերը թէ իր զօրութիւնը և թէ պատիւը նուազեցաւ :

Թէ սուրբ և թէ արտաքին գրոց հեղինակները կը հաստատեն թէ կրէտացիք միշտ ստախօս են, և իրենց վարմունքը վերջի ժամանակները Յունաստանի համբաւին քիչ պատիւ բերաւ :

Հոողոսը իր կլիմային և իր պատուական գինիներուն համար հռչակաւոր էր, և իր պղնձէ հսկայածե արծաւովը համբաւեալ էր, որ նաւահանգստին երկու կողմը բռներ էր, այնպէս որ մեծամեծ նաւերը անոր սրունքներուն մէջ տեղէն կրնային անցնիլ, եօթանասուն երեք կանգնաչափ կամ հարիւր հինգ ոտնաչափ բարձրութիւն ունէր, և կըսվի թէ եօթը հարիւր բասն հազար շիպրայի չափ պղինձ կը պարունակէր, եօթանասուն և հինգ տարի կանգուն կենալէն ետև երկրաշարժէ մը ընկաւ :

Չորոց, Վաճառականութիւնը տօնաւաճատներ և վաճա-

ուստեղիներ հաստատելէն կը յառաջանայ : Տօնաւանատ մը մեծ վաճառատեղի մըն է, և վաճառատեղի մը փոքր տօնաւանատ է, վաճառանոցը կը հիմնըվի զլիաւորաբար մօտ տեղերուն բերքերը ծախելու համար :

Աթէնքի վաճառատեղիները բազմամիւ էին, հին և զլիաւորները մեծ քառակուսի տեղեր էին, որ ժողովուրդը հոն ժողվըվելու սովորութիւն բրած էր, և ծախվելու ապրանքները հոն կը տարածվէին, ամէն բանին վերակացումիւն ընելու համար դատաւորներ կընտրվէին, և այն վաճառատեղիները ծախված ամէն բաներուն մաքսը առնելու համար, հարկապահանջներ կը կենային :

Այն տեղ ամէն տեսակ վաճառքը զատ շուկայ ունէր, այսինքն հացագործի, ձկնորսի, կամ իւղ ծախողի, կամ ինչ և իցէ ուրիշ բաներու շուկայ, և զանազան ապրանքների ծախվելու համար տարբեր ժամանակներ որոշված էր, և որովհետեւ այս տեղերը քաղաքին խիստ յաճախեալ կողմերն էին, ամէն կերպ գործաւորները անոնց մօտերը բնակելու կը ջանային և անոնց բոլորտիքը եղած տուներուն վարձքը ուրիշ տեղերէն բարձր էր :

Մկրիմացիները կարգ և կանոն սրահել տալու համար՝ հասարակապետութեան կողմանէ վճարք կառնէին, և այն հրատարակին մէջ տեղը կը բնակէին :

Աշխարհիս նախկին դարերը ազգաց մէջ և մէկ երկրին մէջի նահանգները ևս զրեմէ բոլոր առևտուրերնին ժամանակեալ տօնաւանատներով կընէին :

Մէկ քաղաքին կառուցվելուն յիշատակը միշտ տօնաւանատով մը լլլալ կը կարգադրէին, սովորաբար չաստուածի մը նուիրելով, և այս տօնախմբութիւնը կրօնքի կը վերաբերէր, ուր որ ժողովրդեան բազմութիւնը հաւարվինէ՝ ի հարկէ առևտուրի ալ առիթ մը կուտայ, և վաճառականները այն տեղ

կը դիմեն, բազմութեանը պէտք եղածը մատակարարելու համար, սակէ այս կարգադրեալ տօնավաճառի ժամանակները՝ առևտուրի ժամանակներ եղան :

Հին ժամանակները ամէն վաճառական մանրավաճառ էր, վաճառական մը կերթար հետու տեղի տօնավաճառէ մը ապրանք ծախու կառնէր, և այն ապրանքը այն բանին կարօտութիւն ունեցող ուրիշ տօնավաճառ մը կը բերէր, և անոնք զործածելու պատահութիւն ունեցողներուն կը ծախէր, դուքսէն ապրանք բերող և քիչ քիչ ծախող վաճառականը մի և նոյն մարդն էր, մինչև այն ժամանակները որ ազգերը կարի իմն հարուստ և բաղաբակրթեալ եղան, և հետևաբար մանրավաճառութիւնը շատ առուտուրի նիւղ ստացաւ :

Մէկէն շատ ապրանք ծախու առնելը և անոնք պզտիկ չափով ծախելը՝ առևտուրին անանկ մէկ նիւղն է՝ որ մինակ հաստատեալ և բազմամարդ բաղաբները կրնայ ըլլալ :

Քանի մը դար առաջները Անգղիա ևս թէ որ մարդ մը կտոր մը կտաւ կամ թէ մետաքսեայ բենեզ ծախու առնել ուզէր, մինչև տօնավաճառին զարու օրին տպասելու էր, բայց հիմակվան ժամանակ խանութպանները հասարակութեան պիտանաւորութեան շատը կրնան մատակարարել, որ առջի ժամանակները տօնավաճառներէն առնելու սովորութիւն եղած էր :

Մինչև ցայժմ քանի մը տեղ տարեկան տօնավաճառներ կան, զլիաւորաբար կենդանի անասուն և երկրագործութեան բերքեր ծախելու համար : Վաճառատեղի և տօնավաճառներ կարգելը բոլոր հին օրինադրութեան մէկ նպատակն էր :

Մովսէս մարգարէն պահանջեց որ երկրին ամէն արուները տարին երեք անգամ Երուսաղէմ գտնըվին, թէպէտ և այս կարգադրութեան զլիաւոր նպատակը ժողովրդեան միտքը հաւատոյ զգացումը տպաւորեալ պահել տալ ըլլալուն տարակոյս

չըկայ, սակայն երկրորդական նպատակն էր երկրին ներքին վաճառականութիւնը և առևտուրը դիւրացընել :

Այս կրօնական տօնախմբութիւնները հասարակաց տօնավաճառներ էին, ինպէս որ սուրբ Աւետարանին մէջն ալ կը տեսնեմք որ երբեմն նոյն իսկ տաճարին մէջն ալ առևտուր կընէին :

Այս մասին Միխայէլիսին խօսքը վկայութիւն կը բերեմք իր մովսիսական օրինաց մէկնումենէն :

Երբոր վաճառականութեան վրայ կը խօսիմք, պէտք է որ որոշեմք մէկ ժողովրդեան իրարու մէջ ունեցած ներքին վաճառականութիւնը յատկապէս ուրիշ ազգաց հետ ծովով ունեցած վաճառականութենէն :

Առաջինը որ մէկ երկիր մը առանց մեծ կորուստի չըկրնար տնօրինել :

Պատրաստութիւն մըն էր, երեք տօնախմբութիւնով հանդէս յիշատակի ընելու, որ տարին երեք անգամ թողոր խորայէլացիները կը ժողվէին :

Այս կերպ միաբանութիւնը որ կրօնական դիտաւորութեան համար տնօրինված էր, զլիաւորաբար միանգամայն վաճառականութեան առաջանալուն նպաստամատոյց կըլի :

Ամէն կողմէն ժողովուրդը տօնախմբութեան պատճառաւ մէկ տեղ ժողված ըլլալով իհարկէ կարօտութիւն մը կունենար բան ծախու առնելու, անշուշտ վաճառականներն ալ իրենց ապրանքներով՝ տարեկան տօնախմբութեան առաջ եկած տեղը կերթան :

Մէքքէի ուխտաւորութիւնն ալ Արարիայի վաճառականութեան վրայ այս կերպ ներգործութիւն ըրած է :

Ասկէ կը տեսնեմք որ Թէպէտ և մովսիսական օրինադրութիւններուն ներքին վաճառականութեան օգուտները անուղ-

լակի իրենց դիտաւորութիւն ունեցած են, բայց միայն անանկ վերաբով մըն է որ անոր առաջ տանելը յատուկ գործառնութիւն եղած չէ, բայց միայն երկրագործութեան աշխատանքներ չըլլալու պարագայ շարաթները ժողովուրդը զբաղեցնելու մտօր էր, այսինքն հունձքէն առաջ՝ սրահէրի տօնին, հունձքէն ետքը՝ պէտտէկոտտէի և կ'ընց ժամանակին վերջերը՝ տաղաւարահարաց տօներուն :

Բոլոր Յունաստանի քաղաքներուն մէջ հասարակաց տօնախմբութիւններուն հաստատուիլը այս կերպով էր, ամէն քաղաք իրեն սեպհական տօնախմբութիւնն ունէր, ինչպէս որ Անգղիայի մէկ քանի կողմերուն եկեղեցական դէմերը իրենց յատուկ տօնախմբութիւն և խնճոյք ունին :

Ամէն մէկ վիճակը հիմնողին պատուոյն համար, կամ թէ երևելի դիպուածի մը յիշատակութեանը համար տարեկան տնախմբութիւններ ունէր :

Այս տեղական տօնախմբութիւններէն զատ ուրիշ տօնախմբութիւններ ալ կային, բոլոր Յունաստանի հասարակութեանէն նախապատիւ համարվածներն ասոնք էին :

Ոլիմպիական խաղերը որ ամէն չորս տարին անգամ մը Ոլիմպիա կը տօնախմբէին :

Պիւթեան խաղերը որ ամէն հինգ տարին անգամ մը Գեղփիս կը տօնախմբուէր, ի պատիւ Միլեքովային :

Նէմեան խաղերը ևս երեք տարին անգամ մը Կորնթոսի մօտ կը տօնուէր :

Այս խաղերը աղեկ ներգործութիւն առաջ կը բերէին :

Նախ. Ընկերական զգացմունքը հաճելի կընէին, և այս խաղերէն կը բաղկանային, այսինքն ընծացքի մէջ իրարու նետ դիմամրցութիւն (կարշ), ըմբշամարտութիւն, բռնամարտութիւն, ձիւրնծացութիւն, կտորքնծացութիւն, և երբեմն ալ

նաւրննացումիւն կրնէին, և զիրք շինող փիլիսոփաներն ալ այն խաղի տեղերն իրենց գրածները կը կարդային, որ տպագրութեան արհեստը անձանօթ ըլլալուն համար այս կերպը շատ ազդու միջոց մըն էր, գիտութիւնը ժողովրդեան հաղորդելու :

**Երկրորդ.** Այս տօնախմբութիւններուն ամէննալ չաստուածներուն նուիրեալ սրբազան համարված էր, և զոհերով ըլլալուն՝ ժողովրդեան միտքը միշտ հաւատոյ զգացումը պահելու կը նպաստէր. կարելի է թէ բոլոր հին օրէնագիրներուն տօնախմբութեան ժամանակներ կարգադրելուն զխաւոր պատճառը այս էր, վասն զի կերևի որ անոնց ամէնն ալ գիտէին որ կրօնական զգացումը քաղաքական ընկերութեան գոյութեանը հարկաւոր է :

**Երրորդ.** Վաճառականները և արուեստագետները իրենց ապրանքնին այն տեղը տանելով վաճառականութեան յառաջադիմութիւնը կապահովեցնէին, և ծախու առնելու կամբ ունեցող մարդիկ այն տեղերը երթալով կը գնէին :

Ամէն առիթ յոյները կը համոզէր այս հասարակաց տօնախմբութեան տեղերուն մտադիր ըլլալու, բարեպաշտօն մարդը իր յարգանքը յստերժական կարծած չաստուածներուն վճարելու համար այն տեղ կը դիմէր, գրագէտ և գիտնական մարդը փիլիսոփաներուն հետ խօսակցելու, անոնց ատենախօսութիւններուն ունկնդիր ըլլալու համար այն տեղ կերթար :

Զուարճատէր մարդը կերթար ձիրննացումիւնները կատրէննացումիւնները և ըմբշամարտութիւնները տեսնելու, և թատրոնական խաղերուն ներկայ գտնելու :

Մէկ դիէն իր ամենապայծառ տաճարները կրօնքի համար ուխտի եկող բազմամիւ ժողովուրդէն թանկագին ընծաներ կընդունէր, և գիտութեան դաշտերը մարտւր ու պարզ երկինքի տակ կիրքերը զուարճալի կրնէր, և միտքերը կը մշակէր. փիլիսոփան իր ճանապարհորդութիւններէն և իր խորհրդածու-

Յիւններէն առած հրահանգներուն նպաստները իր բոլորտիրքը նատող ու ունկնդիր ըլլողներուն կը հաղորդէր, և անոր մօտերը եղած դաշտերն ալ զանազան կերպ զուարճութիւններով սրտերնին կը զուարթացնէր, և բոլոր ուխտաւորներուն՝ վարմունքը կանուշցընէր :

Միջին դարերուն ժամանակները՝ տօնավաճառ մը հաստատելը թագաւորներուն կը վերաբերէր, և ով որ առանց արքունական հրովարտակի տօնավաճառ մը հաստատելու ըլլար՝ տուգանք տալու կը պարտաւորվէր :

Այս արտօնութիւնը՝ սովորաբար դաշնակից բաղարի մը, կամ սիրելի ազնուականի մը կամ Յէ կրօնական կարգի մը կը շնորհվէր, և այն տօնավաճառները յաճախող մարդիկ տօնավաճառներուն ատենը և հոն երթալու ու դառնալու ժամանակները՝ պարտքի համար բանտարգելութենէ՛ ազատ էին, և որի որ այս արտօնութիւնը շնորհված էր այն տեղ ծախված ապրանսաց վրայ սովորաբար տուրք և մարս առնելնուն թոյլ կը տրվէր :

Նաև բազում անգամ այս տօնավաճառները՝ մասնաւոր սուրբի մը նուիրեալ իբր սրբազան համարված էր :

Այս կերպ տօնավաճառներէն հիմա Լճնորայի մէջ մէկ մը մնացած է, և ինչպէս որ գիտէք սուրբ Բարթուղիմէոսի նուիրեալ է, ուր որ վաճառատելի հաստատված է՝ և այն տեղ օրէնադիրները կշիռքներու և չափերու վերաբերեալ կանոնադրութիւններ սահմանած են :

Անգղիայի չափերուն երկայնութեանցը մեծ մասը կերևի Յէ մարդկային անդամներէն առնուած են, այսինքն, նաւաշինութեան գործերը ոտքով կը չափվի, և ձիու մը վրայ խօսելու ըլլամբ՝ կրսեմբ Յէ այսբան թիզ բարձր է, Յէ որ կտաւ չափելու ըլլանբ՝ եղունքն կրսեմբ որ մէկ ետքայիև տասն և վե-

ցերբորդ մասն է. ել, որ բազուկ ըսել է, և կառսան որ կէս գրկաչափ է այսինքն մարդ մը երբոր իր երկու ձեռքը տարածէ երկու միջամատին հեռաորութիւնը գրկաչափ մը ըսել է, և անոր կէտը կառսա մըն է. մէկ կանգունը արմուկէն (սիրակկ) մինչև մատին ծայրի հեռաութիւնն է. խոսիք բառը այսինքն կանգունը՝ արմուկ (սիրակկ) ըսել է, հիմակուան կառսան երեսուն և վեց ինչեզով կը բաղկանայ. առաջին Հէնրիկուսէն հաստատուած է, որ իր բազուկին երկայնութեանը չափին վրայ կառուցած է, մէկ բայրափոխը որ ուրիշ չափ մըն է՝ մեր բային ընծացքը կը նշանակէ :

Հին ժամանակուան չափերուն երկայնութեանը յարմար կամ թէ կշիռքի և կամ տարածութեան չափերուն վերաբերեալ տեղեկութիւն մը չունիմք :

Անգղիայի մէջ այս չափերուն կապակցութիւնը՝ ծերակոյտի ժողովքի (փառլամենթ) վճռով հաստատուած է, արքունական չափ կոչվելով, մէկ խորանարդ ոտնաչափ գտլած ջուրը՝ հազարունկի(օնչայ)կուգայ, որ տասնևվեց ունկին մէկ լիտր (լիպրա) կընէ. թէ որ բոլոր լիպրայի չափերը կորսրվելու ըլլան՝ և տահմանեալ կշիռքի չափը մոտցրվի, ձիշղը դիւրաւ կըրնանք գտնել, մէկ խորանարդ ոտնաչափ աման մը ջուր լեցնելով՝ և հազարէն տասնևվեցը մէկ լիպրայի տեղ առնելով :

Նոյն հաշիւով է նաև կալլօնի չափը՝ որ տասը լիպրայ գտնալ կամ անձրևի ջուր կը պարունակէ, նմանապէս՝ թէ որ կալլօնի չափը կորսրվի, ձիշղ չափը կրնանք ստուգել, տասը լիպրայ ջուր կշռելով և լման այնչափ ջուր պարունակելու ամանի մը մէջ լեցրնելով՝ կալլօն մը ընել :

Բոլոր Անգղիայի կշիռքներն ու չափերը գծային չափերէն կախում ունին, այսինքն ոտնաչափը կը չափէ լիպրան, և լիպրան ալ կը չափէ կալլօնը :

Երկրի մը ամէն կողմի կշիռքն ու չափը հաւասար ըլլալուն, և այն բաները որ գաւառին մէկ կողմը կշիռքով կը ծախսվին միւս կողմը չափով ծախսվելու չեն, ինչպէս ցորենը Անգղիա չափով կը ծախսի, և Իռլանտա կշիռքով. Անգղիոյ մէջ մէկ գրիւ (ֆիլի) ցորենը Իռլանտա այնքան ցորեն ըսել չէ, այն տեղի գրիւք քան բարի ծանրաչափ կիմացովի, որ ամէն մէկ բարը տասննչորս շիպրայ կը կշռէ, և մէկ գրիւ գարին տասննվեց բար, և մէկ գրիւ վարսակը տասննչորս բար ծանրութեամբ կը ծախսի :

**Չորրորդ.** Վաճառականութիւնը դրամի շրջաբերութեան դիւրութիւնը օրինադրութենէն կը յառաջանայ :

Դրամի շրջաբերութիւնը սրահպանող երկու օրինադրութիւն կայ, մէկն է փողերանոց, (գարգիսանկ) և մէկն ալ դրամանոց այսինքն (Պանֆա) :

Առջի խօսակցութեան մէջ յիշեցինք թէ եզրագտացիները սուկին և արծաթը ձոյլ (ֆիլիչի) կը գործածէին, դրամի տեղ, բայց յոյները շատ ժամանակ առաջ դրամահատութեան արհեստին տեղեակ էին :

Ամէն ազգին դրամահատութիւնը տէրութեան արտօնութիւնը համարված էր, և ամէն ազգ դրամներուն վրայ յատուկ հնարված դրոշմ կը գործածէր. սովորաբար դրամին մէկ կողմը թագաւորին գլուխը՝ միւս կողմն ալ ազգային խորհրդաւոր նշանը կը դրոշմէին, և բոլոր ազգերուն դրամներուն ձևը՝ զրեթէ կտրէր, բայց քանի մը բացառութիւն եղած կար, թէ որ յունական դրամներուն ձևը տալ ուզենք, որն որ ստիկի նկար անուանելու է, ըսելու ենք Ն օպօրու որ է դանկի, մէկ տրանս կընէ. 105 տրանսը՝ մէկ մնաս կընէ, 60 մնասը մէկ տաղանդ կընէ. դանկը (օպօրու) արծաթ դրամ մըն էր, զրեթէ Անգղիոյ փեկն ու կէս ստիկ արծէքով, և կէս (օպօրու) ըսվածը իբր

երեք Անգղիոյ փարսիակ կարժէր, երկու, երեք, չորս և մինչև հինգ դանկի (օպօրոս) արժէքով, արժամ դրամ կամ տրանսի մին վեց օպօրոսնոց արժամ դրամ մըն էր, և Անգղիոյ ինը փենսի արժէք ունէր, երկու և չորս տրանսնոց ալ կար' ասոնց ամէնն ալ արժամ էր :

Թէպէտ և ամէնացիք պղնձի հանքեր չունէին' բայց կերևի թէ պղինձէ դրամի ալ մեծ ատելութիւն ունէին, ուստի վար արժէքի համար' մանր արժամ դրամներ ալ ըրած էին, ու անանկ պզտիկ էին որ կըսվի թէ ձուկի թէփի կը նմանէին, բայց վերջապէս համոզվեցան պղինձէ դրամ գործածելու, տակայն այս խորհուրդը շատագոյն առնուարանը յետոյ նախատինք կընց պղինձէ մարդ կոչվելով :

Ամէնէն մանր դանկը մէկ օպօրոսին ութերորդ մասն էր, գրեթէ մէկ փարսիակին երեք չորրորդ մասը կարժէր :

Յունաստանի մէջ ոսկին առատ չէր, հետևաբար ոսկիէ դրամը նուազ էր, և զխաւոր դրամը թէ որ միմիայնը չէր' տրանսին էր, կամ երկու տրանսնոցը, և սրաքեր այնինքն փնակային կը կոչվէր, բսան արժամ տրանսի արժէքով դրամ մը, որ ըսել է տասնևհինգ Անգղիոյ շիլլինգէն աւելիէլ արժէքով :

Ամէնացոց դրամներուն մէկ կողմը Միներվայի պատկերը կար, և միւս կողմն ալ Միներվայի նուիրեալ բու թռչունի մը պատկերը : Զանազան զաւառներուն այլևայլ դարերուն դրամները, իրարմէ շատ տարբերութիւն ունին, ուրկէ զխոնականներուն մէկ քանին էվելթը շիոթեցան Յունաստանի վերաբերեալ դրամներուն մասին : Դիտելու եմք որ Յունաստանի դրամները մէկ երկու հանգամանքով Անգղիայի դրամներուն նմանութիւնը ունին : Ժամանակ մը Անգղիոյ բոլոր դրամները արժամ էին, և մինչև 1544 տարին' ոսկիէ դրամ կըտրուված

չէր, և մինչև 1609 տարին պղինձէ դրամ ալ տալիս չէր, և մանր գին ցուցընելու համար արծամ քենային կէսէն կը կրտրէին կամ չորս կտոր կընէին, որոնք կէս քենա և մէկ փայտիկ կըսէին, և որ ժամանակ որ պղինձէ դրամը սկսաւ, այն սովորութիւնը արգիլելեցաւ, և մասնաւոր անձանց հանած կապարեայ նշաններն ալ խափանելեցաւ :

Յոյները մինա անուամբ (մնա) հատեալ դրամ չունէին, անոր արժէքը Անգղիոյ 5 լիրայ 15 շիլին ըսել է, տաղանդին արժէքն ալ 22½ Անգղիոյ լիրայ է, ասոնք հաշիւի համար դանկաններ էին, ինչպէս որ Անգղիայի մէջ լիրա-սքոռիկան որոշված է, թէպէտ և դարերով սուաջ Անգղիա անոր ճիշդ հաւասար արժէքով դրամ չունէր :

Գրամանոցի (պանֆայ) օրինադրութիւնը՝ ստացուածքի ապահովութիւն չեղած տեղը՝ որ ընկերութեան մէջ ըլլայ՝ ամենեւին չժողկիր, թէ և անապահովութիւնը՝ տէրութեան բնաւորութենէն՝ կամ ժողովրդեան պղտորութենէն և կամ դուրսի թշնամիներուն յարձակմանէն յառաջ եկած ըլլայ :

Արևելեան երկիրներուն մէջ ուր հարստութեան ստացումը տէրութիւնը յախշտակութեան կը զրգռէ, ժողովուրդը՝ իր հարստութիւնը գետնին տակը թաղելով կը սրտէ, ինչպէս Սուրբ գրոց մէջ ալ կը կարգամբ ազարակի մը մէջ թագուցեալ գանձերը :

Եւրոպայի վիճակական դրութեան ժամանակները ասոր նըման սովորութիւն մը կը տիրէր, որ զանձ գտնելը արբունի եկամտից մէկ աղբիւրն էր, որով պահված բոլոր գանձերը երբ որ գտնուէր՝ թագաւորին կիյնար :

Յունաստանի մէջ հին ժամանակերը՝ ստացուածքը ապահով չէր, ըստ մասին ժողովրդեանը պղտորութենէն՝ և ըստ մասին սահմանակից գաւառներուն արշաւանքէն, այս դիպ-

ւածներուն ժամանակները տաճարները դրամանոցի (սրահայ) տեղ կը գործածուէր, առակ ունեցող ժողովուրդը քահանաներուն կը յանձնէր, որ տեղին սրբութիւնը յախշտակութենէն կը սրահարնէր. թշնամիները՝ այն տաճարին չատուածը բարկացնելէն վախնալով՝ կզգուշանային անկէ այս գանձը վերցրնելէն, բայց թէպէտ տաճարները գանձ պահելու ապահով տեղ ըլլալով դրամանոցի տեղ կը բռնէր, ուրիշ առաջադրութեան մասին հաստատուած դրամանոցներն ալ չըղադրեցուցին, և ընկերութիւնը բանի որ յառաջացաւ մասնաւոր անձինքներ ալ դրամանոցի առևտուրը այնքան յառաջ տարին :

Արևելեան դրամանոցի գործառնութիւնները զանդադրուած պաշտօնեայի նմանութիւն մը կունենան, իբր թէ իր տաղանդը երկիրը թաղուցած ըլլայ, որ հասարակօրէն սովորութիւն մըն է, իրենց գանձը թաղուցանել քան թէ սեղանաւորի մը ձեռքէ, ինչպէս որ ըստ է. « Իմ տակս պէտք է որ շրամափոխի մը տայիր՝ որ իմ դառնալուս վարձքովը կառնէի: »

Այս դրամափոխները դրամ փոխ կուտային, ու կառնէին, և դրամ կը փոխէին, այսինքն մեծ դրամին տեղ սղտիկ տալով և իրենց երկիրն դրամը ուրիշ տեղի դրամի նետ փոխելով, փոխ դրամ կառնէին, և իրենց գրասեղանը դրամ առնելու ու տալու զբաղած ըլլալով նիւսկուան դրամափոխներուն (սրահիկ) պէս իրենց յաճախորդներուն նետ պարտ ու սրահանջի հաշիւ կը բռնէին, տաղանդներով մեծ գումար առակ ալ կառնէին, և շահ կամ վարձք ալ կուտային :

Աթէնքի մէջ ստիկի շահին որոշուած զինը՝ հարիւրին 12 էր, կամ թէ ամէն նոր լուսնին հարիւրին 1: Հետո տեղ անաստար հորդութիւն ընող մարդիկ ստակնին սեղանաւորին կը ձեռքէին վարձքով և դառնալուն կառնէին :

Այս տուրևատութեանց մէջ շատ անգամ վկաներ չէր ըլլար՝

և սեղանաւոր մը առած ստակը կրնար ուրանալ . բայց անանկ պատահար մը ըլլարնէ՛ հասարակութիւնը անկէ՛ հաւատարմութիւնը կը վերջընէր :

Այս սեղանաւորները տարակոյս չկայ որ ստակ փոխ տըլօղներ էին, Թէ որ անանկ չըլլար՝ իրենց ալ ստակ փոխ առնել հարկ չէր ըլլար :

Սեղանաւորի մը գործն է մէկ կողմէն ստակ փոխ առնել և միւս կողմին փոխ տալ , և տըլածէն ու առածէն՝ շահին աւելորդ տարբերութիւնը իրեն շահի աղբիւր մը եղած կըլլայ :

Յունաստանի սեղանաւորները՝ իրենց դրամք փոխանակագիր դրամագեղջը (սփոնթո) ընելու պայմանով փոխատուութիւն չէին ըներ , վասնզի այն մամանակները փոխանակագիր չկար , բայց իրենց փոխատուութիւնը՝ գլխաւորաբար անձնական ապահովութեան վրայ կըլլար , այն մարդոցը որ առևտուրի զբաղած էին , կամ Թէ ուրիշ պիտանաւորութեան համար կուզէին :

Շատ անգամ սպրանքով նաւ բեռցնող՝ և ուրիշ երկիր ծախելու տանող վաճառականներուն փոխ կուտային , առանկ սրտազաններուն մէջ երբեմն սեղանաւորը նաւուն հետ մարդ մը կը զրկէր , բեռը ծախովելուն դրամք իր պահանջին փոխարէն առնելու համար , երբեմն ալ սեղանաւորը իր առնիլիքն առնելու մինչև նա ինդառնալուն կըտարաւէր , որով սեղանաւորը ճամբու փտանգէն բաժին ունեցած կըլլար , առանկ սրտազայի մէջ երբեմն ստակին սոկոսը մինչև հարիւրին 50 աւելի կտանէր , Թէպէտ և սեղանաւոր մը նաւ մը բեռցնելու պատճառով վաճառականի մը փոխ ստակ տալու ըլլար նէ՛ նոյն վաճառականը կամ ուրիշ քաղաքացի մը դուրս ստակ չէր կրնար զրկէր , միայն Թէ ցորենի հետ կամ ուրիշ անանկ սպրանքի հետ փոխանակելու էր որ օրէնքով Թոյլ տըլած

էր. եթէ մէկը իր ստակը ուրիշ պատճառաւ երկրէն դուրս դրկելու յօժարէր, այն մարդը հարածանք կը բաշէր և Արխանդները դատաստանարաններու բննութեան օրինադիր ըլլալու թոյլ տուութիւն չէին տար այն մարդուն :

Աթէնք վաշխառութեան օրէնք չըկար, ամէն սեղանաւոր որ և իցէ գնով ստկի տոկոս կրնար առնել և տալ, բայց երբ որ որոշեալ զին մը դրած ըլլար՝ յետոյ անկից աւելի շահ չէր կրնար պահանջել :

Մասնաւոր մարդոց մէջ վաշխառութիւնը մեծ և ընդարձակ ստվորութիւն մը եղած էր :

Սեղանաւորի մը սնանկանալը՝ միշտ մեծ ազդեցութիւն կը պատճառէր, և երբեմն ժողովրդեանը բարկութենէն խոյս տալու համար՝ զինզը թագուցանելու կը պարտաւորէր :

Վերջի ժամանակները՝ Իտալիայի նահանգները ասանկ պարագաներու մէջ զրգուռութեան զգացում մը կերելի. ինչպէս որ պանֆարօք բառն ալ այն ստվորութենէն կը ծագի, երբ սեղանաւորին մէկը իր պարտքերը հատուցանելու անկարող կըլլար, անոր դրամարկղը՝ կամ նստարանը հրապարակին մէջ կը կտորտէին :

Արդ յունաց պատմութիւնը մեզ հրահանգելով տեղեակ կընէ վաճառականութեան յառաջանալուն սկզբունքներուն վրայ որ ասոնք էին, մասնաւորաց ստացուածքին ապահովութիւնը :

Անկողմնասէր կառաւորութեամբ հասարակաց իրաւունքին պաշտպանվիլը, բաղաբներ և բերդաբաղաբներ կառուցվիլը :

Վաճառատեղիներ և տօնախմբաներ հստատավիլը. և դրամի շրջաբերութիւնը դիւրացնելու օրինադրութիւնները :

Փանք հիմա յունաց վաճառականական բնաւորութեանը վրայ խորհելու :

Ա. Յոյները աւելորդապաշտ էին, Պողոս առաքեալը ամէ-

նացոց ըսաւ . « Բնակիչք Աթէնքի, կը տեսնեմ որ դուք ամէն բանի մէջ խիստ պաշտօնասէր էք . » Այն ժամանակը բաղաբը բոլորովին կուսապաշտութեան մէջ ընկղմած էր, վաճառական մը աւելորդապաշտ ըլլալու չէ, կրօնամօլ ըլլալու չեմք, և թոյլ տալու չեմք որ կրօնքի արարողութիւններուն կանտոնապահութիւնը՝ գրասեղանի հարկաւորութեան հակառակի, <sup>(1)</sup> բայց միշտ և ամէն ժամանակ միտքերնիս ունենալու եմք որ՝ ամէնուն կեանք, շունչ, և ամենայն ինչ տուող գերագոյն զօրութիւն մը կայ, և այն Էակը երկրին վրայ բնակող բոլոր ազգերը մէկ արիւնէ ստեղծած է :

Այն որ երկինքէն մեզի անձրև և պտղաւէտ եղանակներ կուտայ, որ սիրտերնիս խնդութեամբ և զուարճութեամբ կը լեցնէ :

Այն որ հողմերուն և ծովերուն կը հրամայէ, որոնք իրեն կը նսազանդին, այն որ հարստանալու զօրութիւնը տրված է :

Երբոր Յունաստանի վաճառականք, ճանապարհորդութիւն ընելու կը պատրաստվէր, նախ կերմար Աթէնասին կամ Պոսիդոնին կամ Հէրմէսին կամ Յէ ո՞ր և իցէ ուրիշ չաստուածի մը տաճարը որ կարծրված էր Յէ իր վիճակին մասնաւոր պահպանութիւն ունէր և անոր օրհնութիւնը կը մաղթէր, յանձն առած ձեռնարկութեանը համար, և իրեն վերադառնալուն իր վաստակին մէկ մասը իբր շնորհապարտութեան ընծայ՝ օգնութիւնը մաղթած չաստուածին սեղանին կը մատուցանէր :

Աթէնք՝ որուն մեծութիւնը առաւել իր նաւատորմիդէն էր, և Կորնթոս որ իր հարստութիւնը՝ իրեն ձեռագործներովը վաս-

(1) Ասկից անանկ կրնայ կարծուիլ որ հեղինակը ըսած ըլլայ Յէ վաճառականութեան զէմ կուգայ Քրիստոնէութիւնը բայց միտքը այն չէ, Քրիստոնէական հաւատքին վրայ չիտար, այն զործերուն վրայ կը խօսի որ ամէն մարդ չէր պարտաւորեր ընելու :

տակած էր, իրենց տաճարներուն բազմութեամբը երևելի էին, վաճառականութեամբ ատացած հարստութեան մէկ մասը կրօնական նպատի կը նուիրէին :

Պուր բրիտանաց վաճառականը, արուեստաւոր, նաւատէրը, զազէր ԱՅէնը, և Կորնթոս, կամ ուրիշ Յունաստանի ծովային քաղաքները՝ և տաճարներուն աւերակներուն մէջերը որ հին ժամանակները ըստ մասին վաճառականութեամբ կանգնած էին, տէսէր թէ դուք ալ չէր կրնար ձեզի կրթութիւն և խրատ առնել, թէ որ անոնց կրօնքը աւելատաշտութիւն էր, և բարոյականութենէն հեռու էր՝ ձեր դատասարտութիւնը աւելի մեծագոյն չըլլար մի, թէ որ առաւել լուսաւորեալ հասարակ մը և սարգ օրէնքով և բարոյականութեամբ բիշ շերտ մեռանդութիւն մատուցանելու ըլլար :

Բ. Յոյները իրենց երդմանը անհոգ ըլլալուն համար՝ ամբաստանված էին, և Յունաստանին ամէն զաւտին բնակիչները այս ամբաստանութեան ներքին կիյնային :

Երբոր յոյն մը հռոմայեցոց արդարութեան դատաստանարան մը վկայութեան համար ներկայանար՝ անոր վկայութիւնը կաակածաւոր կը համարվէր, թէ որ անոնք իրենց երդումը պահելու անհոգ էին, առաւել ևս մակաբերելի է որ խօսերնուն ալ անտոյժ էին. վաճառականութեան բնութեան մասին ասկէ մեծ պակասութիւն մը չեմք կրնար երեակայել :

Թէ որ վաճառական մը կը բաղձայ իր յարգը պահելու, պէտք է որ իր խտատունքը և դաշնադրութիւնը կատարելու յշտագոյն ըլլայ, ըսելու չէ թէ այն ստիժին որ վրիպեցայ՝ մեծ բան չէր, հաւաստի եղեր որ մեծ նկատելու բան է, թէ և ինքն իրեն ջնջին բան ալ ըլլայ, այն որ կատարելու խօսք տուէր ես՝ հարկաւոր բան մը կըլլայ :

Քուկին արժանապատուութեանդ պարտքն է որ բու խօսքը

բունես, Թէ որ պզտիկ նիւթերու մէջ՝ խօսքիդ անհոգ ըլլաս՝ անոր նման մեծ գործողութեանց մէջ ալ շուտով անզգոյշ կըլլաս, այն որ բիշին հաւատարիմ է շատին ալ հաւատարիմ կըլլայ:

**Ք.** Յոյները խիստ հակառակասէր էին:

Այն մարդիկը որ խիստ երեակայութիւն ունին, և մեծ նըրբութեամբ կորացեալ բնաւորութեան տէր են, հակառակասէր կըլլան, իրենց երեակայութիւնը իրենց դատողութիւնը կը մոլորեցընէ, և իրենց նրբութիւնը փաստ կը գտնէ իրենց սխալ կարծիքին նպաստելու:

Արդ բազաքական ընկերութեան գոյացութեանը՝ իրաւագիտութենէն աւելի պատուական և աւելի կարևոր արձեւատ մը չկայ, բայց հակառակասիրութիւնը՝ ապականեալ ախորժակ մը և անբոված սիրտ մը կը յայտնէ:

Վատաւականի մը համար, լաւ է այնպիսի մարդկանց հետ գործ չունենալը, վասն զի որքան որ զգոյշ ալ ըլլայ, ծայր մը կը գտնայ երևել զինքը դատիմէ ձգելու, և Թէ որ դատը վատտրկելու ալ ըլլայ, տատապանքը և պատճառած յապաղու մը հաւատարակչիտ չըլլար, ինչպէս որ մամբը Սթէփէնար կըսէ իր ատենախօսութեան մէջ « Գատը նորաձև հագուատի մը կը նմանի, որ մարդիկ ուրախ կըլլան անիկայ հագած ատեննին, բայց անձրևինեղեղ մըն է որ մարդիկ անիկէ ազատելուն ուրախ կըլլան: »

Հակառակասիրութեան մէկ զէշ ազդեցութիւնն այն է որ մէկ երկրին օրէնքը բարոյականի գաղափար առնելով՝ անոր հակամիտութեան յօժարութիւնը յառաջ կը բերէ որ մեծ սխալ մունք մըն է:

Օրէնքը Ախրիկէի գերիի սուստորը հաստատեց, բայց արգարութիւն չըրաւ, Օրէնքը բու գործաւորներուդ իրենց յօժարութիւնով՝ օրական վարձքերնին ընդունելու և իրենց կամօքը օրը այնքան ժամ գործի գրադեցնելու քեզի թոյլ կուտայ, բայց

թէ որ դուն անոնց հարկաւորութենէն օգուտ քաղել ուզելով անոնցմէ խիստ պայման պահանջելու ըլլաս, բարոյապէս անմեղ չէս ըլլար :

Թէ որ դուն սնանկանալու ըլլաս՝ և դատաստանարանէն վկայական գիր (իշամ) տոանալու ըլլաս, դատք բու պարտքերդ վճարելու համար պարտատէրներուդ թող չըտար քեզ նեղելու, բայց սակայն բարոյապէս պարտաւորեալ ես անոր վճարելու կարողութիւն ունեցած ժամանակդ :

Օրինաց հակառակ ըլլալը բարոյականի դէմ չէ կարծելէն զգուշացիր, շատ մոլութիւններ և մեղքեր կան որոնց չեն հասնիր մարդկային օրէնքները, դուն զանազան կերպերով կրնաս անիրաւօրէն և անհամեստարար զործել առանց օրէնքներուն զրուածքին վլասելու, ուրեմն օրինական իմաստակութիւնք պատէ՛հ չըբռնելով՝ պարտք է որ սովորիս օրէնքն ու իրաւունքը իրարմէ զանազանելու, իրաւունք չունեցած պահանջքդ չը պնդելով կամ իրաւամբ պատասխանատու եղած բու վրայէդ նետելով :

Գ. Յոյները վաճառականութեան ունակութեանը մէջ պակասաւոր էին. բոլոր ամէնացիք՝ և այն տեղ եղած օտարականները ժամանակին խօսելու կամ նոր բաներ լսելու վատնելին զործք Առաքելոցէն կը տեղեկանամք, մէկ նորալուր պատմող մարդ մը հազիւ թէ ազեկ առևտուրի մարդ կրնայ ըլլալ :

Վաճառականութեան բնական յարմարութիւնը զանազան հանգամանքներ պարունակելով՝ ասոնք կը պահանջէ, այսինքրն, աշխատասիրութիւն, կարգադրութիւն, հաշուէգիտութիւն, խոհեմութիւն, և յարատեւութիւն, այս ազեկութիւններն ալ մասնաւոր պատճառներէ դրդելով ռառչ չըզար, այլ սովորութեամբ կըլլայ :

Թէ որ մէկու մը իր աշխատասէր ըլլալուն վրայ պարծե-

նալը լսելու ըլլաս՝ աղևկ գիտցիր որ այն մարդը աշխատասիրութեան բնական յարմարութիւնն չունի, վասն զի մէկ մարդ մը որ բնաւորութիւն ըրած է իր գործոցը արդիւնքը չըմտածել թէ և անոնց ընթացքը խիստ արդիւնաւոր ալ ըլլայ՝ մեքենայէս կը գործէ :

Յոյները հետաքրքիր և գործունեայ և աշխատութեան յոյժ յաջողակ էին, երբոր զօրաւոր պատճառներէ գրգռված ըլլային, բայց երբ գրգռութիւնը վերնար անպիտանութեան մէջ կիյնային, և առևտուրի մէջ եղող մարդոցը՝ հարկաւոր եղած հաստատ բնաւորութիւնը չունէին, և անկանոն, փոփոխական, ու ինքնահանոյ էին :

Հին և նոր ազգերը իրարու հետ բաղդատող և նկարագրութիւն ընել սիրող մարդիկներէն ոմանք կը կարծեն թէ հիմակվան սպանիացիները հին եգեպտացոց և գաղիացիները հին յունաստանցոց և անգղիացիներն ալ հին հռոմայեցոց կը նըմանին, այս նմանութիւնները՝ կարելի է թէ ըստ մասին ստոյգ ըլլայ, բայց ուրիշ մատամբ պակտութիւն կայ :

Հաւաստի է թէ վաճառականի մը առևտրական բնաւորութիւնը հարկաւոր է, բայց իրեն սեպհական չէ :

Այնքան հարկաւոր է վաճառականի մը որքան որ արհեստաւորի մը, և այնքան հարկաւոր է տիկինի մը որքան որ ագնուականի մը . այնքան հարկաւոր է գերդատանի մեծի մը որքան որ վաճառականական հաստատութեան կառավարիչի մը : Մասնաւոր մարդուն յարմարեալ հանձարը՝ որքան որ մեծագոյն ըլլայ՝ առևտրական բնաւորութեան ընթացքին մէջ զինքը հաստատ պահելը՝ առաւելապէս հարկաւոր է, առաւել առազատ բացողը աւելի նաւախիթի կարօտ կըլլայ :

Թէ որ գերազանցութեամբ բարձրացած այն կրկելի անձանց բնաւորութեան պատմութիւնը բննելու ըլլամք, ինչպէս են

իշխանք, և օրէնդիրք, կամ մարդկային սեռի հրահանգիչք՝ պիտի գտնեմք որ իրենց առևտրական բնաւորութեամբը յատկացեալ էին, որպէս թէ իրենց զերազանց հանճարը այն եղած ըլլար :

Միւս կողմէ ալ դիւրաւ կրնանք հաւատներ, որ ամէն գիտութեանց և կենաց ամէն շաւիղին մէջ երբեմն պատանիներ՝ թէպէտ և իսկտ հանճարեղ բայց զորձառնական բնաւորութիւնին պակաս ըլլալով զիրենք կը բճացնեն, և բոլոր իրենց ազգականներուն ալ յոյսը պարապը հանած են, որոնք աշխարհիս վրայ կէս օրուան պաճայուութենէն առաւել փայլուն երևելով և մեծ քաջալերութեանց յոյսեր տալով ընդհանուր դիտողութեան հրաւիրած են, բայց վերջապէս յանկարծակի խոտորնակ ճամբով մոռցըված են :

Ե. Յոյները զբօսանքը կը սիրէին, և շատ տօնախմբութիւններ կը պանդէին. նախնի ազգերը զլիսաւորապէս երկրագործ էին, և ամէն երկրագործ ազգերուն տօները՝ երկրագործութեան աշխատանաց եղանակի ժամանակուան միջոցները՝ բազմաթիւ էին, յետոյ ազգերը վաճառականութեան ոգի՝ ստանալուն՝ տօներուն թիւերը նուազեցան, բոլոր տարուն մէջ վաճառականութեան զորձառնութիւնները առաւել կանոնաւորեալ են, ամէն եղանակի ժամանակը սուղ ըլլալուն՝ տարեկան աշխատանաց զուամարը առաւել շատցած է :

Տօներուն շատութիւնը ազգի մը վիսասկար է, որոնք օգտակար զորձառնութեանց ժամանակը կապտուն, և աշխատասէր բնաւորութիւնը կապականեն, անանկ որ աշխատութեան օրերուն արգասաւորութիւնն ալ նուազ կընեն, և յաճախակի անվայելոջ սովորութեան ճանապարհը կը հորդեն :

Միւս կողմէ ալ անընդհատ աշխատութիւնը թէ մարմնոյ և թէ մտաց զօրութիւնը պակսեցնելու կը հակամիտէ, հանգստու-

Յեան ժամանակն ալ կենաց հարկաւոր է, կարելի է որ մէկ առողջ և ուժեղ անձի մը ամէն օրուան մէկ մտար զուարճութեամբ կամ զոնէ մեր կրթութեան վիճակէն տարբեր կերպ մը զբաղանքով իր մտաց զօրութիւնը զարգացնելով կամ զիտութիւն ստանալով անցընելը հարկաւոր է:

Թէպէտ այն զիտութիւնը իր արհեստին անմիջապէս յարբերութիւն ալ չունենայ՝ իր զօրութիւնները միօրինակ աչխատութեան ընթացքով տկարացնելուն տեղը՝ անկէ տարբեր արհեստ ստացած ըլլալը՝ խիստ հաւանական է:

Վաճառականի մը զբօսանքը իր սպառույն համեմատելու է, զինքը խաղալու յօժարութեան հետ հաղորդակցութիւն ունեցող զուարճութեանց ամեննին տալու չէ, և չնչին հանգամանքներու մէջ շատ անգամ գտնուելու չէ:

Դատտուոր մը միշտ դատաստանի ամուսին վրայ չընտիր: Քահանայ մըն ալ միշտ եկեղեցին կամ ամպիօնը քարոզելու չընտիր, նաև վաճառական մը ամէն տուն վաճառատեղին (պօստան) չըկենար. բայց ամէն մէկէն ալ ամէն ժամանակ կը պահանջովի որ իրենց պաշտօնին պահանջած զբաղմունքին չըվայելու զուարճութենէն հրաժարին:

Վաճառականի մը համբաւը մինակ իր հարատուութեանը վրայ չըկայանար, այլ հասարակաց կարծիքով անոր անձնական որպիսութիւնը գովելի ըլլալուն վրայ կը կայանայ. պէտք է որ իր վարմունքը, սեպհականեալ խոհեմութիւնն ու համարմունքը մշակէ, այնպէս որ իբր Թէ իր առևտրական գործերուն մէկ մասն եղած ըլլար:

Մէկ տօն մը կայ որ վաճառականը միշտ զիտելու է, և այս հարկաւոր զիտելիքն է կիրակի օրերը յարգելը:

Կիրակի օրուան խորհրդական նպատակը անձնական հանգստութիւնը ապահովցնել է, յատկապէս ստորին կարգի ըն-

կերութեանց մտածութեան ընթացքը փոխել, մտաց զօրութիւնը ժիր և ուժեղութեան ընթացքին մէջ պահպանել, մարդուս խորհրդածութեան պատեհութիւն տալով՝ անոր իրմէ վեր՝ իր բոլորտիքն ու իր ներքը նկատելով, իր բնաւորութիւնը և բաղդը խորհելով սատուածպաշտութեան պարտքերը հստուցանելու պիտոյքը պատրաստել՝ մարդասէր և բարեւէր ըլլալու համար, որ իրեն յատուկ վիճակ մը կըլլայ բարուց բարոյակաւութիւնովը և հաւատացեալ էակ ըլլալովը :

Կիրակի օրուան օրինադրութիւնը՝ կարծելու չէ՞ թէ տարեկան աշխատանաց զումարը կը պակսեցնէ, ընդհակառակն կարողութիւնը զարգացնելով և մտաց զօրութիւնը խրախուսելովը՝ թէ ազգաց և թէ մասնաւոր անձանց վրայ տարեկան աշխատանաց հասոյթը իրօք կաւելցնէ :

Կիրակի օրուան աշխատութիւնը հարստութիւն բերելու չընդհանտիր : Վասն զի շաբաթական կիրակին տնօրինողը մարդը չէ, որ այն սուրբ օրը աշխատութեամբ կը վատնէ : Ամէն օրուան զօժքերուն միտ դնելովն ու իր հաշուէզրբերը կարգի դնելովն է որ մարդս ապահով հարստութեան ճամբան գացած կըլլայ :

Այն է մարդը, որ երբ կիրակին կը լուսնայ, իր մտացը զգայութիւնը կը տարածէ նոր զուարթութիւնով և ազնուացուցիչ ընկերութիւններով, որն որ իր ընտանեացը հետ սեպհական պատմութեանով զգեստաւորեալ, իր առաւօտեան մեծարանքը հաւատոյ տաճարին կը վճարէ, և օրուան միտցածը սիրով և բարեպաշտութեամբ կանցընէ, օրվան սրբութեանը պահանջած արդար յապտղմամբ : Այն է մարդը, որ խնացականութիւնը՝ բարոյականութիւնը և իր մտացը ընկերական կարողութիւնը կը զարգացնէ, որոնցմով ուղղակի ճամբով կը մերձենայ աշխարհիս մէջ հարստութիւն և յարգանք ստանալու :

Շատ կը սխալին անոնք որ Աստուածային հաստատութեամբ կանոնադրված կիրակի օրը բառնալու ջանալով՝ կը կարծեն թէ կարօտերոց իրաւունքը կը պաշտպանեն, եթէ ժողովրդեան բազմութիւնը անգամ մը այն տպաւորութիւնն ունենայ՝ որ կիրակի պահելը հաստատի պահանջմունք չէ, այլ զրեթէ դիւրութիւն մը և պատշաճութիւն մըն է. այն ժամանակ աղքատը աշխատանքէն դադրելու ապահովութիւն չունենար, և խօկոյն յայտնապէս հիմնեալ պատճառներ կը գտնվին աղքատաց աշխատանքը աւելցնելու. և թէ որ կիրակին ջերմեռանդութեան օր համարված չըլլալով միայն թէ, գրօսանաց օր կարծրվի, շուտով հատարակ աշխատանքի օր կըլլայ:

Կիրակին վերնալով աղքատը աւելի վարձը չտանար, իր եօթը օրուան աշխատանոցը փոխարէն, բան զայն որ հիմա կանէ վեց օրուանը համար, և իր հանգստութեան կշիռը կը պակսի, որովհետեւ առիթ չունենար կիրակի օրուան պատմունան ունենալու, և իր ընկերական փոփոխ յարաբերութիւնը, որ է բարեկամներուն նետ տեսնելովը, և իր բարոյական զարգացումը կը չընչըլի: Ասկէ և ուրիշ դէպքերէ յայտնի է, որ օրէնքը թէպէտ և հարուստին ուղղեցոյց և մխիթարիչ է, աղքատին ևս առաւել բարեկամ և պահպան է:

2. Յոյները զիտութեանց մէջ յառաջադէմ էին, որոնք չէ թէ միայն կարծիքէ և աստրժակէ կախում ունեցող սզատական արհեստներուն նման՝ զիտութեանց հմտութիւնով գերազանց էին, այլև իմացական զօրութիւնը բովանդակելու յատկութիւնն ունէին, ինչպէս են տրամաբանութիւնը, երկրաչափութիւնը, և այլն. բայց բանի մը ուրիշ զիտութեանց մէջ հիմակ վան նոր հեղինակներէն վար էին, բնական փիլիսոփայութեան զանազան սիւղերուն մէջ ետ մնացած էին, յատկապէս տարրալուծութեան, երկրորակութեան և կարվանական զիտու-

Յեան բոլորովին անտեղեակ էին . բնական պատմութեանց , տնկաբանութեան և հանքաբանութեան մէջ իրենց հետումիւնը չափաւորեալ էր . մամէմամիբական գրահաշիւ (արձեւոր) և երկրաչափութիւն կը հասկընային , բայց թուաբանական նշանակի և վերլուծութեան անտեղեակ էին . աստղաբաշխութեան , նաւաւարութեան և մեքենական արհեստներուն մէջ հիմակվաններուն չէին հաւասարէր . սակայն Արքիմէդէս մեքենայ մը հնարէր էր , որ նաւը ջուրին երեսէն վեր կըրնար վերցընել :

Յոյները տակաւին շոգիի զօրութիւնը չէին ճանաչէր , և կերելի թէ ամենեին գործածած չէին , միտլորտին սխմելը և հողմին զօրութիւնը , կամ թէ մեքենական հնարքներուն մէջ սրբընթաց ջուրը և զանազան փիլիսոփայական գործիքները , որ մենք ստացած ենք , այսինքն հեռադիտակ , խոշորացոյց , ծանրացոյց , ջերմաչափ , և այլն , թէպէտև յունաց լեզուէն առնըված բառեր են , նոր ժամանակաց գիւտերն են . բայց թէպէտ յոյները հիմակվան գիւտերուն անտեղեակ էին , սակայն իմացական գերազանց զօրութիւննին ալ իրենց գիտութեանց և ուսմանցը մէջ յայտնի բրած են , իրենց մտաց զօրութեանը մասին աւելի զօրեղ ապացոյց չըկրնար ըլլալ , որ հազարներով տարիներ անցնելէն յետոյ՝ այս մեր օրերն ալ տակաւին այն ազգեցութիւնը ունին :

Եւկղիդէսի ապացուցութիւնները՝ մինչև հիմա մեր դպրատունները ուղղութիւն կը պտղաբերեն : Արիստոտել տակաւին կը կանոնաւորէ մեր առարկութեան կարծեաց կերպերը , Հոմէրոսը մինչև ցայժմ բանաստեղծաց առաջինը և Տիմոսթենէս իբր առաջին ճարտասանը սեպված է . երբեմն հիմակուան բանդակագործները և ճարտարապետները անոնց չէն հաւասարիր , բայց միայն հին Յունաստանէն կորինակէն :

Այն կերպ գիտութիւն մը որ ժողովուրդը կառավարելու

սպնեատին հետուծեան կարօտ է՝ վաճառականի մըն ալ նոյնը հարկաւոր է։ Լայնատարած վաճառականութիւն մը ի գործ դնող վաճառականը՝ աշխարհիս ամէն կողմին բուսուցած բերքերուն պէտք է որ բաւ տեղեակ ըլլայ. ուր այս կամ այն սպրանքը առատ կը գտնուի, կամ ուր կը պակսի, բոլոր երկրի վրայ եղած ազգերուն ստորութիւննին և կարծիքնին ինչ են, և խնդիրի մը պատահարէն կամ դարձած դիպուածներէն ինչ ներգործութիւն կրնայ ըլլալ՝ առևտուրի այլ և այլ ճիւղերուն վրայ. ինչպէս որ հիմա հաղորդակցութեանց արագութենէն՝ աշխարհիս հեռու կողմերուն դիպուածները՝ վաճառականի մը բնակած տեղին հասուցած ապրանսոց վրայ ներգործութիւն կրնան ունենալ։ Օրինակի համար. Վամէրֆօրդ շինված վիսֆեին գինը (տեսակ մը օղի է) արևմտեան Հնդկաստանի շաքարի հունձին բերքէն և Ռուսիայի հունձքէն կամ թէ Փորթուքալի և Ֆրանսայի այգիներէն կախում կրնայ ունենալ. ուրիշ երկիրներէն անտեղեակ եղող վաճառական մը մեծ վնասներով կրնայ շփոթիլ. գէշ ձեռնարկութիւն մը եղած կըլլայ Թուրքաստան նաւ մը գինի դրկելը, վասն զի մահմէտականներուն արգիլված է գինի խմելը<sup>(\*)</sup>։ Վաճառականներէն ոմանք երբոր իմացան հարաւային Ամէրիկայի գաղթականներուն անկախութիւնը, իսկոյն բազմամիւ մեքենանէր դրկեցին Բերուի մետաղներուն հանգերը արդիւնաւորութեամբ համար. որոնք չզիտէին թէ ճամբայ չըկար մետաղ կրած գաւառները տանելու, և ժողովուրդը կտոր և ուռկան չունենալուն՝ այն շագի մեքենաները ծովեզերեայ տեղիւնքը մնացին ու ժանգով սպականեցան։

Պարէն ծախող վաճառականէ մը իմացայ որ կըսէր, Վամէր-

(\*) Երբ մտածվի որ Թուրքաստան շատ բրիտանեայ կը գտնուի, ոն գինի տանելուն շահարեք ըլլալն ալ կը հասկըցվի, և շատ մարդիկ ասով մեծապէս շահած են։

Քօրդի խոզի ապուխտի զիները Լօնտրայի կաղամբի (լահանա) զիներէն կախում ունեցան, որովհետև Անգղիայի ժողովուրդը սովորութիւն ունի խոզի ապուխտը կաղամբի հետ ուտելու, և երբ որ Անգղիոյ մէջ կաղամբը առատանայ՝ այն ժամանակը Իռլանտային խոզիապուխտը շատ կուզվի, և աղել կը ծախվի:

Բայց վաճառական մը չէ՞ թէ միայն գործերէն լայնատարած հմտութիւն ունենալու է, այլ անոնց սկզբունքներն ալ գիտնալու է, չէ՞ թէ միայն իրեն գործառնութեանը մէջ եղած ապրանսց բնական պատմութիւնը գիտնալու է այլ և անոնց ծախվելու պատրաստ ապրանք ըլլալու համար՝ պէտք եղած զանազան ընթացքներն ալ գիտնալու է, չէ՞ թէ միայն երկրի վրայ եղած զանազան ազգերուն վաճառականութեան վերաբերեալ օրէնքներուն, բնութեանցը, հասնոյցը և սովորութեանցը տեղեակ ըլլալու է, այլև վարձքերուն որոշմանցը, զիներուն փոփոխութեանցը և շահակշիւններուն ու ստակներուն զիներուն վրայ ներգործութիւն ունեցող զանազան պարագաները գիտնալու է:

Նոսիս տուրքերուն դրբվելէն ու վերնալէն և առ հասարակ ազգային եկամուտներուն սկզբունքներէն ծագելիք ներգործութիւնները գիտնալու է, վերջապէս նշմարելու եմք որ այս ձեր ժամանակները գիտութեանց և արհեստից տարածվիլը վաճառականութեան զլխաւոր արդիւնքն է:

Ոչ նոր զիւտ մը կրնայ ըլլալ գիտութեանց մէջ և ոչ ալ նոր հնարք մը արուեստից մէջ, թէ որ լայնատարած վաճառականութեան միջոցաւ շուտով աշխարհիս ամէն կողմը չբճանջցըլի:

Վաճառականութեան շունչը ամեն երկրի վրայ գիտութեանց սերմը կը շարժէ և ինկած տեղը արմատ կը ձգէ, և ամէն այցելութիւն ըրած գաւառները հիմա կը տեսնեմք որ գիտութեան ծառերը լայն և արձակ ճիւղեր ու տարածված ծաղիկներով զարդարված և արուղներով լեցված են:

Վաճառականութեան ծաւարումը հաստատ ապահովութիւն կը ստորադասուի մեզի՝ հիմնական գիտութիւններուն տնտեսականութեանը համար :

Յունաստանը և Հռոման կործանեցան, և գիտութիւնները իրենց աւերակներուն տակը թաղվեցան, բայց հիմնական գիտութիւնը քաղաքի մը յաղթըվելէն կամ տէրութեան մը նուաճելէն վախ չունի . թէ որ հիմնական գիտութեանց տեղերը բարբարոսութիւնով հեղեղելու ըլլան, վաճառականութիւնը՝ բոլորգիտութիւններուն ընծիւղն իր տապանակը կառնէ և ամէն կերպ իմացական գերագանցութիւնը հետաւոր գաւառներու մէջ յախտեան կապահովընէ :

Ուրեմն հիմնական քաղաքակրթութեան մշտնջենաւոր մընայուն՝ չէ թէ միայն ակն ունենալու եմք, այլև անոր աւելնալուն սպասելու եմք :

Երբոր կը տեսնեմք թէ ինչ յօժարութիւնով վաճառականութեան համարձակ ձեռնարկութիւնը կը ծաւալի, և ամէն տեղի բոլոր ժողովուրդն ինչ եռանդ ունի :

Երբոր կը տեսնեմք թէ ինչ հզօր իշխանութիւններ զբաղած են, և կը ջանան օր ըստ օրէ գիտութեանց սահմանները ընդարձակելու :

Երբոր կը տեսնեմք թէ ինչ ջանքեր կըլլան կրթութիւնը տարածելու ամէն տեղ և ամէն կարգի հասարակութեան մէջ. անոր եզրակացութիւնը ինչ ըլլայր ո՞վ կրնայ ըսել, ո՞վ չըհաւատար թէ ստորին կարգի ժողովուրդը գիտութեան աստիճանով վերին կարգին հաւասար պիտի բարձրանայ, և վերին կարգիներուն գիտութիւնն ալ համեմատաբար պիտի աւելնայ, և այս դէպքը՝ չէ թէ միայն ազգի մը, այլև բոլոր ազգերուն համար է :

Բոլոր աշխարհ այս բարձր յոռաջադիմութեան ընթացքին

մէջն է, ասանկ առաջ պիտի երթայ, ասկէ ալ անդին տակաւին առաւել զտումներ ընելով, մինչ որ մարդկային ընկերութիւնն իր կատարելութեան աստիճանը տոանայ, որուն համար հիմա մենք որոշ զաղախար մը չեմք կրնար ունենալ:

Նոր պարագաներու մէջ ձգլած ու զօրութիւններ յառաջ բերելու աստիճանով, մարդկային մարէն զատ, ո՞վ կրնայ զուշակել, որ անոնց ստացումը հիմա անձանօթ է, և մարդկային ընկերութիւնը հիմակվան բաղաբակրթութեան վիճակովը գեր ի վերոյ է, ինչպէս որ այժմեան վիճակը վայրենեաց վիճակէն զերագանց է:

Ով կրնայ ըսել մարդկային մտացը, որ դո՛ւն մինչև այն կետը պիտի յառաջանաս և ո՛չ անկէ աւելի, զնո՞ն հովերուն շարժումը արգիլէ և երկրին օրական շրջանը կեցնուր, կամ աստղերուն ընթացքը դադրեցնուր (թէ որ կրնաս), ասոնք ըրէ և ասոնք չընելէն յառաջ մի յուսար որ մարդկային մտաց յառաջադի մութիւնը կրնաս արգիլել:

Ճշմարտութիւնը մեծ է և պիտի յաղթէ, ինչպէս որ ատոյզ են բնական օրէնքները, և ինչպէս աներկբայ է արշալուստին երեւիլը, արևուն ծագիլն ալ զուշակելը, անանկ հաւասարի պիտի ըլլայ այժմեան գիտութեանց ընթացքին զուշակութիւնը, որ պիտի յաջորդէ միջօրէական պայծառ փայլութեամբ <sup>(1)</sup>:

---

(1) Այս խորհրդածութիւնները միայն փորձի տակ ինկած գիտութիւններ համար ճշմարիտ են:



Ա Տ Ե Ն Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ե Ր Ր Ե Ր Փ 91 - 191

Յաղագս վանառականութեան նախնի Տիրուսի և Կարբաղինի.  
Նաւարկութեան սկզբնաւորութիւնը. — Տիրուսի և Կարբաղի-  
նեի ծագումը. — Ծովային գօրութիւնը. — Վաճառականու-  
թեան վրայ նաւարկութեան ազդեցութիւնը. — Կղզւոյ մը դիր-  
քին օգտակարութիւնը. — Նախնեաց նաւերը. — Երկար ձանա-  
պարհորդութիւնները. — Վաճառականութեան յառաջ արձկիւր.  
— Զեռագործները. — Ուսայնանկութիւնը. — Ներկարարու-  
թիւնը. — Բրուսութիւնը. — Խաղախորդութիւնը. — Մեծա-  
դագործութիւնը. — Գաղթականները. — Գաղթականութեան  
վերաբերեալ վաճառականութիւնը. — Վարձուց կանոնը. —  
Տեղափոխութիւնը. — Գրամագլուխի հաւաքումը. — Հաւա-  
սարկութիւնը. — Լումայափոխութիւնը. — Նաւային փոխա-  
սութիւնը. — Ընկերութիւնները. — Միաբանեալ ընկերու-  
թիւնները. — Վաճառականութեան բնական յարմարութիւնը :

# ԱՏԵՆԱԲԱՆ ՈՒԹԻՒՆ

ԵՐՐՈՐԿ

ՀԻՆ ՏԻՒՐՈՍԻ ԵՒ ԿԱՐՅԱԳԻՆԷԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Առաջին ատենախօսութեանս մէջ վաճառականութեան վերաբերեալ զխտութեանց սկզբնաւորութեանը և բաղադրութեանցը քանի մը մասը նկարագրեցինք, այսինքն ըսինք թէ երկրի մը վաճառականութիւնը՝ իր բերքերէն և անոնց սպառումէն, իր դիրքէն և հաղորդակցութեան միջոցներէն, իր արձեատներուն վիճակէն և զխտութիւններէն, իր օրէնքներուն հանգամանքներէն և ժողովրդեանը յօժարութենէն ու բնաւորութենէն կախում կունենայ :

Հին Եզիպտոսի պատմութեան մէջ փոյթ ունեցանք այս խնդիրները բացայայտելու :

Երկրորդ ատենախօսութեան մէջ ալ մարդկային ընկերութեանը անբաղարատար վիճակէն վաճառականութեան յառաջադիմութիւնը զձագրեցինք, մասնաւոր անձանց կարուածոց իրաւունքին հաստատօրէն, օրէնքներուն մատակարարութիւնը, քաղաքներ կառուցօրէն, վաճառաստեղիներ ու սօճավաճառներ հաստատօրէն զննեցինք, և դրամի սկզբնաւորութեան ու սեղանաւորութեան վրայ խօսեցանք, և այս իրաց սկզբնական պատճառներն ալ բացատրելու փոյթ ունեցանք :

Հին Յունաստանի պատմութենէն առնելով՝ հիմա կը տես-

նեմք որ մարդկային բնկերութիւնը՝ նաստեւութեան վիճակի մը նասած է, այսինքն, կարուածքները յարգութիւն ստացած են, օրէնքները գորացած, սրճեստը և զխտութիւնները մշակված և կենաց նարկար որ բաները ձեռք բերված են, և աւելագանցութեան ախորժակ մը յաշորդած է և ժողովուրդները իրենց երկրին և կլիմային չբնասուցած բերքերն ստանարու նամար՝ զիրենք նարատացներու միջոցները բննկու կը նային. Թէ որ այս խնդիրներուն նանկի միջոցները զննել բաղձարու բլլանք, Տիւրտի և Կարթագինէի սրատուութիւնը նետագտութեն աղեկ բան չեմք կրնար ընել :

Փիւնիկէ կոչված երկիրը Միջերկրական ծովուն եզիրը Գաննաու հիւսիսային արևմտեան կողմը նաստատված էր, և իր երկրին սանձանք պղտիկ էր, և հին ժամանակի շատ երկիրներուն նման՝ սկիզբները պէտքէս անկախ վիճակներու բաժնրված էր, և երկու մեծ բաղարներնուն էր, Տիւրտ և Սիդոն : Հին Տիւրտը ցամաքի վրայ կատուցած էր, որ նարուգորնտարի սասն և երեք տարի սրաշարմանք զլմ կեցաւ, բայց վերջապէս նուսանցաւ, սակայն տիրացիները ծովու գորութիւն ունենալուն նարուգորնտար բաղարին տիրապետելէն առաջ, զիրենք ու իրենց բնտանիրը և սպրանքներնին փոխադրեցին և յետոյ վերապաձան, և ծովէն բիչ մը նետու սպրտածի մը վրայ նոր Տիւրտը կատուցին, գրեթէ երեք մզոնի չափ շրջասրատով :

Այս նոր Տիւրտն ալ մեծն Ազերասնգրէն ետն ամիսի չափ սրաշարիկէն և ստատիկ կատորածներ բլլալէն յետոյ աւնրվեցաւ : Այս ան Տիւրտն է որ Սուրբ զիրքը կը յիշէ այսպէս « Չուարնափի բաղար մը, որուն նտութիւնը շատանց « վան է, վանտատկները սրայագտաներ են և առետար « բնտղները երկրիս վրայի սրատուաւորներն են : Տիւրտը

« Նաստատ սագոսաթի վրայ հիմնելիս է, և արծաթը աւազի  
 « նման գիլգիսած է, և սպասուական ոսկին իր նանապարհներուն  
 « իրը աղմու էր: Երբոր ծովուն սլիքները դուրս կը ձփար,  
 « դուն շատ ժողովուրդներ կը յագեցնէիր, և երկրիս վրայի Թա-  
 « զաւորները կը նարասացնէիր, բու ապրանքներովդ և բու  
 « նարասուքեանդ շատուծիւնովը: »

Տիրոս իր մօտակայ Հրէաստանի նեա խիտ շատ սա և  
 սուր կրնէր, Սողոմոն խրայէլացոց արբան՝ տիրացոց Քիրամ  
 արբային նեա դաշնադրութիւն մը բրաւ, որուն գորութեամբը՝  
 տիրացիները Լիբանանու անտառներէն տախտակ կը կըտ-  
 րէին, և իրենց նաւերովը Եւֆրատ կը բերէին, ուրիկ Երուսա-  
 ղէմ կը տարվը՝ Տաճարը և ուրիշ նասարակաց շինվածները  
 կատուցվելու համար: Անոնց փոխարէն Սողոմոն սղ Քիրամին  
 Հրէաստանի հասուցած առատ բերքերէն՝ ցորեն, գարի,  
 գինի և խղ, կամ ինչ և իցէ բերք կը մատակարարէր:

Յետոյ երբոր Սողոմոն Գաաիօն-Գարերէն Քարախո գրկելու  
 համար նաւատորմիդ մը սրատրատուց, անոր նաւավարները  
 Քիրամ տուաւ, փան գի տիրացիները՝ ծովային գործերուն  
 խրայէլացիներէն լա տեղեակ էին և աղեկ կը հասկընային,  
 և յետագայ ժամանակ մըն ալ խրայէլացիներուն տաւը ցեղի  
 բաժնրվինուն էորը՝ Աբասար խրայէլացոց Թազաւորը՝ սիզո-  
 նացոց Երմատղ անուն Թագաւորին դասերը նեա ամուսնացաւ  
 և սիզոնացոց Բաճաղ կուրին երկրագաղութիւն մատուցանելը  
 խրայէլացոց մէջ մտուց, և անկէ էորն ալ անոր դուստրը  
 Գոմոլիա՝ Յուդայի Թագաւորութեանը մէջ նոյն կուրին սրաշ-  
 տոն մատուցանելու սկզբնաւորութիւնը խօսնեց:

Ետի ժամանակիան հրէից սրտոմութենէն կը բաղեմ որ  
 տիրացիները՝ ձուկ կամ ուրիշ փաճառքի նիւթեր ծախելու  
 համար Երուսաղէմ կը տանէին՝ որոնք հրէից նէէմիս իշխա-

նէն պատժոյ պարտնայիք կը կրէին, իրենց սպրանքին շարձ  
օրը ծախու հանելուն համար :

Տխրացիները իրենց նաւախարութեան զխտութիւնովը՝ ու  
ձեռագործներու մասին իրենց հետութիւնովը և իրենց տարա-  
ձեւ վաճառականութիւնովը երեւոյի էին :

Եզեկիէլի մարգարէութեանը Յէ զուխը եղած խօսքերէն  
հին Տիւրքոսի վաճառականութեանը վրայ խիստ ընդարձակ տե-  
ղեկութիւն ունիմք, որ իրենց վաճառականութեանը հետամուտ  
ըլլալէն, զաղձականներ հաստատելը ու այն զաղձականներուն  
բնակած երկիրներուն հետ առևտուր ընելը օգտակար գտան :

Կըսվի թէ՛ Միջերկրական ծովուն զանազան ծովեզերեայ  
կողմերը՝ քառասունէն աւելի զաղձականներ կային, այս  
զաղձականները կառավարութեան կողմանէ՛ Յունաստանի  
նման իրենց մայրենի երկրէն անկախ էին, ու իրենց գործոցը  
տնտեսութիւնը բոլորովին իրենց ձեռքն էր :

Այս զաղձականներէն խիստ հռչակեալը Կարթագինէ էր,  
Կարթագինէ գրեթէ Փիւնիկէի և Քատիգէի նեղուցին մէջ  
տեղը Ափրիկէի ծովեզերքը ցամաքակղզիի մը վրայ կառուցած  
էր, որուն շրջապատը գրեթէ քառասուն և հինք մղոն կը տարա-  
ձէր, և դիմացի երկրէն երեք մղոնի չափ երկնցած պարանո-  
ցով մը մեծ մասամբ ցամաք երկրին հետ կը միաւորէր :

Քաղաքին իր մեծութիւնը պինդ վերին ծայրը հասած ժա-  
մանակը՝ իբր քան և երեք մղոն շրջապատութիւն ունէր, և  
գրեթէ եօթը հարիւր հազար բնակիչ ժողովուրդ կը պարունա-  
կէր, և այս ժամանակը բոլոր Ափրիկէի ծովեզերքներուն վրայ  
տիրապետութիւն ունեցած էր :

Մահման մը որ՝ հազար չորս հարիւր մղոնէն աւելի երկայ-  
նութիւն ունէր, և իբր երեք հարիւր քաղաք կը պարունակէր,  
Սպանիայի և Միջիլեայի մեծ մասերուն կը աիրէր, և մինչև

Միջկլիսայի նեղուցը բոլոր Միջերկրական կղզիներուն կը հրամայէր: Այս լայնածաւալ տէրութիւնը՝ ըստ մեծի մասին վաճառականութեամբ և գաղթականներ կանգնելով վաստրկված է, ոչ թէ յաղթութիւնով:

Կառավարութիւնը ըստ մեծի մասին ուրիշ հին տէրութեանց պէս հասարակապետական էր, բայց ուրիշ հին հասարակապետութիւններէն ինչ զանազանութիւն ունենալը զխտորութեան արժանի է, որ ամեն ինքադարական կռիւ մը չէ սրատահած բոլոր վեց հարիւր տարի, որչափ ատեն որ այն տէրութիւնը մնաց:

Հին պատմագիրները՝ այս դէպքը կարծագինէցոց բաղաբական օրինադրութեան պատուականութեանը կուտան, բայց կարելի է թէ իրենց աղեկ խոնարանութենէն և ժողովրդեանը վաճառականական սովորութենէն առաջ եկած ըլլայ:

Կարծագինէցիները արհեստից և գիտութեանց մէջ զերազանց էին, բայց իրենց բոլոր մեծութեանը յիշատակները հռոմայեցիք անհետ ըրին:

Կարծագինէցոց վրայ միայն յոյն և հռոմայեցի պատմիչներէն տեղեկութիւն ունինք, որ հռոմայեցիք անտոնց թշնամիներն ու կործանիչներն էին:

Յունաստանի և Հռոմայի պատմութեանց պէս՝ կարծագինէցոց կանգնելուն և յառաջադիմութեանը վրայ՝ թէ որ մանրամասն տեղեկութիւններ ունենայինք՝ կարելի է որ հին պատմութեանցը ճիշդին մէջ խիստ օգտակար բաներ կուենայինք:

Կարծագինէցոց վաճառականութեան վրայ այս տեղեկութիւնները կառնելի, ուրիշ ազգերուն մատակարարած ապրանքներէն, որ կերելի թէ ասոնք էին, ցորեն և սովն տեսակ մրգեղէն, տեսակ տեսակ պաշարներ, ազնիւ համմմներ, մեղրամոմ, իւղ և վայրենի անասնոց մորթ, և այլն, որ բոլորն ալ իրենց երկիրներուն բնական բերքերն էին, իրենց ձեռագործ վա-

ճատքներն էին կանկարասի անօթներ, խաղալիքներ, խարսի մալուխ, կիսամետաղ թուփէ շինված կերպ մը աւել, և ամէն կերպ նառ ու մթերք, և կերպ մը ներկ' որ իրենք փիւնիկ կը կոչէին, որ կերևի թէ անոր շինելը իրենց միայն յատկացեալ էր :

Եզրպտոսէն ազնիւ վուշ, կտաւ, թողթ և այլն կը բերէին, Կարմիր ծովուն եզերքներէն ալ համեմներ, խունկ և անուշահոտ բաներ, ոսկի, մարգրիտ և գոհարներ, Պաղեստինէն՝ Ատրեստանէն, և Փիւնիկէյէն, ներկեր, այսինքն ծիրանի և կարմիր կտաւներ և պատտառակալներ և սէնեակի թանկագին զարդեր, և աշխարհիս արեւմտեան կողմէն ալ իրենց այն կողմերը տարած ապրանքներուն փոխարէն՝ երկաթ, անագ կապար, պղինձ, և այլն, կը բերէին :

Կարթագինէն անանկ համբաւաւոր էր իրեն արուեստաշէններովը՝ որ երբ յատուկ զիւտ մը կամ պատուական ձեռագործ մը տեսնըվէր, հոռմայեցիներն ալ անոր փիւնիկ կը կոչէին, այսինքն փիւնիկ անկողին, կամ հանգստարան՝ փիւնիկ պահուան, փիւնիկ գինիի հնձան, փիւնիկ շապետ, և այլն, որքան ազնիւ և պատուական բան մը ըլլար հոռմայեցոցմէ այս մականունով յարգըված էր :

Կարթագինէի պատմութիւնը, թէ և եղածն ալ անկատար համարվի, զմեզ կրթելու յարմարութիւն ունի, այն միջոցներովը՝ որ ամէն ազգ իրենց վաճառականութեան լայնատարած վիճակին հասնին, և ներկայ ատենախօսութեանս ընթացքն ալ այս միջոցները պիտի ձեւացնէ : Ուրեմն կը դիտեմք .

Նախ. Վաճառականութիւնը ծովային զօրութեան միջոցաւ կը տարածվի :

Երկրորդ. Վաճառականութիւնը ձեռագործարաններ հաստատելու միջոցաւ կը տարածվի :

**Երրորդ.** Վաճառականութիւնը գաղթականներ կանգնելով կը տարածվի :

**Չորրորդ.** Վաճառականութիւնը դրամագլուխ հաւարելով կը ծաւալի :

Իմ ատենախօսութիւնս այս չորս գլուխը պիտի պարունակէ, որ առաջինէն կսկսիմ :

**Առաջին.** Վաճառականութիւնը ծովային գորումեան միջոցաւ կը տարածվի :

Ջերմ կլիմաներուն մարբումեան հարկաւորութիւնը այնքան մեծ է որ՝ անանկ երկիրները ջուրով ըլլացվիլը գրեթէ հաւատարի պահանջմունք է, ջուրին մէջ թափուելով և ուրիշ անատեններուն լողալը տեսնելով մարդը շուտով լողալու արհեստը կը սովորի, և այն միջոցները հովին գորումենէն կտորբլված ծառերուն ոստերը ջուրին հոսանքէն տարվիլը պատահմամբ պիտի տեսնէ, և այս գաղափարը իրեն պիտի թելադրէ ծառի մը մարմնոյն կոնդը փորելով նաւակ շինելը, ուրիշ կը գտնեմք որ նաւախարումեան արհեստը՝ ջերմ երկիրներէ սկսած է :

Երբ որ նաւակ շինելու արհեստը անգամ մը գտնելի՞ ի հարկէ նոր յառաջադիմութիւններ կսկզբնաւորէ, որովհետև մարդկային ընկերութիւնը արհեստներու և գիտութեանց մէջ յառաջադէմ եղած ատեննին՝ նաւ կառուցանելով՝ առաջ զիրենք տեղէ տեղ փոխադրելու գործածելէն պիտի սկսէին, և առաջ երթալով անոնց մէջ ապրանք ալ բնոցընելու պիտի գործածէին, և այս պատճառով երկար աննապարհորդութիւններ ալ պիտի ընէին, ուրիշ նաւարկութեան արդիւնքի պէս պիտի ըլլար առևտուրի միջոց ըլլալը, և ասով կը հասկըցվի որ գետի մը սրբնմացութեամբ բիշ ծախքով և բիշ ժամանակով շատ ծանր բնուրը դէպ ի վայր տարվիլը՝ ցամաքով դրկելէն օգտաւոր

կրկայ, որով փանառականութիւնը կը տարածովի, և նաւ շինելը ու նաւարկութիւնը կը յառաջանայ :

Մովեղերեայ տեղերը բնակող մարդկային սեռին ազգատոմներուն ծովային կեանքը տխրական կրկայ, և ծովը նարտութեան և զօրութեան աղբիւրը կը սեպի :

Նաւարկութիւնը փանառականութեան վրայ մեծ ազդեցութիւն ունի. փանառականութիւնը քանազան երկիրներուն բերքերուն աւելորդին փոխանակութենէն կը բաղկանայ, բայց մէ որ երկու նահանգ իրօրու մօտ ըլլայ և միևնոյն կլիման ու միևնոյն երկրին պարարտութիւնը ունենալով միակերպ բերք կամ ապրանք հասցընեն, այն ժամանակը իրարու նեւ աւետուր ընելու քիչ առիթ կուսնան :

Իսկ երբոր այն երկիրները իրարմէ նեւու տեղեր և տարբեր կլիմա կուսնան ու տարբեր ապրանք կը հասցընեն, անակ տեղերը փանառականութեան ծաւալմանը հիմը կը դրի :

Բայց փանառականութիւնը իրարմէ նեւու երկու երկրին մէջ ջամբով չկրնար աղէկ ի գործ դրիլ, փասն զի երկար յարազութիւն և մեծ ծախք ըլլալէն իզատ՝ ջամաբէն անցընելու տեղերուն բնակիչներէն ու աւազակներէն խտրանկելու մեծապէս ենթակայ կրնայ ըլլալ, որ ծովու ճանապարհին միջոցը բոլոր այս անպատեհութիւնները չունենար : Ապրանայ տեղափոխութիւնները քիչ ծախքով կրկայ, և քիչ ժամանակ կանցնի, և չընդհատի, և նետւարար այս դիւրութիւններուն համար՝ դուրսէն եկած և դուրս գացած ապրանքները աման զինով կրնան ծախովիլ, և անոնց պահանջմունքը աւելնալու կը նպաստէ, և այս կերպով փանառականութիւնը աւելի ընդարձակ կը տարածովի :

Շատ շէպքի մէջ կզգի մը աւելի դիւրութեամբ նպաստամատոյց կրկայ փանառականութեան՝ քան մէ ջամաբը կատոյց

ված քաղաք մը, կղզի մը ցամաք երկրէ մ'աւելի իր չափին համեմատ՝ շատ ծաւալած ծովեզերեայ տեղեր կունենայ, և սովորաբար կղզիին կլիման մեղմ և հաւասար կըլլայ, այնպէս որ եղանակները վաճառականութիւնը չեն վրդովեր :

Ծովը բնական ամբուծիւն մըն է՝ և դուրսի մշնամբներուն յարձակմանէն բիչ վտանգ կունենայ, ուրեմն բիչ զինուորագրութիւն պէտք կըլլայ, և որովհետև ուրիշ ազգաց հետ ընկու վաճառականութիւնը ինարկէ ծովով ընելուն՝ բնակիչները բնականաբար ծովային սովորութիւն կատանան, նա շինելը և նաւախարութիւնը առ հասարակ կուսանին, և ժողովուրդը ծովային զգուշութեան աւելի յաջողակութիւն և քաջութիւն կունենայ :

Հին պատմութեանց մէջ Կրէտէ, Հոողոս և Կիպրոս կղզիները իերնց վաճառականութեամբը հոշակաւոր էին. նաև կղզիները զանազան երկիրներու հետ առևտուրներնին ծովով առաջ տանելու պատեհութիւն կունենան, ուրիշ ցամաքային երկիրներուն ապրանքները ցամաքէն կամ թէ զէտերու միջոցաւ երթնելութիւն կունենան, բայց կղզիներուն առևտուրը ծովեզերեայ ըլլալուն համար զանազան կողմերու հետ ապրանաց փոփոխութիւնը նաւարկութեան միջոցաւ ըլլալուն՝ բիչ ժամանակի մէջ և բիչ ծախքով կըլլայ :

Հին ժամանակուան նաւերը հիմակվաններէն տարբեր էին. Յունաստանի ծովերը ցամաքով փակված՝ և փոքր կղզիներով լեցուն ըլլալուն՝ սաստիկ պէկոծութեանց և յաճախ հանդարտութեանց ներքոյ անկեալ էր, վասն որոյ առաջաստով նաւելը առ հասարակ չէր գործածվէր, և իրենց նաւերնին դիակով կը վարէին, և ծովագնացութեան ժամանակ՝ նաւախարները ծովեզերքներէն չէին հեռանար : Պատերազմի նաւերուն՝ երկար նաւեր, և բեռան նաւերուն ալ կրօր նաւեր կը կոչէին :

Փիւնիկեցոց նաւերը վաճառականութեան համար յարմարած ըլլալուն՝ պատերազմական նաւերէն լայն, և խորունկ էին . Հոմերոսին ժամանակները կերևի թէ կանեփէ մալուխ շինելը չըզիտէին, և անոր տեղը կաշիյէ փոկ (խայիշ) կը գործածէին և նաւերը մինակ մէկ կայս մը ունէին, որ այն ալ շարժական էր :

Մէկ նաւուն մէջի եղած մարդոցը թիւը խիստ շատը հարիւր բաճն հոգիէն աւելի չէր ըլլար, ըսել է նաւարկութեանը սկզբնաւորութիւնն էր, բայց զլիսաւոր համաստեղութիւնները կը զննէին, և այն ժամանակները յոյները Կիպրոս, Փիւնիկէ և Եգիպտոս կը նաւարկէին :

Ստորաբար նաւերը իրարու վրայ շատ թիակներու կարգեր ունէին, սկիզբները գործածված զլիսաւոր նաւերը երեք կարգ թիակներու տեղ ունենալով՝ երեք կարգեան ըսված նաւերն էին, բայց փիւնիկեցիները կամ թէ կարծագինէցիները՝ յետոյ չորս կարգ՝ նաև հինգ կարգ թիակներու տեղ ունեցող նաւեր կառուցին. տեսի կամ շգեղութեան համար շինված նաւերուն թիակացը կարգերն առաւել բազմաթիւ էին բան զայլս :

Պատերազմի նաւերը ստորաբար զլուխնին փայտէ շինված և վրանին պղնձով զոցված՝ թռչունի կտուց ունէին, նաւերուն զլիսովը թշնամիներուն նաւերը նեղելու համար :

Հին նաւերն երկու կողմը երկու ղեկ ունէին, ետքերը նաւուն երկու ծայրը մէյ մէկ ղեկ, բայց վերջերը նաւուն յետին կողմը մէկ ղեկ և զլիսուն կողմն ալ արձանի նման զլուխով մը կը զարդարէին :

Պատերազմի նաւերը ապրանք կրելու չէին գործածվեր, ասոնց զլիսաւոր նպատակը՝ արագ թիակարութիւնն էր. նաւուն մէջի մարդիկը ամենևին չէին կրնար բնանալ : Հագիւ թէ կրնային բան մը ուտել իրենց նաւային արշաւանաց

ժամանակները և միշտ ցամաքին մօտը կը պտըտէին ու ցամաքը ելնելով կերակուրնին կուտէին, և երբոր մարտնչելու կը սրտորաստովէին՝ առաջ նաւուն առագաստը վար կառնէին և բոլորովին իրենց թիակներուն վատահ կըլլային, որ սարագաներուն համեմատ կրնային առաջ երթալ կամ քաշվիլ :

Պատերազմի նաւերն երկայն և նեղ ու մարդով լեցուն ըլլալուն համար՝ սաստիկ հովի դէմ չէին կրնար դնել, բայց բեռան նաւերն՝ հովային ժամանակը կը գործածովէին, ու բիջ մարդով ճանապարհ կրնային ընել, երկար ճամբու յարմար ըլլալուն համար :

Տիւրուսի նաւերուն համար Աստուածաշունչին մէջ Եզեկիէլ մարգարէին նկարագրութիւնն այսպէս է, մարգարէութեան Իէլ զլխուն մէջ :

« Մայրք ի Սանայիր լեռնէ շինեցան բեզ պահանգք, և  
 « տախտակք նոնիք ի Լիբանանէ առան, առնել բեզ կայմս  
 « եղևնափայտեայս. ի Բասանէ արարին զղեկս նաւուց բոց,  
 « և զմեհեանս բո՛ շինեցին ի սիդոսկրէից, ապարանս ան-  
 « տառախիտս ի կղզեաց բեռտիմացոց, բեհեզ ընդ դիպակի  
 « գործեցաւ բեզ ի պաստառս յԵզիպոտսէ, արկանելիք բեզ  
 « ի փառս, և հանդերձ ծիրանի և կապուտակ ի կղզւոյն  
 « յելիմացոց եղեն՝ ի զարդ պահուճանաց բոց, և ի շխանք բո  
 « բնակիչք սիդոնացոց, և եղեն արաղացիք նաւախարք  
 « բո, և խնաստունք բո՛ Տիւրուս, որ եղեն ի բեզ՝ նորա  
 « եղեն բեզ նաւապետք : »

Յոյներուն նաւարկութիւնը բոլորովին իրենց ծովուն մէջ ամբողջոված էր, շատ դարերով Սիկիլիոյ կղզին անգամ առապելեալ հրէշներու երկիր մը համարված էր, ու ամենեին տեղեկութիւն մը չունէին անկէ, բայց փիւնիկեցիները՝ Միջերկրական ծովուն ամէն կողմը իրենց ճանապարհորդութիւնը տա-

բածեցին, ճիպիլթէրայի նեղուցը անցան, և Պրիմանիայի ծովեզերքն ալ գնացին :

Այս ճանապարհորդութիւններուն մեծ նաւեր հարկ էր, նաւախարութեան զլխաւոր զխոտութիւն ալ պէտք էր, սակայն կերելի որ' ուր որ կրնային՝ միշտ ցամաքին մօտերը կը ստըտէին: Յայտնի է որ Միջերկրական ծովը մակննացութիւն և տեղատուութիւն չունի, բայց Գերմանական ծովուն մէջ հոսանք մը կրնամանայ, և երբ Ովկիանտաի մէջ կանցնելի՛ տարբեր կերպ նաւարկութիւն մը հարկ կըլլայ :

Առևտուրի երկար ճանապարհորդութեան ծախքը վճարելու համար՝ հարուստ ըլլալու է, որովհետև արդիւնքը փոխազրը վելէն առաջ՝ մեծ զուճար դրամագլուխ սրարապ ձգելու և երկար ժամանակի կարօտ կըլլայ :

Կերևի որ փիւնիկեցիները Պրիմանիայի անկիրթ ազգերուն հետ առևտուր ըրած ժամանակին՝ փոխարինած ապրանքներնին՝ իրենց համար համեմատաբար քիչ արժէքի բաներ ըլլալու էին, բայց անոնց համար պիտանի և մեծ արժէք ունենալու էր :

Ասոնք Անգղիա՝ ալ, հողելէն անոթներ, պղինձէ ջնջին զարդեր կը բերէին և փոխարէն՝ անագ, մորթ և բուրդ կառնէին: Այս առևտուրը այնքան յարգի էր, որ կարծագինէցիները՝ իրենց սեպհականաժ էին: Հռովմայեցի նաւ մը՝ կարծագինէցի նաւիմը ետևէ կերծար, անոր զացած տեղը լրտեսելու համար, կարծագինէցի նաւապետը կամաւ իր նաւը ծովեզերքը ցամաքը կը զարնէր և կընկղմէր, հռովմայեցի նաւը անոր ետևէն երծալով այն ալ այնպէս կըլլար. կարծագինէցի նաւապետը իր բռնը կը նետէր ու իր նաւը կը հեռացնէր. կարծագինէի ձերակոյտը նաւապետին այս ընծացքը զովկով՝ անոր ինասը կը հատուցանէր: Կարծագինէցիները

չէ՛ թէ միայն իրենց այցելութիւն ըրած տեղերուն հետ ուղղակի առևտուր կրնէին, այլ և գացած եկած տեղերնուն հետ ալ մէկ տեղէն ապրանք ծախու առնելով և միւս տեղերը ծախելով առևտուր կրնէին :

Այս է հիմա սովորաբար առևտուր յառաջ տանիլ ըսվածը, վասն զի երկիրներ կան, որ մեծ առևտուրներ ձևացընելու բաւական ապրանքներ կրնան ունենալ, բայց սակայն բաւական դրամագլուխ չեն կրնար ունենալ, ապրանքնին ուրիշ երկիր տանելու, ինչպէս որ Ամերիկայի հողիկները՝ առատօրէն մուշտակ կրնան պատրաստել, բայց նա չունին : Թէ որ երկու ազգ ասանկ վիճակի մէջ եղած ըլլան՝ երկուքին ալ մեծ օգուտ կըլլայ, թէ որ երրորդ ազգ մըն ալ անոնց սեպնական եղած աւելորդ ապրանքնին ուրիշ պէտք ունեցող տեղերը տանելու յանձնառու ըլլայ :

Տանիմարգացիները ժամանակ մը Եւրոպոյց հետ ասանկ առևտուր կրնէին, և հիմա ալ Ամերիկացիները Չինաստանէն թէյ (չայ) բերելով Ֆրանսոս կը ծախեն : Անգղիոյ մէջ դուրսի երկիրներէն եկած ապրանքները՝ ժամանակ մը մարսի շտեմարանները պանելը սովորութիւն եղած է, որ (պօնէ) կըսի, և թէ որ այն ապրանքները կրկին դուրս դրկլովիլ հարկ ըլլայ, անոնցմէ՛ մարս չառնըվելէն առևտուրի շատ դիւրութիւն կուտայ :

Կարծագիմէցոց առևտուրի վիճակը ասանկ էր, Անգլիայէն անագ գնելով Եգիպտոս կը տանէին, և այն տեղ կտաւի հետ կը փոխանակէին, Եգիպտոսէն ցորեն առնելով, Սպանիա կը տանէին, Սպանիայէն ալ ոսկի առնելով Եգիպտոս կը տանէին, որոնք վարձքով ապրանք չէին տեղափոխեր, այլ բոլոր այս շահերուն ձեռք բերովիլ իրենց ծովային զօրութեանը միջոցաւն էր :

Երկրորդ. Կը դիտուեմ որ՝ վաճառականութիւնը՝ ձեռագործներ և գործարաններ հիմնելով կը տարածվի :

Մէկ ապրանք մը երբոր մարդու ձեռքէ անցնելով փոփոխութեան տակ մտած ըլլայ, անոր ձեռագործ կըլլի, և նիւթին ալ անպատրաստ նիւթ կըլլի. զոր օրինակ, չուխան ձեռագործ մըն է, և բուրդն ալ անպատրաստ նիւթն է, և այլն :

Նաևս բանի մը ձեռագործներ կան, որ յառաջմանէ շինված են, ինչպէս են ձեռնոցը, մուճակը, գամը, որոնց նիւթերը մորթ և երկամ է : Ձեռագործ բառը ձեռքով շինված կը նշանակէ, և այս անանկ բառ մըն է, որ հիմա ճիշդ չըյարմարիր, վասն զի Անգղիոյ ձեռագործներուն մեծ մասը մեքենաներով կը շինվին, ու գործարանի տէր մարդ մը՝ շատ ապրանք շինող և շատ բան ըշող ըսել է, մասնաւորը միայն քիչ ապրանք կը շինէ և անմիջապէս սպառողներուն կը ծախէ :

Ամէն երկիր իր բնակիչներուն գործածութեանը համար՝ կերպ մը ձեռագործ կունենայ, բայց ձեռագործաց երկիր ըսելով՝ հասարակօրէն այն երկիրը խմացնել կուզեմք որ՝ ապրանք կը շինէ, չէթէ միայն իր մէջը գործածելու համար, այլ և ուրիշ երկիրներուն ալ ծախելու համար : Երբ որ ազգ մը իր հասոյթը կրնայ առատացնել, տարակոյս չըլլայ որ իր աւելորդը երկրէն դուրս դրկելն ալ կը շատցընէ և այս միջոցով գուրսէն եկած ապրանքներն ալ կուելցընէ. վասն զի ուրիշ ազգերուն բերբերը առաւել մասամբ գնելու կարող կըլլայ :

Ձեռագործ շինող ազգերը՝ ճիշդ վաճառականական ազգ և հետևապէս հարուստ եղած են, ազգերուն գործարանի հարստութիւնով բարձրանալուն առիթը՝ իրենց անպատրաստ ապրանքաց նիւթերուն աւելի զին տալերնուն համար կըլլայ. վասն զի մի և նոյն նիւթին գիններուն վրայ մեծ և անչափ տարտարբերութիւն կայ, երբ անգործ կամ գործըված ըլլայ.

օրինակի աղագաւ, կըստի թէ մէկ լիտր բամպակը երբոր խիստ բարակ մանված ըլլայ, հինգ լիտայի արժէք կրնայ ունենալ, և երբոր հիւսվի և բարակ ազնիւ կտաւ շինվի և ծաղկամբ շքեղանալու ըլլայ, մինչև տասնըհինգ լիտայի արժէք կրնայ ունենալ, որ ըսել է, իբր հարիւրին հինգ հազար ինը հարիւր չը գործըված նիւթին վրայ առաւելութիւն կտանայ :

Բէկ լիտր բարակ ազնիւ ֆիլէմէնկի մանածը՝ Լօնտրայի մէջ չորս լիտայի ծախված է, ասանկ մէկ լիտր մանածը, թէ որ ժապաւէն շինված ըլլայ, քառասուն լիտայի կրնայ ծախվիլ, որ ըսել է ոսկիի հետ կշռելով՝ ոսկիէն տասնապատիկ աւելի արժէք ունեցած կըլլայ :

Պողպատը (չէլիկ) ոսկիյէն երեք հարիւր անգամ աւելի արժէքով կրնայ շինվիլ, ոսկիյի հետ կշռելով, ժամացոյցի առաձըգական ձօճանակի (գեմպերեկ) համար շինված մետաղեայ մէկ թէլը՝ որ մէկ ցորեն կը կշռէ՝ ամէն մէկ հատը շինող արհեստաւորին եօթը շիլին և վեց փեկնա վաստակ կը բերէ, գրեթէ երկու լիտայ և հինգ շիլինի հաւասար, երբ մէկ ցորեն ոսկին միայն երկու փեկնա կարժէ : Ազնիւ գործըված ապակիէ՝ կամ ազնիւ յախճապակիյէ շինված սեղանի սպաս մը՝ անոնց շինված անգործ նիւթէն՝ քանի մը հարիւր անգամ աւելի արժէք կունենայ :

Մտքը Պապէն կըսէ թէ ժամացոյցի մը հաւասարակշռութեան շարժումը կառավարող առաձգական ձօճանակին մանրաւահառ զինը՝ հատը երկու փեկնա է և մէկ ցորենին 15/1000ը կը կշռէ, որ մէկ լիտր լաւ երկաթին զին ըսել է, ասով մէկ ձօճանակն ալ երկու փեկնա արժէք ունեցած միկ լիտր անգործ երկաթէն անանկ՝ 50,000 ձօճանակ կը շինվի : Այսպէս մէկ լիտայի արժէք ունեցած չափ մը կապարը՝ երբ որ ցուլկելով մանր տպագրութեան գիր շինվի, քսան և ութը լիտայի

կրնայ ծախսիլ, և մէկ շիրայի արժէքով չափ մը զտեալ երկամը երբոր ասեղ շինիլ, եօթանասուն շիրայի կրնայ ծախսիլ, և եթէ խիստ ազնիւ ու պատուական տեսակ մկրատ շինվելու ըլլայ, չորս հարիւր բառասուն և վեց շիրայ կրնայ ծախսիլ, կամ թէ հրացանի եղէզ շինիլ՝ հինգ հարիւր երեսուն և ութը շիրայ կը բռնէ, և թէ որ զմելիի բերան շինիլ՝ վեց հարիւր յիսուն և եօթը շիրայ, կամ սուրի բերան շինվելու ըլլայ՝ ինը հարիւր եօթանասուն և երկու շիրայի արժէք կունենայ :

Նաև կըսէ թէ՛ չորս մարդ և չորս կին ու երկու տղայ ութը ժամէն պակաս ժամանակի մէջ՝ կարող են յիսուն և հինգ հազարէն աւելի ասեղ շինել :

Հիմա դուն կարծելու չես որ վերոյիշեալ ձեռագործները շինողը՝ ուրիշ ձեռագործներ շինողներէն աւելի վաստակ կրնայ բնել, անոնց սուղ զինով երնելուն պատճառը, շատ աշխատանք բաշված ըլլալէն առաջ կուգայ, և այս է պատճառը որ ձեռագործի զբաղած ազգերը կը հարստանան, վասն զի բոլոր ժողովրդեան աշխատելու գործ կուտան. մարդ, կին, և տղայք, ամէն որ և բոլոր երկայն օրերը ու զիշերուան մէկ մասն անգամ անընդհատ կաշխատին, և թէ օդոյն, թէ եղանակներուն փոփոխութիւնը արգելը չըլլալով՝ ամէնն ալ բան կունենան :

Ազգային հարստութեան ներգործութիւնը ասկէ կիմացվի որ՝ երբ մէկը կարուածք մը ունենայ, ու անանկ բարեբէք ըլլայ որ ամէն մէկ չափ սերմին վեց հարիւր չափ բերք առնէ, անշուշտ շուտով կը հարստանայ, բայց թէ որ չափ մը ցորենի արժամ զինովը՝ այնքան անգործ ապրանքի նիւթ ծախու առնելով և աշխատանքը անոր վրայ տալով վեց հարիւր չափի զինով կրնայ ծախել, որ մի և նոյն բանն է, իբր թէ՛ կարուածք մը ունեցած ըլլար և միոյն վեց հարիւրապատիկ բերք առնէր :

Նաևս՝ ձեռագործներուն շատ տեսակ չափով մերկաններ

կրնաս մտցընել, որովհետև բոլոր անգործ սպրանաց նիւթերուն վրայ յաւելված և վերադիր եղած արժէքը աշխատանքէն կը յառաջանայ, մարդիկ իրենց միտքերնին կը տանջեն աշխատանքը շարունակելու մանր բաժիններովը և նոր մերենաներ հնարելով՝ անոր զօրութիւնը երկեցնելու, որով գետերը, հովերն ու օդը և շոգին՝ մարդուն գործը ընելու կատարվին:

Երբեմն երկրագործութեան օգնութիւն ըլլալու համար ալ անանկ մերենաներ ևս հնարվեցան, բայց այն սատիճան գործադրութեան չեն ծառայեր, երկրագործութեան աշխատանքը՝ այս տկարութիւնը ունի, որ ինչ կերպ մերենայ որ գործածելու ըլլանք բոլոր ընելիքնիս այն կրնայ ըլլալ, որ բերքերը կեկեցընեմք և աշխատանաց գործողութեան ծախքը՝ մասամբ իմն կը սրակսեցնեմք, բայց չեմք կրնար ընծացքը կենդանացնել, և բոլորովին ընդարձակել:

Մերենայով բամբակ, և մետաքս կրնանք գործել, կամ թէ առաջուց պէտք եղածին կէսին չափ ժամանակին մէջ՝ չուխտ մը ածելի կրնանք շինել, բայց արտի մը բերքը, այսինքն ցորենը, գարին կամ գետնսխնծորը (բարաբախ) սովորական ժամանակիան կէսին մէջ՝ չեմք կրնար հասցընել, սերմին և հունձրին ժամանակը հարկաւ յառաջ սլլալի երթայ, որ և իցէ մեծ ու ընդարձակ մերենայ մը գործի դնելու ըլլանք ամենեկին բնութեան գործողութիւնը չի կրնար աւելցընել:

Երբ որ մէկ երկիր մը գործարան մը կառուցվի, նոյն երկիրը՝ հարկաւորապէս սովորական է, որ կամ առատօրէն անգործ նիւթ, կամ ձեռագործելու դիրութիւն ունենալու է, այսինքն երկամի գործարան մը երկամի հանք չեղած տեղը հազիւ թէ կրնայ հաստատովիլ, այս ալ բաւական չըլլար, թէ որ նոյն երկիրը բաւական փայտ կամ ածուխ չըլլայ, վասն զի հանքային նիւթերը առանց կրակի չեն հալիր:

Անգղիոյ Քօրնալայ նահանգին բոլոր պղնձի հանքի նիւթերը հալեցնելու համար Սվանսի կը տարալին, վասն զի Քօրնալայ ածուխ չըլլար, նմանապէս հարաւային Ամէրիկայէն պղնձի հանքերուն նիւթերը հալեցնելու ու ձուլելու համար՝ նաւերով Լիվերքիօլ կը բերալի, վասն զի Ամէրիկայի այն կողմեղը ածուխ չըլլար :

Բայց անգործ նիւթ չընասցնող երկիրները, ուր որ ձեռագործելու մեծ զիւրումիւն կայ, գործարաններ կրնան հաստատուիլ : Անգղիան բամբակ չըրուցներ, բայց սակայն խիստ շատ բամբակի գործարաններ ունի, որոնց բոլոր շարժական գորումիւնը շոզին է, շոզին ալ կրակով կըլլայ, և կրակն ալ ածուխով, ուրեմն Անգղիայի բամբակի գործարաններ ունենալուն պատճառը՝ շատ ածուխի հանքեր ունենալն է :

Երբ որ երկիր մը իր բնական յարմարումիւնովը կամ իր ժողովրդեանը հանճարովը ձեռագործելու արհեստ ստացած ըլլայ, ուրիշ ազգերէն լաւ և զիւրազին ապրանքներ հտացընէ, ուրիշ ազգերը իհարկէ շատ առիթներու մէջ իրենց աշխատանքը և դրամագլուխը գործածելը՝ աւելի շահաւոր գտնելով՝ այն հետամտումիւնները իրենց օգուտ բերելէն՝ ձեռագործ ապրանքները իրենք գործելուն տեղը ծախու առնելը առաւել հեշտ և սակաւագին կըլլայ ուրիշ գործարանները վաճառուկանումիւնը կը յառաջացնեն :

Տիւրսի և Կարթագինէի գերագանց եղած ձեռագործերն ասոնք էին : Ոստայնանկել, ներկել, յաղճապակի գործել, փորագրել և մետաղներ գործել : Խիստ հին արհեստներէն մէկը ոստայնանկելն է և Թէպէտ իսկզբանէ մարդկային սեռը անասուններուն մօրթերով կզգեստաւորէին, բայց շատ չանցաւ, բուրդը մանելու և կտաւ շինելու արհեստը սովբեցան, այն գործողումիւնը՝ բոլոր հին ազգերուն մէջ՝ կանայք կը գործէին :

Ոստայնանկումքներ խիստ ազնուական տիկիններուն զբաղմունքը եղած ըլլալը՝ Թէ աշխարհական և Թէ սրբազան սրամեծեանց մէջ կը սրամըլի :

Առակաց վերջի գլուխը, ուր որ բարի ամուսնոց զերագանցութեան նկարագրութիւնը կայ, ասանկ կըսէ, « Տիկինն այն « առնու բուրդ և բման, և զործէ յօժարութեամբ խակ ձև- « ոսանք խրով, և նա, ոչ Թէ միայն առտնին մատակա- « բարութեան չափոյ, այլ յանձնէ գօտիս ստ վաճառարանս : »

Միջին գարեբուն ժամանակն ալ ասանկ սովորութիւն եղած էր, հիմնական օրս ալ՝ չամուսնացած տիկնոջ մը օրինաւոր մականունը մանող օրիորդ կը կոչեն : Թէպէտե և զխաղաղիները բմանէ՝ ձեռագործի և փիւնիկեցիներն ալ բուրդէ ձեռագործներու համար հո չակաւոր էին, բայց ասոնց համար գործարաններ ունենալին հաւանական չէ :

Իսլանտայի հիւսիսային կողմերը շատ տարիներէ ի վեր բման գործելով հո չակաւոր եղած ըլլալին աղեկ զխտեմբ, բայց բիշ ժամանակ է որ Պելվասը բաղարին մէջ բմանի գործարաններ հաստատեցին, բամբակեղէն ձեռագործներուն սովորութիւն եղածին նման բմանէ՝ ձեռագործներուն ալ մերենայ յարմարելու ձեռնարկութիւն եղաւ : Առաջները կանայք ընդհանրապէս բմանը տուներնին կը մանէին, և մարդիկ ալ կը գործէին և յետոյ շուկան կը տանէին՝ և սպիտակացնողներուն (խաւարնի) փոքր չափով կը ծախէին, որոնք վաճառվելու կը սրատրատտէին. հին ժամանակները բմանէ և բուրդէ ձեռագործներուն այս կերպով յատաչ տարլիլը հաւանական է :

Իսրայէլացիները Եզրիպտոսէն դուրս ելնելէն ետքը Մովսէս մարգարէն որ իր կառուցած տաճարին համար վարագոյթ խնդրեց, ձեռագործողներուն չըհրամայեց, այլ զխտուն տիկինները յօժարութեամբ իրենց ձեռօքը մանեցին, և մանածնին

բերին որ էին կապուտ ծիրանի և կարմիր ազնիւ բնան:

Հին առնինն հասարակ ժողովուրդը խրաբանչիւրն իր հագուստը կը գործէր, երկայն պատմութեանը և վերարկուն առանց ինչ և իցէ ներկի, բուրդին իր բնական գոյնովն էր, բայց աւելի հարուստները իրենց հագուստինն զանազան գոյներով կը ներկէին և խիստ համարում ունեցած գոյնը ծիրանին էր: Հոմայեցոց միապետները միշտ ծիրանի հագուստ կը հագնէին, և ծիրանի պատմութեանը թագաւորի նշան եղած էր:

Հոմայեցիք իրենց բաղաբացիները բուէարկութեանն հրաւիրած ժամանակնին ճերմակ հագուստ կը հագնէին. ֆալսիտու բառը՝ լատիներէն ճերմակ ըսել է, ուրկէ բուէարկութեամբ ընտրվիլ ուզողին ֆալսիտեք անունն ելած է, որ գրականօրէն ճերմակ հագուստի մարդ ըսել է:

Տիրացիները իրենց ներկերուն գեղեցկութեամբը հին ժամանակէ ի վեր հռչակաւոր եղած էին, և այս երևելի յատկութիւնը երկար ժամանակ ունեցան. որովհետև ներկելու գաղտնիքը ուրիշ շատ առևտուրներէն աւելի դիւրաւ կը պահվէր. ներկերը սովորաբար միջին գոյացութիւն մը կը պահանջեն, որ Մորտանք կըստի, և ստուգաբանութիւնն է խածանող. այս գոյացութիւնը կտաւր խածներով՝ ներկն ալ կը խածնէ, անանկ որ երկուքն ալ մէկ տեղ կը բռնէ:

Թէ որ կտոր մը կտաւ ներկել ուզես՝ առանց խածանողը գործածելու ինչ գոյն որ ըլլայ՝ առաջին լրվացվելուն գոյնը կերթայ, որ և իցէ գոյն մը ներկելու մեծ գաղտնիքը՝ մասնաւոր գործածելի խածանողը գտնելն է:

Գրեթէ մի և նոյն ներկերէն զանազան խածանողները՝ զանազան գոյն յառաջ կը բերեն, թէ որ կտոր մը կտաւր ըլծեալ պաղլեղի (շապ) մէջ ընկրմես՝ որ խիստ հասարակ խածանող մըն է և յետոյ որդան կարմիրով (խրուրդ) ներկես՝ գե-

ղեցիկ ծիրանի գոյն յառաջ կը բերէ, բայց թէ որ երկամի թը-  
թուածինի մէջ ընկղմես, և յետոյ որդան կարմիրով ներկես՝  
կատարեալ սև կըլլայ, երբեմն մէկ գոյնը՝ թէ խածանողէն և  
նէ ներկէն տարբեր յառաջաբերութիւն կունենայ, այսպէս թէ  
որ կտոր մը կտաւը կապոյտ խածանողով եփելու ըլլաս՝ և յե-  
տոյ դեղին ներկին մէջ ընկղմես, յառաջացած գոյնը ո՛չ կապոյտ  
և ո՛չ դեղին կըլլայ, այլ կատարեալ կանանչ կըլլայ:

Փիւնիկեցիներուն իրենց ներկերը բանելու գոյացական նիւ-  
թերը ինչ ըլլալը հիմա զիտցող չըկայ, կը կարծելի թէ իրենց  
խխտ գեղեցիկ մանուշակ գոյնը՝ այն ժամանակները Միջերկ-  
րական ծովուն մէջ զըտնըլած տեսակ մը ձուկի իւղէ կը շինէին:

Հին ազգերը ներկարարութեան արհեստը մեծապէս կը  
պատուէին. Յակոբ նահապետը իր սիրական Յովսէփ տղուն  
գոյնզգոյն բանլած վերարկու մը տուաւ, խորաէլացոց անա-  
պատին մէջ շինած Տաճարը՝ կատուտ, մանուշակ և ծիրա-  
նագոյն՝ ազնիւ քեանէ շինլած վարագոյր ունէր:

Սիւսերային մայրը՝ իր տղուն վերադառնալուն անհամբեր  
կապտէր, որ կողուպտած գոյնզգոյն հագուստներով զգեստաւո-  
րեալ տեսնայ զայն, որոց պարանոցին երկու կողմն ալ ասդնե-  
զործեալ վայելուչ էր: Սողոմոնի տաճարին ծածկոյթը՝ կապոյտ  
մանուշակ և ծիրանեզոյն ազնիւ քեան կտաւէ շինլած էր: Թա-  
գաւորները ծիրանագոյն պատմուճան կը հագնէին: Մուրթը՝  
Թագաւորին առջևէն արքունի զգեստով, կապոյտ և ներսակ  
պատմուճանով և մեծ ոսկիէ զլիտու զարդով և ազնիւ ծիրանե-  
զոյն կտաւէ հագուստով դուրս ելաւ:

Եզեկիէլ մարգարէն խօսքը Տիւրոսի վրայ ուղղած ատենը  
ըսաւ. Կապոյտ և ծիրանի էին քու ծածկոյթներդ: Եւ նոր կտա-  
կարանին մէջ՝ հարուտը նկարագրելով կըսէ. ազնիւ քեանէ  
ծիրանեզոյն զգեստով՝ շուայլաբար բոլոր օրերը կը վատնէր:

Կարծագիւնեցոց Անգղիա տարած ապրանքներուն մէկն ալ հողէ շինված անօթներ և յախճատակի ըլլալը կը յիշատակվի, կերևի որ այս արհեստը աշխարհի պատմութեանը մէջ շատ հին ժամանակվրնէ ի վեր ծանօթացեալ էր :

Հրէից պատմութեանը մէջ բրուտներուն անօթները կը յիշվին, և հրէից բանաստեղծները իբր ճշդիւ շատ անգամ կը նըշանակեն այսինքն « որպէս անօթ բրտի փշրեացէս զնոսա : »

Երեմիս մարգարէն ալ այս ձեռագործին ընծացքը կը նկարագրէ և կերևի թէ հողէ սափոր շինողները քիչ յարգ ունէին :

Հիմակվան ժամանակը հողէ շինված յաղճապակի ձեռագործը ինչ աստիճան գեղեցիկ կատարելութիւնով յառաջացած ըլլալուն լաւ տեղեակ եմք, կըսվի թէ փիւնիկեցիները այս արհեստին մէջ առաւելապէս գերազանց եղած էին :

Մարդկային սեռը անմիջապէս անասնոց մօրթը գործածել զխոնազէն յետոյ, մաշկեղործութեան արհեստին զխտութեանը միջամուխ եղած է, հին ժամանակները կանտիլ: սարսան զրտնրվիւէն առաջ չուանի տեղ կաշիյէ փոկ (խայիշ) գործածվիլը կը կարդամք, և կաշին գինիյի տիկ շինելու ալ կը գործածէին, վասն զի կը կարդամք որ նոր գինին հին տիկի մէջ չեն դներ, քանզի տիկը կը ճամի, բայց նոր գինին նոր տիկի մէջ զնելով երկուքն ալ կը պահվին :

Մեր նախահարը անասնոց միս ուտելու Թոյլտուութիւն ըստանալուն առաջ անասնոց մօրթն հագնէին, որ գօնելու նուիրված անասնոց մօրթերն ըլլալուն վրայ վատահ կրնամք ըլլար :

Կարծագիւնեցիները կերևի թէ մետաղներ գործելու կատարելալ զխտութիւն ունէին, որոնք Սպանիայի հանքերը բառասուն հազար մարդ կը բանեցնէին, ուսկից ոսկի, արծամ, պղինձ և անագ ձեռք կը բերէին, վերջերը անագը Անգղիոյ Գօրբնվալ նահանգին հանքերէն խիստ առատօրէն առնելու սովոր

բումին ունեցան, ուստի Անգղիա կարգաւորեալ ճանապարհորդութիւն կրնէին, և անկից անազ, մորթ և բուրդ կառնէին, և փոխարէն ալ հողեզործված անօթներ և պղինձէ կարասիներ կուտային. տար օրինակ պատահար մըն է որ Քօրնվալ նահանգը Թէպէտ և անազի չափ պղինձ ալ կը պարտնակէ, բայց կերևի Թէ կարծագրինէցոց ժամանակը այս հանքը հոն դեռ անձանօթ էր :

Անգղիացիք իրենց գործածած պղինձէ անօթներուն բոլորն ալ դուրսի երկիրներէն կառնէին, հաւանական է որ ժողովուրդը պղինձ գտելու կերպին անտեղեակ էր, յատկապէս Քօրընվալ նահանգը ոչ ածուխ և ոչ փայտ կը հասցնէ: Պղինձի հանքին նիւթը ժողովելուն կերպը անագրինէն խիստ դժուար է:

Եզեկիէլ մարգարէն կըսէ Թէ տիրացիները արծաթը երկաթը, անագը, և կապարը Թարսիսէն կստանային. նաև Գանէն և Յաւանէն ալ երկաթ կստանային. այս արհեստներուն մէկ բանիին մէջ փիւնիկեցիները երևելի էին :

Սողոմոնին տիրացոց Քիրաւ Թագաւորին զրկած նամակին մէջ մի ըստ միոջէ ասանկ ի Թիւ արկված է, այսինքն. « Դրկէ « ինծի մարդ մը որ հնարագէտ ըլլայ, ոսկի և արծաթ, պղինձ « և երկաթ գործելու, ծիրանի, կարմիր և կապոյտ գոյներուն « ալ տեղեակ ըլլայ, և յաջողակութեամբ բանդակելու ալ կարող « ըլլայ, իմ մօտս եղած Յուդայի երկրին և Երուսաղէմի « արուեստագէտներէն աւելի հմուտ ըլլայ, որոնց իմ հայրս « Գաւթ խնամտարած է, ինծի Լիփանան լեռնէն ալ մայրի « և եղևնափայտի և ալկումի ծառեր յուղարկէ, վասն զի զի « տեմ որ իմ ծառաներս ճարտար են Լիփանանէն տախտակ « կըտրելու: »

Երրորդ. Վաճառականութիւնը զաղծականներ հաստատելով կը տարածվի :

Գաղթականութիւնը խոհական կերպով մը կարգադրելով մեծապէս կը յառաջանայ, ինչ և իցէ վաճառականութեան ապրանքները հեռու երկրէ մը բերելը սովորական եղած որ ըլլայ, հաւատարմութիւնն ալ այն առիտովը դադրելու շատ առիթներ կըրնայ ունենայ, բողոքական վեհեր կրնան ծագիլ այն երկրին կառավարութեանը հետ կամ թէ ուրիշ կերպ պատճառներով ուրիշ ազգերուն հետ առևտուր ընելը առաւել ազել կրնայ սեպիլի, կամ թէ ուրիշ ազգերը հետաճողութիւնով բեզի չըլլանորհմամբ մարտի առանձնաշնորհութիւն կամ ուրիշ արտօնութիւն մը կրնան ձեռք բերել, և ասոր համար այն բերքերը առաջվան գինով ստացվիլը անհնար կըլլի:

Ինչպէս կողմէն ալ թէ որ բու երկրից բերքերը այն երկրին երթալը սովորական եղած ըլլայ, ուրիշներէն արգելք մը կրնայ տրվիլ, բուկին այն վաճառատեղին դրկելու ապրանքներուդ նմանը նոյն տեղը դրկելիլով, որն որ մասնաւոր արտօնութեամբ պաշտպանութիւն մը կրնայ ունեցած ըլլալ, բայց թէ որ այն հեռու երկիրը հայրենեաց գաղթականը եղած ըլլայ, ասոնց մէկն ալ ներգործութիւն չըկրնար ընել, անոր բերքերը բնէ զատ ուրիշ գուրսեցիներէն առնելու արտօնութիւն տրված չըլլար, և ոչ բու բերքերը կամ թէ բու արուստաչէն ապրանքներդ այն տեղը ծախելէն կը զրկվիս: Նաև գաղթականներ ունենալը շահաւոր կըլլայ, թէ որ բուն հայրենիքէն երած ապրանքներուն նիւթը գաղթականը երկիրը պողոքերելու ըլլայ. վասն զի ժողովուրդը որքան որ բազմանայ մշակվելու երկրին շատնայէն՝ անգործ նիւթերուն գիները կաւելնայ, և արածելու երկիրը կը բիշնայ, ուրիշ անասնոց գիներուն բարձրանալ կը պատճառի, և հետևաբար մորթերուն, կաշիներուն եղջիւրին, ու նարպին և այլ նիւթերուն գիներն ալ կաւելնան:

Նաև հատարակութիւնը իրեն կերակուր ճարելու համար՝

աւելի չափով մշակելու երկիր կառնէ, և անբեր երկիրները մշակելու կը սփարտաւորի, և մշակութեան ծախքին աւելնալէն պաշարներուն զիններուն ալ աւելնալ կը պատճառի. ուստի խիստ բազմամարդ երկիր մը որուն բնակիչները երկրին բերքերովը կերակրին, ի նարկէ այն տեղ պաշարները բարձր զին կունենան, խիստ բազմամարդ եղած երկիր մը ուր որ բարեբեր երկիրներուն շատը մշակված և ժողովուրդը ձեռագործելու զբաղած է, շատ պտղաբեր երկիր կունենայ, և համեմատաբար կերակրեղենները բիշ ծախքով և վար զինով հասցընող և անգործ բերքերուն նիւթերը զիւրաւ յառաջ բերող երկիր մը զանելը մեծ օգուտ կունենայ :

Բուն հայրենեաց գործարաններուն և այն նոր ծանօթ եղած երկիրը գաղթականներ հաստատովելու որքըլայ, այն գաղթականաց երկրին ժողովուրդը մշակելու համար միշտ պտղաբեր տեղերը բնորելու են, և իրենց անտունները արածելու համար ծախք չըպիտի ունենան, և ճին երկիրները հարկաւորաբար հաստատված հարկերը վճարելէն ազատ պիտի ըլլան :

Այս օգուտներով հաւաստի է որ գաղթականը ցորեն և ուրիշ անգործ նիւթեր պիտի հասցընէ, որոնց նաւու ծախքը չլընարվելէն յետոյ հայրենեաց պտղաբերածէն շատ նուազ զինով կրնայ ծախիլ, ուրեմն հայրենի երկրէն շատ շահաւէտ կըլլայ գաղթականներէն չբրանով և անգործ նիւթեր առնելը, և անոնք ձեռագործ ապրանքներով փոխարինելը :

Յոյները գաղթականներ հաստատեցին ժողովրդեանը աւելորդէն ազատելու համար, և իրենց գաղթականները շուտով անկախ եղան : Հռոմայեցիները գաղթականներ հաստատած էին՝ ըստ մասին նոյն նպատակաւ, և ըստ մասին սահմանապահ գորքի տեղ բռնել տալու համար՝ իրենց յաղթած թագաւորներուն ժառանգութիւնը պահելու նպատակաւ :

Տիրացիները և կարծագինեցիները գաղթականներ հաստատեցին իրենց առևտուրը առեցընելու նպատակաւ, կըսվի թէ տիրացիները Մջերկրականին զանազան կողմերը քառասունի չափ գաղթականներ կանգնեցին, և կարծագինեցիները նոր տեղերը շահաւոր առևտուր բանալու յուսով իրենց քաղաքացիներէն կարգաւորեալ կերպով դուրս կը դրկէին. այս փոքր գաղթականները կարելի է թէ սկիզբները գործակալի կամ նոգարարձուի նման բաներ էին:

Անգղիացիներն ալ առաջները այս կերպով Ամէրիկայի հիսփային կողմերը գաղթականներ դրկեցին, որոնք ամէրիկացոց հետ մուշտակի առուտուր կընէին, բայց բնիկ ամէրիկացիները՝ մինչև որ նաեւրը հոն հասան՝ մուշտակ ունենալնուն վրայ ուշադրութիւն չէին ըրած, ուստի մուշտակ առնողները այն տեղիանքը մարդիկ զնել որոշեցին որ եղանակին դառնալուն ձմեռվան ժամանակները այն երկիրները մնալով մուշտակները ժողվեն: Ամէրիկացիները իրենց մուշտակները այն գաղթականներուն կը բերէին, և մէկ կողմէն այն տեղերը բնակողներուն թիւը օրէ օր կուէրսար, և մերթը մուշտակ եղած անասունները շուտով նուազիկ սկսան, և ամէրիկացիներուն երկրին ներսի կողմերը երթալու հարկ եղաւ:

Այս կերպով առջի գաղթականներուն բնակած տեղերը՝ քաղաքներ եղան, և զանազան մանր մունր գաղթական բնակիչներով լեցվեցան, և ստոնք ժամանակէ մը յետոյ՝ բոլոր սահմանովը երկիրներով և այլ և այլ ազգէ եկած գաղթականներովը բուն հայրենիքին հարստակները եղան: Գաղթականի վաճառականութիւնը ուրիշ տեղերուն վաճառականութեանը պէս ըլլալու է, որէ դուրսէն սպրանք ստնելով, և ներսէն դուրս դրկելով, գաղթականներէն բերվածը հայրենեաց չըբերած կամ բառ բառականին չըբուսուցած սպրանքները կըլլան:

Կարծագրինէցիները Սպանիայէն ոսկի և արծաթ կառնէին և Անգղիայէն անագ ու երկաթ, և ուրիշ տեղերէն մետաքս և մուշտակ կը բերէին, որ Կարծագրինէ չէին գանձվէր: Նաև հայրենեաց պէտք եղածին չափ չբերած ապրանքներն ալ կառնէին, հատարաօրէն այս ապրանքներն էին. ցորեն, բուրդ, մուշտակ և զանազան մետաղներ որ ձեռագործելու նիւթեր, և անգործ բերքեր կը կոչէին, այնպէս ապրանքներ որ միշտ գաղթականի մը երկրի մէջ հին ժամանակէ հաստատված երկրէ մը նուազ գինով յառաջ կուգայ:

Երրոր գաղթականի երկրէ մը բերված ապրանքը չբրանված բերք ըլլայ՝ գաղթականութեան երկիր մը դրկրվածներն ալ ձեռագործ ապրանքէ պիտի բաղկանան, որովհետև նոր բնակիչներով լեցված երկիր մը չբրանված բերքեր հասցընելու յարմար կըլլայ, բայց հին երկիրներն ալ ձեռագործելու յարմարութիւնը կունենան, ժողովուրդին բազարներուն մէջ գումարվելէն աշխատութեան բաժանումը աւելի ամբողջ և մերենաները աւելի կատարեալ ըլլալով ընթացքը աղեկ կը հասկըցվի:

Ուրեմն բուն հայրենիքը գաղթականներէն կրկին օգուտ ունի, մէյմը որ անգործ բերքերը ուրիշ կերպով ստանալու կարող ըլլալէն՝ նուազ գինով ստանալու առիթ կունենայ. մէյմըն ալ իրեն ձեռագործ բերքերուն հաւաստի վաճառատեղիներ ստացած կըլլայ:

Գարձեալ գաղթականներն ալ հայրենիքէն կրկին օգուտ կը բաղեն, այսինքն գաղթականը իր անգործ բերքերուն իր հայրենիքը իրրեւ ծախելու տեղ մը ունեցած կըլլայ, և բուն հայրենիքէն լաւ ձեռագործ ապրանքներ առնելու օգուտը ստացած կըլլայ, որ իր երկիրը շինվելէն սժաման կեդնեն:

Ուրեմն հայրենեաց ու գաղթականաց մէջ տեղը եղած առևտուրը բաղաբներու և գիւղօրէից մէջ երկրագործներուն և

արհեստաւորներուն հետ եղած բերքերու փոխանակութեան պէս կըլլայ: Գաղթականը իր բերքերը հայրենիքը կը ղրկէ, ինչպէս որ երկրագործ մը իր ազարակին բերքերը բաղաքի վաճառատեղին կը բերէ, և փոխարէն իրեն պէտք եղած բաները բաղաքին կրպակներէն կառնէ:

Վարձքերուն որոշեալ զինը աշխատանքին ուզվելուն և նը պատին միջոցին համեմատութիւնովը կորոշվի, բոլոր հին և բազմամարդ երկիրները հասարակօրէն աշխատանքի սարսպողները պէտք եղածէն աւելի կըլլան, ուրկէ վարձքերուն ցածուն ըլլալը կը պատճառի: Նոր գաղթականներուն աշխատանքը աշխատողէն աւելի ըլլալուն վարձքերը բարձր կըլլան: Գաղթական հատուածները միշտ անբնակ կամ սակաւամարդ երկիրները կը բնակին, ուր ժողովրդեանը սակաւ ըլլալուն պատճառովը՝ բանաւորները քիչ և երկիրը մշակելու վարձկաններուն պահանջումը շատ կըլլայ, բերքերնին մայրենի երկիրը ղրկելուն խամար բանաւորները վարձքը սակաւ և ապրուստը սուղ երկրէ մը վարձքը բարձր և ապրուստը նուազ երկիր մը տեղափոխելու կը յօժարին, և երկիրը ընդարձակ ըլլալէն և քիչ զինով ստացվելէն քիչ մը ստկով մարդիկ երկրի տէր կըլլան:

Թե՛ն և ղրամագլուխով մարդիկ իրենց հայրենիքը և իրենց կարգի ընկերութեան մէջ հարկաւոր համարված նպաստովը հազիւ թէ զիրենք կրնան հոգալ, և կենաց հարկաւորութիւնները առատ եղած գաղթականի երկրին զարգանալու վիճակը նայելով այն տեղը հարստութիւն ստանալու երեւոյթը յոյս և ակնկալութիւն մը տեսնելով գաղթականի երկիր մը երթալու կը համոզվին:

Կարծագինէն գաղթականներու հատուածները կառավարութեան կողմէն դուրս կը ղրկվէին, և կերևի թէ հայրենեաց կառավարութիւնը ամէն սարագայի մէջ գաղթականներ հաս-

տատելու խնամով կը ցանկար: Նոր երկրին ելքը գիտելով՝ կառուցվելու բաղաբներուն կամ գիւղաբաղաբներուն տեղերը հաստատելով՝ ճանապարհները և ուրիշ հաղորդակցութեան միջոցները նշղիւ նշանակելով:

Ասանկ կարգաւորութիւնը մասնաւոր անձանց ինքնահնար մտածութեանը թողվելու չէ, փասն զի գաղթականի մը հնարքները պարզելը նիւթապէս կրնայ ուշանալ, կըլլայ որ բաղաբ կամ աւանները գէշ տեղ կառուցված կըլլայ, կամ ճանապարհները գէշ կարգի դրված կըլլայ:

Գաղթականութիւն մը հաստատելու համար՝ ժողովրդեան աղբատիկները ու խիստ տխուր և լքեալները դրկելու է կարծելը սխալ է: Թէ որ իրենց հայրենիքը գետնախնձորով և ջնջին կերակուրներով ապրելու և խողերու նման բնակարանները բնակելու սովրած մարդիկ դրկրվին, անանկները միայն իրենց սովորութիւն ըրածնուն հարկաւոր եղածին չափը ստանալու համար պիտի աշխատին. բայց անանկ ժողովուրդներ դրկելու է որ հանգիստ ապրելու պարագաներու մէջ են, և սովորութիւն ունեցած են խոհանոց մը և նստելու սրահ կամ դահլիճ մը ունենալու, մաքուր կազմըված երկու և երեք կարգ զգեստ ունենալով՝ իրենց ընտանիքն և զաւակները մաքուր զգեստաւորելու:

Այս մարդիկը չէ թէ միայն գաղթականութիւնը իրենց գլխաւոր գիտութիւնաւոր և իրենց հետ ունեցած բիչ մը դրամագլուխովը շուտով առաջ կը տանին, այլ և իրենց սովորութիւնը եղած ապրելու հանգստութիւններուն ալ խորթ կունենան, և որովհետեւ գաղթականներուն երկիրները այն սփոխանքները նուազ գինով չեն շինվիր, անոնք մայրենի երկրէն պիտի ստացվին, ուրեմն ընտրելագոյն գաղթականները անոնք են, որ շատ աշխատելու համար բաւական չբաւոր ըլլան՝ և կենաց

սփոխանաց ախորժակ ունենալու չափ ալ ունևոր ըլլան : Այն սփոխանքները ստանալու բաղձանքը անոնք կը համոզէ գաղթականին մշակութիւնը տարածելու , և այն սփոխանաց մատակարարութիւնը մայրենի երկրին ձեռագործները կը յառաջացնէ , և այս կերպով հայրենեաց ժողովրդեանը համար աւելի զբաղմունք կը գոյանայ . աասնկ պէս պէս նկատմամբ կը գանձեմք որ գաղթականներ հաստատովիլը միջոց մըն է վաճառականութիւնը տարածելու :

**Չորրորդ.** Վաճառականութիւնը դրամագլուխ հաւարելով կը տարածվի : Վաճառականի մը դրամագլուխը այն ստացրվածքն է որ իր գործառնութիւնը յառաջ վարելու գործ կածվի , իր յանձն առած գործառնութիւնը՝ դրամագլուխին գումարին համեմատութիւնովը կը տարածվի , և ինչ որ մասնաւոր մարդու մը կը պատշաճի , շատերուն ալ կը յարմարի : Գրամագլուխը առատ եղած երկիր մը դրամագլուխը սակաւ եղած երկրէ մը աւելի ընդարձակ շահախաճառութիւն կրնայ յառաջ տանիլ , դրամագլուխը ճարտարութիւնով և խնայողութիւնով կը շատնայ , վաճառականի մը նախ պէտք է որ շահով յառաջ աղիմութիւն մը ընէ , և յետոյ այն շահին մէկ մասը ի գործ ածէ , իբր միջոց մը ուրիշ արդիւնք բերելու :

Այն շահը որ դրամագլուխի տեղ գործածվի՝ վերստին շահ կը բերէ , որ դարձեալ իբր դրամագլուխ կը գործածվի , և հետեւաբար դրամագլուխը կը շատնայ , շահուն խնայութիւնովը և շահը նմանապէս պահպանութիւնով :

Գրամագլուխը՝ անգործ նիւթեր ծախու առնելու , մերենաներ հիմնարկելու , և վարձքերը վճարելու կը գործածվի , գործարանի տէր մը որքան աւելի անգործ նիւթ ծախու առնէ , այնքան աւելի մերենաներ կրնայ հիմնարկել , և ընդարձակ գործառնութեան կրնայ զբաղիլ , աւելի մարդ գործի վարելով :

Մէկ երկրի մը դրամագլուխը իր անգործ բերքերուն գումարէն կամ թէ հանրերէն, ու ձկնորսութենէն, կամ թէ ցորենէն ու անասուններէն և ձառագործներէն, և հարկաւոր սպրանքներ շինելու համար ունեցած մեքենաներէն, իր նուերուն միւլէն, կամ վաճառքներուն վարձքերը վճարելու համար ունեցած պատրաստ գրամէն կը գոյանայ :

Ասոնց գումարին համեմատութիւնովը կը կըտրելի իր երկրէն դուրս հանած վաճառքին գինը, և իր դուրսի երկիրներէն ծախու առնելու կարողութիւնը՝ իր դուրս հանածին համեմատ տարածում կունենայ :

Գրամագլուխի հաւաքումը մէկ երկրէ մը ուրիշ երկիր դրկը վելու վաճառքները երկար պայմանաժամով ծախելու զօրութիւն կուտայ, կըլլի թէ՛ անզղիացի վաճառականներուն օտար վաճառատեղիներուն վրայ ունեցած ստացումին մէկ միջոցն ալ այս է. ուրիշ երկիրներուն վաճառականները բաղդատարար չբաւոր ըլլալուն կանխիկ գրամով կամ թէ կարճ օրով ծախելու կը հարկադրին. բայց ընդհակառակն անզղիացի վաճառականը իր դրամագլուխին ընդարձակութիւնովը՝ երկար պայմանաժամ կրնայ ստալ, ժամանակին երկայնութիւնը իրեն նուազ պատճառ մըն է, միայն թէ իր գրամագլուխը պատշաճաւոր շահովը վերադառնալու ինքը հաւատի ըլլայ: Ասոր համար Անզղիայէն ապրանք բերող օտար վաճառական մը անզղիացի գործարանի տէրոջը տրված պայմանաժամը չըլլանալէն առաջ՝ կարող կրնայ ըլլալ նոյն սպրանքը ծախելու և դրամը առնելու, և նետուապէս ինքը կորող կըլլայ աւելի տարածեալ վաճառականութիւնը բառաջ տանելու. նմանապէս թէ որ գործարանի տէր մը խանութպանի մը պայմանաժամով ծախելու ըլլայ, խանութպանը սպրանքին տիրոջը չըվճարելէն առաջ՝ գնած սպրանքին մէկ մասը կրնայ ծախել և դրամը

առնել, որով խանութականը միշտ աւելի ապրանք պահելու կարող կըլլայ, բոլոր զնելու ապրանաց վճարումը պատրաստ դրամով վճարելէն աւելի առևտուր ընելու կարող կըլլայ :

Պարտականութեան ընդարձակութիւնը որ և իցէ երկրի մը դրամագլուխի նուազութեանը փորձ չէ, ընդհակառակն դրամագլուխի առատութեան փորձ մըն է, մէկ վաճառականը երկայն պայմանաժամ տալու կարողացընողը դրամագլուխի առաւելութիւնն է, և վստահութիւնը տըլօղ անձը հասարակօրէն ինքն ալ քիչ մը դրամագլուխ կուեննայ, որով իր վրայ հաւատարմութիւնը շատցընելու կարող կըլլայ, երբ մէկը նախատելու մտքով կը դիտեմք որ այս կամ այն մարդը հաւատարմութեան նպաստով առևտուր կընէ, նշանակել կուզեմք թէ՛ իր առևտուրին մէջ հասարակօրէն պայմանեալ եղածէն երկար ժամանակով առնելու սովորութիւն ըրած է, կամ թէ պատրաստ դրամ վճարելը՝ սովորական եղած տեղը օրով կաննէ, կամ մուրհակի դիւրութիւնով՝ կամ ուրիշ կեղծեալ միջոցով դրամ կը գտնէ ըսել կուզեմք :

Ամէն դրամագլուխ հաւաքված երկիրները կարգ մը մարդիկ կըլլան, որոնց գործը վաճառականութեան միջամուխ ըլլալ չէ, այլ դրամագլուխ մատակարարել է, վաճառականներուն և առևտուր ընողներուն առժամանակեայ ըստ պատահման կամ կանոնաւոր հարկաւոր եղած դրամագլուխը տալով կը հոգան :

Այս մարդիկը սեղանաւոր (պինֆիեք) կը կոչվին, ասոնց գործն է ազգային դրամագլուխը տնտեսելը, շրջաբերութեան արագութիւնը աւելցընելով՝ և առաւել արգասաւոր ընելու անձնատուր ըլլալով :

Սեղանաւոր չեղած նահանգ մը՝ վաճառական մը՝ կամ առև-

տուրի մարդ մը՝ ինչ և իցէ յանկարծ պահանջուամ մը դիմաւորելու համար՝ միշտ դրամոց զուամար մը իր քովը պահելու է, բայց երբոր (պակֆա) մը հաստատված ըլլայ՝ այն զուամարը պահելու հարկադրեալ չըլլար, ու իր բոլոր դրամագրութիւն զուամարը առևտուրի կրնայ գործածել, և թէ որ առժամանակեայ փոխառութեան պատեհութիւն ունենայ՝ պակֆային դրամագեղջի (սֆօնթոյ) ճամբով կրնայ ստանալ, ուրկէ երկրին արտադրող դրամագրութիւնը կապելնայ :

Սեղանաւորը դրամագրութիւն աւանդապահ մըն է, և պարագային պահանջմանը համեմատ՝ մեքենայի մը անխնայքը զըրզոզ զօրութեան մը պէս՝ կամ կառնէ կամ կը հաղորդէ, և վաճառականութեան մեքենաներուն ազդեցութիւնը պահպանելով՝ հաստատութիւնը կաւելցնէ :

Սեղանաւորները լոկ դրամ վաշխի տուող չեն, այլ դրամի վաճառականներ են, որոնք փոխ տալու ցանկացողներէն փոխ կրանուն, և փոխ առնելու փափարողներուն կուտան :

Դրամի փոխառութիւնը աւանդապահութեան դրութենէն ուժ կառնէ, վասն զի ոչ միայն վաճառականները և առևտուրի մարդիկ՝ այլ և այնպէս մարդիկ ալ որ առևտուրի մէջ չեն, այսինքն ազնուականներ և իշխանագունները, երկրագործները և ուրիշները իրենց կալուածքներէն սովորաբար քիչ շատ դրամի զուամար կուսնան, որոնք պատահական ծախքերնին դիմաւորելու համար իրենց մօտը կը պահեն. բայց երբոր իրենց մօտերը պակֆա մը հաստատված ըլլայ՝ անոնք այն դրամներուն զուամարները տոկոսով սեղանաւորին քով կը գետեղեն :

Յիրաւի մասնաւորի համար դրամի փոքր զուամար մը կրնայ ըլլալ, բայց՝ հաւաքաբար մեծ զուամար կընէ, որ սեղանաւորը այն դրամները վաճառականներուն և առևտուրի մէջ զբաղած

եղողներուն դիւրութիւն տալու համար կը գործածէ, այս կերպով այս փոքր դրամի վտակները միաւորելով գորաւոր գէտ մը կըլլան, որ գործարաններուն անիւները կը դարձնեն, և գործունէութեան մեքենաներուն շարժումը կը տարածեն :

Նաև սեղանաւորները իրենց վարկումը (*fraksիք*) դրամագլուխի տեղ կը գործածեն իրենց մուրհակը (*կօք*) կամ պօնօ դուրս հանելով կը խոստանան բերողին ըստ պահանջմանը այսբան գումար վճարելու :

Այս խոստմանց մուրհակները՝ (*կօքա*) հասարակութիւնը ոսկիի տեղ ընդունելու յօժարութիւն ունենալով՝ անոնց ներգործութիւնը անշուշտ նման ընդարձակութիւնով ոսկիի տեղ արդիւնը կունենայ :

Սեղանաւորը երկրագործներուն և գործարանի տէրերուն և վաճառականներուն իրեն խոստման մուրհակովը կանխիկ վճարք ընելու որ ըլլայ, երկրին արգասաւոր գորութիւններուն առաւելապէս շածողութիւն կուտայ, և իբր փիլիսոփայական բարին միջոցին նման՝ աշխատաւորներուն գործելու աւելի մասամբ գործ կը պատրաստէ, վասն զի ոսկիի գումար մը առաջ բերած կըլլայ, իր մուրհակներովը՝ որ միշտ և հանապազ հաւասար գումարի մը շրջաբերութիւնը կը պահեն :

Անգղիայի դրամական (*պակֆայի*) դրութիւնը ասոր նմանը ըլլալուն պատճառան է որ՝ շատ անգամ պարսաւանը կրած է, այսինքն ըսված է թէ կեղծեալ վարքի (*յիթպար*) հովի պէս՝ ընդարձակութիւն և նանիր դրութիւն մըն է, « ինչպէս կը հաճիս անանկ գրուցէ » անուններուն համար զանգատ ընելը՝ մեր բանը չէ, ինչ անուամբ կոչվելու ըլլայ՝ տարակոյս չըկայ որ արգասաւորութեան գորաւոր գործիք մըն է թէ և կեղծեալ դրութիւն ալ եղած ըլլայ, անոր ներգործութիւնը կեղծեալ

չէ, բանզի ժողովրդեան բազմութեանը զորժ գտնելու, կերակրելու և զգնատարելու նանապարհ կը բանայ :

Թէ որ հով յարուցանող ալ ըլլայ՝ առևտուրի հովն է, որ Անգղիայի երկրին բերքերը հեռաւոր վաճառատեղիներ կը տանի, և ջուրերուն վրայէն կը շարժէ և իր ծովեզերքը կը բերէ ամէն կողմին և կլիմային բերքերը. և թէ որ կեղծեալ գրութիւն ալ ըլլայ՝ անանկ հոտանք մըն է որ մեծամեծ մեքենաները երեքընտղ շողիին կը նմանի որն որ ազգի մը մեծութիւնը և հարատւութիւնը կը յառաջացնէ :

Սեղանաւոր մը գրամագլուխի կամ առուտուրի գորութիւններուն արգասատորութիւնը երեք կերպով կ'առնատացընէ, նախ հոգաբարձութիւն կընէ. այն գրամագլուխին որ արդէն գործածութեան մէջ է :

Երկրորդ, առաջուց անօգուտ և անպտուղ եղած գրամագլուխին աւանդ կամ շահեցընելու սովորութիւնով գործատւութիւն կուտայ :

Երրորդ, իր պահանջի գրամամուղթերը յառաջ բերելով՝ և հաւատարմութեան հետ փոխանակելով՝ գորութեամբ գրամագլուխ կ'ստեղծէ :

Սեղանաւորութիւնը գլխաւորաբար մէկ երկրի մը գրամագլուխին գումարին արդիւնքը աւելցնելով բարեբաղդութեանը ձեռքնաւ կը ըլլայ :

Վաճառականութեան պատմութեան մէջ ամէլ ստեղի հաստատ կառուցված սկզբունք մը չեմք գտնել : Քանզի երբոր երկրի մը գրամագլուխը կը շատնայ երկրագործութիւնը գործարանները, վաճառականութիւնն և հանճարն ու արուեստը կը ծաղկի, և երբոր գրամագլուխը նուազանայ՝ ասոնք կը գէշնան :

Այն մարդը որ իր բնակած երկրին գրամագլուխին ինչ և

իցէ մասը բնացնելու կը շանայ՝ իրեն շահուն անխոյժ եղած կըլլայ, և այն տղօրէսբանին կը նմանի՝ որ իր տղօրիին անխները դարձնող լուսնէն իջած առուին ջուրը կտրելու կը ջանայ, կամ Թէ այն երկրագործին որ իր արտերը բեղմնուոր ընող արևն ու անձրևը խտրանելու կը բաղձայ :

Փիւնիկեցիներուն համար կըլտլի Թէ՛ դրամ կտրելու առաջին հնարողներն էին, Թէպէտ և ոմանք այս սրատիւր լիւտացիներուն կը սեպնականնն :

Արդէն պատեած ենք Արբանամ նահապետին ժառանգը՝ վաճառականաց մէջ գործածված դրամը գաւազանաձև կամ արծաթի կտորներէ բաղկացած ըլլալուն կարծիքը, որ վրանին կնիք մը կամ նշան մը ունենալով՝ յատկութիւնն ու կշտոքը կը նշանակէր, և անոնց վրայի կնիքը կամ նշանը՝ փիւնիկեցի վաճառականները կը դնէին, և այն գաւազանաձևերը մանր կտորներու կտրելը՝ արժէքը՝ և որ երկրէն ելած ըլլալը՝ վրանին տակելով նշանակելէն մեծ փոփոխութիւն մը չէր ըլլար :

Ասանկ դրամներու հրատարակիլը շուտով կառավարութեանց ձեռքը անցնելով՝ և անոնց վրանին զին դնելով՝ հասարակութեան հաւանութեամբը շրջաբերութիւն կունենար :

Տիրացիներուն Թէ արծաթ և Թէ պղինձէ՛ դրամներէն՝ հիմա Անգղիայի թանգարանը (միւզէոն) կան, որոնք վրանին իրենց Մեղ Մեղխարք չստուածին կամ Հերակլէսին զլիտն ձևը դրօշմալ ունին, նոյնը որ Աստուածաշունչին մէջ՝ Բահաղ (Պատ) անուամբ նշանակված և արև կը նշանակէ կարծրված է :

Փիւնիկեցիներուն դրամներուն մէկ քանիին վրայ այն հոշակեալ ծիրանի գոյնին ներկը մատակարարող ձուկին ձևը նշանակված է, և կըլտլի Թէ՛ կարծագինէցիներն ալ կաշիյէ դրամներ հանած էին, որ շրջաբերութիւն կունենար : Այս դրա-

մը ինչ արտօնառով հանելինն և թէ ինչ կանոնով անոր գումարը կը կարգադրէին, և թէ արդեօք անոր յատկութիւնն ու ներգործութիւնը՝ հիմնական թղթագրամներուն նմանութիւնը կունենար, գիտնալը օգտաւէտ և հրահանգիչ բան մը եղած կըլլար:

Գրամագրութիւնը ստատ եղած որ և իցէ երկիր մը՝ թէ դրամի փոխառուութեան և թէ առևտուրի գործոց կանգնում կուտայ, սեղանաւորներէն ի գատ՝ ուրիշ դրամ ունեցող մարդիկ ալ շահ մը կընեն, չէ թէ իրենք առևտուրի մէջ մասնկրով՝ այլ առևտուրի մէջ ըլլողներուն փոխառութիւնն ընելով:

Կարծագինէցոց համար կըսվի թէ՛ այս գործառնութեան մէկ նիւղը սոխորութիւն ըրին, այսինքն նուապես փաճառականներուն նաւուն բեռանք սպաճութեան վրայ դրամի փոխառութիւնն ընելը. օրինակի աղագաւ նաւ մը ունեցող մարդ մը՝ թէ որ բեռ մը ծախու առնելու դրամի կարօտ ըլլար, այս ստակ տուողներուն մէկէն կրնար առնելու, նաւուն բեռը երաշխատարութիւն տալով, և երբոր նաւը կը վերադառնար՝ դրամը կը վճարէր, փոխ տուողը բեռէն շահ չէր ունենար, բայց թէ որ դէպքը յաջող կամ ձախորդ ըլլար, նաւը իրեն գրաւ կը դրվէր:

Հիմնական ժամանակս ալ այս կերպ գործառնութիւններ կըլլան, մէկ նաւը կալուածքի մը նման գրաւ կընայ դրվիլ, և անոր վրայ տրված գումարը դիւանը կարծանագրովի:

Գրամագրութիւններ ընկերութիւններ կազմելով՝ աւելի արգասաւորութիւն կը նստուցանէ, շատ անգամ փաճառականի մը մի և նոյն ժամանակը՝ երկու տեղ գտնելիլը շատ պէտք կըլլայ, բայց սա ալ՝ մէկ ստորագրութիւնով՝ երկու կամ երեք ընկերը ըլլալով կրնայ ըլլալ:

Այս ընկերները իրարմէ հեռու տեղեր ալ ըլլան՝ բարբին օգուտին յատկապէս գրուշութիւն կըլլովի, իրենց գործը տար-

բեր ճիւղերու բաժնելով՝ և ամէն մէկ ընկերը մէկ ճիւղին վրայ հոգաբարձութիւն ընելով՝ իբր Թէ մէկ մասնաւոր անձի մը հաստատութեանը վերաբերած՝ և ամէն տեղ յարմար յատկութիւն ունեցածի նման գործառնութիւնը առաւելապէս կրնայ ծաղկիլ :

Մէկ ընկերը քաղաքի գործերուն բաժինը, միւսը դուրսի երկիրներու գործերունը, մէկը գործարանները, միւսը ծախելու մասը, մէկը տուժարները (*սեփրերները*), և միւսը շտեմարանները խնամակալելով, և այս աշխատութեան բաժանմունքէն այն օգուտն ալ կունենայ, որ հանապազ գործն ամէն մէկ ճիւղը ընկերութեանը զլիաւորի մը հոգաբարձութեանը տակը եղա ծկրլլայ. ուրիշ օգուտ մըն ալ այս է որ՝ գործերուն վերաբերեալ խորհրդակցութիւնն ալ փոփոխակի ըլլալով՝ գործառնութեան կառավարութիւնը խոհական տնտեսութիւն կունենայ մէկուն տգիտութիւնը՝ մէկային գիտութիւնովը կրնայ պարտըկվիլ, մէկուն եռանդոտ երևակայութիւնը մէկային հանդարտ բնութիւնովը կը չափաւորի, մէկուն անհոգութեան տեղը մէկային խոհականութիւնովը կը լեցվի :

Նաևս ընկերութենէ յառաջ եկած մեծ օգուտը դրամագլուխին աւելի շատութենէն կը ծագի, մեծ հաստատութեան մը մէջ աշխատութիւնը շատերու բաժնըլած կըլլայ, և համեմատաբար նուազ ծախք (*մատրաֆ*) ըլլալէն՝ ընկերութիւնը մեծ համարմունք վատըկելու կը կարողանայ, և իրենց պատուոյն և ընկերութեան բոլորին մէկէն մեծ հաւատարմութիւն կը տրվի, և ասանկ ընկերութեան մը անպատիւ սնանկութիւն մը պատահիլը խիստ հազիւ կըլլայ :

Միաբանեալ ընկերութիւնը՝ բազմամիւ բաժանորդներէ բաղադրեալ բաժանորդութիւն մըն է, ընկերութիւնը անանկ բազմաւոր ըլլալուն անոր տնտեսութիւնը՝ իհարկէ անոնցմէ բիջե-

րուն երաշխատորութեանը սակ կը ձգվի, որոնք կառավարիչք կը կոչվին, սասանկ ընկերութիւնները՝ խիստ սղտակար են, և մանաւանդ նարկատը են սնանկ գործատուութեանց մէջ՝ որ մեծ գումար պատմագրութի կը պահանջին, որ մէկ մասնատոր զբառնատէրոջ վիճակը նազիս մէ կը ներէ, ինչպէս մէ մէկ նոր գաղթականութիւնը՝ բնակիչներով լեցընելը կամ մէկ բարար մը ջուր կամ կազ մատակարարելը՝ կամ մէ, անանկ աշխոյժ երեւակարութեան կարօտ կըլլայ, որ մասնատոր սննդ մը չըջովարիր բարբ փտանգը իր վրայ առնելու, զոր սրինակ, մատագրագործութեան օքէս՝ որն որ յաջողութեամբ յատաչացընելու նախար՝ նախարակաց հաւատարմութիւնովը շատ բաժանորդներ կը պահանջէ, նմանապէս կրակին ու կենաց ապահովութեանը սիկուրդան՝ և ազգային պատմական մը, այսինքն, պակեան սահմանելը :

Այս պարագաներու մէջ կամ մէ կարելի է ուրիշ բիչ զի պուստներու մէջ միարանեայ ընկերութեանց բաժանորդութիւնը մասնատոր սննդի մը նախանձատորութեան չըկրնար տարանալ բայց առնաւարակ տարուելու կամ ծախվելու սահմանափակ սպրանքներուն նախար՝ լեշեայ բաժանորդի ընկերութիւնները մասնատորաց ձեռնարկութեանց չեն կրնար դէմ կենալ, փասն զի սակն ծախվելու սպրանքներուն գինը ի նարիկ բերքին արժարութեանը վրայ սլտի կանանատորի, փորձառութիւնը ցայց կուտայ մէ՝ ինչ և իցէ սպրանք մը կամ բերք մը՝ մասնատոր սննդինը մեծ ընկերութեան մը նուազ զինով կրնան յատաչ բերել, ուստի մասնատոր սննդը միշտ կարող կըլլայ՝ անանկ մեծ ընկերութիւններէն նուազ զինով ծախելու :

Արդ Տիրոսի և Կարթագինէի պատմութեան կը բարեմար որ՝ վաճառականութիւնը ծովային գործութեան միջոցով, և գործարաններ նախատեղով՝ և գաղթականներ կանգներով և պատմա-

գլուխի հաւարումով կը տարածվի : Հիմա բննելու եմք կարծազինէցոց վաճառականութեան հանգամանքներն :

Առաջին. Կարծազինէցիք երեւելի էին արդարութեան սէր մը ունենալովին, իրենց մէջը ճշմարտութեան առած մը եղած էր թէ՛ երբոր բազաբացի մը անիրաւութեամբ վլասաված ըլլար, հասարակութիւնը անոր ուղղութեամբ դարման տանելու կերպը սահմանած էր. կարծեմք պատմական ստուգութեանը մէջ՝ ամէնն ալ հաւանութիւն կուտան ըսելու թէ՛ վաճառականութեան զբաղած ազգերն իրենց գործառնութեանցը մէջ անկի արդարասէր կըլլան, քան վաճառականութեան գաղափարը չունեցող կէս բազաբակիրն ազգերն՝ որոց կեղծաւորութիւնը, անհաւատարմութիւնն և խարդարութիւնը առակ եղած է : Բայց երբոր իրարու նետ՝ առևտրական գործառնութիւն ունեցող որ և իցէ երկրի մը բուն բնակիչները՝ հարկաւորաբար արդարութեան և ստացուածքի իրաւունքներուն սկզբնական ճշդութեան գաղափարը ստացած կըլլան, այն ստեն թէ՛ հասարակութեան և թէ՛ բազմաց ձայնը կը դատապարտէ՝ սխալ կշիռները, խաբէական չափերն, անհարագատ նմանութիւններն ու տարաբայման գիները :

Երբոր բու աշխատաւորներուդ օրական վարձքը իրենց պատշաճէն պակաս տալու ըլլաս, երբոր բու յաճախորդներուդ սոխտութենէն օգուտ քաղել ուզես, երբոր բու ապարանքներդ վար տեսակէ են, և կամ երբոր բու դաշնադրութեանդ վրայ չըմնալու ըլլաս, այն ստեն հասարակութեան ձայնը՝ բու արդարութիւնդ խոխտելը կը հրատարակէ :

Նաև արդարութիւնը կը խանգարես երբոր չափէդ աւելի ապրանք առնելու պարագիս, որուն շահը թէ որ յաջող կը ունենայ, բեզի կը վերաբերի, բայց թէ որ անյաջողութեամբ վլաս ըլլայ՝ բեզի հաւատարմութիւն ընողներուն անիրաւո-

Յիւն ըրած կրկաս : Այլ և արդարութիւնը կը խախտես՝ երբոր  
բու բնտանեացոյ նպատար խնամես, կամ բու բարեկամացոյ  
հիւրասիրութիւն ընես, կամ թէ չքաւորներուն ողորմութիւն  
տաս՝ ուրիշ մարդկանց դրամովը, որ արդարութիւնը խախտած  
ըլլալով՝ առաքինութիւն եղած չըլլար :

Սրիկաները՝ հնարագէտ մարդիկ կարծելը մեծ սխալանք մըն  
է : Այն մարդը որ համեստ կարծելով՝ իրեն վրայ տրված  
հաւատարմութիւնը չարի կը գործածէ՝ անոր յաջողութեամբ  
անիրաւութեան գործ մը կատարելը շատ զիւրին է, բայց իբր  
բնուորութիւնը յայտնի եղածին պէս յաջողութիւնը կը դազրի,  
և իր բացայայտ ըրած նարտարութիւնը այն մարդուն կը նը-  
մանի որ՝ ոսկի հաւկիթ ածող սագը կը ճնդքէ, իր համեստու-  
թեան համբաւը իր կենացը մէջ կրնար իրեն նպատակ, բայց  
մէկ անիրաւութեան գործը զինքը յախտեանական աղքատու-  
թեան և վատահամբաւութեան մէջ կը ձգէ, ուստի կը տեսնես  
որ սրիկաները առհասարակ աղքատ են :

Սրիկայ մարդկանց թիւը համեստ մարդկանց թուոյն հետ  
բաղդատելով՝ թէ և յաջողակ եղած ալ ըլլայ, բիչ է. մէկ ան-  
գամի յաջողութեան պատահիրը ամէն յետագայ գործառնու-  
թեանց յաջողութիւնները կարգիլէ :

Առակաց գրքին մէջ՝ որ իր սրբազան հանգամանքներէն ի-  
զատ կենաց յաջողութեան ստացումին լուսագոյն դաստիարա-  
կութիւնը կը պարունակէ, դատարկասունը միշտ յիմար կը  
կոչվի, բայց թէ որ յիմար է այն մարդը որ անիրաւ միջոցով  
բարեբաղդութիւն ստանալու կուգաս, ևս առաւել տիմար է  
այն՝ թէ որ աւելի սպասելու ըլլայ՝ և թէ այն կերպով ու անանկ  
հարատութիւն ալ ստացած ըլլայ՝ իրեն զուարճութիւն մը չը-  
գար. զուարճութիւն ըսի, բայց ստանկ սպրազայի մէջ մարդ  
կարելի է արդեօք զուարճութիւն սպասել, ինչ զուարճութիւն

բեզի համար, դուն որ այն հարստութիւնը խարդախութիւնով, նենգութիւնով, բռնութիւնով և հարստահարութիւնով ձեռք բերած ես, ու զուարճութիւն կտարտես. բէ՛ բոլոր համաստ մարդոց սրտանց հրատարակածներուն ու անիրաւութեամբ վնաս կրողներուն ահարկու անձերներուն, և բու ընտանեացի յանդիմանութեանը մտադիր եղիր, որոնց անունը խայտատակ ըլլալու պատճառ եղեր ես, և այն խղճմտանքին դատախազութեանը ականջ դիր, որոնց ձայնը հեղձուեղձուկ ըրեր ես, երկիրքին այն զայրադին որտամանը նայէ ունկնդիր եղիր ստոնց՝ որոնց օրէնքները բու ապօրինաւոր հաւարած հարստութիւնովդ թշնամաներ ես :

Արդեօք ստոնք բեզի զուարճութիւններ կը պատճառեն, անարդարութեամբ հարստութիւն ստացած ըլլողը՝ իր օրերը պիտի չըկրնայ լրմնցնել, ու իր վերջը ամէնուն ծաղրուծանակ պիտի ըլլայ, ահա բեզի զգուշացնել կուզեմ, տեղեակ ընելով որ անտնկ անզգամ աննչցրված մարդու մը հետ չըլլայ որ զործանութիւն ունենաս : Թէ՛ և այն մարդուն բեզի առաջարկած տուրևաոքը օգտաւոր ալ ըլլայ՝ մի ընդունիր, բարոյականի պատճառաւ ալ անկէ զգուշանալը բու պարտալ է :

Գարձեալ թէ և դրամի երևոյթքով բուկին շահիդ ես վերաբերելի ըլլայ՝ փտտո՛ն եղիր որ թէպէտ և սկիզբները անի բեզի թոյլ կուտայ դրամ առնելու, բայց վերջը հնարը կը գտնէ բեզ խարելու : Ի՛նչ յաւերած սրտճառն ալ սա է որ՝ անոր մտանալէ՛դ բուկին իսկ պատիւդ և մանաւանդ բարոյական զգացողութիւնդ կը վնասի, թէ որ սրիկայ մարդէ մը դրամ առնես, հոն վնաս մը կայ որ դուն անոր խարէութիւններուն պաշտօրան կենալու և դաշնադիր ըլլալու պիտի հարկադրիս, և կարելի է որ առիթ մը պատահներուն պէս դուն ալ դատարկասուն մը կըլլաս :

Երկրորդ. Կարծագինեցիները հարստութեան համար մեծ ներստմունք մը ունէին, հարստութեան բաղձանքը յառաջ զարու պատճառներուն համեմատ՝ կամ առարինութիւն մը կամ մտրութիւն մըն է, երբոր մարդ մը հարստութեան կը բաղձայ՝ իր կենացը սրտասնարներուն կամ տարիքի տկարութեան դէմ դնելու համար իր ընտանիքը աշխարհիս մէջ փառաւոր հաստատված ձգելու, և իր բարեկամացը նպաստելու զօրութիւնը աւելցընելու, կամ թէ իր հայրենիքին և կամ իրմէ աւելի չքաւորներուն աւելի առատաձեռնութեան կարող ըլլալու, կամ հոգևոր զօրծերը տարածելու համար որ ըլլայ՝ իր փափարը առարինութիւն է, և ինքը՝ իրուամբ անոր սարսելու է, խոհեմութիւնով, համեստութիւնով և աշխատասիրութիւնով իր ջանքը վերջապէս յաջողելիք կունենայ:

Շատ ցաւալի է որ բարոյականի ուսուցիչներէն ոմանց բացայայտութիւնը և բանի մը բանաստեղծներուն նկարագրութիւնը այս կարծիքը պաշտպանած են թէ՛ հարստութիւնը առարինութեան և կամ երջանկութեան թշնամի բան մը եղած ըլլայ, և կրան թէ՛ ասոնք միայն աղբատիկ խրճիթներու մէջ կը գտնուվին, և որքան որ հարստութիւնը առատանայ՝ մարդս պարզ մտութենէ և արդարութենէ կը հեռանայ:

Կատարելապէս ստոյգ է աս՝ որ առարինի աղքատութիւնը միշտ յարգութեան արժանի է, և մոլի հարստութիւնը արհամահրելի է, բայց աղքատութիւնը հարստութենէն աւելի առարինութեան ձեռնասու ըլլալը ստոյգ չէ, համեստութեամբ ստացված հարստութիւնը՝ խելքը տկարացնելու, կամ փարքը սարսելու և կամ մարդուն երջանկութիւնը վատթարելու զօրծիք մը կարծելը ուղիղ չէ: Արդարեւ ընդ հակառակն է: Աղքատութիւնը յանցանքի արմատ է, աղքատութիւնը գիտութիւն տոանալու մեծ արգելք մըն է, մարդոյս թշուառութեանը

մեծ ազդիւր մըն է. <sup>(1)</sup> Թէ որ զխոտութիւնդ աւելցընել կամենաս հարստութիւնդ աւելցուր, որ այն ժամանակը պաշտպանելու բարձր հանգամանքը կունենաս, ու անիրաւութիւն և վատանունութիւն գործելու քիչ զօրաւոր փորձութիւն կունենաս, Թէ որ կը կամիս երջանկութիւնդ աւելցընելու՝ հարստութիւնդ աւելցուր, որ այնժամանակը բարեբարութիւն ընելու աւելի բազմամիւ ազդիւրներ կունենաս, և ի վեր քան զամենայն բարեգործութիւն ընելու գովելի կարողութիւնը առատօրէն կունենաս, ուրեմն հարստութիւնը գէշութիւն կը բերէ ըսված կարծիքէն հեռացիր :

Թէ որ հարստութիւնը չարիք մըն է, ուրեմն հանձարն ալ մտրութիւն է, վասն զի հանձարի և աշխատասիրութեան նպատակը հարստութիւն առաջ բերել է, և Թէ որ հարստութիւնը վատմար բան մըն է՝ վաճառականութիւնը հարկաւ թողելու է, վասն զի վաճառականութեան նպատակն ալ հարստութիւն ստանալ է, Թէ որ բազդի բարիքը այսինքն հարստութիւնը գէշ բան մը եղած ըլլայ, բարեսիրութեամբ և հայրենասիրութեամբ ազբասաց փիճակը դարգացնելու համար եղած ջանքերը պաշտպանութեան արժանի եղած չեն ըլլար, այլ ընդհակառակի գարշելի կըլլան: Բայց հարստութիւնը չարիք մը չէ, Թէ ազգաց և Թէ մասնաւոր անձանց երջանկութիւն է, երբոր ազգերը հարուստ կըլլան՝ անոնց ժողովուրդը լաւ կը կերակրուին, և լաւ կը հագվին, ու լաւ պատրաստուլիւմ բնակարաններուն մէջ կը բնակին: Երբոր ազգերը կը հարստանան՝ անոնց բազարները և գիւղաբաղարները կառքերու և ոտքով քաղողներու համար լաւ պատրաստուլիւմ ընդարձակ փողոցներ կունենան,

(1) Ըսածները աշխարհիս բարիքին կապուող հարուստներուն և կամաւոր ազբասներուն համար հասկընալը նեղինակին նպատակէն դուրս ելնել է :

և զիշերները փողոցները լոյս մատակարարելու և ջուրը մասնաւորաց բնակարանները վազընել տալու համար՝ խողովակներ կը պատրաստըլին : Երբոր ազգերը հարուստ ըլլան՝ սոլը բիշ կը պատահի, ժանտ և փոխադրական հիւանդութիւնները շատ մարդ չեն մեռցըներ, և թշուառութիւնները թեթեցընելու և աղքատաց դատարարակութիւնը յառաջացնելու յատուկ օրինադրութիւններ կը շինլին :

Երբոր ազգերը հարստանալու ըլլան՝ մարդիկ ուսման պարագելու դիրութիւն կունենան, որով զբակնութիւնը կը ծաղկի և գիտութիւնը կը զարգանայ, մեքենական գիւտեր կը գտնըլին, և ազատական արհեստները պաշտպանութիւն և բաջալերութիւն կը գտնեն :

Ասոնց ամէն ալ հարստութեան ազդեցութիւնն է, այն հարստութիւնը չարիք մըն է ըսված խօսքը՝ հասարակօրէն ասոնց վրայ ամենին ներգործութիւն չընէր, վասն զի մարչկային սեռին մէկ վարդապետութիւնն է, որոնց հասարակաց կարծիքը ոժ տուած է :

Երբորդ, Հարստութեան վախաբը խոնամութիւնով և տնտեսական բնաւորութիւնով ընկերացեալ է, դրամազուխը միմիայն խնայութիւնով կը շատնայ, թէ որ ստացածդ միշտ վատնելով սպառես, գտնըված վիճակէդ աւելի հարուստ ըլլալիք չունիս ամենին, մարդս հարուստ ընողը իր ստացումը չէ, այլ խնայութեամբ պահելն է :

Գնն նախ թուարանութեան առաջին երկու կանոնը զննէ, յաւելումին և բարձումին տեղեկացիր, յարէ բու հիմակվան դրամազուխիդ ինչ գումար որ կը հաճիս, հասնէ այն յաւելուցած գումարդ՝ և ըսէ ինձի թէ մնացած գումարը ճիշդ առաջինին նմանը չէ մի :

Ամէն վաճառական հարկ է որ իր կենացը մէջ ամէն տարի

շատ բիշ իր դրամագլուխին վրայ յաւելլած մը ընէ, պիտի ըսես թէ ստացածդ խիստ բիշ է՝ վլասս չունի, այն բիշէն սակաս ծախք ըրէ, և նետուարար միւս տարին աւելլի կատանաս, վասն զի այն յաւելցուցած գումարիդ վրայ ալ շահ կունենաս :

Հարատուծին ձեռք բերելու համար երկրաչափութենէն աւելի ուրիշ լայնարձակ անասպարհ չըկայ, այն մարդը որ բոլոր ստացածը վաստելով կերթայ և կտաստէ որ բաղդի գիւսուածով մը հարատուծեան հասնի՝ շատ հաւանական է որ աղքատութեան մէջ ընկղմի, վասն զի ներսակ պատահարի պարագայի մէջ անք չկրնար ունենալ, ընդ հակառակը շատ խնայութիւնով շատ բիշ դրամ կրնայ մէկդի գնել, որ թէ ձախորդութեան մը պատահելու ըլլայ՝ իրեն նարատի անք կըլլայ :

Կարելի է որ ըսես ժամանակները գէշ են, եղանակները և օրէնքներն ալ գէշ են, ըսենք թէ անտնկ ըլլայ, բայց ուր որ դիպուածը հակառակ ըլլայ, քեզի համար տարբերութիւն չըկայ, թէ որ տունդ ստացածէդ աւելի ծախք ընելու ըլլաս՝ ինչ պէս հապա աղքատութենէ կրնաս ազատիլ :

Որքան ազնուական գերդաստաններ որ արժանաւորապէս և պատուաւոր կերպով կապրէին, հաշիւին չգիտնալով իրենց բարձր վիճակէն ընկած են, որոնց պատճառը թէ պարտին և թէ տիկինին թուարանութեան առաջին չորս կանտններուն տեղեակ եղած չըլլալն է, թէ որ իրենց գործակալներուն և իրենց կրպակաւորներուն և ծառաներուն և հաշիւներուն ինչպէս գիտաւորելը գիտնային, թէ որ իրենց եկամուտն ու իրենց ծախքը բաղդատելը գիտնային և ինչ ծանրակշիռ ըլլալը տեսնէին՝ իրենց ամէն պժուարութիւններէն կրնային զգուշանալ :

Վաճառականութեան սկզբունքներուն փոքր ինչ ծանօթութիւնը՝ ասոնք սովրեցնելու բաւական է, այսինքն թէ որ մարդ

մը ամէն տարի իր ստացածէն աւելի ծախք ընելու որ ըլլայ՝ հարկաւորապէս աղքատութեան մէջ իյնալու է :

**Չորրորդ.** Կարծագինէցոց համար ըսված է թէ մարդ մը շատ քիչ թէ որ հարուստ չըլլար՝ կառավարութեան սրաշտոն վարելու թոյլ չէր տրուէր :

Կարծագինէն հասարակապետութիւն մը ըլլալը և ժառանգականազնուապետութիւն չունենալը միտքերնիս բերելու եմք, ասոր համար հարստութիւնը զլիաւոր գերազանցութիւն մըն էր. ուրեմն կառավարութեան մէջ եղողներուն և բաղարական զօրութիւն ստացողներուն համար մեծ ազդեցութիւն ունենալու լաւ օրէնք մը ըլլալու է :

Երրորդ հարուստ մարդ մը կառավարութեան սրաշտոն մը ընդունելու ըլլայ՝ իր անձնական կալուածքը իրեն սրաշտոնական կացութեանը կրկին գերազանցութիւն կուտայ :

Սեղանաւորութիւնը, ստղանդը, ճարտարխօսութիւնը, ուսումնականութիւնը և բարոյական արժէքը՝ ամէնն ալ յարգութիւն կառանան, բայց թէ որ հարստութեան հետ կապակցութիւն չունենան՝ ուրիշ մարդոց ծառայութեան գործ նրանաշէնին քիչ ազդեցութիւն կունենայ :

Ասանք զուարճութիւն մը կրնան սրտածաւել, բայց կալուածքը, կամ հարստութիւնն է որ զօրութիւն կուտայ : Թէ որ հարստութիւնով կապակցութիւն չունենան՝ իրենց ազդեցութիւնը ծաղիկներուն երկրէն զատվելէն ետքը՝ անուշանոտութիւննին անզգալի ըլլալը կը նմանի :

Գետինը մեզմէ քիչ յարգ պահանջելը ստոյգ կրնայ ըլլալ, բայց տակաւին ծաղիկներուն բարութիւնը երկրէն բաղված ըլլալով իրենց անուշանոտութիւնն ու զօրութիւնը կը հաստատեն ու կը պահեն, ուստի հարստութեան կաւր ինքնիրեն մարդուն բնաւորութեանը յաւելուած մը չընէր, սակայն անցած

չբանցքները զանազանելով՝ ու իր ազդեցութիւնը զտելովը՝ թէ հաստարակ և թէ մասնաւոր առաքինութիւններուն աւելի զեղեցկութիւն և ներգործութիւն տալով՝ հայրենասիրութեան հաստատութիւնը կը հաղորդէ, և բարեախրութեան սիրելի եռանդ՝ և կրօնքի առաւել տարածութեանը բերկրութիւն կուտայ :

Մէկ ստացուածքի տէր մարդու մը՝ բարի օրինակը մեծ ազդեցութիւն կուեննայ, և երբոր հայրենասիրական և մարդասիրական ու քրիստոնէական ճանապարհով գործածվելու ըլլայ՝ շատ հետեւողներ ունենալը խիստ հաւանական է :

Հարստութեան մէկ օգուտն ալ պատուոյ ճանապարհ բանալու համար հնար է որ մասնաւոր անձինք հարստութիւն ստանալու աւելի կը տառապին, պատիւ ստացողներն ալ իրենց կարուածքին կործանումը չեն բաշեր, իրենց պաշտօնական վիճակէն կրկին հրաժարելնին մտաբերելով, բարի օրինակ մըն է և հարկաւ վաճառականութեան վիճակի մը ընթացք եղած է, որ մարդ մը իր գործերուն խնամք չըտանի նէ՝ հաւանական չէ որ՝ ուրիշ մարդկանց գործոցը աղէկ մտադիր ըլլայ :

Անոնք որ՝ բարձրաստիճան տեղերը կը նստին, պէտք է որ ազնուարարոյ, առատաձեռն և վեհաձեռ ըլլան. բայց մարդ մը իր միջոցէն աւելի առատաձեռն ըլլալու չէ :

Այն մարդը որ իր սնտախառութիւնը գոհացնելու համար իր ստացուածքը շուայլութեամբ կորուսած է՝ կեղծեալ հիւրասիրութիւն կոչելով, այն մարդը՝ նիւթը կորուսած և շուքը բըռնած կըլլայ : Այս սրտճատով շատերը որ հարուստ ծնած են, աղքատ կը մեռնին :

Կարծազինէցիք իր կալուածքը շուայլութեամբ ջրբխող մարդուն՝ կառավարութեան գործքը և գանձերը չէին հաւատար :

Հինգերորդ . Կարծազինէցիք վաճառականութիւնը կը յար-

գէին, որ և իցէ մտրոց մը իր արնետափն մէջ գերագանց չըկրար ըլլալ՝ Թէ որ զինքը անկէ բարձրագոյն կարծելու ըլլայ, և վաճառականութիւնը՝ որ երկրի մէջ որ յարդի չէ, այն տեղը ամենևին չըծաղկիր :

Անգղիայի մէջ վաճառականութիւնը ծաղկած է՝ որովհետև այնտեղ վաճառականութիւնը յարգութիւն ունեցած է, և ակնածութեան արժանի նամարվելով՝ իր տեղացիները որքան կարենան անոր մեծ սրտիւ կը մատուցանեն: Գաղղիայի մէջ վաճառականութիւնը արնամարնված ըլլալուն ամենևին չէ ծաղկած, այն տեղը հարուստ բաղաբացիի մը անձին հանրամանքը իրենց բանաստեղծական և Թատրոնական գրվածքի նեղինակներուն բնաւորութիւնը միշտ անոնք ծաղր ընելու, և վար զարնելու պատճառ բռնելը կը սիրէին :

Վաճառականութիւնը ամենևին չըծաղկիր մէկ երկիր մը, ուր որ երիտասարդներուն նայրերը հագլու Թէ կարող կըլլան հաճելի երևոյթ մը հաստատելու, կը կարծեն Թէ վաճառատեղի մը մտնելը իրենց աստիճանին անվայել է, և առաւել կընարեն գատարկօրէն մուխ ծխելու բնաւորութիւնը :

Վաճառականութիւնը ամենևին չըծաղկիր մէկ երկիր մը, ուր որ աշխատութեամբ ստացուած սեպտական ինչքը ժառանգութեամբ ունեցածին չտի յարգութեան արժանի նամարված չէ: Վաճառականութիւնը բնաւ չըծաղկիր մէկ երկիր մը ուր որ՝ առևտուրի մարդիկ՝ իրենց գաւակնին նայն գործին բերելու տեղը՝ անոնց արնետ սորվեցնել տալը՝ կը կարծեն Թէ աւելի պատուական է: Վաճառականութիւնը բնաւ չըծաղկիր մէկ երկիր մը ուր երբոր մարդիկ առևտուրէն հագլու Թէ քանի մը հազար ոսկի կատանան՝ վաճառականութենէն դուրս ելնելու և ազնուական ընկերութեանց նետ խառնըվելու կը բաղձան, Ինչ է որ՝ ազնուականութիւն կուտայ, գիտութիւնն է, որ ար-

նկատն է որ այնչափ կամ այնպէս զանազան գիտութիւն կը պահանջէ՝ եթէ ոչ երկրին մի միայն օգուտ բերող վաճառականութիւնը, որ աստիճանի մարդ՝ երկրի մը հարստութիւնն ու երջանկութիւնը աւելցնելու հոգ կընէ, (որ բորոյական արժանապատուութիւն մըն է), բայց եթէ վաճառականները :

Որո՞ կարևոր է բարոյական բնաւորութիւնը՝ եթէ ոչ վաճառականի մը, որ ստանց բարոյականի՞ զինքը արհամարհելի կընէ :

Իրաւացին շատ ցաւալի բան է որ մարդիկ երբ որ առևտուրէն բիշ մը դրամ կատանան դրամագլուխինն դուրս առնելով անկէ կը բաշլին, և երկրին վաճառականութեան դրամագլուխին նուագութիւն կը բերեն : Ինչ պատճառ կրնաս տալ ասոր. պիտի ըսես թէ դուն ինքնիշխան ես, առանջ զնա ու հարուստ եղիր. պիտի ըսես թէ ես հարուստ եմ, առանջ զնա աւելի հարուստ եղիր. որքան աւելի հարստութիւն ունենաս, այնքան աւելի հայրենիքիդ նպաստելու կարող կըլլաս, և ուրիշներուն բարերարութիւն ընելու մեծագոյն զօրութիւն կունենաս. պիտի ըսես թէ ձերանալու վրայ ես, մէկ երխտատարդ ընկեր մը առ, դուն դրամագլուխ և տեղեկութիւն գտիր և ձգէ անոր որ աշխատութիւն և ճարտարութիւն գտնէ. պիտի ըսես թէ բաւական երկար ժամանակ աշխատելով ձանձրացեր ես, և կը բաղձաս գործէ բաշլիլ և կեանքդ ուրախութեամբ անցընել :

Գործէ բաշլիլը բեզի զուարճութիւն չըտար, բեզի պէս գործով գրադանքի սովրած մարդու մը միայնակեցութիւնը և դասարկեցութիւնը զուարճութիւն չըբերեր, ու դուն բեզ թշուառ ընելու և օրերդ կարճեցընելու խիստ զօրաւոր միջոց մը ունեցած կըլլաս, որ ըսէ դուն բեզ անանկ պարագայի մը մէջ ձգելու ես որ ընկիր մը պիտի չունենաս : Պիտի ըսես թէ գործէ դուրս ըլլալը ազնուականի մը պէս սահմանեալ եկամուտ ունենալը

և որդիքդ ու դուստրերդ ազնուական ընկերութեանց մէջ ծանուցանելը աւելի յարգութիւն և սպասիւ մըն է: Ո՛հ թէ որ այս է սպասձառդ՝ կիր զնո՞ թէ որ այնքան բարձր աստիճանի նսասած ես, որ բու առ ուտուրիդ անանկ ցածարար կը նայիս:

Ուրեմն հիմա սրբան շուտով ձգելու ըլլաս, այնքան աղէկ կընես. բեզի աակէ աւելի զրուցելիք մը չունիմ:



Ա Տ Ե Ն Ա Ք Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

ՉՈՐՈՐԳ 193-194

Յազազս վանատականութեան հախնի Հոռմայեցոց.

Երկրագործութեան սկզբնաւորութիւնը. — Երկրագործական եւ վանատականական վիճակի մը մէջի ընկերութեան հանգամանիք. — Հոռմայեցոց երկրագործութիւնը. — Երկրագործութեանը վանատականութեան վրայ բրած ազդեցութիւնը. — Հոռմայեցոց պատերազմները. — Պատերազմի վանատականութեան վրայ բրած ազդեցութիւնը. — Հոռմայեցոց յայտնութիւնները. — Տարածեալ շէրութեան մը վանատականութեան վրայ բրած ազդեցութիւնը. — Հոռմայեցոց գերի գործածելը. — Տնական գերութեան հախնի վանատականութեան վրայ բրած ազդեցութիւնը. — Հոռմայեցոց անհասարհները. — Դաւանակաց երթելիութիւնը. — Հոռմայեցոց սեղանաւորները. — Գրասը. — Թոփայի սպանութիւնները. — Կենաց սպանութիւնները. — Հոռմայեցոց վանատականութեան ընկան յարմարութիւնը.

# ԱՏԵՆԱԲԱՆ ՈՒԹԻՒՆ

## ԶՈՐՈՐԳ

ՀԻՆ ՀՌՈՄԱՅԵՑՈՑ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Նախնի պատմութեանց ճիւղերուն մէջ Հռոմայու պատմութեանը նման ուրիշ մը չըլլայ, որուն վրայ հիմնական տեղեկութիւն ունենանք, և հիմնական ժամանակին գաղափարներուն և սովորութեանցը աւելի մօտ ըլլայ: Հռոմայու լեզուն Եւրոպիոյ այժմեան լեզուներուն հետ ըստ մեծի մասին հաղորդակցութիւն ունենալէն ի զատ՝ մեր տղայութեան հին գաղափարին հետ միաբանութիւն ունի:

Եւրոպիոյ օրէնքներուն շատը սկիզբէն Հռոմայէն առնուած է, ասոր պէս ևն նաև շատ գիտութեանց և գրականութեանց ճիւղերուն ծանօթութիւններն ալ:

Հռոմայ ուրիշ հին ազգերուն շատին նման փոքրիկ երկիրով և ըիջ մողովրդով սկսաւ, մէ որ բոլոր ազգերուն նախնի պատմութիւնը գննելու ըլլանք, կը գտնամք որ սկիզբները գրեթէ փոքր թիւով ցեղերէ, և ազգատոհմներէ բազկացեալ էին, բոլորովին իրարմէ անկախ ըլլալով: Այս ցեղերուն զլխաւորները մեծ զերդաստանի մը երեւելի զլխաւորին տղարներէն կամ սերունդներէն կըլլային. երբոր ասոնց նորահաս տղուն մէկը տեղափոխութիւն ընելու կամենար՝ իր հօրը կուսակիցներէն անանկները հետը կառնէր որ իրեն ընկերանարու ինքնայոժար

կրկային և կերթային առանց բնակիչի երկրի մը կը ժառանգէին, կամ իրենցմէ առաջ տիրողները ժառանգութենէ հանելով իրենք կը տիրապետէին :

Այս կերպով Հոռոմ Քրիստոսի Թուականէն իբր 700 տարի առաջ Հոռոմոսէն իրմնադրվեցաւ : Հոռոմայի ժողովուրդը բիրտ և անկիրթ էր, ընկերական կենաց վերաբերեալ արհեստներուն քիչ ծանօթութիւն ունէր, բայց որքան որ կոպիտ էին՝ բարբարոս չէին, հաստատուն բնակարաններ ունէին, մասնաւոր կայրածոց իրաւունքին նմուտ էին, կառավարութեան սահմանեալ ձև մը ունէին, և երկիրը մշակելու արհեստին ծանօթութիւն ունենալուն ինքզինքնին երկրագործութեան տուած էին, և սերմանելու ու հնձելու ժամանակին միջոցներն ալ իրենց մօտի տկար ցեղերուն նետ պատերազմ ընելով ժամանակ կանցնէին : Թէպէտե այս պատերազմներուն մէջ ընդհանրապէս յաջողութիւն կունենային, բայց ձեռքերնին բերած տիրապետութիւնը շուտով չտուացան : Մեծն Աղեքսանդրի ժամանակ հոռոմայեցոց սահմանը հիմակրկան Հոռոմայ կեկղեցոյն ունեցած երկիրներուն սահմանէն աւելի տարածեալ չէր, Հոռոման երեք բանի վրայ բնակու եմք :

Նախ. Իբր երկրագործ ցեղ մը .

Երկրորդ. Իբր պատերազմասէր ազգ մը .

Երրորդ. Իբր ընդարձակ տարածեալ տէրութիւն մը :

Այս երեք խնդիրը համեմատելու եմք, իրենց երեք ժամանակի շրջանին մերձաւորութեանը, այսինքն Թագաւորական, հասարակապետական և միապետական ձևով կառավարութեանը մէջ, որ մեզի առ իմ պիտի տայ զննելու երկրագործութեան և պատերազմին, և տարածեալ ընդարձակ տէրութեան մը վաստակաւորութեան յառաջանալուն վրայ ունեցած ազդեցութիւնը

Նախ բննեմք նախնի հոռոմայեցիները իբր երկրագործ ցեղ

մը և զննենք երկրագործութեան վաճառականութեան վրայ ունեցած ազդեցութիւնը : Կը գտնեմք որ աշխարհիս ստեղծմանէն անմիջապէս ետքը հողագործութիւնը և հովուութիւնը ի գործ դրված էր : Արեւը ոչխար արածող էր , և Կայնը երկիր մշակող , ջրհեղեղէն անմիջապէս ետքը Նոյ նահապետն ալ այգի տնկեց , պարագայ մը որ այն արհեստին ջրհեղեղէն առաջ զիտցըլված ըլլալը ցոյց կուտայ , ու իր յաջորդներուն հաղորդած ըլլալը յայտնի կրնէ :

Եգիպտոս և Բաբելոն մի և նոյն ժամանակ անոր սերունդէն հիմնարկած ըլլալով իրենց երկրագործութեանը համար երևելի եղան . և այն ցեղերը որ միւս մարդկային սեռէն զատվեցան երկրագործութեան անխոյժ ըլլալով իրենց կրթեալ կենաց արհեստին զիտումիւնը կորուսին . բայց երբոր օտար երկիրներէն եկող գաղթականներէն ծանօթութիւն ստացան , առաջին սովրած արհեստնին՝ երկրին մշակութիւնը եղաւ . ուրիշներն ալ հովուութեան կեանքը սիրեցին , և զիրենք արօտի կամ հովուութեան տուին , բայց երբոր երկիրը առաւել բազմամարդ եղաւ , որոշեալ բնակարաններ զբաւելու հարկի տակ ինկան , և երկիրը մշակելու զբաղեցան :

Նախնի նահապետները հովիւ էին , և ուր որ արօտ և ջուր գտնէին՝ իրենց հօտը հոն կը վարէին , հովուութեան վիճակը աստիճանօրէն վաճառականութեան վիճակ մըն է , որովհետև իր կենացը ընծացրին չընասուցած բաները ծախու առնելու է :

Նախնի հոռմայեցիները երկրագործութեան զբաղած էին , և իրենց հրամանատարներուն շատերը՝ երբեմն երկիրը մշակելու տեղէն կոչված են : Ծերակոյտին անդամները հասարակօրէն գեղերը կը բնակէին , և իրենց ձեռքովը երկիրը կը մըշակէին , և ազնուական գերդաստանները իրենց մականունը մասնաւոր տեսակ մը բերք մշակելէն կառնէին :

Աղեկ երկրագործ ըլլալը մեծ պարծանք մը համարված էր, և ո՛վ որ իր երկիրը անփոյժ կը թողուր, կամ մշակելու անյարմար ըլլար՝ ստրասա լսելու և յանդիմանալու թեան արժանի կըլլար: Առաջները ո՛ր և իցէ քաղաքացի մը իր ձեռօքը մշակելու կարո՞ղ եղած երկիրէն աւելի գետին չէր ունենար: Հոռմորտ մարդ չլուխ երկու կալ (*skoljux*) բաշխած էր, բայց թագաւորները արտաքսելէն յետոյ ամէն մէկ քաղաքացիին եօժը կալ շնորհեցին, և այս կանոնը երկար ժամանակ տեւց, և իրենց տիրապետած երկիրներուն բաժանումը սահմանելու սովորական հիմք եղաւ:

Երկրագործութեան պարագոյ ժողովուրդ մը միշտ իր ժամանակը բաց տեղ աշխատելով անցնելուն՝ հարկաւորապէս շատ ուժեղ ըլլալով՝ բնական զօրութիւն կը վայելէ:

Հոռմայեցիները մարմնոյ կորովութիւն ունենալուն՝ հասարակօրէն մտաց հաստատութիւն և կարողութիւն ունէին, և աշխատանք ու նեղութիւն կրելու յարմար էին:

Զօրութեան ներքին ծանօթութիւնը քաջութեան ու համարձակութեան ընթացք մը կը գոյացնէ, մեր հիմակլան ժամանակն ալ բանակի մը համար երկրագործ նահանգներէն հաւազված զօրքերը միշտ ուրիշ քաղաքներէն կամ գիւղաքաղաքներէն ժողվրվածներէն աւելի զօրաւոր գտնուլից են: Երկրագործութեան պարագոյ ժողովուրդ մը լայն և ընդարձակ երկրի վրայ տարածված ըլլալուն՝ աւետարական քաղաքները գտնելի տեղերուն հողորդակցութեան միջոցը չեն ունենար: Այս պարագայով բիչ գլխաւոր տեղեկութիւն ու բիչ շինծու քաղաքաւարութեան կերպեր և աշխարհի վրայ բիչ ծանօթութիւն կունենան: Նաև սովորաբար բիչ կառիւստ կըլլան, ու շոայլութեան և մարդկային մոլութիւններուն բիչ ծանօթութիւն կունենան, և ընտանեկան առաքինութեամբ աւելի

յատկացեալ ըլլալուն մեծամեծ ընկերութիւններու քիչ ատոր-  
ժակ կունենան:

Երկրագործութեան սրարապող ժողովուրդ մը հարկաւորա-  
բար և աստիճանօրէն կարգաւորեալ վիճակի մէջ կըլլայ, վասն  
զի երկրի տերերը վարձկանէն՝ և վարձկանը աշխատաւորէն  
մեծ ըլլալով՝ իրենց տարբերկարգերը դարերով մի և նոյն ըն-  
տանիքի մէջ եղածի պէս ձևերով մնացած են, ուրիշ երկրա-  
գործ ժողովուրդ մը սովորաբար իշխանութեան ճնազանդ բնա-  
ւորութիւն կունենայ, և հին գերդաստաններուն և հին սովո-  
րութիւններուն սէր ունենալուն համար՝ փոփոխութիւններու  
ներհակ կըլլայ:

Երկրագործ ժողովուրդի մը յաջողութիւնը եղանակներէն  
կախում ունի, որոնց վրայ մարդ սանձ չըկրնար դնել, և սակե  
կը ծագի իրենց զիտաւոր զօրութեան մը հպատակ ըլլալուն  
զիտակցութիւնը: Հասարակօրէն կը գտնեմք որ երկրագործ  
ժողովուրդ մը կրօնական կանոնապահութեանց ուշադիր է:

Բոլոր այս դիտողութիւնները հոռմայեցոց նախնական պատ-  
մութեանց մէջ բացայայտ էր. հոռմայեցիները զօրեղ բաշա-  
մարտիկ էին, և ահաւոր բաջութիւն ունէին, և իրենց զօրու-  
թիւնը և անվհերութիւնը տեղական սովորութիւն ընելով  
հանապագօրեայ խիստ հրահանգով կը կատարելագործէին,  
և իրենց վարուցը պարզութեամբը նշանաւոր էին. իրենց մե-  
ծամեծ մարդոց մէկ բանին երկրագործութեան: Եկած են, որ  
ազգին առժամանակեայ կառավարիչ եղան, և երբոր իրենց  
սպաշտօնին առիթը դադրէր՝ կրկին իրենց երկիրը մշակելու  
աշխատութեանը կը դառնային. ընտանեկան առաքինութեանց  
կողմանէ իրենց ամուսնական իրաւանց հաւատարմութեամբը  
և իրենց զաւակացը կրթութեանը մտադիր ըլլալովը և իրենց  
անտեսական կարգադրութեանցը համար երևելի էին: Կառա-

վարական կարգադրութեանցը հնագանդ ըլլախուն համար ալ հոչակաւոր էին, մանաւանդ որ այն ազնուականներուն և ուսմիկներուն իրարու հակառակ ըլլալու յատկութիւններն շատ դարերով տեսց :

Հռոմայեցի հիւսիստոս մը իր տարեկան իշխանութեան սրտշտունին ժամանակը՝ որ և իցէ Եւրոպայի թագաւորէ մը աւելի զօրութիւն կուննար, թէպէտ և ժողովուրդը երբեմն իրենց կառավարիչներուն դիմազարձութիւն կընէր, որ սովորաբար նեղութիւն կրելուն համար կըլլար, բայց անոնք իշխանութեանէ զրկելու դիտաւորութիւնով չէր :

Նաև իրենց անմահ ըսած չաստուածներուն սրաշտաման ուշադրութեանը համար նշանաւոր էին, իրենց երդումը խիստ ճշդութեամբ կը բռնէին, և ինչ և իցէ զուշակութիւն մը որ չաստուածի մը անհաճոյ ըլլալու նշան կրնար կարծելիլ՝ անարեկ ըլլալով զանի կը կատարէին, և շատ անգամ իրենց յաղթութիւնով տիրապետած երկիրներուն չաստուածները ևս իրենց պաշտելու առարկայի նման կընդունէին, և Հռոմայի մէջ իրենց հին չաստուածներուն կարգը կը զնէին :

Հիմա զննենք երկրագործութեան վաճառականութեանը վրայ ունեցած ազդեցութիւնը :

Երկրագործի երկիր մը՝ առանց ձեռագործներու՝ կարող է ընդարձակ վաճառականութիւն մը առաջ վարել, թէ որ երկիրը իր բնակիչներուն սպառելի ուտելիքի հարկաւորութենէն աւելի բուսցընելու ըլլայ, որ այն աւելորդ մասը ուրիշ ազգաց երկիրները զրկելով ձեռագործ սպրանսաց հետ փոխանակելու կարող ըլլայ. բայց որովհետև անանկ երկրի մը բոլոր բնակիչը երկիր մշակելու չըկրնար զբաղիլ՝ ի հարկէ շատ մարդիկ ծոյլ կըլլան : Այս ծուլութեան ոգին արդիւնաւոր աշխատանքի զբաղեալ ըլլողներուն ալ ներգործութիւն կընէ, ուստի

երկիրը ըստ բաւականին չբաշակվիր, և ասի այն տեղ աղբատուութիւն տիրելուն պատճառ կըլլայ, միայն թէ անգործ եղողները ձեռագործները բըշված ուրիշ երկիրներ եղած տեղ մը երթան :

Նաև երկրագործութիւնը ձեռագործներ շինելու նիւթեր առաջ կը բերէ, թէ որ երկիր մը առատօրէն բուրդ հասցընէ՝ այն տեղ ալ մաշկեղէն ապրանքներ կամ եղջիւր կըլլայ, թէ որ փայտ կամ տախտակ ունենայ՝ նաև կամ մակոյկներ կրնայ շինվիլ, թէ որ ցորենը առատ ըլլայ՝ ալիւր կամ գարեջուր կամ ուրիշ խմելիք կրնայ յառաջացնել :

Անգղիայի ձեռագործարաններուն անգործ նիւթերուն շատերը երկրագործութեան արդիւնքն են : Երկրագործութեան տարածումը վաճառականութեան և ձեռագործի պարսպոդներուն օրական վարձքերնին նուազցնելու ներգործութիւն կընէ, երկրագործութեան յառաջադիմութիւնը կերակրեղինաց առատութիւն նպաստելով զինները վար կիջեցընէ, և ուտելիքի զիններուն իջնելը աշխատանքի զինը կիջեցընէ, և վարձքի պակսիլը ձեռագործը կը յորդորէ, ուրեմն թէ առևտուրի ապրանսց և թէ ձեռագործներուն զիններուն նուազութենէն՝ վարսակին աւելնալովը և այս քանի մը կերպով երկրագործութիւնը վաճառականութեան վրայ ազդեցութիւն կունենայ : Ուրեմն կը տեսնեմք որ վաճառականութիւնը երկրագործութիւնը, և երկրագործութիւնն ալ վաճառականութիւնը կը յառաջացընէ :

Երբոր վաճառականութեան օգուտը երկրագործութեան օգտին հակառակը կարծելու ըլլամք կը սխալիմք, երկուքն իրարու կը նմանին, և մի և նոյն մեքենայի մէկ մէկ անիւներն են, թէպէտ և երկուքն ալ իրարու հակառակ կողմը շարժելնին կը տեսնըլի, սակայն ամէն մէկը իր կողմէն հասարակաց հա-

բլատումիւնք յառաջ կըտանի, և երկու բին մէկուն շարժմանը  
 Թէ որ արգելք մը ըլլայ, խփոյն միւսին ընծացքին ուշանալուն  
 առիթ կըլլայ:

Երկրորդ բննամբ հոռմայեցիները իբր պատերազմաւէր ազգ  
 մը և նշանակներ պատերազմին վաճառականութեան վրայ ու-  
 նեցած ազգեցումիւնք:

Հոռմայեցիները պատերազմը իրենց գլխաւոր գործ ըրած  
 էին, և շարունակաբար վարժումիւն ընելով հմտումիւն առա-  
 ցած էին, և գրեթէ մշտապէս սովորումիւնով ազելկ հմտումիւն  
 ունեցած էին:

Հոռմայեցի բաղարացիները օտրի վրայ վարժուած բանակ  
 մը կը ձեացրնէին, մինչդեռ իրենց ղինաղբրողները հասարակո-  
 րէն լոկ անկանոն գորքեր էին, և հազիւ Թէ իրենց բռնաւոր-  
 ներուն ղէմ ղնելու կարող էին, հոռմայեցիները ամէն ժամա-  
 նակ իրենց զինուորական հմտումիւնը զարգացընելու կը պա-  
 րապէին, զինուորական յառաջադիմումիւնները իրենց Թշնամի-  
 ներն ալ կրտնէին, երբոր յազմըվէին իրենց արխումիւնը պա-  
 տերազմի մէջ ունեցած բաշարտութեանէն նուազ պանծալի չէր,  
 որոնք յազմըված ժամանակին ամենեին հաշտումիւն չէին  
 բներ, իրենց բնկերական կարգաղբրումիւնները՝ իրենց զինու-  
 րական մեծութեանը հետ միարան էր, գոր օրինակ հոռմայեցի  
 բղեշխ մը (հոնար) մինակ տարի մը պաշտօն կը վարէր, որ  
 իր հիւպատոտութեան ժամանակը երեկի ղէպբով մը յատկա-  
 նարու կը շանար, և զինքը երեկի բնելու յաջողակ պատերազ-  
 մէ մը աւելի առիթ չէր կրնար ունենալ, իրենց կառավարու-  
 թեանը խոնմ սկզբունքներն ալ իրենց յաջողութեանցը կրկին  
 պատճառ կուտար, երբոր բաղարի մը յազմէին իրենց տէրու-  
 թեանը հետ կը միացնէին, և գլխաւոր մարդոցը Հոռմայու բա-  
 զարացի արտօնութիւններ կուտային, և կը Թողուին որ ժո-

դովորողը իրենց օրէնքներուն համեմատ ինքզինքնին կատա-  
վարեն . նոր կարգադրութիւն ընելը և մահուան պատժոյ դա-  
տապարտելու իշխանութիւնը միայն իրենց սեպհականելով՝  
հեռաւոր ազգի մը հետ պատերազմ ընելու ժամանակին՝ նախ  
և հանապաղ մերձակայ ժողովրդոցմ, օգնութիւն գտնելիքնին  
կապահովցընէին: Արդոր երկու ազգ իրարու հետ վէճ կա՛մ  
կոխ ունենար, հոռմայեցիք տկար ազգին կօզնէին, և քաղա-  
քական կռւոյ պարագայի մէջ՝ տկար կողմին տիրութիւն կընէին:

Հոռմայեցիները իրենց դաշնակիցներուն օգնութիւն կընէին,  
որ անոնց թշնամիները յաղենն, և վերջապէս երկու հակառա-  
կորդ կողմն ալ Հոռմի նպատակները կըլլային:

Այս մշտապէս դրութիւնը ամուր բռնելով՝ Հոռմայի զօրութիւ-  
նը ետէ՛է, ետև տարածվեցաւ . ժողովրդեանը մէջ պատերազմա-  
կան ոգին սնուցանելու համար սովորաբար յաջողակ զօրապե-  
տին յաղթական հանդէս մը կը վճարէին:

Այս հանդէսէն աւելի հոռմայեցոց յաղթանակի երևակայու-  
թիւնը գրաւելու քորմարութիւն մը չըկրնար ըլլալ, որ այսպէս  
կընէին՝ շքեղ կամար մը կը կառուցանէին, որուն տակէն յաղ-  
թողը հանդէսով կանցնէր . փողոցները ծաղիկներով կը ծածկը-  
վէր, որոնց անուշահոտութիւնը օդին մէջ կը բուրէր . քաղա-  
քացիները խառն բազմութեամբ և ցնծութեամբ վերադարձեալ  
պատերազմականը դիմաւորելու կերթային, իրեն յաղթած  
ախոյեանէն սուսած կողոպուտները իր առջեկէն կը տանէին .  
յետոյ իր անպարտելի զինուցը տակ նուանափելու ստիպված  
խիստ երեւելի կարանաւորները կուգային, և կտրինը բաց  
կառքի մը մէջ բազմած, և ծիրանի հագուստով ու դարնի պա-  
կով պսակված, ամենէն ետև կուգար: Հայրենասէրները ցնծու-  
թեամբ ծափ զարնելով իրեն զովեառ կը կտրդային, զեղեցիկ-  
ները անոյշ դէմքով զինքը կը բարեկէին, երամիշտները իրենց

քաղցրաձայն երգերը կը հրնչեցընէին, մանաւանդ կրօնքն ալ իր սեղանին վրայ ամենէն ծանրագին նուէրները կը նուիրէր, և իր տաճարէն խունկի ամպեր դէպ ի վեր կելնէին :

Բայց հիմա փոխենք տեսարանը և անոր յաղթած երկիրներուն վրայ նայինք . մշակողաց սրակտուծենէն դաշտերը ամալի մնացած, չափահասներն ու երիտասարդները պատերազմի դաշտին վրայ կեանքերնին վերջացուցած, իրենց քաղաքներուն պարիսպները պաշտպանելու կեցող ծերերը՝ յարձակման ժամանակը սպանված, իրենց իշխանները և բաջերը թուրէն փախչելով՝ շղթաներով կապված, ու օտար երկիր մը գերի տարված, արձանները և պատկերները պալատներնուն և տաճարներնուն զարդերը՝ յաղթողին կողոպուտը անեցնելու առնելված ըլլալով՝ քաղաքները հրոյ ճարակ եղած և հիմա հեղձուցիչ աւերակներուն մէջ ուրիշ բան չերևար, բայց միայն անմխիթար կանայք որ իրենց սիրելեաց կորուստը կողբան, և կիտամեռ մանկտիք՝ որ կը հարցընեն Թէ ինչու կուլան :

Պատերազմին անգթութիւնն ու քաղաքական արդիւնքը խորհելու չըպարտապինք հոս, մեր նպատակն է պատերազմին վաճառականութեան վրայ ունեցած ազդեցութիւնն ասոնցմէ հանել :

Պատերազմին և վաճառականութեան նպատակը մի և նոյնն է, այսինքն չունեցած բանը ստանալ, Թէպէտ և նպատակը նոյնն է, բայց միջոցները տարբեր են. պատերազմը կաղաղակէ, նայէ, կըսէ, յայնկոյս եղող երկրին բնակիչները՝ հանգստալից և ախորժելի բաներ ունին, որ մեր երկիրը չըհասցընէր, մենք անոնցմէ զօրաւոր ենք, երթանք զանոնք կոտորենք, և անոնց երկիրը մեզի գրաւենք :

Ո՛չ, կըսէ վաճառականութիւնը՝ Թէ որ անոնց երկիրը մեր երկրին չըհասուցած վաճառքները յառաջ կը բերէ, մեր եր-

կիրն ալ անանկ բաներ առաջ կը բերէ որ՝ անոնց երկիրը չը հասցընէր, ուրեմն մեզի պէտք եղածէն աւելի առատօրէն ունեցած մեր բերքերէն մէկ բանին առնենք, ու առաջարկենք անոնց վաճառքներուն հետ փոխանակելու, որոնց ստացմանը կը ցանկանք: Այս ընթացքով յանցանքէն խոյս տըլված կըլլանք, ու կռիւէ մը՝ և յաղթըլելու վտանքէն ալ ազատ կըլլանք, մեր զուարճութեանը պէտք եղածին չափը՝ անոնցմէ կառնէնք, և այս ընթացքով թէ՛ մերը և թէ՛ ուրիշ ազգերուն երջանկութիւնը կը յառաջացնենք:

Ուրեմն վաճառականութեան միջոցաւ՝ բոլոր աշխարհիս մէջ գտնըված բերքերէն առատօրէն նպաստ կրնանք ունենալ, անանկ ներգործութիւնով որ իրը թէ՛ բոլոր գաւառները թուրով յաղթած ըլլայինք, և ամէն բնակիչները մեր զուարճութեանը համար նեղած ըլլայինք, բայց դժբաղդաբար մարդկային սեռը՝ պատերազմը վաճառականութենէն նախամեծար դատէր է, և առևտուրէն քաղելու կարող եղած անշուշտ օգտաւէտութիւնը պատերազմին վտանգաւոր դիտողութեանը զո՞ քրած է:

Պատերազմի ոգին վաճառականութեանը ոգիին զէմ է ըսելովնիս կարծելու չէ՛ որ վաճառական ազգերը պատերազմը յառաջ վարելու յարմար չեն ըսել կուզենք, իրենց պատերազմէ խորշելին բաջութեան պակասութենէ յառաջ չըզար, այլ խաղաղատէր բնաւորութենէն՝ և արդարասիրութեան զգացմունքէն է՝ որոնք վառասիրութեամբ յառաջ երթալէն հետու են, կամ վրէժխնդրութեան փափաքով լեցված չեն, և պատերազմը առևտուրի նման բան մը կը սեպեն, և հաշիւին պարտոց և պահանջից կողմը կը բննեն, և պատերազմելէն ինչ վաստակ ունենալին յառաջմանէ կը հաշուեն, բայց՝ երբոր անգամ մը թուրք քաշելու ստիպւլին, վաճառական ազգերը իրենց արտօնանէն անարգ և արհամարելի չեն:

Նայէ նախնի տիրացիներուն որ Բաբելոնի զօրութեանը՝ տանններեք տարի դէմ կեցան, որոնց հրամանատարը նարուգորոնտորն էր, և նոր Տիւրուր՝ ժայռի մը վրայ հիմնուած բաղաբ մը մեծն Աղէքսանդրի յառաջադիմութիւնը՝ եօթն ամիս արգելեց :

Նայէ Կարթագինէին՝ որ Հռոմայու պատերազմական զօրացը դէմ, դարէ մը աւելի դէմ կեցաւ :

Գանք հիմա նոր պատմութեանց՝ և բնունք Վենետիկի՝ ճէնովայի՝ Հոլանտայի՝ և Անգղիայի պատերազմները, և ըսէ ինծի թէ՛ վաճառական ազգերը՝ արդեօք յաջող պատերազմի հիմնական դրութիւններուն պէտք եղած բաշումիւնը ի գործ դնելու պակասութիւն ցոյց տուին :

Վաճառական (Կորնթոս) բաղաբին ընտիր զինուորական հրամանատարներ մատակարարելը՝ հոշակատար էր, այնչափ որ Յունաստանի ուրիշ գաւառները՝ կորնթացի զինուորագլուխները իրենց տեղացի զօրագլուխներէն նախամեծար կը դասէին :

Ասկէ յայտնի է թէ վաճառականութեան վերաբերեալ աղեկ հանգամանքներուն նախատեսութիւնը, ջանացողութիւնը, կարգադրութիւնն և յարատուութիւնը՝ զինուորական պատերազմի զիտութեանց հետ միանալով իրենց յաջողութեանը հիմը դրած են : Բայց թէպէտ և վաճառական ազգերը երբեմն պատերազմ ընելու ի նարիկէ յանձնառու եղան, և ընդհանրապէս յաջողութեամբ զանի առաջ տարին, սակայն պատերազմը վաճառականութեան վնասակար է :

Պատերազմը վաճառականութեան կը վնասէ նասարակութեան աշխատանքը սպառելով՝ և երկրին բերքերուն մէկ մասը անօգուտ ընելով, վասն զի պատերազմի նիւթ նարելու վաստած դրամը, առևտուրը և վաճառականութիւնը յառաջ տանելու կրնայ ի գործ դրվիլ : Ամբողջներ կատուցանելու գործած-

ված ստակը և աշխատանքը՝ գործարաններ, մեքանոցներ, կամ նաւահանգիստներ ու կամուրջներ և ժողովրդեան բնակելու յարմար տուներ շինելու կրնայ գործածվիլ :

Զինուորներուն տրված ուսուցիչն ու հագուստը երկրագործներու կամ գործաւորներու կրնայ տրվիլ, և ամէն օր զինուորական մարզումեան կամ ծեծկրթելու ի կիրառելի ված մարդիկը երկիրը մշակելու կամ մեծագին նիւթեր հասցընելու և կամ նուէր կառուցվելու կրնան գործածվիլ :

Ազգ մը մասնաւոր անձի մը կը նմանի, Թէ որ մարդ մը երկրին վրայ վեց հարիւր մարդ բանուոր ունենայ՝ այն 600 ին աշխատանացը համեմատ շահ կունենայ, բայց Թէ որ անոնց 200ը իբր զինուոր գործածելու ստիպվի, մնացեալ 400ը պաշտպանելու համար, այն ժամանակը միայն 400 մարդկանց աշխատանացը շահը կունենայ, և այն շահէն ալ կը հարկադրի 200 ին այսինքն զինուորներուն վարձքը վճարելու, որուն աշխատանքը արդիւնք մը չըբերէր :

Այս կերպով պատերազմը հարկաւորաբար ազգային դրամագրութիւն առատանալուն արգելք կըլլայ :

Պատերազմը՝ ժողովուրդը օտար երկիրներուն բերքերը ծախու առնելու անկարող ընելովն ալ վտճառակամութեան վնասակար է. որովհետեւ ազգային դրամագրութիւն մէկ մասը՝ պատերազմը առաջ տանելու համար մէկդի դրված կըլլայ, և ժողովրդեան ձեռքը բիչ դրամ կը մնայ, և հետեւաբար իրենց երջանկութեան միջոցներն ալ կը բիչնան՝ մարդ մը սրբան սուկի սուրբ վճարէ այնքան բիչ դրամը կը մնայ իր ընտանիքը կերակրելու և զգեցնելու համար ծախք ընելու, հետեւաբար առևտուրի բերքերէն ալ բիչ բան կրնայ առնել :

Պատերազմը՝ սուրանաց տեղափոխութեանը արգելքներ պատճառելուն համար ալ վաճառակամութեան վնաս կը բերէ,

և այն իրարու հետ սրտերագրեալ ազգերը՝ առևտուր ընելն կը գաղբին, և ասի իրենց առևտուրովն ընելու շահերուն բոլորովին կորուստ է: Չէզոք ազգերուն հետ եղած առևտուրը ևս արգելք կունենայ, վասն զի անոնց նուերն ալ սրաշտարանութեան համար՝ սրտերագրական նուերու հետ երթալու են:

Ազատութեանց (սիկուէրայի) զիններն ալ համեմատաբար կաւելնան, ու այս աւելորդ ծախքերը սպրանաց զիններուն վրայ ներգործելովը՝ զինները կը բարձրացնեն, և բարձր գինով եղած սպրանքնին ծախովիլը կը բիշնայ, և այս պատճառներուն հետեանքն է բիշ սպրանք յառաջ գալը:

Երևս կողմէ ալ խաղաղութիւնը վաճառականութեան հետ կը միաբանի, սրտերագրի ատեն սրտերագրական նուերուն մէջ եղող նաւաստիները խաղաղութեան ատեն՝ վաճառականութեան նուերուն մէջ կըլլան, զինորները՝ երկիր մշակելու կամ գործարաններու մէջ աշխատելու կգրաղին, սրտերագրի նիւթ սրտորաստելու գործածված դրամները առևտուրի և վաճառականութեան կը գործածվին: Արհեստաւորաց վրայի տուրքերը կը նուագին, և ամենէն աւելին այն է որ՝ կործանման միջոցներ հնարելու գործադրված մտաւորական գործութիւնը և ներգործութիւնը՝ խաղաղութեան ժամանակը արհեստներ և գիտութիւններ մշակելու ձեռք կը զարնեն:

Թէ և սրտերագրը խիստ պատուաւոր, և խիստ յաջողաբար եղած ալ ըլլայ՝ հասարակութեանը որչափ աւելի օգտակար կըլլայ՝ որ նաւային սրաշտոնեաները՝ իբր թէ երկրին կամ ազգին արիւնը և զանձը սպառելու հրաւիրված ըլլալուն՝ տեղը՝ կեանք ազատելու նաւակներ հնարելին, ու նուերուն սպանութեանը համար փարոսներ կառուցանելին, կամ հիւսիսային բեռը յայտնելու փորձեր ընելին:

Երբորդ, Հիւսա Հոտմայի վրայ խորհինք իբրև բնդարձակ

և տարածեալ կայսերութիւն մը, և զնմանք մէկ բայնատարած տէրութեան մը՝ փաճառակահնութեան շահաւորութեանը վրայ ունեցած ազդեցութիւնը :

Հռոմայեցոց յաղթութիւններուն նպատակը թէպէտ և իրկիր ձեռք բերել էր, բայց վերջապէս իրենց յաղթած ազգերուն օգտակար էր. իրենք յաղթելով ազգերուն բաղաբակրթութիւն կուսցնէին և ժողովրդեանցը մէջ արհեստներ և գիտութիւններ կը մտնանէին, նոստապարհներ կը սահմանէին և կամուրջներ կը կառուցանէին, իրենց յաղթած երկիրներուն մէջ բաղաբներ և ջրանցքներ կը շինէին, և երկիրն մշակութիւնը կը տարածէին և կը զարգացնէին. ասոնք իրենց օգտին համար կրնէին, որովհետև յաղթելով երկրի մը վրայ սովորաբար բերքերէն տասանորդ և երբեմն բաճանորդ տուրք կը դնէին :

Հռոմայեցոց յաղթութիւններուն մէկ մեծ օգուտը՝ պատերազմը բիշցնելն էր, իրենց յաղթութիւններէն առաջ՝ Յունաստան, Իտալիա, Սպանիա, Փարզիա և Բրիտանիա, թէ բաղաբակրթեալ և թէ բարբարոս ազգերը շատ մը անկախ գաւառներու բաճնելով էին, և միշտ և հանապաղ իրարու հետ պատերազմի մէջ էին, բայց երբոր այս բոլոր ազգերը՝ հռոմայեցոց զօրութեան տակ նուանեցան՝ իրենց տնտեսական և համազգային հակառակութիւնները հարկաւորապէս վերջացաւ :

Թէպէտ և Հռոմ տիրապետական էր, բայց բռնաւորութեան ցանկացող չէր, Հռոմ Ասիայի ժողովուրդը իրենց բռնաւոր միտապետներէն և Արեւմտարի ժողովուրդն ալ Տրուխտներէն ազատեց, որ անոնց բուրմերն էին :

Երբեմն անկախ ազգերը ևս կապերսէին Հռոմայու կառավարութեան տակ մտնելու համար, Հռոմայի զօրութեան մեղ-

մութիւնը իրենց յաղթած երկիրներուն մէջ շատ քիչ ապստամբութիւն սրտասնելէն՝ յայտնի է, բաց ի Սպանիայէն և Բրիտանիայէն, որ Տրուխաներէն գրգռվելով՝ սրտասնեցաւ ալ նմտազրութեան արժանի բաներ չէին :

Հռոմայեցոց զօրքերը կէս միլիօնէն քիչ մը սրակաւ էր, և անոնք ալ բարբարոս ազգաց արշաւանացը դէմ տէրութիւնը պաշտպանելու համար սահմանազրութիւնները կզբաղեցնէին, և Հռոմայու տիրապետութեան իյնելը՝ իր մէջէն կլած ապստամբութիւններէն չէր, այլ արտարին զօրութիւնէ մը նուանեցաւ, ժողովրդեան սէրը և սովորութիւնը այնպէս հաստատուած ցած էր, որ իր կայսերաց մոլութիւնները և անմտութիւնները իր մեծութիւնները չըկրցան կործանել, մինչև որ բարբարոսները եկան և արմատարի խլիցին :

Հռոմայեցիները 565 տարի Բրիտանեայի և 785 տարի Սպանիայի, ու 825 տարի Գաղղիայի տիրապետեցին. այս երկիրներուն տիրապետելուն ժամանակին երկարութիւնը անոնց կառավարութեան տակ եղող ժողովուրդներուն երջանիկ եղած ըլլալուն ապացոյց մըն է :

Քանի մը սրտամազբաց կարծեացը նայելով, Էւրոպան՝ հռոմայեցոց ժամանակները՝ հիմարիան ժամանակէն աւելի բազմամարդ և բազարացած էր, Յէպէտ Գերմանիան և բոլոր հիւսիսային ազգերը՝ այս բազդատութիւնէն զուրս ձգելու ենք, վասն զի անոնք բնաւ երբէք Հռոմայի զօրքերէն չընտանեցան. բայց կըստի Յէ. Իտալիա 1197, Գաղղիա 1200, Սպանիա 500, Ափրիկէ 500, Ասիա 500 բազարներ ունեցան, և Անտիոք ու Աղերսանդրիա բազարները գրեթէ Հռոմայի հաւասարելու պէս էին :

Յգրատու կայսեր ժամանակը՝ տէրութեան սահմաններն էին Արեւմտեան կողմը՝ Ալպանդեան ովկիանոսը, հիւսիսային կող-

մը՝ Ռեհա և Գանուք զեաները, Արեւելեան կողմը՝ Եփրատ զետը, և հարաւային կողմը Արարիայի և Ախրիկէի անապատները: Յետոյ Բրիտանիայի և Տանիւսարայի տիրապետելով՝ անոնք ալ անոնց վրայ յաւելցուցին, և ետքը Տրոյեան և սարձիւները նուաճեց, բայց իր յաջորդը Ազրիանոս այդ աշխարհակալութիւնը ետ ձգեց:

Ասանկով հռոմայեցոց տիրապետութիւնը սարունակած ունէր, Եւրոպայի մէջ՝ Բրիտանիոս Սարսիս և Գաղլիս ու Պելլիգոս, և Գերմանիայի ու Զվիցլերայի մէկ մասը, Իտալիա, Յունաստան և Միջերկրական ծովու կղզիները: Ասիայի մէջ բոլոր փոքր Ասիան, Փիւնիկիան, Պագեստինը, և Ատրեստունը կը սարունակէր. Ախրիկէի մէջ՝ Եզրպոտսը և Եզրպոտաէն մինչև Գատիչէի նեղուցը՝ բոլոր ծովեզերքները կը սարունակէր: Այսչափ ընդարձակ երկիր յառաջները բնաւ երբէք մէկ կտտախարտութեան տակ սարունակված չէին, որ գրեթէ 5000 մղոն երկայնութիւն և 2000 մղոն լայնութիւն կը սարունակէր:

Արդ՝ հիմա աասնկ լայնատարած տէրութեան մը վաճառականութեան վրայ ունեցած ազդեցութեանը համար ընելու բնութիւննիս շարունակներ:

Զեղխութեանց պահանջումը աւելնալէն՝ Հռոմայի ընդարձակ տէրութիւնը վաճառականութեան օգտակար էր, լայնատարած տէրութեան մը մէջ հարստութեան զազախարը մեծ ըլլալուն՝ հարուստ մարզիանց թիւը շատ կը ըլլայ, պատմութիւններէն կտտանիմք որ հռոմայեցոց մէջ անանկ մարդիկ կային, որ հարստութիւննին հիմակիան ժամանակիս մասնաւոր անձանց հարստութեանէն շատ կը զերազանցէր. հարստութեան ստացումը զուարճութեանց ստանալու միջոցներուն ուժ կտտայ, որ ստորարար շոպլութիւն կը ըլլի:

Հռոմայեցոց պատմութեանը մէջ նախնի ժամանակները՝

Իտալիա ուրիշ ազգերուն բաղձանքը զրգուէլու բան մը առաջ չէր բերէր: Հռոմայեցոց բոլոր կենաց հարկաւոր եղած բաներնին երկրագործութիւնը կը մատակարարէր. վասն որոյ շուայ-րութեամբ ապրելու ախորշակ չունէին, բայց յաղթութիւններով հարստանալուն յետոյ հարստութեան նպաստամատոյց եղած բաներուն սկսան բաղձանք ունենալ. իրենց տուներնին, հագուստնին, սեղաննին, զարդարանքնին ու զէնքերնին, բոլորն ալ խիստ Յանկազին տեսակն էր: Իտալեան պարտէզ դարձած էր, անանկ որ կենաց հարկաւոր եղած ցորենն ալ ուրիշ գաւառներէ կը բերվէր. հռոմայեցիները այս ապրանքները կարծազինէցոց նման փոխարէնը ձեռագործներ կամ երկրագործութեան բերքեր տարով ծախու չէին առներ, այլ նոյն իսկ գաւառներէն ձեռք բերած դրամով կը վճարէին:

Հասարակագիտութեան եկամուտը Հռոմայի մէջ կը վառնէին, Հռոմայի հարուստ մարդիկը դուրսի գաւառները ընդարձակ կտրուածքներ ունէին, տուրքի կամ վարձքի համար Հռոմ զրկրված դրամները նորէն գաւառները ետ կը զրկրվէր. իրենցմէ առնելիւս բերքերուն վճարմանը համար, Հռոմայու պէտք եղած ցորենը զլիսաւորապէս Միջիդայէն և Եգիպտոսէն կը բերվէր. հիւսիսային բարբարոսներէն ալ սաթ (հեւրիպար) կտանէին, Մալթայէն բարակ կտաւ, արեւելեան Հնդկաստանէն մետաքս և համկներ (սրահար), անդամանդ, զմբուխտ և այլն կտանէին. և իրենց զանազան գաւառներէն՝ անոնց հանքերը, երկրին բերքերն ու անոնց ձեռագործները ձեռք կը բերէին:

Սերսին Հռոմայի առևտուրը բոլորովին դուրսէն ներս մուծանելու առևտուր մըն էր, ամէն բան օտար երկիրներէն առնելով ինքը դուրս օտար երկիրներուն բան մը չէր տար, միայն դուրսի գաւառներէն ստացած զուտ դրամը կուտար:

Հռոմ եկած ապրանքներուն մեծ մասը հաւանական է որ

անգործ նիւթերէ կը բաղկանար, վասն զի ամէն մեծ մարդիկ զերխներու հաստատութիւններ ունէին, որոնք հասարակ գործածութեան հարկատու եղած շատ բաները շինելու արհեստին տեղեակ էին:

Հարուստներուն գործածութեանը համար զեղեցիկ և Յանկագին բաները՝ անանկ զերագոյն համարված բաներ յառաջ բերող զաւառներուն բաղաբնութիւն կը բերվէր: Հիմա մի ըստ միջէ: ամփոփելով սրտովնու եւր հոռոմայեցոց սեղանի ուտելաց մասին շոպլումիւնը:

Սեղանի շոպլումիւնը հոռոմայեցոց մէջ գրեթէ Ալաիսի սրտերագովն ժամանակները սկսեց, և մինչև Գաղարայի մագաւորութեան ժամանակը տեւեց, և փափուկ կերակուրնին էր, սիրամարգ, Մալթայի կոռնկ, տխակ, վայրենի որսոյ միս, և վայրենի ու բնտանի հաւեր, ձուկ ալ կը սիրէին, տիրող ախորժակն էր կերակրեղեններուն առատութիւնը՝ որ փոքր կերպ կերպ փոքր անատուններով և զանազան մոշուններով լեցված ամբողջ արու խող մը սեղանին վրայ կը բերէին, այս կերակուրը Տրոյան ձի կըրվէր, ի նշանակումին այն շինծու ձիուն որուն փորուն մէջ զինուորներ լեցված էին:

Ամէն տեսակ հաւ և որս, չափաւոր սեղանի մեծութեամբ սխառտակի մէջ բրգանման գիզված սեղանը կը բերվէր: Մարկու Անտոնիկու ունը արու խող սրտաբաստեց տասն և երկու հիւրի համար, Կալիգուլա իր հիւրերուն իրը սրտաբացախի մէջ հալած ծանրագին մարգրիտ հանեց. Պուկուզոս իր ամէն մէկ սրալատին մասնատու անուններ դրած էր՝ և ամէն մէկուն ծախքին համար՝ յատուկ սահմանեալ չափեր կապած էր: Կիլկերոն և Պոնպէոս իրեն հետ ընմրիք ընելու հանեցան, այն պայմանով որ՝ արտաբոյ կորգի բան սրտաբաստեղ չի հրամայէ: Ժառաններուն ինքը հրամայեց որ ընմրիքը Ապոլոն

անուն սենեակը պատրաստեն, իր բարեկամները գորմացան խնճոյին շրջումեանը, այն ժամանակը անոնց խնացուց Սէ, երբոր ինքը սենեակին անունը յիշէ՝ իր սպասաւորները զիտեն ծախրին շախր. որ ժամանակ որ ինքը Ապոդոն սենեակը ընծրիք ընելու ըլլար՝ միշտ 1250 անգղիոյ լիրայ ծախր կըլլար, իր հագուստին կողմանէ ալ նոյնչափ մեծածախ էր. հոռմայեցի Հոռտոր մը որ ժողովրդեան համար խնճոյից խաղարկութիւններ տարու էր, խաղցողներուն համար հարխը հատ ծիրանի հագուստ փոխ առնել ուզեց, Ղուկուղոս պատասխանեց որ՝ ինքը երկու հարխը հաս իրեն փոխ կրնայ տալ՝ Սէ որ ուզելու ըլլայ :

Հոռմայեցոց տան մէջ ունեցած զարդարանքը իրենց ուրիշ բաներուն բազմածախութեանը կը համեմատէր, Պլինիոս կրտ. Սէ՝ իրեն ժամանակը՝ շատ կը պատահէր որ սեղանի մը տրված ծախրին համար՝ հոռմայեցոց Կարթագինէն յաղթած ժամանակին գտնուված բոլոր գանձերէն աւելի գումար կը վառնէին : Նաև Հոռմայի բայնատարած պետութիւնը վաճառականութեան օգտակար էր, Հոռմը իր բանի մը գաղթականներուն կեդրոնն ըլլալուն համար :

Բոլոր գլխաւոր բաղարները այս կերպ վաճառականութիւն մը ձևը կը բերեն, երբ ընդհանրապէս մայրաքաղաքին ու գաւառներուն մէջ տեղը հաղորդակցութեան դիւրութիւն մը կըլլայ. իսկ գաւառի մը ուրիշ գաւառի հետ ուղղակի ընելու հաղորդակցութեան միջոցները աւելի դժուար կրնան ըլլալ, ասանկով իւրաքանչիւր գաւառ իր բերքերը մայրաքաղաքը կը զլիէ, որ բոլոր գաւառներուն բերքերուն ընդհանուր վաճառատեղի մը եղած կըլլայ : Նաև մայրաքաղաքը հասարակաց հարբվելու տեղն ըլլալուն՝ հաւանական է որ ծախու առնողներուն մեծագոյն թիւը հոն կըլլայ, ինչպէս որ՝ Լոնտոնայի

մէջ Պէլիսամի, Լիտտի, Մանչէսթէրի, Պէրմինգամի, Շէֆիլդի  
 և Նորվիչի ապրանքներուն ընտրելագոյնը կրնաս գտնել: Սոյն-  
 պէս Աթլինայի մէջ բոլոր Յունաստանի երկիրներունը կը  
 գտնուիէր, նմանապէս նախկին Հոռնայի մէջ այլ իր ընդարձակ  
 տէրութեան ամէն կողմի շոպյութեան վերաբերեալ նիւթերուն  
 աղեկ տեսակը առատութեամբ կը գտնուիէր:

Հոռմ բաղարը՝ Սէպէտե և դուրսերէն եկած ապրանքներուն  
 հետ փոխանակելու բան մը չէր հասցընէր, բայց և այնպէս  
 շատ մեծ առևտուր ունենարու էր, իր այլ և այլ գաւառներուն  
 մէջ տեղի հազորդակցութեան կեդրոնն ըլլալուն հետեւ, Գաղ-  
 դիայի և Սպանիայի բնակիչները Յունաստանի կամ Եգիպտոսի  
 և կամ Հնդկաստանի բերքերը Հոռմայն կրտնէին.  
 նմանապէս Յունաստանի, Ասիայի, և Եգիպտոսի բնակիչ-  
 ները՝ արևմտեան գաւառներուն բերքերը Հոռմէն կրտնէին,  
 որովհետև Հոռմի հետ ամէն մէկ գաւառի մէջ տեղը ուղղակի  
 հաղորդակցութիւն կար, գանազան գաւառներուն բնակիչները՝  
 իրարու հետ ուղղակի առևտուր ընելէն՝ Հոռմայի վաճառա-  
 կաններուն միջնորդութեամբը իրենց աւերոյղ բերքերը փո-  
 խանակելու առաւել արտահմութիւն կը գտնէին:

Երկու տարրեր բերք պտղաբերոյ նահանգներուն մէջ տեղը  
 եղած ամէն մեծ բաղար այս կերպ առևտուր մը կրտնենան,  
 և ամէն ծովեզերեայ բաղարներուն ըրած առևտուրին կերպը  
 ճիշդ ասոր նման է:

Հոռման ծովեզերեայ բաղար մը չէր, բայց իր բոլոր գաւառ-  
 ներուն հաղորդակցութեան և իրեն բաշխելու կեդրոնը ըլլալուն,  
 անոնց ընդհանուր վաճառատնոյին եղած էր, և այնպէս ըստ  
 մասին Տիբրոսի և Ալբերտանդրիայի նման առևտուր ձեռք  
 բերած էր, տարբերութիւնը այս էր որ Հոռման ծովեզերեայ  
 բաղար չէր, և դուրս դրկելու համար ինքը բնաւ ձեռագործ

կամ բերք չէր հասցըներ : Հոռմայու կառավարութեանը տակ եղած երկիրներուն մէջի ուղղակի առևտուրը դիւրացնելուն իր տարածեալ տիրապետութիւնը վաճառականութեան վերստին օգտակար էր :

Ամէն երկիր մէկ բանի բնական օգուտներ կը ժառանգէ՝ որուն հետևանքէն աշխատանքի և դրամագլուխի սահմանը ուրիշ երկիրներուն չըկրցած առաջ բերած մասնաւոր ապրանքներէն առատօրէն կրնայ հասցընել :

Մէկ երկրին կլիման մետաքս կամ գինի հասցընելու յարմար կըլլայ, մէկ ուրիշը ցորեն կը սրտղաբերէ, կամ անասուն կը հասցընէ, երրորդն ալ ածուխի կամ պղինձի ու երկաթի հանքեր կունենայ, մէկ ուրիշն ալ ընդարձակ փայտի անտառներ կունենայ :

Անաամէն մէկ երկրին բնական յարմարութիւնովը յառաջ բերած այս ապրանքները ուրիշ երկիրներուն աւելորդ ունեցած բերբերուն հետ փոխանակելը բնօրհանութիւն օգտին համար է :

Եթէ որ և իցէ երկրի մը բնակիչները, մենք առևտուր չենք ոգեր ըսելու ըլլան՝ կամ Թէ բոլոր այն բերբերը մենք մեր երկրին մէջ հասցընել կուզենք ըսեն, յայտնի կըլլայ որ այն ժողովուրդը այն ապրանքներուն մէկ բանին շատ գէշ յառաջ պիտի բերեն, որն որ ուրիշ կերպով կատարելագործեալը կրնային ունենալ, և մէկ բանին ալ շատ քիչ կունենան, որ ուրիշ կերպով առատօրէն կրնային ունենալ, ուրեմն իրենց աւելորդ բերբերուն ալ վաճառատեղի չեն ունենար :

Թէ հին ժամանակները և Թէ հիմարիան ժամանակս անկախ վիճակի մէջ մտած ամէն մէկ երկրին մասնաւոր ապրանաց վրայ շատ անգամ ասոր նման ընթացքներ բռնեցին :

Երբեմն ազգեր իրենց երկրին բերբերուն ածումը բաջաբերելու համար՝ անոնց նման բերբերը ուրիշ երկիրներէն իրենց

երկիրը բերովիլ արգիլեցին, օտար երկիրներու հետ մրցելու՝ և իրենց երկրին բերքը առատացնելու կարող ըլլալու համար՝ անոնց վրայ ծանր և որոշեալ մարս և տուրք դրին, միւս կողմէ՛ ալ ազգերը երբեմն իրենց երկրին հասուցած բերքերը գուցէ իրենց սպառումին բաւական չըմտար կարծելով՝ կամ գուցէ ուրիշ ազգերուն իրենց սպրանքներէն օգուտ մը բաղել չը տալու դիտաւորութիւնով՝ դուրս դրկելը արգիլեցին, բայց վերջապէս ազգերը դուրսէն ներս եկած սպրանքները արգիլելու աւելի հակամտեալ եղան, քան թէ իրենց սպրանքներուն դուրս երթալը :

Բայն երբոր այս իրարու հակառակորդ երկիրները՝ մէկ կառավարութեան տակ միանալով՝ միակերպ ազգ եղած ըլլան, անանկ չափ և սահման չըմտար, ստաջ օտարականի առատուր եղածը ներքին և ընտանի առևտուր կըլլայ, երկու ազգն ալ իրենց զբաղակար՝ և աշխատութիւնն՝ այն սպրանքները յառաջ բերելու կը զործածեն, որ իր բնական կամ ստացական օգուտները թիչ ծախարով և մեծագոյն կատարելութիւնով հասցընելու կարող կընէ, և պատեբարով կամ ազգային նախանձէ՛ կամ արբունի գանձի կարգադրութենէ՛ ազատ՝ մէջերնին առանց խափանման փոխանակութիւն մը կսկսի :

Մարդկային սեռին ընտանեկան կառավարութիւնը՝ բազմաթիւ փոքր անկախ պետութիւններուն բաժնրկիլը՝ վաճառականութեան շահուն դէմ ըլլալը բացայայտէ, փոքր ազգերը կամ պետութիւնները միանալով մեծեր կազմրկիլը վաճառականութեան օգուտուր է, թէ որ բոլոր Գերմանիան մէկ Սազաւորութիւն մը ձևացած ըլլար՝ պարագաները նոյնը մնարով՝ աւելի առևտուր կըլլար, թէ որ բոլոր Իտալիան մէկ տէրութիւն մը ձևանար՝ ներքին առևտուրը կաւելնար, և թէ Գաղ-

զիա, Իտալիա, Սպանիա, Փորթուգալ և Անգղիա մէկ կառավարութեան տակ միացած ըլլար՝ ինչպէս էր հոռմայեցոց ժամանակը, այս երկիրներուն մէջ վաճառականութիւնը առանց չափու ու սահմանի ըլլալէն հետեւաբար աւելի բնդարձակ կըլլար, ուրեմն լայնատարած տէրութիւնը՝ այս զանազան կերպերով վաճառականութեան ձևընտու է :

Արդ հոռմայեցիները՝ իբրև երկրագործ ցեղ մը, իբրև պատերազմատէր ազգ մը, և իբրև բնդարձակ տէրութիւն մը բննելէն ետքը, նայինք վաճառականութեան հետ հաղորդակցութիւն ունեցող օրինադրութիւններն որոնք են :

Նախ. Ընտանեկան գերութեան օրինադրութիւնը :

Բ. Նամակաց երթևեկութեան օրինադրութիւնը :

Գ. Գներու և ծախելու օրինադրութիւնը :

Դ. Ստացուածոց ապահովութեան օրինադրութիւնը :

Առաջին. Ընտանեկան գերութեան օրինադրութիւնը : Ամէն հին ազգաց մէջ գերութիւնը շատ կամ քիչ զօրացեալ էր, հոռմայեցոց ընտանեկան գերութեան վրայօր հետեւեալ տեղեկութիւնները կը տրվին :

Հոռմայեցոց մէջ մարդ գերի կըլլար, պատերազմի մէջ բռնըմբելով և ծախվելով, և պատիժի կերպով կամ գերութեան մէջ ծնանելով, տէրերը իրենց գերիներուն վրայ բացարձակ իշխանութիւն ունէին, կրնային ուզածնուն պէս պատմել՝ կամ մեռցնել :

Գերիները ձեռելու ժամանակին սովորաբար կը կախէին, ու ոտքերնուն ծանր բան մը կը կապէին, որ չըկրնայ շարժիլ, և երբոր մահուան պատիժ տալ ուզէին՝ խաչը կը հանէին :

Թէ՛ որ գերդաստանի մը մեծը՝ իր տանը մէջ մեռած զանրփէր՝ և մեռցնողը յայտնի չըլլար, իր բոլոր ծառաները մահուան կը դատաարարուրվէին : Ասանկ պատճառաւ մը մէկ գերդաս-

տանի մը մէջ մինչև 400 ծառայ պատմը[[իլը կը կարգանք : Գերիները մարդու տեղ չէին սեպեր, այլ ապրանքի նման համարվելով՝ մէկ տէրէն միւսին կրնար անցնել :

Գառաատանական ատեններու մէջ անոնց վկայութիւնը ընդունելի չէր ըլլար, սոսցուածքի ժառանգութիւն կամ կտակ չէին կրնար ընել, և մէջերնին կանտոնուոր ստեւանական իրաւունք չէին կրնար ունենալ, և զինուորական ծառայութեան չէին կրնար մտնել :

Տնտեսական գերութեան ազդեցութիւնը նախնի վաճառականութեան շատ փնասակար էր, երկիրը մշակողները գերիներն էին, ձեռագործի վերաբերեալ զանազան ճիւղերն ալ գերիները կը բանէին, ամէն երկրի տէր, գերիներու համար կարգեալ հաստատութիւն մը ունէր, որոնց աշխատութիւնը՝ իրեն ընտանեկան շատ բաները կը մատակարարէր, երբեմն գերիները իրենց շինած բաները տէրերուն շահուն համար կը ծախէին, և զվաւորաբար վաճառականութիւնը ազատ մարդիկ կամ քաղաքացոց ստորին կարգի եղողները կընէին :

Ասկէ յայտնի է որ ձեռագործի աշխատանքին վրայ անարգութեամբ կը նայէին : Ամէն գերի եղած երկիրներուն մէջ աշխատութիւնը ստելի կըլլայ, այսինքն գերիներուն աշխատանքին արդիւնքը զգուելի կըլլայ : Հոռմայեցոց տէրութեան սկիզբները երկրագործութիւնը պատուաւոր համարվածէր, և իրենց ամէնէն երեւելիները երկիր մշակելու կաշխատէին, բայց երբոր երկրագործութիւն գերիները ընել սկսան՝ քաղաքացիները աշխատանքէ ետ կեցան, և Հոռմ իր պարէնը օտար երկիրներէն բերել սկսաւ, և այս փոփոխութիւնը փնասակար ներգործութիւն յառաջ բերաւ, որովհետեւ չքաւոր քաղաքացիները՝ ձեռագործի աշխատելու յանձնառու չըլլալուն՝ երբոր պատերազմի զբաղած չըլլային՝ իրենց ապրուստին համար գումար մը դրամ

առնելով՝ բոլորովին կառավարութեան ձեռքը կը նայէին :

Թէ որ գերութիւն եղած չըլլար՝ ասոնք արհեստասոր պիտի ըլլային, բայց գերիները գործատու ըլլանուն քաղաքացիներն ալ մտքացկան եղան, բայց սակեց գէշը կար. թէ որ քաղաքացիները հասարակաց առատաձեռնութիւնը հանդարտութեամբ առնէին՝ գէշութիւնները այնքան ծանր չէին ըլլար, բայց հարուստ մարդիկը որ քաղաքական պատիւներու շատ հետամուտ էին, իրենց նպատակը ձեռք բերելու համար, այս չքատուր քաղաքացիներուն ինճոյքներ ընելով իրենց կողմը կը շահէին, և ասոր համար ամէն հարուստ մարդ իր վճարքովը ամէն ատեն խել մը խռովարար մարդիկ պահելու միջոց մը կուներնար, որոնք իրենց ապրուստը հոգացող մարդուն փառասիրութիւնը սրաշտարանելու համար՝ ձեռքերնուն եկամբ կընէին, որովհետեւ անոնց ամէնն ալ զինուոր էին՝ իրենց մեծատորը սրաշտարանելու համար երկիրնին քաղաքական կոխով շփոթելու պատրաստ էին, Կրաստ միայն իրեն հարստութեանը միջոցան էր որ տէրութեան զիստ որ պատիւները ունեցաւ :

Գերութեան տանձնակալութիւնը՝ ամէն քաղաքացին զինուոր ըլլալու կրատիպէր, թէ և օտար թշնամիէ պատերազմի վախ ալ չունենային՝ տակաւին գերիները զուգելու կարող ըլլալու համար ամէն քաղաքացի հարկադրեալ էր զէնք գործածելու սովորած ըլլալու :

Գերութիւն եղած երկիր մը՝ հանդարտ բնացած ու ամէն վայրկեան բոբրորում սպառնացող հրարուխի մը կը նմանի, անոր համար քաղաքացիները միշտ զգոյշ ըլլալու են, և այս պահոված զինուորական ոգին վաճառականութեան առաւելապէս անյարմար էր : Թէպէտ և այս զինուորական ոգին երկրի մը սրաշտարանողական դրութիւնը ըսել է, բայց գերութիւնը զանի կը տկարացնէ : Որ երկրին բնակիչներն որ ամէնն ալ սպառտ

են, Թշնամիին յարձակած ատենը ամէնն ալ զինուոր կրլլան, գործաւորը իր գործարանը, վաճառողը իր կրպակը, երկրագործը իր մշակելու երկիրը կը ձգեն, ու ամէնն ալ իրենց երկրին սրաշտպանութեանը համար զէնքի կը վազեն. բայց զերի մը երկիր չունի, վասն որոյ փոյթ չէ երկրին տէրը ո՛ր կուզէ Թող ըլլայ, ինքը միայն աշխատելու դատասարտութիւն է:

Գերիներուն իրենց տէրերնուն համար սրտերազմի զինելու հաւատարմութիւն չըլլար, վասն զի զէնքերնին իրենց տիրոջը ղէմ կրնան դարձնել: Գարձեալ գերիները ազատ մարդիկներէն բիչ սպառում ունենալուն՝ երկրի մը դուրսէն եկած ապրանքները բիչ կրլլան:

Ազատ մարդոց կարող եղած հանգստութիւնն ու շուսլութիւնները՝ որով իրենց կամքը կը հաճին, անոնց Թոյլ չբարկիր: Նաև գերիները ազատ մարդոցմէ բիչ բան յառաջ կը բերեն, ուստի երկրէն դուրս ելած ապրանքներն ալ բիչ կրլլան:

Գերիի մը օգուտը՝ սրբան կրնայ բիչ աշխատիլ նէ, այն կըլլայ, վասն զի իրեն վարձատրութիւնը նոյն է:

Ազատ մարդու մը օգուտն է կրցածին չտի աշխատիլը, վասն զի վարձատրութիւնը իրեն աշխատանքին համեմատ կըլլայ:

Գերութիւնը արհեստի արտադրութեան յառաջողիմութեանը մեծ արգելք մըն է, մերենաներ կառուցանելու շատ ստակ վատնող մարդիկը, երբեմն նորահնար մերենայ մը հնարողին ընդդիմութիւն կուսննան, բանգի հինին արժէքը կը նուազի: Ասանկ ալ զերի եղած երկիրները անոնց տէրերը մերենայ մուծանելու սովորութիւն չեն ուզեր, որովհետեւ գերիներուն արժէքը կը նուազի, և գերիները իրենք ալ մերենայ չեն հնարեր, հնարելու ալ ըլլան՝ կարելի է Թէ անոնց հնարածը գործածել չեն ուզեր: Այս նկատմունքներով ալ գերութիւնը վաճառականութեան զլուստար է:

Երկրորդ. Հռոմայեցոց ճանապարհորդութեան և նամակաց փոխադրութեան վերաբերութիւն ունեցած օրինադրութիւնները զննելու հար: Տօթթօր Ատամս կըսէ որ հռոմայեցոց գործքերուն ամենէն մեծը կարելի է որ հասարակաց ճանապարհներն էին, որոնք մեծ աշխատանքով և ծախքով շինված էին, և տէրութեան սահմաններուն մինչև ծայրը կը հասնէին, այսինքն Հերակլէսի սիւներէն մինչև Եփրատ գետն և Եգիպտոսի հարաւային սահմանագրութիւնները: Հռոմայեցոց շինած առաջին սալայատակ ճանապարհը մինչև Քարուա էր, յետոյ մինչև Պրինտիչի շարունակեցին, գրեթէ 550 մղոնաչափ երկայնութեամբ, և ամենակարծր զայլախաղ (չափւափ) քարէ անանկ հաստատ շինված էր որ մինչև այսօր տեղ տեղ ամբողջ կը մնան, և անանկ բայն էր որ երկու կտրք իրարու քով կրնային անցնիլ, քարերը տարբեր մեծութեամբ էին, ամէն մէկը մէկ ոտքէն մինչև հինգ ոտք.<sup>(1)</sup> բայց անանկ արմատաբար կցեալ էր որ ամէնը մէկ քարի պէս կերևար, ստորին կողմը երկու խաւ կամ տակ կար, և երկրորդը խիճով (foss) գրեթէ բոլորը երեք ոտք (ֆիք) հաստութեամբ: Ճանապարհները այնպէս բարձր էին որ ասոնց վրայէն շրջակայ երկիրները կըրնային տեսնելիլ, և ոտքով բալոզներուն համար սովորաբար երկու կողմը մեծկակ քարերէ շտկրված նամբայ կար:

Այս հասարակաց նամբաներուն տեսչութիւնը բարձրաստիճան մարդու մը կը յանձնըվէր, և զյիստոր նամբաներէն պզտիկ քաղաքատեղիները հանելու խոչաձև նամբայ կար:

Իջևաններն և օժևանները հասարակօրէն իրարմէ կէս կէս օրվան նամբու հեռաւորութիւնով էր, որ անոնց մօտերը հասարակ

(1) Ոտք ըսածնին անգղիացիներուն ֆիք ըստն է, որ 12 ինչեզե ֆիքը մէկ հարսա մըն է:

սուրհանդակներուն ձիերը փոխելու տեղեր կար (մեկզիյիսանե),  
և այս ձիերը տէրութեան ծախքով միշտ սրատրաստ կը պահ-  
վէր որ միայն տէրութեան պաշտօնին կը գործածվէր, և իջևան  
պահողին յատուկ հրամանագիրով մը (մեկզիյ կելի) կը հանվեր:

Հռոմայեցիները հիմնական կարգադրութեանց պէս հասա-  
րակաց նամակատարութիւնը (բօքս) չունէին: Հրատարակա-  
կան սուրհանդակներուն առջի հնարովիլը՝ Կիւրոսին կրնձային,  
հռոմայեցոցմէ չառաջ Օգոստոս կայսրը սկզբնաւորութիւն ըրաւ  
բայց միայն կառավարութեան թղթատարութեան կամ հաղոր-  
դակցութեան լուր զրկելու համար կը գործածվէր: Զարմանալի  
բան է որ վաճառականութեան և մանաւորաց հաղորդակ-  
ցութեան գործերու համար կանուխ սովորութիւն եղած չէ:

Ֆրանսայի մէջ 1474ին նախ Լուի տասներմէկերորդը հաս-  
տատեց, բայց Անգղիա մինչև 1660ին Կարոլոս երկրորդին օրը  
կանոնաւոր թղթատարութիւն չըկար, որ այն ժամանակը խոր-  
հրդարանին (քառյակեք) վճռովը թղթատուններ (բօքս)  
հաստատվեցաւ:

Նստակատան վիճակը կարելի է մէ գիտութեան հիմնարկան  
վիճակին գէշ նշանակ չէ, որ որ և իցէ երկրին բազաբակրթու-  
թեանը մեծ օգուտ կրնէ, վաճառականի մը նամակի ուղար-  
կուորութեան արագութենէն կարևոր բան չըլլար, որուն իր  
առուստրին ներգործութիւն ընելու ինչ և իցէ վիսպլածներուն  
չուտով տեղեկութիւն ունենայր՝ հարկաւոր է: Թէ վաճառք-  
ներուն գիներուն փոփոխութեանը վրայ, մէ իր թղթակիցնե-  
րուն վրիպական հանգամանոցը վրայ, մէ իր փոխանակագիր-  
ներուն (ֆանգիայ) վճարմանը կամ չվճարմանը վրայ, իրեն  
հրամայած ապրանքներուն գործադրութեանը կամ զրկված  
ապրանքներուն վրայ վաճառականի մը շուտով տեղեկութիւն  
ունենայր ամենահարկաւոր է:

Հիմնական բոլոր ազգերուն մէջ նամակաց երթեկեկութիւնը տէրութիւնները յանձնառած են, վասն զի երբոր մի և նոյն ժամանակը բազմամիւ նամակներ զրկըվելու որ ըլլան՝ ամէն մէկէն չափաւոր վճարք մը առնելէն յետոյ՝ չէ՞ծէ՛ միայն ճամբու ծախքին բաւական կըլլայ, այլ և գումար մը աւելնալով՝ տէրութեանց մեծ եկամուտ ալ կը բերէ :

Երրորդ. Առնելու կամ ծախելու վերաբերութիւն ունեցող կարգապարտութիւններուն զլիսաւոր յարաբերութիւնը դրամական և սեղանաւորութեան (պանֆայի) վրայօք կըլլայ, հոռմայեցիները ուրիշ հին ազգերուն նման առաջները հատուալ դրամ չունէին, հասպա սպրանքները իրարու հետ կը փոխանակէին, կամ որոշեալ կշռով մը աղբոշմ պղինձ կը գործածէին :

Նաևս դրամի զանազան անուններն ալ կիշտօք կը նշանակէին, ինչպէս որ հիմա անզգիացիները շիրայ նշանակելու ժամանակնին (քաուէս) կըսեն, որ առաջները Ա շիպրայ արծամ կը նշանակէր, անզգիացիներուն այս սովորութիւնը՝ հոռմայեցոց մէ առած ըլլայինն ստոյգ է. օրինակի աղագաւ (քաուէս) գրված թիւերուն վրայի զիրք Բ չեն դներ, բայց Լ կը դնեն, լատիններէն շիպրայ բառը նշանակելով. հոռմայեցոց շիպրաւն՝ անզգիացոց տասն և երկու ունկիի չափ ծանրութիւն ունէր :

Հոռմայեցոց դրամի ցուցակը ասանկ էր, 10 ասսին մէկ սկնար, 2՝ սկնարն մէկ ալրեսուս կընէր, ասը պղինձէ էր, սկնարը արծամէ և ալրեսուսը ոսկիէ էր :

Առաջները հոռմայեցոց բոլոր դրամները պղինձէ էին, ասկից է որ աս բառը՝ որ լատիններէն պղինձ կը նշանակէ, դրամ նշանակելու ալ կը գործածուի : Հոռմա բաղաբին կառուցմանէն մինչև 485 տարի ետքը՝ արծամ դրամ չունէին, որ այն ժամանակը սկսան արծամ դրամ կտրելու, և 62 տարի ետքն ալ ոսկիյլ, դրամ կտրելու սկսան, որ ըսել է արծամը 269 տարի, և

տակին 207 տարի Քրիստոսի Սուականէն առաջ սկսած է: Նախ Սէրվիոս Տուղիոսը պղինձի կտորի վրայ՝ արչաութի, եզի և խոզի պատկերներ դրոշմեց. առնց լատիներէն անունն եր (քեֆիւսկա). և ասկից դրամին անունը (քեֆիւսկա) կը կոչվէր, որ անզղիացիները այս բառէն առնելով՝ դրամի համար (քեֆիւսկարի) բառը կը բանեցնեն մինչև հիմա: Ասը V լիպրայ կչառքով պղինձէ դրամ մըն էր, անոր կէսը և մէկ չորրոր մասը՝ ուրիշ պղինձէ դրամներ ալ կային, նաև մէկ վեցերորդ մասն ալ ունէին, հին դրամներուն անունով, բայց Սեմե կիշառքով գործածելով ընծացքը շրջաբերումիւն ունեցած դրամներուն զինները նուազցնելու սովորութիւնը հռոմայեցիները անզղիացիներէն առաւել գործի դրամ են:

Անզղիա առաջները մէկ լիպրայ արծամը 20 շիլին տպված էր, հիմա այնչափ արծամը 66 շիլին կը կըտրեն:

Հռոմայեցիներուն առջի Փիւնիկեան պատերազմին ժամանակը՝ դրամը այնչափ բիշցաւ որ՝ մէկ (ասը) մինչև երկու ունկիի իջեցուցին, այսինքն V լիպրային վեցերորդ մասին, ու զինը՝ իբր V լիպրանոց դրամին զինովը կանցնէր: Այս միջոցները՝ հասարակապետութիւնը ամէն մէկ պղինձէ դրամին արժէքէն մէկին հինգ շահ կընէր, ասանկով պարտքերնին վնարելուն համար՝ տարակոյս չըկայ որ՝ անոնց յաջորդ հասարակապետութեան պաշտօնեաներուն մէջ ասանկ օրինակի մը հետևողներ պակաս եղած չեն:

Երկրորդ Փիւնիկեան պատերազմին Փարէոսի իշխանապետութեան ժամանակը՝ (աս) ըսված պղինձէ դրամին կչառքը՝ միայն մէկ ունկիի իջաւ, և յետոյ մինչև կէս ունկիի իջեցուցին:

(Տեկար) կոչված դրամը արծամէ էր, հռոմայեցիները՝ երեք կերպ արծամէ դրամ ունէին, այսինքն՝ տեկար, կուիար և սեսկրս, առաջինը տասը ասի հաւասար էր, որ ըսել է՝ տասը

լիպրայ պղինձի արժեքով, երկրորդը՝ հինգ լիպրայ, և երրորդը՝ երկուք ու կէս լիպրայի արժեքով :

Մէկ լիպրայ արծաթը՝ հարիւր հատ (սկեարի) կը կըտրէին, այնպէս որ՝ առաջները մէկ լիպրայ արծաթը՝ հազար լիպրայ պղինձի արժողութեան հաւասար էր, և ասի այն ժամանակները՝ համեմատաբար՝ արծաթին նուազ ըլլալը կատուգէ, բայց յետոյ վիճակը փոխվեցաւ, վասն զի (ասին) կշտոքը երբոր պակասեցաւ, (սկեարին) հետ նոյն առաջին համեմատութիւնը ունէր, մինչև որ սար մէկ ունկիւի իջաւ, և այն ժամանակը՝ սկեարը Ասասի տեղ կանցնէր : Արծաթէ դրամներուն կիշտոքներն ալ կը զանազանէր, միապետութեան տակ եղած ժամանակնին՝ հասարակապետութեան տակ եղած ժամանակէն տարբեր էր :

(Տկեար) բառը՝ անդղիացոց (թեկա) բառին կը թարգմանենք, մինչև ցայսօր թեկայի թիւին վրայ (Տ) (Ծ) գիրը կը նշանակեն, բառնեքէն սկեար կամ սկեարիւս բառին առջի գիրը ըլլալուն համար :

Հռոմայեցիներուն թեկան պղինձէ՝ կամ փայլուն պղինձէ չէր, այլ՝ արծաթէ էր, և բրիտանոնեութեան սկսած ժամանակը Անդղիաի եօթր թեկա ու կէսի չափ արժէր ունէր :

Նոր կտակարանէն կը տեղեկանամք որ՝ Հռոմայի դրամը՝ միապետին պատկերը և վերնագրութիւնը ունէր, և տարբի վաճարման տեղ կը գործածուէր, և տխրաբար՝ օրական աշխատանքի վարձը կը տրուէր, հասարակ պանդոկի մը մէջ՝ գիշերվան հացկերոյթ մը՝ վեց թեկա դրամով կրնար ըլլալ :

(Ասեոս) կոչված դրամը՝ որ ոսկիէ էր, նախ Հռոմ 207 տարի Քրիստոսի թուականէն առաջ՝ փրնիկեցոց երկրորդ պատերազմին ժամանակը տարվեցաւ, և կիշտոքը՝ երկուք ու կէս սկեարի հաւասար էր, և արժէքը՝ բուն և հինգ սկեարի կամ հարիւր սեւսերդի : Հռոմայեցոց հասարակապետութեան ժամանակը՝

սակիին գինը՝ հասարակօրէն արծամին տասնուպատիկն էր, առաջները՝ մէկ շիւրայ ոսկիէն բառասուն (աւրետա) կը տըրփէր, բայց վերջերը՝ միասկտուժեան ժամանակները՝ ստորին մասադներ խտոնըլիլ սկսան, որ սակէ յստիացեալ արժէքը իջաւ :

Հռոմայեցոց մէջ՝ դրամը (սեսքերի) վրայ հաշիւ կըլլիւր, (Սեսքերը) դրամ չէր, այլ գումարի մը չափի անուն էր, և սեսքեր անունով կտրըված դրամին հազար հատին հաւասար էր, մէկ սեսքերը Անդղիայի շիւրայ սրեալիս դրամին հարիւր բան և հինգ մասին հաւասար էր, կամ թէ մէկ բենա ու երեք փարսիկն՝ և մէկ փարսիկին երկու երրորդ մասին չափ էր :

Հռոմայի սեղանաւորութեան (պանֆայի) դրութիւնը՝ զրեթէ հիմնական ժամանակին եղած տոկոսութեանը նման բան մըն էր, թէ տէրութիւնը և թէ հարուստ մարդիկ իրենց եկամուտին սեղանաւորներուն վճարել կուտային, և իրենց վճարելու պարտաստէրերուն՝ անոնց վրայ փոխանակագիր կամ (չեֆ) տարով հաշիւ կը բռնէին, և թէ սոնելիբին տէրերը նոյն պանֆային նետ հաշիւ ունեցած ըլլային՝ դրութիւնով մը՝ այնքան դրամ մէկին անունէն միւսին կը փոխադրէին :

Այս սեղանաւորները՝ շատով փոխ դրամ ալ կուտային, և իրենց մօտը ձգված դրամին ալ նուազ գինով տոկոս կուտային :

Վաճառականութիւնը անարգ սեւրված երկիր մը սեղանաւորութիւնը մեծ յարգութիւն ու համարում չունենար : Նախնի երկրագործ ազգերուն շատին մէջ՝ դրամի փոխառութեան համար՝ տոկոս լսոնելու տալու դէմ նախապաշարում մը կար, ուրկէ Հռոմայի մասնաւոր սեղանաւորները՝ երբեմն անարգ կը սեպվէին, բայց կառավարութեան իբր հասարակութեան զանձապետ հաստատած՝ կամ ընդհանուր հարկապահանջի պէս բաներ, ասոնք բարձրագոյն վիճակի կարգ կը բռնէր,

անանկ որ՝ ստոնցմէ մէկ բանին մինն հիւսպատու (ֆոնտայ) ալ  
եղան :

Հոռոնայեցիները՝ փոխատուութեան (պակֆայ) ալ ունէին՝ որ  
բաղարացոց չքաւորները՝ առանց տոկոս վճարելու՝ անկէ փոխ  
ստակ կտանէին : Կըսվի թէ՛ Օգոստոս կայսրը՝ դատարար-  
տեալներուն արքունիք գրաւած (մայլմիտի) սպորանքներովը՝  
դրամատեղի մը հաստատած էր, և այս դրամանոցէն՝ այն բա-  
ղարացիներուն որ կարող կըլլային առած գումարինն կրկնա-  
պատկելու երաշխաւոր տալու՝ առանց տոկոսի փոխ կուտային :

Տիրերիտս ալ այս դրութեանը նետամուտ եղաւ, այսինքն  
երկու կամ երեք տարի պայմանաւանով ինքնին շատ դրամ  
կուտար՝ անոնց որ՝ առած դրամնուն գումարը կրկնապատ-  
կելու համար՝ հաստատ երկրի կարուածք գրաւ տալու կարող  
կըլլային :

Աղէքսանդր Մէվերոսն ալ՝ տոկոսներուն գիները իջեցուց, եր-  
կիր ծախու առնելու աղքատ բաղարացիներուն՝ ինքը փոխ տա-  
լով, և վճարումը՝ բերբերէն առնելու դաշնադրութիւն ընելով :

Վաճառականութեան և դրամանոցի պահապան շաստ-  
ւածը (Հեռմեսն) էր, որ՝ գողերուն և ատենարաններուն ալ  
պաշտպանութիւնը՝ տարօրինակ կերպով ասոր հետ միացու-  
ցած էր, վաճառականները՝ անարգ սեպող հոռոնայեցիները՝  
կը կարծէին թէ՛ գողերուն և վաճառականներուն մէջ տեղը  
նմանութիւն մը կար, և գողութեան ու ճարտարխօսութեան  
մէջ տեղը՝ փոխադարձ հաղորդակցութիւն մը ըլլալը՝ զիրաւ  
կը մեկնէին, ուրկէ գողերը, վաճառականները և ատենարան-  
ները, մի և նոյն շաստուածին պաշտպանութեանը տակ դը-  
րած էին : (¹) Ա.մ.էն տարի Մայիսի 17ին՝ վաճառականները

(¹) Միայն հոռոնայեցիները չէ, Յոյներն ալ Հերմէսի վրայ նոյն կարծիքին ուէին :

հասարակաց տօնախմբութիւն մը կը բռնէին, և Յախորով Հերմեսին տանարը կընթանային, երգիծաբաններուն ըսածին պէս՝ անցեալ տարւոյն մէջ՝ առևտուրի կերպով սոխորութեան պատշաճ համարված բոլոր առախօսութեանց և խորհրտեանց համար՝ շաստուածութենէն թողութիւն խնդրելու դիտաւորութիւնով էր :

**Չորրորդ. Ապահովութեանց (սիկուերայի) վերաբերեալ օրինադրութիւնները :**

Հռոմայեցիներուն համար կըսվի թէ՛ նաևերուն ապահովութեան սոխորութեանը հեղինակ եղան, որ ասի շատ նաևերունցող ազգի մը՝ ամենահարկաւոր բան մըն է. թէ որ մասնաւոր առևտուրի միջամուխ եղող և որոշեալ ժամանակի մէջ վտանգված նաևերուն համար արձանագրութիւն և յիշատակարան մը բռնելի՛՛ ժամանակէ յետոյ ցուցակ մը կազմելը հեշտ բան մը կըլլայ, որ ցոյց կուտայ նաևու մը տիրոջ ինչ վարձք տալը՝ երբոր իր նաւը ապահով (սիկուերա) ընել ուզէ : Թէ որ նաւը չի խորտակի՛՛ ապահովութեան (սիկուերա) բռնողներուն իրենց կրելու վտանգին դէմը իբր վճարք մը առած վարձքերնին իրենց վաստակ կըլլայ : Թէ որ նաւը կորսելի՛՛ ապահովութեան բռնողները արժեքը կը վճարեն նաևուն տիրոջը, և այս կորուստը՝ թէ որ մասնաւոր անձ մը բաշխու ըլլայ, կընայ աղքատանալ, բայց երբոր ընկերութեան մը բաժնը վերցըլայ՝ վնասը դիւրաւ կը տրվի :

Հիմա շատ ծովեզերեայ բազաքներ ասանկ արձանագրութիւններ կը բռնելի, և այս կերպ առևտուրներ ընդարձակաբար՝ առաջ կը տարվին, Լոյիսի ընկերութեան բաժանորդները իմացածէս, ասոնք ծովային ապահովութիւն կուտան՝ թէ որ մէկը իր նաւը ապահով ընել ուզէ՛՛ նաևուն բոլոր պարագաները՝ ճանապարհորդութեան տեղերը, բեռը և այն. այն

ընկերութեան յատուցը կը դնէ, և անոնց ամէն մէկ անձը՝ այսինքն (ունեւորայրերս) իր անունը՝ և իր յանձնատու եղած ապահովութեան զօմարը կատարագրէ, ծովեզերը բնակող սզգի մը այս սովորութիւնը՝ խիստ հարկաւոր բան մըն է :

Կենաց ապահովութեան սրբրուներն ալ ծովային ապահովութեան նման է, նախ որոշեալ թուով ժողովրդեան մէջէն մտնող մարդկանց թիւերուն ցուցակ մը բռնելու է, որ այս յիշատակարանին մտերոց ցուցակ կըսի, մէկ մարդուն որքան ժամանակ սպրեկուն կարեկիտութիւնը ցոյցատուովը՝ ասիկ ցուցակներ կը կազմրի, որ ստոր ոյ՝ կենաց հաւանականութիւն կըսի :

Այս ստանալէ յետոյ 1000 լիւայի կամ ինչ և իցէ զօմարի ապահովութիւն բնէ տուող մարդուն կենդանութեան ժամանակը տարեկան վնասելիքին չափը դիւրաւ հաշիւ կրնաս բնէ, տարեկան աւերիւած դրամն ալ շատի հաշիւ բնելով՝ ապահովութեան յանձնատու եղող ընկերութեան ինչ փոստակ բնէ կը հասկըցի :

Ճնածներուն և մեռնողներուն համար հին ազգերուն արձանագրութիւն բռնելուն տեղեակ չեմք, որ կենաց ապահովութեան նախատակներուն ու մեռնողներուն ցուցակին բաւական գրուածքի հիմ մը կազմներ, անանկ ցուցակ Անգղիս ալ խիստ նոր ժամանակէն ունի : Անգղիսայի խիստ հին արձանագրութիւններէն Նորմհամթօն զաւտ ինը կայ :

Տօրթօր Բրայսը Նորմհամթօն քաղաքին մեռելակներուն արձանագրութեան հաշիւէն առնելով՝ կըսէ թէ ձեզմէ ո՞ր որ բլլայ՝ թէ որ իր կենացը երկարութեանը հաւանականութիւնը զիտնալ ուզէ՝ Նորմհամթօն քաղաքին արձանագրութեանը նետ համեմատելէն դիւրին կերպը չբզաներ, օրինակի աղագաւ, րու կենացը ժամանակը 86 թիւէն վար իջիր, և մնացածը եր-

կուրքի բաժնէ՝ և այն մնացածը կենացոյ հաւանականութիւնը ցոյց կուտայ, այսինքն համարենք Սէ 20 տարու ետ, 86էն 20ը հանել 66 կը մնայ, 66ը երկուքի բաժնէ 33 կը մնայ, որ հաւանական կարծեօք քու ապրելու տարիներուդ թիւն է, և քու հասակիդ մարդոցը կենացը տեսողութեանը միջին չափն է :

Գօտերս կենաց ազահմտութեան գիտութեանը մէջ երկընդոր իրողութիւն յայտնի եղաւ :

Նախ. Հիմնական ժողովուրդը՝ աւելի երկար կապրին՝ բան Սէ սակից հարիւր տարի առաջ :

Երկրորդ. Հարուստ մարդիկ աղքատներէն երկար կապրին :

Երրորդ. Կանայք մարդոցմէ երկար կապրին :

Հիմնական ժողովրդոց համար դար մը առաջիններէն երկար կապրին բներով՝ հիմնականները առաջիններէն հարիւր տարի աւելի երկար ապրելու բնեացը ունին բնւ չենք ուզեր, այլ առ բնւ կուզենք որ հիմա երիտասարդ հասակի մէջ թիչ կը մեռնին, կարելի է Սէ՝ այս կենաց սկիզբութեան զարգացումը աղքատաց կողմանէ մարքութեան աւելի փոյթ ունենալուն, և հասարակութեան առողջութեանը աւելի մտադրութիւն բլլովուն, և բժշկական գիտութեան յառաջադիմութիւններուն նետեանքն է, և մասնաւորապէս ծողիկի սրտուստ բլլարտարդիւնքն է :

Այս կենաց երկարութեան աւելնալը՝ մինակ Անգղիոյ յատուկ չէ, Ֆրանսա հաշիւ եղած է որ տասն և չորս դարէն ստահին՝ կենաց յարգը կրկնասարտիկ եղած է, և 1781 տարիէն յետոյ գրեմէ մէկ երրորդ մասին չափ վատտակ բրած է :

Կենաց ազահմտութեան նետ՝ հարգողակցութիւն ունեցած ուրիշ նոր բանը այն է որ՝ հարուստ մարդկանց զատը՝ չրտուրներէն երկար կապրին, Սէպէտ և գիշերները՝ ուշ սրտակերնին՝ և խառնիխուռն ժողովուրդներուն բազմութիւնը՝ և վայել-

լսած գանազան զեղխութիւննին՝ երկար սպրեւոտ անյաջողակ կը կարծրովի ալ նէ: տակաւին՝ միւս կայմ, ալ՝ անոնք չբարութեան զէշտութիւններէն՝ կերակրեզմնաց պակասութիւնն՝ և աւետուրի տառապանքներէն զերծ են: Թէ՛ որ տկարութիւն ունենան՝ լաւ բժիշկներուն խրատը կառնեն, և իրենց առողջութիւն տարու համար երկրին սր կողմը օդափոխութիւն ընել ուզեն՝ կրնան երթալ, ուստի հարուստներուն կեանքը՝ աղքատներուննէն աղել է:

Թէ՛ պէտեկանայր՝ քանի մը կերպ արկածներու ենթակայ են, որ մարդիկ անոնցմէ զերծ են, տակաւին փոսատկար գործառնութիւններէն աւելի ազատ ըլլալուն՝ նաև մտաց տառապանք չունենալուն և մասնաւորաբար՝ զինի և բորբոքեցուցիչ խմելիքներ գործածելու աւելի չափաւոր ըլլալուն՝ մարդոցմէ երկար կապրին:

Բժշկական պատմիչ մը՝ գուարճալի ծանօթութիւն մը ըրած է և այս է որ կանանց երկար սպրեկնուն մէկ պատճառն ալ զլխաւորաբար իրենց աւելի խօսակցութիւն ընելնին ըլլալու է կրտէ, վասն զի խօսակցելով թորերը վարժելը՝ առողջութեան խիստ օգտաւոր է:

Կենաց սպառնալու թանձր սկզբնական նպատակը՝ մէկ մարդուն իր մեռնելէն յետոյ իր ընտանիքը որոշեալ գումար մը առնելնին վստահ ընելու կարող ըլլալն է, բայց հիմա կերպ կերպ վստաստակամտութեան դրութիւնով ևս կը բարձարցնեն, այսինքն՝ ոմանք իրենց առնելիք ունեցած մարդոցը կեանքը՝ սպառնալու թանձր կը բրտնեն, ոմանք ալ իրենցմէ առնելիք ունեցողներուն օգտին համար իրենց կեանքը սպառնալութիւն կը բռնեն:

Ամէն կերպով կերևայ որ այս սովորութիւնը պարզ աղեկութիւն յառաջ կը բերէ, սպառնալութեան ներքե ըլլողին կողմէն խնայողութեան, և խոհական զգուշութեան սովորութիւնն:

բուն՝ ձեռքնոս կըլլայ, և խնայութեամբ հաւարվիրով՝ ազգային գրամագրութիւն գումարը տակընելու խնամբ տարած կըլլայ : Այս գրութիւնը ընդարձակ և յառաջագիւլ ըլլալուն՝ իրաւամբ սպասելու եմք, վասն զի յայտ հետէ կենաց ակնկարութիւնը ցոյց տարու արձանագրութիւններ ունենալու եմք, ոչ թէ միայն ամէն կերպ հիւանդութիւնով տառապեալ ժողովրդեան առողջութեանը վերաբերեալ իրաց՝ այլև գրագումներներուն և տեղաց զիրբերուն՝ կենաց տեսլութեանը վրայ ունեցած զանազան ազդեցութիւնները ցոյց տարուն տեղեկանալու եմք :

Ապահովութեան գրութիւնը ցոյց տալու նշխու ցուցակներ ունեցածնուս պէս՝ անոնց պատահական հասանալանութիւնը՝ ամէն թշուառութեանց տեղ ըլլալը կը հասկընամք : Ասկից կը զանեմք որ ամէն գիտութիւններէն բիշ հրատարակ երեցած՝ աշխարհախարութեան մտազրութիւնը՝ մեծ օգուտներ յառաջ բերած է, այնպէս որ այլանդակ երեցած մանր անգամ գիտութեան ձեռօր՝ իր բննացքը յառաջմանէ նշանակելու է :

Անն այսպէս մեր ներկայ ստեղծախօսութեան մէջ Հոռոմայի վրայ խորհրդածութիւններ ըրինք, այսինքն՝ իրբև երկրագործ ցեղ մը, իրբև սրտերագմասէր ազգ մը, և իրբև լայնատարած տէրութիւն մը, նաևս զննեցինք անոնց ընտանեկան գերութեան վերաբերեալ՝ ընկերական կարգադրութիւնները, ճանապարհորդութեան և նամակաց երթևեկութիւնը, գրամի և սեղանատրութեան (պանֆայի) և ծովային սպահովութեանց վերաբերեալները, հիմա բու աչքիդ առաջը բերելու եմք հոռոմայեցոց վաճառականութեան բնաորութիւնը :

Առաջին. Հոռոմայեցիք պատուաւորչմարդիկ էին՝ թէպէտ և սրտերագմական ոգին սաստիկ կրնանք դատապարտել, բայց զենքի կրթութիւնը անձնական պատուոյ բնաորութեանը ներհակ կարծելու չեմք : Նոր կտակարանին մէջ Հոռոմայի բանա-

կի սրաշոժնատարի մը համար կը կարդանք որ բարեպաշտ և աստուածալախ մարդ մըն էր, և դարձեալ նոյն զրբին մէջ հռոմայեցոց օրէնքին պատուական նկարագրութիւնը սպացոյց ունինք, որ Ասիական ազգերուն մէջ եղած բնականութիւններէն և հարատաճարութիւններէն շատ տարբեր էին :

Հռոմայեցոց օրէնքին հանգամանքը՝ ամբաստանական ու դատախազներուն հետ երես երեսի չրբերելէն առաջ մէկ մարդը՝ մահուան չէր մատնէր, որով իրեն վրայ ձգված յանցանքին համար պատասխանելու թոյլտուութիւն կունենար :

Վաճառականը պատուաւոր մարդ մը ըլլալու է, Սէպտեմ առանց ճշմարտասէր ըլլալու՝ մարդ մը պատուաւոր չըկրնար ըլլալ, սակայն մարդ մը պատուաւոր չըլլալով խիտ համեատ կրնայ ըլլալ :

Համեատութիւնը դրամային գործերու կը վերաբերի, բայց պատիւը զգացողութեան սկզբունքներուն վերաբերութիւն ունի, կրնաս պարտքերդ ճիշդ վճարել, կրնաս մարդ չըխտել, սակայն պատուոյ դէմ գործ ընելդ ալ կարելի է, և պատուոյ դէմ գործ ըրած կըլլաս երբոր իրանունը չըլլալը զիտնալով առևտուրիդ վրայ հետդ մրցողներուն համար բու թղթակիցներուդ դէշ կարծիք տալու ըլլաս :

Պատուոյ դէմ գործ ըրած կըլլաս երբոր բու դրացիներուդ վրասերու համար ապրանքդ իրական արժեքէն պակաս գինով ծախելու ըլլաս :

Պատուոյ դէմ գործ ըրած կըլլաս՝ երբոր ուրիշ ծախու առնողներուն չըթողելու համար մէկ ապրանք մը արժեքէն բարձր գինով ծախու ստնելու ըլլաս : Պատուոյ դէմ գործ ըրած կըլլաս՝ երբոր դիւրութեանդ համար՝ շինծու փոխանակողիք յառաջ բերելով՝ իբր իրական պայմանագրութենէ, եկածի նման դրամագնդի՝ (սֆոնթ) աղագաւ բու սեղանատարիդ տալու ըլլաս :

Պատուոյ դէմ զործ ըրած կըլլաս՝ երբ որ և իցէ՝ ամէն պարագայի մէջ քու նիշդ կարծիքդ ուրիշ և արտաքին վարմունքդ ուրիշ ցոյց կուտաս : Պատուոյ դէմ զործ ըրած կըլլաս՝ երբոր յաջողակ առևտուրի մէջ ըլլալով յաջողութեանդ մասնակից չես ընել քու սարսաւորներդ և օգնողներդ՝ որ յաջողութիւնդ անոնց չանբովը կստանաս :

Պատուոյ դէմ զործ ըրած կըլլաս՝ երբոր հարուստ ըլլալէ յետոյ, չքաւոր եղած ժամանակդ ուրիշներէն տեսած աղեկութիւններուդ աննտաղիւր ըլլաս : Բոլոր այս պարագաներուն մէջ կարելի է որ խարդախ դիտողութիւն չունենաս և հնար է թէ անհամեստութիւն չըլլայ՝ բայց պատուոյ դէմ վարմունք է :

Երկրորդ. Հոռմայեցիք հայրենասէր մարդիկ էին, և իրենց երկիրը կը սիրէին : Վաճառական մըն ալ իր երկիրը սիրելու է, երբոր կըսեմք թէ՝ վաճառական մը աշխարհին քաղաքացին է, և ազգային նախապաշարմունքէն ազատ է, մի կարծեք թէ՝ վաճառական մը իր երկրին սէր ունենարու չէ ըսել կուզեմք, մի կարծեք թէ՝ այն երկիրը ուր որ իրենց նախահայրերնին և նախահաւերնին ապրել ու զործ տեսեր են, և հիմա այն տեղը մոխիրնին հանգստացած է :

Այն երկիրը ուր իրենց ծնած և առաջին ընկերութեանց տեղի եղած է, այն երկիրը՝ որուն օրէնքներուն տակը հարբատութիւն ստացած ըլլալով՝ անոնց կարգադրութեանցը ինքն ալ հաղորդակից եղած է : (՝) Այն երկրին լիզուն որ քաղցր, և բարեպաշտագոյն ընկերութիւնները կարծնցնէ, օրինակել չենք ուզեր, մի կարծեք թէ՝ վաճառականը իր հայրենիքը չըյարգեր, ու որդիական զգացմունքով չըմեծարեր, և նախամեծար ու դիւրագորով զգայութեամբ անոր պատուոյն ու յաջողութեանը

(՝) Այս խօսքերը միայն անզգիացոց և ամերիկացոց կը յարմարի :

չբցանկար ըսել կողմեր, չէ՛ ամէն մասնաւոր կամ տեղական ըմբռնումը իրար խտոնելով՝ ընդհանուր փիլիսոփայութեան զգացում մը ընողը կը սխալի :

Այն որ անձնական ըմբռնում մը չունի, ընդհանուրի ըմբռնում ալ չունենար, այն որ իր հայրենի երկիրը չբարբեր՝ մարդկութեան համար ալ սէք չունենար, տեղական սէրը՝ ընդհանուր սիրոյն հիմն է, որն որ լաւ կը տնտեսէ՝ այն է բարի հայր, լաւ բարեկամ և լաւ մարդասէր :

Վասնտական մը մտաց նուազութենէ՛ ազատ է, և և ուրիշ ազգերը անարգելու չընամոզվիր, և զուտ ու անկեղծ հայրենասիրութենէ՛ ծագած բոլոր ուրախարար զգացողութեանց միշտ յանձնատու կըլլայ :

Ինքը իր երկիրը շատ սիրելուն՝ ուրիշ երկիրներուն անոր վնասակար ըլլալու հնարագիտութիւնները՝ չը բաջալերեր : Ինքը հատորակաց լաւութեանը համար իր երկրին օրէնքներուն դրած տուրքերը և մարտերը ուրախութեամբ վճարելու է : Ինքը պատրաստարար ձեռնտու ըլլալու է, այն սրաշտօններուն որ բաղարացոց մէջ իր ընկերական վիճակը իր վրայ դրած կըլլայ, թէ՛ և իրեն դժուարին՝ և բազմաձախ ալ ըլլայ :

Ինքը կարգադրութիւնը պահելու, ստացուածոց իրաւունքը պաշտպանելու, և օրէնքներուն գերագոյն իշխանութիւնը զօրացնելու համար իր ազդեցութիւնը բանեցընելու է :

Ինքը առատապէս բաջալերելու է այն կարգադրութիւնները՝ որոնց նպատակը հատորակութեան բարոյականութիւնը նախախնամել է, օգտակար գիտութեանց ծաւալմանը և ազրատաց թշուառութեանը օգնութիւն գտնելուն ջանալու է :

Ո՞հ, ահն հայրենասիրութիւնը՝ և անոր անոյշ և փափուկ դարձիւնները հոս կը պարունակին, դարձիւններ, որ անոնք գործածողին զվստն վայելչութիւններ տարով զարմրութիւնը կը

պահպանեն, մինչդեռ պատերազմով յաղթողին՝ արքունով փառամբաբաւեալ պսակը անպիտանաբար կը թառամք կամ ճոռացութեամբ կը շորանայ:

Երրորդ. Հռոմայեցիները ծանրաբարոյ՝ կարգաւորեալ և դատաւորեալ մարդիկ էին:

Հռոմայեցիները ամէն բան զրուծիւնով կը տնօրինէին, իրենց զինուոց յաջողութեան պատճառը իրենց գերիվերոյ կարգապահութիւնն էր, որ իրենց սահմանը՝ հաստատի պնդեալ հիմնական գործողութեան վրայ այն սկզբունքները միայնով միակերպութիւնով կը պահէին:

Հռոման մէկ օրվան մէջ չըկառուցաւ, Հռոմայի կայսրութիւնը յանդուզն ձեռնարկութեան մը հետևանքը չէր, անվիներ նկատման մը, կամ մեծ քաջութեան մը գործ չէր, հասարակութեան հետևութիւնն ունեցած հաստատ կարգադրութեան գործողութեան մը եզրակացութիւնն էր: Տղաքնին իրենց հօրերնուն հաստատուն սկզբունքը կը բրնէին, և ազգատոմէ ազգատոմ վերջին պատակին հասնելու գործադրութեանը համար փորձառութեանը ցոյց տուած սկզբունքներուն կը հետևէին:

Այս ընթացքը վաճառականութեան վրայ մեզի բաւական ամենահարկաւոր գիտութիւն կրնայ ուսցընել:

Ազգ մը, ընկերութիւն մը, կամ մասնաւոր մարդ մը երբոր երկար ժամանակ խիստ և հաստատուն կանոնաց ընթացքին հետևելու որ բլայ, յաջողութիւնը հազիւ երբէք կը պակսի, հարստութեան հասնելու ճամբան ամայի ճամբայ մըն է, և անոր շաւիղը յայտնելու միայն հանապազօրեայ նարտարութիւն, աշխատասիրութիւն, համեստութիւն, և յարատևութիւն կը պահանջէ:

Աստիք ինչպէս առաջ տանելոյ բու բայլոյ բեզի կը ցուցնէ, աստեց առաջնորդութեանը հետևէ, որ վերջը անշուշտ կը

վատրկիս : Քայց դուն որ փորձառութեան խորհուրդները արհամարելով բու անձնասիրութիւնդ կը գգուես և շահադիտութեան ոգիդ սնուցանելով՝ ուղիղ շաւիղէն կը մտորիս՝ ու չը հասկըցած բաներուդ կը խառնըվիս, և երբոր բու ըրածներուդ պտուղը բազելու ըլլաս՝ այն ժամանակը ձախորդութեան հանդիպեցայ կըսես պարտատէրերուդ, դուն որ բու անող և անհաստատ ընթացքիդ հետեիլը պատշաճ դատելով՝ անոնց համետ աշխատասիրութիւնով և դժուարութեամբ ստացածը՝ ձեռքեռնուն հանելու և անոնց ընտանեկան զուարճութիւննին խտիանելու պատճառ եղած կըլլաս :

Վաճառական մը միայն արդար սկզբունքներուն յարելը՝ իրեն դրութիւն ընելու չէ, հասարակի գրասեղանին մանրամասն բաներուն ալ իրաւունքով գործադրութիւն ընելն ալ դրութեան պէս բռնելու է :

Ամէն բանի մէջ կանոնը վաճառականի մը հարկաւոր մէկ բանն է. վաճառականը՝ իր առևտրական կարգադրութիւններուն աշխատանքը բաժնելու մասին, հաշուետու մարները պահելու և ժամանակը գործածելու մասին կանոնաւոր ըլլալու է. կանոնով շատ ժամանակ կը խնայվի, և շիտեմունք խոյս տալով աւելի գործ յառաջ կը տարվի :

Վաճառական մը իր վրոյ աղեկ կարծիք չըտար, երբոր միշտ տազնապեալ երեսայ, այսինքն՝ թէ ըսելու ըլլայ որ՝ « զիրդ ստացայ, բայց այնպէս գործի զբարձր էի որ պատասխանելու ժամանակ չունեցայ, կամ թէ թուղթերուն մէջ տեղ մը դրած էի որ պատասխանելու ժամանակս չըկըցայ գտնելու : »

Երբոր մարդ մը իր գործը կանոնաւորեալ բռնելու կամբ ունենայ, յառաջմանէ կը կարգադրէ և անանկով ամէն բան ընելու ժամանակ կը գտնէ :

Չորրորդ. Հոռոտիցիները՝ շատախօս մարդիկ չէին, աշխոյ

մտնան երևակայութեան և խօսակցութեան ընթացքի մէջ հոգե-  
ներէն շատ վար էին :

Ընդհանուր ընկերութեան մէջ լուակացութիւնը՝ բնաւ կրկնէ  
գրվելի չէ, խօսակցութիւնը մարդկային սեռին բնաւորու-  
թիւնը՝ յառաջադէմ զարգացնելու և գիտութիւնը առաջանելու  
միջոցներուն մէկն է, ինչպէս որ անհարմ անդամանդները  
աուգրակի մը մէջ գրվելով շարժելու որ ըլլայ՝ փայլունու-  
թիւն կուտանայ, նմանապէս մարդուն բրտութիւնը՝ իրարու  
նետ նադորդակցելով կը կակրնայ, բայց վաճառականի մը  
բնաւորութեան վրայ՝ բան մը չըյաւելցըներ, առևտրական  
գործառնութեանց մէջ շատ խօսք ընելու սովորութիւն ըն-  
լը խիստ անորոշ բնաւորութիւն՝ կամ ժամանակի շատ  
վատնում ցոյց կուտայ :

Ժամանակը դրամ է, երբոր ուրիշ ընելիք գործ չունենաս՝  
խօսակցէ՛ որքան շատ որ կուզես, բայց մինչև որ բու առու-  
տուրդ չըլլիննայ՝ նարկաւոր եղածէն աւելի մի խօսիր :

Հանգուցեալ Մամր Վկոյէլը որ աղբատները կրթելու՝ շատ  
օգուտ ընող՝ Վեպեյան Մեքոսիսը ըսված միաբանութեանը  
նիմնադիրն էր, իր ընկերութեանը մէջ մանտղներուն մէկ պայ-  
մանն ալ այն կը դնէր, որ անոր նետամուտ ըլլողը՝ առնելու  
կամ ծախելու մէջ շատ խօսակցութիւն ընելու սովորութիւն  
չընէ : Ետտ սրտուական կարգապարտութիւն մը՝ որ ժամանակի  
շատ խնայութիւն կուտայ, և ուրիշ ներգործութիւններ յառաջ  
կը բերէ :

Ամէն աշխատանքի մէջ վատասկ մը կայ, բայց շրժունքնե-  
րուն խօսակցութիւնը միայն չբաւորութեան կը նակամիտէ :  
Վաճառականութեան խօսակցութեան մէջ չէ մէ միայն շատ  
խօսքէն խոյս տալու ես, նապա վաճառականական թղթակցու-  
թեանդ մէջն ալ շատ խօսք գրելէն զգուշանալու ես :

Առևտուրի վերաբերեալ երկար նամակները՝ մեծապէս ձանձրացուցիչ են, ուրեմն նայէ որ նիւթին կամ առարկային ներկուն չտի՝ նամակներդ բոբորովին կարճ ըլլայ, զխտաորութիւնդ անմիջապէս սրտելով՝ բիշ պարզ խօսքով որոշ նպատակը բացայայտէ և վերջացուր :

Այն մարդը որ նամակին մէջ նարկաւոր չեղած՝ զանազան պարագաներ կը մուծանէ և խումբեր ձևակերպելով՝ խօսիլը սովորութիւն ընել կը սիրէ, կամ երկարօրէն բարակ խօսքեր (փառսի գիւրսի) ընելու ըլլայ, վաճառականութեան սահմանաւոր թղթակցութեան համար շատ անյարմար ընմացք մը բռնած կըլլայ :

Նաև՝ սպալդ ու մարուր գրելու փոյթ ունենալու եւ, չենքու թղթակիցներուդ վրայ նարկաւոր չեղած և անհստոյ նարկ մը դրած կըլլաս, թէ որ նամակներուդ գրուածքը՝ լուծելու համար երկու կամ երեք անգամ ձանձրութեամբ վրան նայելնին անոնցմէ պահանջելու ըլլաս :

Յայտէ որ՝ Էրբ նամակ մը գրելու ըլլաս՝ զիրը որի կուզիս կորնէ՝ գողտիարդ անոր հողորդակցելու նպատակաւ պիտի գրես, ուրեմն չըրարցացվելու կերպով գրելով ինչու դժուարութիւններ մէջ բերես :

Նաև խիստ լաւ գեղեցկագրութիւնն ալ՝ հասարակօրէն առևտուրի վերաբերեալ գրութիւններուն դէմ է :

Գեղեցկագրութեամբ՝ և զանազան ձօնարանութեամբ զըրված նամակ մը՝ առևտուրի-մարդ ըլլալուդ վրայ՝ բու թղթակիցիդ բարձր կարծիք չըտար, ոմանք վիճեցին բտելով որ մարդու մը բնասորութիւնը՝ իր ձեռագիրէն յայտնի կրնայ ըլլալ :

Չեմք գիտեր թէ՝ արդեօր տարակոյս կոյ մարդու մը մտաց գորութիւնն ալ այս կերպով ստուգվելուն, բայց կարելի է իր բարոյական որակիտութիւնները՝ երբեմն ասկէ յայտնի ըլլայ :

որինակի աղագաւ: Թէ որ ինքը չըկարգարկէրէ կերպով միտ  
զրկու ըլլայ՝ զիրը զրամ կողմին բաշտելու թիւն տարա նա-  
մար իրեն շատ փախար չունենայը մակարեբնի կըրայ:

Հինգերորդ. Հոմայեցոց վաճառականութեան բնաւորու-  
թեանը մեծ պակտութիւնը՝ իրենց զինուորական ոգին էր:

Աշխարհիս ամէն դարուն մէջ՝ զինուորական մարտիկ վաճա-  
ռականներուն վրայ իբր իրենցմէ ստորին կարգի մարտոց  
նման նայած են, և միշտ սասանկ պիտոր ըլլայ անցըր՝ որքան  
որ մարդկային սեռը խաղաղութեան արնետէն աւելի պատե-  
րազմի արնետին պատիւ տարու ըլլայ, բայց մեծ զարմանքը  
այն է որ վաճառականները իրենք իրենց մեծութեան ճիշդ գա-  
ղափարները՝ աւելի կազմակերպելու տեղը, սակարական մտա-  
նաւորութեան մէջ ընկած ըլլալով՝ զինուորական կարգի կերպերուն  
ձեւացած են, բանգի կը գտնենք որ վաճառականները՝ երբեմն  
իրենց վէճը իրարու նկատ մենամարտութիւնով (տակիթ) վերջա-  
ցուցած են, Թէ որ զինուորական մարդիկ սասանկ ընելու ըլլայ՝  
զարմանք չըզրգուէր, սակայն երբոր խորնելու ըլլանք դիւցազ-  
նական յունաց և պատերազմական հոմայեցոց մէջ՝ մենամար-  
տութեան սովորութեանը՝ անձանթ եղած ըլլալը՝ այս սովորու-  
թիւնը հիմակիւն զինուորական պաշտօնեաներուն անձնական  
բաշտութիւնը պահելու համար նարկաւոր եղած ըլլալը բնաւ  
չըպահանջըլիր: Այս ընթացքով հասարակ մարտոց մէջն ալ  
մենամարտութիւնը թող տարու եմք, զինուորական մարդիկ եր-  
բոր իրենց երկրին թշնամիներէն մեղքընկիբ չունենան՝ իրար  
մեղքընկելով զիրենք վարժութեան մէջ պահելու կը բաղձան:

Անոնք իրենց արնետին սկզբունքներուն համեմատ գոր-  
ծելուն՝ կրնան զիրենք շատագովել, բայց վաճառական մար-  
դու մը համար մենամարտութեան յանձնառու ըլլալէն աւելի  
բնաւորութենէ՝ դուրս բան չըլլար:

Երբոր առանկ դիպած մը՝ լորտ Էլլէնպօրօին սաջին եկաւ, որ որ վաճառական մը մէկ ուրիշ մը մենամարտութեան կռիւի հրախրելու ջանք ըրաւ, նորին վեհագնութիւնը սա դիտողութիւնը ըրաւ, վաճառականներուն զիրար նշաւակելէն աւելի աղեկ կըլլայ իրենց զբառումարները արձանացրնելը, զինտրական ոգիին մէկ ազգեցութիւնն ալ անգում յօժարութեան առաջնորդելն է :

Հռոմայեցիները անողորմ մարդիկ էին, իրենց գերիներուն վրայ անգում, յաղթած թշնամիներուն վրայ անողորմ, պատիժներնուն դաժան, և իրենց զուարճութեանցը մէջ վայրագ էին : Որ վաճառականութեան ոգիին հակառակ՝ սովէ աւելի գէշ վիճակ չըլլար, և տակաւին քանի մը պարագաներու մէջ վաճառականները անզմութեան գործիքներ եղած են, այսինքն կիսակիրձ ազգերուն՝ պատերազմական նիւթեր ծախելին, որ առանց ասոր անոնք հաշտութեան մէջ մնացած կըլլային, և ամէնէն գէշ անզմութիւնը Ախրիկէի գերիներուն առևտուրն է, որ երկրի մը սեւագոյն և խիստ կարմրագոյն մեղքերով լեցված առևտուր մըն է :

